



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 2 1896

ՓԵՏՐԻԿՈՐ

1896 № 2

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿՐԻ

1 ՇԱՆԹ.	181	Դուրսեցիները (վերջ),
2 ՀԱՅՆԻՅՑ-ԾԱՏՈՒԹԵԱՆ.	219	Երգեր (բանաստ.),
3 ԳԵՅԹԵ.	221	Էպմոնտ (զրամա).
4 ՇԱՆԹ.	243	Կամուրջը (բանաստ.),
5 "	244	Բարձր (բանաստ.),
6 ԲԱՇԻՆՁԱՎԱՆԱՆ, ԳԵՈՐԳ.	245	Փուչ Վահան,
7 ԶԱՔԱՐԵԱՆՑ, ՄԿՐՏԻՉ.	278	Կողբայ աղահանքում (շարունակ.),
8 Լ. Մ.	289	«Ասուած աղքատի կերպում»
9 "	290	«Առաջին վիշտ»:
10 "	291	«Մե ծովու ռուսական եղերքը»
11 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	292	Ժամանակակից Տեսութիւն:
12 ԼՈՒՄԻՆԻ.	299	Դէսլք Հայոց Բարեդ. Ընկ. մէջ.
13 Ա. Ա.	304	Ռուսաց մամուլը հայոց և վրացոց մասին:
14 Զ.	309	Քաղաքական տեսութիւն,
15 ԻՄԲ.	316	«Մուրճ»ի նիւթերի ցանկը 1889 —1895 թ.
16 ԻՄԲ.	323	Զանազան լուրեր:


ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ա. Գ. ԱօՏԵԱԱՅՑ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанца, Гог. пр., д. № 41.

1896



ՄՈՒԲՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱՋՐԻՔ

№ 2 1896

ՓԵՏՐԻԱՐ

1896 № 2

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻ-ՆԵԱՆՑԻ

Տպոգրաֆія М. Д. Ротніанца, Гол. пр. д. № 41.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Марта, 1895 г.

VIII ՏԱՐԻ ՄՈՒՐՃԱՌ ՏԱՐԻ VIII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԹԻՒԽՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ:

ՄՈՒՐՃԱՌ ամսագիրը 1896 թւականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն դիբքով, որպէս և նախկին եօթ տարիներում՝ ՄՈՒՐՃԱՌ-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բռնվանգի

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմածքներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, ազէմաններ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Պառմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VII. Յօդւածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւնն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին:
- X. Ժամանակակից Տեսութիւն: Յօդւածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քննութիւններ և քրոնիկ:

XIII. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:

XIV. Կարեռագոյն լուրեր ամսաւայ եղելութիւններից:

XV. Տեղեկատուններ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1896 թւականին առանձին ուշադրութեան առնել:

ՄՈՒՐՃ»-ի ՎԻՂՋՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդիմական-քննադատական:

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցների մի ստուար խումբ, որը կազմւած է ամսագրի եօթնամեայ կեանքով և որով ապահովում են ամսագրի կարեռագոյն բաժինները: Աշխատակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին:

«ՄՈՒՐՃ»-ի 7 տարւայ նիւթերի լիակատար ցանկը տպագրւելու է առանձին բրոշիւրով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի: Ռւսուցիչները և ուսանողները վճարում են զիջումով՝ 8 ռուբլի, արհեստաւորները և բանւորները՝ 7 ռուբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 3 ռուբլի սկզբում, 3 ռ. ևս մինչ մարտի 1-ը, մնացածը մինչև յունիսի վերջը: ԲՈԼՈՐ 7 տարիների «Մուրճ»-ը 14 հատորով կազմած վաճառուում է 50 ռուբլով, իսկ առանձին-առանձին՝ որոշ գներով՝ համաձայն առանձին յայտարարութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունուում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ., կէս տարով՝ տողը 75 կրակէկ:

ԿԻՄԵԼ Խմբագրատունը—Տիֆլիս, վերդակույ «ՄՈՐՃ» Արտասահմանից—Tiflis. Rédaction „MOURTCH“:

ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

Ն Ա Ն Թ Ի

(Վ. Կ. Բ. Հ. 1)

Ի Բ.

Օրւան դասերը աւարտած էին. ու տղայքը արձակւած։
Բագրատ մեհակ իր զպրոցին մէջ ու սենեակը քաշւած օրւան
յուցակները, հաշիւը, նկատողութիւնները աչքէ կ'անցնէր։

Քանի մը նկատողութիւն ալ ինքը աւելցուց, քանի մը բան
դրեց, մէկ-երկու թուղթ ստորագրեց։ Հանեց ծոցէն փոքրիկ աետ-
րակ մը քանի մը տող գրեց։ Վերջը ժողւեց բոլոր տեսրակներն
ու թուղթերը լեցուց զզրոցը ու կղպեց։

Երբ սովորի ելաւ ու արդէն դուրս ենել կ'ուզէր, դուռը
զարկին։

—Մահք։

Դպրոցի դռնապանն էր, որ ետ քաշւելով՝ ճամբաց որւաւ
վասակին։

Դուռը դոցւեցաւ։

—Բան, խէր լինի. զուն ալ մէր զպրոցը. բացականչեց Բագ-
րատ։ Այս ինչ մէծ պատիւ է մեզի. զժբաղդաբար քիչ մը ուշ
արդէն զպրոցը արձակւած է. բայց ինչո՞ւ այդպէս լուրջ ես։
—Լուրջ. ամենեին։ Ինձի նայէ. սիրաս քիչ մը նեղ է այսօր,

¹⁾Տես «Մուլճ» № 11 և 12 1895 թ. և 1896 թ. № 1.

ծաղրել կ'ուզեմ մէկը, կատակել կ'ուզեմ. ես գիտեմ, որ դուն չափազանց ոգեսորւել գիտես, եկայ քեզի քիչ մը խօսեցընեմ ու միամոռութեանդ վրայ խնդամ:

—Այդ որչափ ազնիւ ես, որ միայն կարծիքներուս վրայ խընդարու համար այսպահ ճանապարհ քայլը ես:

—Լաւ, այդ հաճոյախօսութիւնները մէկդի. շիտակ գործին անցնինք:

—Քեզի չեմ հասկընար. քալէ երժանք. աղաս օդ շնչելու աղետք ունիմ. ճաշէն մինչև հիմա գպրոցին մէջն եմ:

—Զէ. նստէ քիչ մը. հանէ զլիսարկդ. երկար չի տեսեր: Միայն բոլոր միամոռութիւնդ, փիլիսոփայութիւններդ, բանաստեղծական յափշտակութիւններդ, լեզւիդ բոլոր ճարտարախօսութիւնը միասին ժողւէ. այնպէս ըրէ, որ որչափ կարելի է վրադ շատ խնդացընելու առիթ տաս. ուրիշ խօսքով՝ ոգեսորւէ:

—Եթէ բոլորովին խենթեցած ալ չես, գոնէ արդէն ճանապարհ ելած ես. տարակոյս չի կայ:

—Է՛, այդ նորութիւն չէ: Միայն հիմա իմ միակ փափագն է ապացուցանել, որ բոլոր մարդիկ ալ խենթ են, որ ուրիշ կերպ ալ անկարելի է. և որ դուն այդ խենթերուն մէջ ամենէն վտանգաւոր տեսակէն ես, որովհետեւ ամբողջ սերունդ մը կ'ապականես:

—Եղբայր, քալէ երժանք գարեջուր մը խմենք. կարելի է քիչ մը հոգերը փոխւին:

—Լսէ, Բագրատ. դուն ազնիւ տղայ ես. յիմար ես ըսել կ'ուզեմ. արդէն այդ երկուքը նոյնանիշ գաղափարներ են. և զգացումներդ կեղծել չգիտես. որովհետեւ ուրիշները կը կեղծեն զգացումնին՝ անոր համար ալ մարդ սրտանց խնդալ չի կրնար. իսկ քու ամեն ըսածդ քու ստածմունքդ է, որով արտասանած բոլոր ցիմարութիւններդ ինծի զըւարձութիւն կը պատճառեն:

Այս խօսքերը այնքան լուրջ դէմքով ու ձանով մը ըսւած էին, որ Բագրատ տեսակ մը վախ զգաց. մօտեցաւ Վասակին ու մտերմօրէն հարցուց.

—Ի՞նչ ունիս, Վասակ. քեզի բան մը պատահեր է:

—Ինծի բան մը պատահեր է. հա, հա, հա. չէ. ինծի ակս մարդուն բան չի պատահիր:

Ու ակսաւ խնդալ բռնազբօսիկ, ջղացին ծիծաղով մը:
Եւ աւելցուց.

—Ինձի նայէ. գուն աշխարհը կը սիրես, չէ. հիմա ես քեզի
կըսեմ, որ այդ աշխարհ ըստածդ անխորհուրդ, ապուշ բան մըն է,
որ ոչինչ հրապոյք չունի, որ ինքնին ամենացանկալի համարւած
բաներն անգամ միացն կեանթի տաղտուկը աւելի շեշտելու, պատ-
րանքներու բեռին վրայ պատրանք մըն ալ աւելցնելու համար են
հնարւած:

—Գլուխդ վկայ:

—Լաէ: Դուն կեանքը կը սիրես, չէ. հիանալի կը գտնես: Լաւ-
արդ քեզի կըսեմ, որ այդ կեանք ըստածը ամենէն անմիտ, ամենէն
տխմար քիմիական բաղադրութիւնն է, որ բնութիւնը իր ձանձ-
րոյթի վազրկեանին է շաղեր: Ոչինչ բան մը այդ կեանքը. ձանձ-
րալի, չնչին հոգերու անվերջ շղթայ մը. հոգեկան բարդ հիւան-
թիւն մը, մարմնական հիւանդութիւններով ստորակիտւած, միջա-
կիտւած և վերջապէս վերջակիտւած: Մեր ուրախութիւն, հեշ-
տանք, զըւարձութիւն անւանած բաներն ալ մեծ, խոշոր անխմաս-
տութիւնը աւելի բէցեվ ցոյց տալու համար են աշխարհ եկած.
իսկ երջանիկ բառը ուղղակի ապուշութիւն բառի քարրիքատուուն
է: Հապա հոգի ըսածնիդ. մեր մարմնի մէկ կտորը, որու միակ պաշ-
տօնն է զգալ, թէ այս բոլորը որ կայ՝ բացարձակ պարապութիւն
մըն է:

—Գլխուդ պէս:

—Դէ. ես քու ճառիդ նիւթը տըւի. հիմա գուն ըսածներս
հերքել սկսէ ու ես ծիծաղիմ:

Բաղրատ դլուխը կախ քանի մը անդամ սենեակի երկայն-
քովը գնաց ու եկաւ. ու վերջը շիտակ Վասակի դէմը կանգ առ-
նելով ծանր-ծանր ըսաւ.

—Բոլոր ըսածդ կէտ առ կէտ զուտ ճշմարտութիւն է:

—Ի՞նչ. ուրեմն գուն ալ այդ կարծիքէն ես. և այդպէս հան-
դմարտ. պոռաց Վասակ՝ կատղած ոտքի ցատկելով:

—Սպասէ. նախ իրար հասկընանք: Դուն քու եզրակացութիւ-
ներդ հանելու ատեն միացն քու սեփական կեանքդ աչքի առաջ
ունիս. գուցէ ուրիշ կերպ ալ կարելի չէ: Բայց խնդիրը հոն է, որ

դուն կեանք չունիս. քու կեանքդ ապրելու սխալ ձև մըն է. քու ամբողջ ըսածդ այդ սխալ կեանքի բացարձակապէս ճիշտ նկարագիրն է. միայն երբէք բնական կեանքի. դուն կեանք չունիս. դուն չես ապրիր:

—Հա, հա, հա. իրաւ որ ացդ բոլորը շատ հետաքրքիր է, կատակերգութիւնը սկսաւ. շնորհակալ եմ Անշուշտ բացատրելու պատիւը այսախ ընես, թէ ինչպէս է, որ դուն կապրիս, և ես չեմ ապրիր:

—Շատ սպարզ, որովհետեւ ամեն տեսակ վայելքէ զբկած հաինքը ինքինքդ:

—Այսինքն:

—Ինձի նայէ. ապրիլ կեանք վայել ըսել է:

—Միթէ:

—Կեանք վայել. կը հասկընամս. վայել. ով կեանքը չի վայեր՝ ան չապրիր. ով հաճոյք չունի՝ ան կեանք չունի: Դէ, ըստ տեսնեմ, մըն է քու հաճոյքդ, մւր է քու հաճոյքդ: Բնութեան դիմաց աչքերդ գոյեր ես. դուն բնութիւնը կը ճանանաս գրքերէն, ուրիշ խօսքով բնաւ չես ճանչնար, որով և չես սիրեր. բնութիւնը քեզի համար հաճոյք չունի: Նմանապէս քեզի համար հաճոյք չունի և գեղարւեատը. նրաժշտութիւնը ականջներուդ համար գոյութիւն չունի. նկարի մը առջեւ կը յորանջես. բանաստեղծութիւնը, գեղեցիկ գրականութիւնը քեզի համար ծաղրի առարկայ է միայն, ու թատրոնը բումբեր ցոյց տալու տեղ. գեղագիտական զգացումը կը հեգնես, ճաշակը կ'արհամարես. ճաշակը. կեանքը ճաշակելու կարողութիւնը. ինքդ քու հաճոյքիդ աղբիւրը ձեռքովդ կը խցես:

Վասակ ոտքը ոտքին վրայ նետած, թերը գլխուն տակը դրած անշարժ ու ժպոերես կը նայէր Բագրատին:

Բագրատ շարունակեց:

—Այդ բոլոր զրկանքներուն հետ ինքը ինքինքդ կը զրկես նաև սէրէն, սիրելու վայելքէն, բնական սիրոյ ճաշակումէն: Այդ բնական սիրոյ յատուկ եղած փափկութիւնները, նրբութիւնները, զգացնութիւնը, յուզումները, վախերը, կատաղութիւնը, ոգեւորութիւնը՝ այ այդ բոլորի քիթին կը ինդաս գուն. և այդ հաճոյքներու ահագին դէզի փոխարէն կը բաւականանաս միայն սիրոյ մէկ որոշեալ

Փազովը. և սիրոյ այդ մէկ որոշեալ Փազը, որ գուն Փիզիքական կանւանես, քեզի չի տար ամբողջովին իրեն յատուկ եղող հաճոյքը, որովհետև բոնի կերպով անջատած ես իրեն յարակից միւս ամեն անհրաժեշտ հոգեկան պայմաններէն. որովհետև անդոսնած ես զգացումներու բնական զարդացման աստիճանաւորութիւնը: Այդ անընականութիւնն է որ քու բաղդդ բութ կերպով կ'ըզգայ և դուն զգւանք կ'ըզգաս ինքդ քու վարմունքիդ դէմ՝ քու սիրուդ դէմ, վոխանսակ հպարտութիւն ու երջանկութիւն զգալու: Գիտես, զո՞ն օր մը ինձի հրէշ անւանեցիր, որ ես զեռ սիրած չէի քու կարծած սիրովդ. հիմա այդ ածականը ես քու երեսիդ կը զարնեմ: Նիշը զուն ես, որ զեռ բնական կերպով սիրած չես, և չես ալ կրնար սիրեր, որ չես կրնար բնական ազջկան մը ամբողջ սէրը ու բովանդակ էութիւնը վայելել: Սէր իր բոլոր քնքշութիւններովը, երազներովը, դողերովը, նախանձովը, հպարտութեամբը, կրքերովը, մոլեգնութեամբը. սէր իր յուզումներու, զրդիւններու, հեշտանքներու բովանդակ աստիճանաւորութեամբը:

—Նունշանորպի բառեր:

—Իրաւ կան մարդիկ, որոնք իրենց սիրային հաճոյքները, ինչպէս նաև իրենց կեանքի միաբոլոր հաճոյքները ուսնակոլս կ'ընեն, կարհամարեն. որոնք ապրելէ կը դադրեն՝ միայն զիտելու ու տրամաբանելու համար. ասոնք մարդկութեան զիւցազներն են. հայրենիքի կամ զազափարի մը համար մեռնող զինւորի մէկ ուրիշ ձեւն են ասոնք. խնդիրը ձեի մէջ տարբերութիւն ունի, էապէս նոյնն է. իր կեանքը զոհել իր սեռի յառաջդիմութեանը նպաստելու համար: Այդ տեսակ զիւցազներ են, օրինակ, իրենց երիտասարդութեան 37 տարիները քիմիական աշխատանոցի մը հոտերուն մէջ փակւած աղաւնիներու ծերտի քանակական ու որակական վերլուծութեամբը զբաղւող պրոֆեսորները կամ ամբողջ կեանքերնին խոշորացոյցի խողովակին վրայ ծուած զիփտերիտի կամ քոլերայի միքրոբները ուսումնասիրող բժիշկները. կամ իշ ամբողջ կեանքը մարդու աշխատութիւնը թեթեցընող մեքանայի մը կազմութեան վրայ խորհող գիտնականը: Այս մարդիկը իրենց բոլոր հաճոյքները զոհած են մարդկութեան յառաջդիմութեանը. կամ, աւելի ճիշտ արտայացութեամբ, իրենց այդ բաղմաթիւ մանր հաճոյքները փոխանա-

կած են մէ՛կ՝ բայց մեծ, խոր ու անփոխարինելի հաճոյքի մը հետ, մարդկութեան յառաջդիմութեանը նպաստած լինելու գիտակցութեանը հետ, գիտակցութիւն մը, որ մեծ մարդիկներու կեանքին գերազոցն հաճոյքն է: Խոկ դժւն, դուն նոյն խակ անհեթեթ կը դանես անձնազոհութիւնը, ու ծիծաղելի կը համարես անոր պատճառած հաճոյքը: Սակայն այդ մեծ հաճոյքներէն վազ անցնինք. դուն կը ճանչնաս ամէն մարդու համար սովորական եղող բնական աշխատանքի բնական հաճոյքը, կեանքիդ մէջ սիրով-արտով երբէք աշխատամծ ես. գործ մը տեսած ունիս. քեզի կամ նմանիդ համար գործ մը տեսած լինելու հաճոյքը ջիղերէդ վազմծ է երբէք: Ե՛, խեղճ մարդ: Բնութիւնը վայելել չես կրնար, գեղարւեստներէն հաճոյք չես զգար, աղջիկան մը տիրանալ չես կրնար, ոչ վիշտ ունիս, ոչ ուրախութիւն. ոչ աշխատանքը կը ճանչնաս, ոչ իր հաճոյքը. է, ալ ինչու կ'ապրիս. ուրիշներու ըրածին չհանելու համար, ուրիշներու աշխատանքը ծաղրելու համար: Դէ, հերիք է. քալէ երթանք, զլուխս տաքյաւ:

— Երևի վառօդդ սպառեցաւ, նկատեց Վասակ ու մկան նորէն բարձրածայն խնդար:

Ալ չխօսեցան իրարու հետ, միասին դուրս ելան, իջան տանդուղներէն ու դռան առաջ պատրւակով մը իրարմէ բաժնըւեցան:

Բագրատ տուն շոտապեց Լուիզը մտածելով. իսկ Վասակ մտամոլոր մտաւ կողմնակի փողոց մը:

«Վայ շունշանորդի. ինչ գաղափարի ժայռութիւն. մոլեռանդին մէկը: Եւ ինչի վրայ է այդպէս ամուր ոռքերը դէմ արւեր. մե՞ր գիտութիւններու, որ գեռ շնորհքով փաստեր չունի. իր փորձառութեան, որ գեռ վեց հատէն աւելի չէ. լնթերցման. ա, ինչ հոտած հակատական բաներու դէղ է այն Սակայն մասամբ ըստաներուն մէջ ճշմարտութիւն ալ կայ: Սէր. դուցէ իրաւ է: Բնութիւնը. իրաւ է. բնութիւնը ինծի մխիթարած է երբեմն. ես սիրած եմ Կովկասի լեռները, մեր Տրապիզոնի լեռները. չէ որ մեր ագարակը ես միշտ գերազաս եմ համարած քաղաքէն. գետակի մը ձայնին տակ իրաւ որ մարդ կարծես կը կակդի. սակայն չէ որ այդ թուլութիւն է, ջիղերու գրգռում. զարմանալի կերպով տարբեր-աարբեր կը դատեն մարդիկ միւնոյն երեսյթը: Գնրծ,

աշխատանք կ'ըսէ ան. պարզ է, որ կենդանին իր գործունէութամբն է կենդանի. այդ գիւտը ընելու համար մինչեւ Ամերիկա երթալու պէտք չի կայ. շատ սիրուն. բայց... ախ, այդ բայցը. ի՞նչ գործել, ի՞նչ բանի աշխատիլ, ի՞նչ ընել. ահա հռո է հարցը, տարակոյսի մեծ հարցը, որն է ճշմարիտ, բնական գործունէութիւնը: Ե՛, որքան երջանիկ է գիւղացին, որ կապրի միւս կենդանիներուն պէս առանց աւելորդ ինչուներով, ինչպէսներով գլուխ յօդնեցընելու. եթէ հինգ սխոսորի գլուխ ըստկեն, մեծ գործ մը կառարած լինելու գոհունակութեամբ կուտեն սոխի մը գլուխը, կը սրբին բերաննին ու երկնաւոր թագաւորին փառք կու տան... Բայց միթէ միայն գիւղացիները. չ՛ այս մարդիկն ալ դոհ են ու երջանիկ. այդ բագրատը, այդ իդէալներով խցւած ասլուշը, այդ ազնիւ ու ոգևորւած դրումը. բայց ինչ կուզես ըսէ. բաղդաւոր տղայ. սխալ թէ միշտ՝ իրեն համար ճամբայ մը ընտրեր է, զոցեր է աչքերը ու կը վազէ, վստահ իր ըրածի ճշութեան, կատարեալ հաւատքով ու եռանդով. և երեկ հոտ է իր անհուն ոգևորութիւնը և ուժը: Ինչ ալ որ լինի անոնք բաղդաւոր են. տղան իրաւ կ'ըսէ. անոնք կեանքը կը վայլեն. հաճոյք, ամէն կողմէ հաճոյք կը փընտըսեն, մնացածը իրենց չի հետաքրքեր. հաճոյք. և արդիօք ապրելու շիտակ ճամբան այդ չ՛ Ե՛, տիմար մտածումներ այս բոլորը»:

Զեռքը թափ տւաւ ու նոր փողոց մը մտաւ:

ԻՊ.

Վարդեւառի կիրակին օրը տղայքը երեք աղջիկները առին ու Մեծ. կղզի տարին:

Հիանալի օր մը անցուցին վարը՝ ծովեզերեայ ճաշաբանին մէջ, վերը՝ կղզին գագաթը, անտառներուն մէջ:

Դինին ազլւած, բնութենէն շեշտըւած կատակները շափէն աւելի բացւեցան. զըւարթութիւնը խենթ ոգևորութեան մը դիմակը հագաւ:

Բագրատ ու Լուիզ, թէեւ միւսներէն նկատելի չլինելու համար միշտ զգուշ՝ չէին կարող ծածկեր իրենց անհուն ուրախութիւնը և այն ուժգին ձգողութիւնը, որ կըզդացին դէպի իրար:

Հայեացքները ոլաքներ էին դարձած սրաերու նշան առած.

Ժալիսները թակարդներ՝ իրարու յափշտակութիւնը օղակելու։ Ամէն պատեհ առիթով կը սեղմըւէին իրարու, իրարու ձեռք կը սեղմէին դողունի։

Անտառին մէջ պահւըտուք խաղացին քիչ մը բայց իրենց թաքսողներուն մէջ անհամբեր՝ դուրս թափեցան բոլորն ալ ու ահագին աղմու կով խառն սկսան իրարու ետևէ վազվել, իրարու զարնել, քաշքշել, փախչիլ. աղջիկներուն սուր քբքիջը, տղոց պոռըտուքը իրար էին խառնըւեր։

Այդ շփոթութեան ու իրարանցման մէջ Լուիզ ու Բագրատ քանի քանի անդամ իրարու գիրկ ինկան, իրարու ճմլըւեցան։

Ու կը ինդացին, ու կը խօսէին. կը ճլւըլացին անվերջ, բոլորն ալ։

Երբ շողենաւէն ուաքերնին կամուրջ դրին՝ ամենքն ալ յոդնած էին. մեղկ ու յափրեցուցիչ յոդնութիւն մը։

Իսկ Լուիզ երջանիկ։

Գէորգ յաջորդ օրւան դպրոցը գոց լինելէն օգտըւելով՝ շիտակ Պոլսի կողմէը անցաւ՝ խան՝ իր հայրենակիցներուն սենեակը։

Իսկ միւսները տունն ալ քիչ մը քբքջալէն վերջը՝ ցրւեցան իրենց սենեակները խռոտանալով, որ յաջորդ առտու կանուխ երթան Պերացի հասարակաց պարտէզը նախաճաշելու։

Բագրատ իր հաշիւը ունէր էլէնին կարի դաս ունէր, որով հոն երկար մնալ էր կրնար, նաև Օգիւստան, որ դպրոց պիտի երթար Յուլիսի պայծառ առաւօտ մըն էր այս երկուշաբթին։

Հասարակաց պարտէզը հազիւ մէկ-երկու հոգի կային։

Երիտասարդ խումբը քաշեցաւ կանանչապատ անկիւն մը, Պափորի դէմ, Ասիական զւարթ ցամաքի ճակտին։

Այդ գեղեցկութեան ու բարձրութեան վրայ զըւարթ ու բայ էր բոլորի սիրտը. նաև ստամոքսը։

Նախաճաշը, խօսքն ու կատակ երկար տեսեցին—մինչեւ որ էլէնին առաւ իր կարին կողովիկը, Օգիւստան իր դրբերուն պայուսակը—ու ոոքի ելան։

—Իսկ դժուք. հարցուց էլէնին նախանձի շեշտով մը։

—Մենք զեռ քիչ մը կը նստինք. ես կարդամ պիտի. ըստ Բագրատ անտարբեր, գրապանէն գրքոյի մը հանելով։

իսկ լուիզ արդէն ձեռագործով կ'աշխատէր:

Բարեեցին ու հեռացան երկուքը:

— Մնացինք առանձին. ըսաւ աղջիկը թեթև մը կարմրած.

աչքերը նախ Բագրատի գէմքին, ետքն ալ վարի կապոյտ ալիք-ներուն նետելով:

— Բարեբաղդաբար. պատասխանեց տղան. գիրքը վար դրաւ. յենեցաւ աղջկան աթոռին. բռնեց անոր ձեռքը ու սեղմեց պինդ մը, ուրիէ ժանեակին ասեղը աղջկան զիրկը սահեցաւ:

— Ի՞նչպէս ուժով էք. ձղեցէք, ձեռքս ցաւցուցիք. ձկնցէք, թէ չէ կը ժակեմ. ըսաւ աղջիկը շփանալով:

— Ծակեցէք. պատասխանեց Բագրատ աւելի սեղմելով:

Լուիզ ասեղը առաւ, քաջութեամբ տղու ձեռքի երեսին գըպ-ցուց ու կամաց մը ճնշեց. յանկարծ անդին նետեց ասեղն ու ժա-նեակը, երկու ձեռքով յափշտակեց աղուն ձեռքը ու սրտին սեղմեց:

— Վախ, վախ. ա, ինչ անդութեմ. ցաւ եցաւ:

Ու այնողէս քնքուշ, խանդաղատանքի, շոյանքի հայեացք մը սա-հեցուց աղու աչքերուն, որ Բագրատ զողաց ու ջղաձգօրէն սկսաւ. ճմլել քօրսէին այն մասը, որուն տակը սիրուլ լինելու էր:

— Կարդացէք, կարդացէք. ըսաւ աղջիկը, մեղմութեամբ տղու ձեռքը հեռացլնելով ու ամըչքոտ աչքերով իր շուրջը պարտէզը դիտելով:

Բագրատ մեքենաբար առաւ գիրքը, թերթեց, բացաւ երես մը, քիչ մը ատեն անթարթ վրան նայեցաւ ու նորէն նետեց քովի աթոռին վրայ:

— Զէ, չեմ կրնար, ախորժակ չունիմ:

— Աւրեմն բնութիւնը ուսումնասիրեցէք. տեսէք, ինչ սիրուն են դիմացի լեռները. ա Չամլընան է. ւեսնելը կը սիրէք: Հասկա այս երկինքը. կը տեսնէք այդ ամպի խոշոր կտորը. հասկա ըսէք տեսնեմ ինչի կը նմանի. կարծես թեերը կտրած արձան մը լինի. Ֆէթհովէնին բիւտոը տեսմած էք. բաց լինչքան կը նմանի. զար-մանք. այնպէս չէ:

Բագրատ նստած էր անշարժ՝ աչքերը շեշտակի աղջկան երե-ամին զամած: Ոչինչ չէր լսեր:

Յանկարծ աթոռը առաջ քաշեց դէսի աղջիկը. ու անոր ձեռքէն ժանեակներու կծիկը քաշելով—

— Դուք ալ մի' աշխատիք, ըստ:

— Ինչու. է, մի' քաշեք թելս. կը փրթի. թողէք. տեսէք՝ արդէն հատնելու վրայ է:

— Զգեցէք, թէ չէ կը փըրցընեմ:

— Զեմ ձգեր. ըստ աղջիկը ակռաները սեղմելով:

Բագրատ քաշեց թելլ, փրցուց. մնացած կծիկը ամբողջ քաշեց արագ-արագ, բոլորը փեթըռտեց, բզիկ-բզիկ ըրաւ, փետըռտուքները լեցուց աղջկան զիրկը ու խոր շունչ մը առաւ.

— Հա, այսպէս:

Աղջիկը տղուն երեսը նայեցաւ. ու շիկնեցաւ. տղու աչքերուն մէջ անսովոր բան մը կար:

— Խեղճ լթելերս. անոնց յանցանքը ինչ էր. ըստ. աղջիկը իր ներքին յուղմունքը զաղելով: Ե՛, հիմա ես ի՞նչ ընեմ:

— Խօսեցէք, պատմեցէք, ժպտեցէք, ինծի նայեցէք, ձեռքեր-նիդ տըւէք ինծի:

— Բայց չափազանց ագահ էք. այդչափ բան որ միասին կը պահանջէք, ես որ մէկը կատարեմ:

Բագրատ ոսքի ելաւ.

— Քալեցէք տուն երթանք. ես հոս այլ ևս չեմ կրնար նստիր:

— Ինչու:

— Ե՛, այսօր որչափ շատցեր է ձեր «ինչուն». երթանք, արդէն ժամանակ է:

— Տըւէք դլսարկս, հովանոցս ալ: Կոճկեցէք սա ձեռնոցս: ու սա ժանեակներս գրպաննիդ դրէք:

Հրամայեց աղջիկը հատիկ-հատիկ, իրարու ետեէ:

Փողոցը տաք էր ու փոշի: Տրանւայ նստեցան:

Ամբողջ ճանապարհը աղջիկը իր փեթոտած թելերուն վրայ կը գանգատէր, կը բսպանար, կը հեգնէր:

Տուն հասան: Մայրը խոհանոցն էր:

Բագրատ աղջկան թելը անգամ մըն ալ սեղմեց ու մոռաւ իր սենեակը:

Սինեակի մէջը կը դառնար. իր ուզածը ինքն ալ չէր դիմեր.

կեռար սիրտը. մոտածեց աղջկան սենեակը երթայ. գնաց մինչեւ դուռը ու հս դարձաւ. պառկեցաւ վայրկեան մը քանապէին վրայ. ոտքի ցատկեց, կեցաւ հայելիին դէմը ու սկսաւ իր դէմքը դիտել առանց ոչինչ տեսնելու. գնաց բաց պատուհանին առջեւը ու սկսաւ հեռուն նայել: Ամեն կողմ՝ իր աչքերուն դէմ երեցողը միշտ նոյն շինած սիրուն գլուխն էր, որ հպարտութեամբ կը բարձրանար իր առանձգական ուռուչիկ պատասնդանին վրայ:

Եւ միևնոյն ժամանակ ուշադրութեամբ կը հետեւէր դուրսէն լսող իւրաքանչիւր ձայնի: Կմեց որ աղջկան սենեակի դուռը բացւցաւ, ճանցաւ աղջկան քայլւածքը, որ դէպի իր սենեակը կուգար. սիրու սեզմլւեցաւ բերկրանքէն:

—Ի՞նչ կ'ընէք հոտ, հարցուց աղջիկը սեմէն:

—Կը կարդամ. պատասխանեց Բագրատ մեքենաբար քովի սեղանէն գիրք մը վերցընելով:

—Գիրքերնիդ հիմա վար դրէք ու բռնեցէք սա թելերս, որ կծիկ փաթթեմ. ինչպէս որ թելերս փեթլուտեցիք, այնպէս ալ հիմա ինծի օգնէք պիտի:

—Ո՛չ, ես կարդամ ոլիտի. ըսաւ Բագրատ աղջիկը զայրացընելու համար. ու խիստ լուրջ դէմք մը առած դրասեղանին առջեւը անցաւ:

Աղջիկը մօտեցաւ, խլեց ձեռքէն գիրքը, անդին նետեց ու թելերուն փաթոյտը տղու թեկերուն անցուց:

—Հանդիսաւ. մրմնջնց շրթունքներուն մէջէն՝ մատը տղուն վրայ թափ տալով:

Ու աչքերը տղու աչքերէն չի բաժնելով դնաց նստեցաւ գիմացի բազկաթունին մէջ ու թելը մեքենաբար կծկել սկսաւ:

—Բայց ես կարդալ կ'ուզեմ. կրկնեց նորէն:

—Զգուշ. թելերս իմադողէք պիտի. հրամայեց աղջիկը:

—Կեցէք. գոմայ. բացականչեց երիտասարդը:

Ոտքի աթռուը ոտքովը աղջկան ոտքերուն քովը հրեց, նստեցաւ վրան, գիրքը դրաւ աղջկան գիրկը ու իր արմունկներն ալ կրթընցընելով անոր ազդրերուն—

—Իէ, դուք փաթթեցէք. ըսաւ. ես ալ կը կարդամ:

—Չափազանց հնարագէտ էք, նկատեց Լուիզ:

Ու ծունկերը գողացին, որոնք տղու կրծքին էին ցենած. իր լանջը յուզումէն կը շնչառէր. իսկ ձեռքերը մեքենական ջղոս թափվ մը կծիկը կը փաթթէին:

Թելին փաթոյիթը տղու ձեռքերէն վար սահել սկսաւ:

Երկուքն ալ անթարթ, կիզող, քաշող, տենչոս հայեացքով մը իրարու կը նայէին:

Լուիզ յանկարծ կծկելէ դադրեցաւ. ու դողլոջուն, խոր շունչ մը առաւ:

—Անահ...

Իսկ հագրատ առանց աչքերը անոր աչքերէն բաժնելու՝ բըս. նեց աղջկան զօյդ ձեռքերը ու մոլեգնութեամբ իր կրծքին վրայ ճմիել սկսաւ:

Թելերը խրճիճւեցան. անցան աղջկան դօտիի երկաթին, տղու կոճակներուն ու երկուքի մատներուն:

Լուիզ ուժասպառ թեկերը թողուց. ու գլուխը կամաց-կամաց վար խոնարհիլ սկսաւ:

Բադրատ նախ աղջկան խոսպափիկները դգաց, որոնք իր ճակատը խտխտեցուցին. տեսաւ անոր աչքերուն գոցւիլը. եաքը շունչ մը վազեց իր ընչացքներուն մէջէն ու թաւիշի մեղմ շոյանք մը քսեցաւ իր շրթունքին:

Խենթի մը պէս բացաւ թեկերը. թելերը փեթըստեցան:

Տղան փարեցաւ. աղջիկը գողաց. ու երկու համբոցը մէկի ձուլեցաւ:

իդ.

Մինչ դպրոցի դործերը օր օրի կը վատթարանացին:

Կասկածելի ուսուցիչները օր օրի կ'աներեսնային. թաղական. ներուն քրտմնջումները կը սաստկանային: Բագրատ ամեն կողմէ աղ. տոտ բամբասանքներ կը լսէր. նոյն իսկ լսեց, որ իր մասին ոստի կանութեան ականջը բաներ էին դրեր:

Այս բոլորը խմանալը, դպրոցի մէջ միշտ կասկածով վերաբեր ւիլը, ուսուցիչներուն վրայ շարունակ հսկելու սոխուած լինելը, թաղականներուն մէկ-երկու բացակրութիւններ տալու հարկադրւիլը այն դիտակցութիւնը, որ աւելորդ ժամանակ ու ուժ կը կորսնցընէր:

այս բոլորը սասառի՛ զգւանք կ'ազդէին Բագրատին ու կը յոդնեցնէին.
ան, որ յոդնութիւն բառը լսել չէր ուզեր:

—Այս դործերը դպրոցի մէջ մտնելու չին. այս կերպով դործ
չի քալեր. կ'ըսէր Սարգսին զայրոցթի վայրկեաններուն: Գոնէ ազգ
անպիտանները անմիջապէս դպրոցէն հեռացընելու է:

—Արդէն քեզի ըսի, որ չես կրնար. շունշանորդիները մտեր
են թաղականներուն վիշին տակ:

—Այն ատեն լաւ է մենք անմիջապէս դործը ձգենք: Բայց...
բայց տղաքը. ա...

Բագրատ կ'ըզգար, որ կապւած էր արդէն իր աշակերտներուն:
Միւս կողմէն արձակուրդէն առաջ դպրոցը երեսի վրայ ձգելու խիզճ
կ'ընէր: Վճռեց ամիս մըն ալ ակուանները սեղմէ:

—Ասուած իմ, գեռ ամբողջ ամիս մը. կ'ըսէր.

Ու մոռնալու համար ինքը լինքը զբաղման կու տար:

Իսկ Գէորգ բոլորովին թուլցած էր արդէն:

—Լաւ, ի՞նչ քեզի կտոր-կտոր կ'ընես. կը կրկնէր Բագրատին:
Մէկ-երկու շաբաթէն ձղես երթաս պիտի. ուրիշները պիտի գան ու
բոլոր շինածդ քանդեն պիտի:

—Մեղք, մեղք տղոցը. այսպէս ժիր, այսպէս մտացի. նորէն
պիտի բանեն խեղճերու զլուխը զրաբարի հոլովներ, որինք են մա-
հացու մեղքերց ու աշխարհագրական անուններ պիտի խոթեն:
Ա, Գէորգ, որ կը մտածեմ...

—Այսպէս է աշխարհը. աշխատէ, աշխատէ, վերջն ալ ամեն
բան երեսի վրայ թողնել ու հեռանալու ստիպւէ. ապերախտ ժոռ-
զովուրդ, որ իր օգուտը չգիտէ. մեր աղջը արդէն այսպէս է. մենք
մարդ լինելիք չունինք:

—Լոէ, խելօք. ի՞նչ ափեխ-ցփեխ լեզւիդ կու տաս. ազդը,
ցեղը, ժողովուրդը ի՞նչ ընէ. ժամանակի, կրթութեան, զարդաց-
ման խնդիր է ազգ. աշխատելու է աւելի բարձր զգացող ու աւելի
ճիշտ մտածող մարդիկ սպառաստելու. ուրիշ ոչի՞նչ:

—Ե', շիտակը, ես յուսահատած եմ արդէն, սպառասխանեց
Գէորգ տարօրինապէս խեղճ ու տխուր շեշտով մը:

—Քիթդ. բերանդ մի՛ ծոեր, անշնորհք: Աշխարհի մէջ ամե-
նէն անխելք ու անօդուտ բանը տխրիլն է. իսկ տխրելէն ալ դէշ է

յուսահատիլը: Ոչ տխրելէն գործ մը առաջ կու գայ, ոչ յուսահատելէն: Ուրախ եղիր, վատահ ու աշխատէ: Աշխատելու է միշտ թէ յաջող և թէ անյաջող վայրկեաններուն. աշխատանքը միայն գործ մը տեսնել կրնայ:

— Բայց որ չեն թողուր աշխատելու, ո՞ս կը խանդարէն:

— Երէ, որքան կրնաս: Այս կողմէն քայլ մը ընել անկարելի է, ձղի հոս ու միւս կողմին փորձէ: Աշխատանքը բերդ մըն է, որ զրաւենք պիտի. այս կողմէն չեղաւ, պիտի յարձակւինք միւս կողմէն. դուռները կոտրելու չի յաջողեցանք՝ պիտի մարլցենք պարիսպներն իգեր. մինչեւ որ վերջապէս բերդը մերը լինի: Կարելի է մենք ալ կ'ինանք այդ յարձակման ատեն. աւելի լաւ. ոգեւորութեան վայրկեանի մը մէջ կ'անցնիս ոշնչութեան սեմէն. Բ'նչ. կը կարծես շատ ախորժելի բան է թքնելով, աքալով ամիսներով անկողնին մէջ գլատուիլը:

Ու սկսաւ խնդալ:

— Դեռ խնդալու ալ սիրտ ունիս: Եխտակը, ո՞ր կողմ ալ որ դառնաս՝ միայն լալու բան կայ մեր հասարակութեան մէջ:

— Լալ ու ողբալ, ահա մեր իրաւ. որ լալու բաները, մեր առնէն մեծ հիւանդութիւնը: Մեր բանաստեղծները կու լան, մեր ճառերուն մէջ կ'ողբան, մեր երգերը կ'արտասւեն, մեր գասագըրքերն անդամ արտասուք ունին. մեր լրագիրները եղերերդուներու կը նմանին, մեր ընկերութիւնները՝ լալկան կնկան. ամէն կողմ կու լան. կու լան ու մեծ գործ մը կատարած լինելու դոհունակութեամբ մէկ կողմ կը քաշւին: Այդ արցունքի կէսին չափ եթէ քրտինք թափէ էր՝ հիմա մենք շնորհքով գործիչներ կ'ունենացինք, և ոչ թէ մարդակերպ բառի տոպարակներ:

Գէորգ սկսաւ խնդալ:

— Հա, այդպէս. կը տեսնես. վրադ մարդու շնորհք եկաւ խնդալ. խնդալ ու աշխատիլ. կեանքի ուժը, խանդը, առողջութիւնն է այդ: Ծաղրէ, հեգնէ, զայրացիր, կատղէ, խնդալ, ինչ որ կ'ուզես—ազատ ես. մինակ մի՛ տխրիր, մի՛ յուսահատիր. տխրողներու բանակներ ունինք. քիչ մըն ալ ուրիշ տեսակի մարդիկ ունենանք: Զարկած վայրկեանիդ խնդա, զարնըւած վայրկեանիդ հեղնէ. աշխատանքի ատեն զւարձացիր, մահւան ատեն կատակաբաննէ.

ահա քեզի փիլիսոփայութիւններուն փիլիսոփայութիւնը։ Նիտակը քեզի խորհուրդ չեմ տար՝ փիլիսոփայութիւններու շատ ականջ կախու. բայց եթէ կազ մէկը որուն հետեւիլ կ'արժէ՝ այն ալ այս է։

Արտաքուստ հանդարտ ու ներքուստ լարւած օրերը կ'անցնէին իրարու ետևէ։

Բաղրատի միմիթարութիւնը Լուիզն էր։

Տունը բոլորովին ուրիշ մարդ կը գտանար կարծես։

Ան որ զպրոցը մինչև վերջը կամ կատղած էր թաղականի մը հաստագլխութեան դէմ, կամ զըզւած էր նոր ականջը հասած տիմար բամբասանքէ մը, կամ գանած իր մէկ-երկու ուսուցիչներու արտաքին կեղծաւորութենէն ու քսութենէն և կամ ինքն իր դէմ զայրացած, որ այդ բոլոր աղասոսութիւնը հանդուրժելու չափ ինկած է արդէն. այս ամենէն վերջը իրենց դուրսեցիի սենեակը անոր արքայութիւն կը թըւէր. սիրոյ ժպտուն արքայութիւն մը։

«Սիրոյ մէջ շահողը խաղի մէջ կը կորսընցընէ՝ կ'ըսէն. բայց երեխ սիրոյ մէջ շահողը գործի մէջ ալ կը կորսընցընէ եղեր». կը մոածէր նազրատ։

—Ինձի նայէ, Բագրատ. ըստ յանկարծ օր մը Գէորդի Եթէ ես քու տեղդ լինէի՝ մինչև հիմա խենթի պէս սիրահարած կը լինէի Լուիզին։

Բաղրատ անակընկալ հարցէն կարմրեցաւ։

—Այդ սւրկէ հիմա միտքդ ինկաւ։

—Այդպէս մինչև վերջը իրարու հետ. այդ տեսակ խելօք ու գեղեցիկ աղջիկ մը. պարզ է, որ եթէ գուն քայլ մը ընես, ան երեքը սիրուի ընէ դէպի քեզի։ Դուրս ու ներս մոած-ելած ատենդ ետեկդ նետած հայեացքները տեսնելու ես. ամբողջ հոգին է մէջը. ծածկել կուզէ, բայց չի յաջողիր։

—Իրմւ. հարցուց Բագրատ ժպտելով։

—Կը զարմանամ քու անզգայութեանդ։

—Լաւ, քեզի ով ըստ, որ ես չեմ սիրեր. չք որ մինչև վերջը հետն եմ։

—Ե՛, գիտեմ քու հետը լինելու, խօսածնիդ ալ գիտեմ. խեղձի սիրուն զլուխը կ'ուռեցընես քու զպրոցովդ ու փիլիսոփայութիւններովդ. մեղք. այդ աղջկան հետ շատ աւելի քնքուշ ու

ւրտառովի նիւթեր կան խօսելու։ Ե՛, արդէն աղջիկ լսածդ ճաշակ չւնի. քեզի պէս անպէտքներու ետևէն կիյնան։

—Պարապի խօսքի ախորդակ չունիմ. վերջ տուր. մինակ միշտ աչքերուդ մի՛ հաւտար. լսաւ Բագրատ վերջին երկդիմի նախադասութիւնը շեշտելով։

Ու ակամայ քիթին տակէն ժպտեցաւ։

ԻԵ.

Արեւ արդէն շատունց էր մայր մտեր. ու մթութիւնը կը թանձրանար։

Վասակ ու Բագրատ հազիւ էշերէն իջան, որ երկաթուղիին սոցլը լսեցին։

—Գնացքը եկած է. շնուր. շտապեցուց Բագրատ։

Նւ արագ իշապանին վճարելով՝ Սան-Ստեփանօի վոքրիկ կայրանը վաղեցին։

Տոմսակները գնելը, վաղոն ցատկելը ու գնացքի շարժւելը վայրկեանի մը գործ եղաւ։

Գուպէի մէջ մինակ իրենք էին։

Երկուքն ալ մէց-մէկ անկիւն նետեցան շնչասպառ, երարուդիմաց։

Ոտքով, էշով չափեր-չափչփեր էին շրջապատող դաշտերը, ծովու բարձր ափերը մինչւ Ֆիլորիա, ուր իբր թէ ճաշեր էին ու նորէն նետւեր դաշտերը և այգիներուն մէջ։

Ու խեղճ իշերու հոգին հազիւ էին հասեր Սան-Ստեփանօի վերջին դեացքին։

Դուրսը արդէն մութ էր բոլորովին։

Գուպէի առաստաղէն կիսագունդ լապաերը աղոս լոյս մը կը թափէր վար։ Եւ վազոնին սպարապութիւնը տակի անիւներու դզրդիւնը կը կրկնապատկէր։

Երկու բարեկամները բաւական երկար նատած էին լուռ. Վասակ նստարանի թիկունքին փուած. Բագրատ, թեր սպատուհանին դուրսի մթութիւնը դիտելով։

Վերջապէս Բագրատ լուռթիւնը խղեց։

—Ի՞նչ կը մտածես. հարցուց։

— Զեմ մաածեր. կը նախանձիմ. կը նախանձիմ ձեզի: Շոգին վառեր էք ու կը վազէք առանց աջ ու ձախ նայելու. առանց հարցընելու ինչո՞ւն. բաւական է, որ շարժման մէջ լինիք. ալ դո՞հ էք. առանց հարցնելու թէ այդ ըրածնիդ օգուտ մը, նպատակ մը ունի. ճիշտ այս օրւան մեր պատցախն պէս:

— Սիրելիս, այսօրւան մեր պատցախը անօգուտ, աննպատակ կ'անւանես. սակայն կ'անցնին տարիներ, ու գուն այս օրը բնաւ չես մոռնար ու հաճոցքով կը յիշես. ապացոյց մը, որ մեր այսօրւան վարմունքը անօգուտ չէր: Եթէ խելք ունիս՝ այդ տեսակ ևաննպատակ գործեր շատ տես: Բայց այս մէկդի: Ձեզի կը նախանձիմ՝ կ'ըսես. գուցէ մասամբ ալ իրաւունք ունիս. քու ամենամեծ զըժբաղդութիւնդ անգործ լինելդ է. հազար անդամ արդէն ըսեր եմ:

— Մինչեւ հոս ենթադրենք քեզի հետ համակարծիք եմ: Ինձի նայի, բազրատ, մեր այսչափ ժամանակւայ ընկերակցութիւնը այլ ևս մեզի իրարու կապեց. կ'ուզեմ որ ինձի աղէկ հասկընաս. ես քու կարծածիդ շափ ալ անճաշակ, նիւթական ու եսամոլ չեմ. իմ՝ մէջս ալ կան վայրկեաններ, որ կարծես զգացումները տիրելու կ'ելնեն. ժամեր կան որ անձնազոհութեան էլ պատրաստ եմ. ես երաժշտութիւնը կը սիրեմ. ջիղերու թուլութիւն է ինչ ընեմ. նոյն իսկ, կ'ամը նամ խոստովանելու, սիրոյ իդէալական պատկերի պէս բան մըն ալ ունիմ գլխուս մէկ անկիւնը. ես ալ երբեմն կը բաղձամ կարծես անմեղ աղջկան մը շիկնու, քնքուշ պլատոնական նայւածքին. ինչ ընենք, սիրելիս, մեր ծուռ կը թուլութեան արդիւնքն է. աշխատանքի պահանջ, բան մը ընելու ձգտում, ձեր գործունեայ կեանքին դէմ նախանձ մը—այդ բոլորը իմ մէջս ալ կան. եթէ մինչեւ հիմա չեմ խոստովանած պատճառը հպարտութիւնս էր. որովհետև գիտեմ, որ ատոնք անբնական, ծուռ, հնաւանդ բաներ են, որոնց դէմ մաքառել պէտք է, արմատախիլ ընել պէտք է:

— Խեղճ, բռնի կերպով կեանքդ իր սնունդէն զրկել կ'ուզես. չիմա առանց կատակի կ'ըսեմ. գուն հիւանդ ես:

— Դուցէ. միայն ոչ քու կարծած ձեսփդ: Այդ բոլորը, այն, իմ մէջս ալ կայ. բայց ինչպէս որ կը տեսնես ճիշտ աղոնց հակառակ գաղափարներն ալ կան միւնոյն ժամանակ գանգիս տակ. և այդ հակառակորդները իրարու հետ չեն հաշտուիր:

—Այդ կը նշանակէ, որ մէջդ եղած գաղափարները իսկապէս չես իւրացուցած. ամէն լսած եկեր մնացեր է ուղեղիդ մէջը առանց քու սեփականդ լինելու: Ուղեղը ստամբոս է, և ոչ թէ Ահմէտի տուղրակը. ամէն ներս մտածը կամ արիւն գառնուլու է և կամ մարմնէն հեռանալու. առանց մարսըւելու մարմնէն չհեռացող մասերը ստամբոսի թուլութիւն ու աղիքներու բորբոքում՝ կը յառաջացընէ:

—Կեցցես, բժիշկ ալ ես եղեր:

—Կատակը մէկդի. լուրջ խօսինք:

—Նաև. եթէ ազգչափ առողջ ուղեղ ունիս՝ եկուր դուն մարսէ տեսնեմ այս մտածմունքները: Աշխատելու է՝ կ'ըսես. ես ալ քեզի հետ. միայն հիմա ինծի լսէ. երբ ես տղաց էի՞ մասնաւոր հակում մը ունէի լեզուներուն. ապադային լեզւագէտ լինել կը մտածէի. մեր աշխարհաբարը մշակել, զարգացնել կ'երազէի. իսկ հիմա մինակ այդ գաղափարը հերիք է ինծի ծիծաղ պատճառելու. համար լեզուներու ուսումնասիրութեան ու մշակմանը համար աշխատանք թափել. ինչու, քանի որ գիտեմ թէ այդ բոլոր լեզուները ջնջըւին պիտի վազ թէ ուշ՝ լնուհանուր համամարդկային լեզւի մը տեղի տալու համար: Ատեն մըն ալ մտածեցի օրէնսդիտութեամբ, քաղաքականութեամբ, փաստաբանութեամբ զբաղւելու. արդ, սիրելիս, մտածէ որ մեր արդի օրէնսդիտութիւնը հնարւած է պարզապէս ասորինութիւնները իր փէշերուն տակ պատսպարելու. համար. առ օրինակ կալւածական օրէնքները. ինչ արսուրտ. կալւած. ինչ օրինաւորութիւն է այդ որ մէկին վրայ կը վաւերացնէ հազարներով քառակուսի քիլոմետր հողեր, իսկ միւսին կաղամբ մը տնկելու իրաւունք չի տար: Հապա քաղաքականութիւնը. այդ վաւերացւած ստախօսութիւնը, այդ պաշտօնական խարեթայութիւնը, այդ կեղծաւոր տղրուկութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի փաստաբանութեան, որ միւնոցն ժամանակ այսո՞ն ալ կ'ապացուցանէ, ձչո՞ն ալ մօտիկ ապագային միայն կատակերգութիւններու մէջ դուրս բերել. լիք ենթաղրական բան մը պիտի գառնայ, ինչպէս օրինակ կախարդները, ստուսնաները մեր արդի բեմին վայա: Կամ գուցէ ինձի խորհուրդ տաս գեղարւեստներով զբաղւելու. գեղարւեստ. վայրկեան մը ենթաղրեմ, որ գեղարւեստ ըսւածը բանի մը պէտք է

աշխարհքի վրայ. բայց ի՞նչ է գեղեցիկը, ի՞նչ և, որն է գեղար-
ւեստականը. կրնաս տասը հոգի դափր, որոնք ամենքն ալ նոյն դա-
դափարը ունենացին այդ կէտին վրայ. միթէ կ'արժէ աշխատիլ
բանի մը վրայ, որ ուսոքի համար զեռ հաստատ որոշ չէ, և որ
ապագացին բոլորովին տարբեր բան մը լինելու է, եթէ ենթադ-
րենք որ իրաւ գեղսրւեստ ըստածը ապագացին լինելու է: Գեղի
պէս վարժապետ լինիմ. բայց զիտցիր, որ ճշմարիտ բնական կըր-
թութիւնը քու կրթական գաղափարներուդ այնպէս կը համեմատի,
ինչպէս այդ քու գաղափարներդ մեր այսօրւան իշապանի նոյն
նիւթի մասին ունեցած կարծիքներուն. և ես ենեմ այդ տեսակ
ծուռ. ճամբով գործ տեսնեմ: Ե՛, ըստ տեսնեմ ի՞նչ գործ մնաց.
արհեստաւոր գառնամ: հետզհետէ կատարելագործըւող մեքենաները
այլ ևս մեր ձեռքերուն ու ոտքերուն շատ պէտք չունին. իսկ քիչ
մը վերջը բնաւ պէտք պիտի չունենան: Թէ վաճառականութիւն
ընեմ: այդ աջոկ ու ձախով տների ցիմար սիստեմը, որու հոռը
անդամ մնալու չէ քանի մը տասնեակ տարիների վերջը: Ե՛, ուրիշ
ի՞նչ մնաց:

—Վարդապետ դարձիր:

Վասակ ժպտեցաւ:

—Զէ. անկեղծ կ'ըսեմ, որովհետև հիանալի ընդունակութիւն
ունիս բոլոր ճիշտ ու ծուռ գաղափարները այնպէս իրար խառնե-
լու, որ տակէն տատանան անգամ դուրս գալ չի կրնայ:

—Վարդապետ. ինչու չէ. ժողովուրդս խաբելու համար, որ
ժթէ յանկարծ փորը կը ցաւի, կը լուծէ ու քանի մը ժամ վերջը
կիյնայ կը մեռնի՝ պատճառը այն է, որ Աստւած բարկացեր է ու
իր վրէժը անոնց աղիքներէն դուրս կը քաշէ: Ինչու չէ. ժողովուրդս
համոզելու համար, որ ինքը թոյլ, անկարող էակ մըն է, որ իր
ուժերովը ոչինչ լնել չի կրնար և իր յոյսը դնելու է Աստւածածնի
գոտիին, սուրբ Մակարիսոսի գանդին ու Ակիւլինիանա կոյսի ազդ-
ուսկրին վրայ: Ինչու չէ. ժողովուրդիս քարոզելու համար, որ իր
բոլոր մեղքերէն ու յանցանքներէն մաքրըւելու ամենակարճ ճամ-
բան սուրբերուն, ճգնաւորներուն, խոտաճարակներուն առառ կա-
շուք տալն է, ի հարկէ քաղաքավարի անուններու տակ, և անոնց
բարեխօսութիւնը խնդրելն է. բարեխօսութիւն. ի՞նչ աժան բարո-

յա՞րանութիւն. խոտաճարակներուն բարեխօսութիւնը, հիանալի՛ է։
Գնացքը կայարանի մը առջև կանդ առաւ։
Տղայք լուռ դուրսի աղմուկը կը լսէին։
Երբ կայարանին լրջակը իրենց վագոնին առջեւէն ետ վաղե-
ցին և ծովուն վրայ փուռող մութը անոնց ընկերացաւ։

—Ինձի նայէ, Վասակ, ըստ նազրատ Մեր հասարակութեան
մեծագոյն մասը հոգով-մարմնով վաթթը լւած է անցեալին, հինին
ու ձի կրնար զատւիր, թէև անցեալի փատածութիւնը այդ գրկա-
խառնման ատեն մեզի ալ կ'անցնի. մեր խելօքները չեն կրնար
բաժնը լւիր այն անցեալէն, որ մեզի դէշ-աղէկ մինչև մեր արդի
վիճակին բերեր է և որ այլ ես տեսնելիք գործ մը չունի: Իսկ
դուն ալ ճիշտ հակտուակը քեզի անցեալի հողէն բոլորովին կտրեր
ես ու օդապարիկին պէս վեր կը բարձրանաս դէպի ապագան։ Այդ
ապագան քու աչքի փառաւոր է, քնական, արդի ողորմելի անհե-
թեթութիւններէն գերծ. այնպէս որ ոչ նըւազ իդէալիստ մըն ես
և դուն այդ քու համոզումներովդ; Սական այդ ապագայով այն-
քան ոգեսրւեր ես, որ ներկան, մեր խեղճ ներկան, այդ միշտ ար-
համարւող, մոռցը լուղ ներկան դուն ալ մոռցեր ես. անօթի մեռ-
նող մարդուն կը նմանիս, որ տարի մը եաքը իշխանին սեղանակից
լինելու երջանկութեամբը կ'ոգեսրւի ներկան, սիրելիս, ներկան
մտածէ։ Այդ քու լսածներդ, եթէ ոչ ամբողջ գէթ մեծ մասով իմ
երազներս ալ են. բայց այդ երազները չեն իրականանար, եթէ
մենք հիմակւան համար, միայն հիմակւան համար չաշխատինք։
Որքան որ ապուշութիւն է անցեալի նախապաշարումներուն զոհել
ներկայի առողջ պէտքերը, այնքան ալ տիմարութիւն է, ապագայի
երազներու սիրուն, ներկայի անհրաժեշտութիւնները ոտքի տակ
տալը։ Յառաջդիմութեան միակ բնական ճանապարհը ներկայի ու-
սումնախրութիւնը, ներկայի մասին մտածելը ու ներկայի համար
աշխատելն է մեր ներկայ պայմաններուն մէջ, մեր ներկայ հոգե-
կան ու ֆիզիքական ուժերովը։ Այդ քու անրջած ապագայիդ մէջ
մարդիկ ալ ուրիշ տեսակի մարդիկ պիտի լինեն. իսկ մենք
որ այս տեսակ մարդիկ ենք՝ մենք ալ մեր մայս տեսակի
պէտքերը հոգանք. մեզի համար երբ հոգանք՝ արդէն ինքնին ապա-
գայի համար հոգացած կը լինինք. մեր կարիքներու սահմանմէն

կատարած իւրաքանչիւր քայլափոխնիս քայլ մըն է և' դէպի յառաջդիմութիւնը։ Եզրակացութիւնս կ'ուզեա։ այդ բոլոր սիրուն փիլիսոփացութիւններդ գանգիդ մէկ անկիւնը աւլէ ու կենդանի, իրական դործի մը ձեռք զարկ. դործ մը, որուն շուրջը դառնաց քու բոլոր միւս մանր ու խոշոր զբաղումներդ, մտածումներդ, որ կեանքիդ առանցքը լինի. քեզի միայն աշխատանքը կը փրկէ։

—Բագրատ, քեզի խոստովաննելու եմ, որ քանի ժամանակէ ի վեր իմ կարծիքս ալ կարծես այդ է։ Դոնէ այսչափը ճիշտ է, որ աշխատանքի մէջ կը մոռնամ ինքզինքս ու խենթ-խելօք օրերը կ'անցնին։ Դիտես, որ Տրապիզոնի մօտիկ մեծ ազարակ մը ունինք, երթամ Ֆրանսա անասնաբուժական ու կաթնաստնական վարժարան մը, վերջը կը դառնամ մեր ազարակը. բիմիան կը սիրեմ, նմանապէս և անասունները. միշտ բնութեան մօտիկ—այդ ալ առաւելութիւն մըն է. զոնէ մարդ ամեն օր չի տեսներ մեր այս ջիմար ընկերական կարգն ու սարքը, ծուռ քաղաքակրթութեան այս ապուշ կազմակերպութիւնները, միւս կողմէն ծնողներուս ալ օգնած կը լինի։ Գաղափարիս թիւ կ'ըսես։

Բագրատ ոգեւորւած ոոքի ցատկեց ու ընկերոջը ձեռքը խլելով բոլոր ուժով սեղմեց։

—Գաղափարդ քու ուղեղիդ մինչև հիմա ծնած զաղափարներէն ամենէն երջանիկն է, բոլոր սրտովս կը շնորհաւորեմ. վայրկեան մը եթէ վարանիս՝ ամենէն ոչինչ մարդն ես աշխարհիս վրայ։ Ահա քեզի սիրուն ճանապարհ մը. թէ զուն անձնապէս կ'օգտըւիս և թէ քու ազարակդ, քու գիւղդ նոր հոսանք մը մոցուցած կը լինիս, ժողովրդի համար աշխատած կը լինիս։

Եւ վայրկեան մը մտածելէ վերջը շարունակեց ոգեւորւած։

—Ուրեմն այսպէս. ասկէ 4-5 տարի վերջը ամառւան արձակուրդի մը, երբ Կարինէն Տրապիզոն գամ, քու սիրուն ազարակիդ մէջ, քու ձեռակերտ թագաւորութեանդ մէջ փառաւոր ընդունելութեան պատիւը ոլխու ունենամ։ Նորէն նատինք միասին խօսինք, վիճենք. այն ատեն երեւի երկուքս ալ աւելի քիչ իրար կը զբգենք. և, վերջապէս ալ առնացած կը լինինք ու շատ աւելի փորձըւած։

Գնացքը մոաւ Սիրքէճիի կայարանը։

Երկու ընկերները վար իջան, ու առագայ ազարակի մտային

պատկերովը ոգևորւած շտապ-շտապ կը քալէին. երկուքն ալ ոգե-
որւած էին ու փոխադարձաբար իրար աւելի կը ոգևորէին:

Ղալաթիա իրարմէ բաժնւեցան:

Վասակ մտախոհ հասաւ տուն:

Մինչև կէս զիշեր սենեակին մէջ կ'երթար ու կու դար: Առա-
ւոտեան դէմ նստեցաւ ու նամակ մը գրեց, երկար նամակ մը
իր հօրը հասցէին: Լուսանալուն պէս ինքը անձամբ իջաւ Ղալա-
թիա, տարաւ ձգեց ոռոսական փոստը. ելաւ վերին Ռափոր մեկնող
շողենաւեի մը վերնայարկը, նստեցաւ հովին դէմ ու մտասոյզ իր
երկու կողմէն ետ-ետ փախչող Ռափորի սիրուն ափերը կը դիտէր:

Ի՞Զ.

Օգոստոսին շաբաթւան մը չափ էր մնացած. շաբաթէ մը
պիտի գոցւէր դպրոցը:

Ու Բագրատ բոլորովին փոխւած էր. չափազանց նեղսիրտ,
մտածկոտ ու անհամբեր էր դարձեր:

Գէորգ ու մօտիկ լնկերները կը մտածէին, որ դպրոցը ձգելու
զայրոյթէն է: Ու մէջէմէջ սիրտ տալու խօսք մը կ'ընէին, որուն
բաղրատ արհամարդու ժպիտով մը կը պատասխանէր.

— Ինքըզինքնիդ մխիթարեցէք:

Գիշերները ուշ ատեն տուն կուգար, առաւօտները շատ կա-
նուխ տունէն կը հեռանար: Ցունը բոլորի հետ չոր յարաբերու-
թիւն մը ունէր. ու կ'աշխատէր Լուիզին քիչ հանդիսելու, այն
ալ միշտ ուրիշներու ներկայութեանը:

Օր մը երբ պատահմամբ առանձին մնացին —

— Բայց, Բագրատ, ինչ ունիս. ինձի դէմ ինչու զայրացած
ես. հարցուց Լուիզ լալկան ձայնով մը:

— Լուիզ, ես հիմա շատ զբաղւած եմ. գիտես որ գործի տէր
տղայ եմ. պատասխանեց Բագրատ իր յուզումը զսպել ջանալով:
Դէմ ըրածիս շատ կարևորութիւն մի՛ տար. ոչ ալ մինչև հիմա
ըրածներուս:

— Միոքդ չեմ հասկընար. առաջ այդպէս չէիր, բան մը պա-
տահէր է: Եթէ դպրոցը ձգելուդ համար բարկացեր ես, Պոլիս
դպրոց կը պակսի. քեզի պէս աշխատող տղան անդործ չի մնար:

— իմ մոտածմունքս ինքզինքս չէ: Բայց ինչ և է թողնենք այդ, աւելցուց իսկոյն:

Լուիզ փաթթըւեցաւ տղուն, սեղմըւեցաւ անոր կրծքին, գրկեց, համբուրեց: Բայց Բագրատ սառն էր, թէև կը դողար: Անգամ մը միան համբուրեց.

— Լուիզ, մեր լրածը անխելքութիւն է:

Հսաւ ու սենեակէն ելաւ:

Լուիզ ոչինչ չէր ըմբռներ: Արդէն քանի մը օրէ իվեր ունեցած տարտամ նախազգացումները աւելի ուժովցան. ու առանց գիտնալու ինչու՝ սկսաւ լալ:

Վերջապէս եկաւ արձակուրդի օրը:

Բագրատ սովորականէն շատ աւելի ուրախ ու շարժուն էր: Երեկոյեան բաւական ուշ տղացքը արձակւեցան. տղոցմէ շատերը եկան մնաք-բարով լսելու, ոմանք նոր տարեշրջանի մասին քանի մը բաներ հարցուցին: Բագրատ ամենքին ալ պատասխանեց. տղացքը հետզհետէ հեռացան. ուսուցիչներն ալ բարեեցին ու ցրւեցան. ու դպրոցը դատարկըւեցաւ:

Բագրատ արտաքին անփոյթ երեսյթով մը մոտաւ իր սենեակը. սուլինով ժողովեց բոլոր գրքերն ու թղթերը, որոնք իրենց կը վերաբերէին. փաթթեց ու գրաւ մէկ կողմ:

Քաշեց նամակի մը թուղթ, գրեց իր ու Գէորգի հրաժարականը, պարզապէս ցայտնելով, որ պատճառը եպիսկոպոսի ու անոր մարդոց լարած ստոր խնդիրներն է, թաղականներուն տգիտութիւնն է ու հոգաբարձուներուն թուլութիւնը:

Կանչեց Գէորգը, ստորագրել տրւաւ. ու աւելցուց.

— Ծառայի մը հետ այս նամակը հիմա հոգաբարձուներու ատենապետին կ'ուղարկես. դուն ալ այս գրքերը դւնապանին տնիր, որ տուն տանի. դուն ալ ետեէն զնան. մարդուն ձեռքը ճերմակ մը գիր. վերջն ալ եկուր ծովեղբեայ ճաշարանը. քեզի կ'ըսպասեմ, որ միասին ընթրենք. համ, Գէորգ:

Ինքը առաւ գլխարկը ու գուրս ելաւ:

Ծանր քայլերով կ'երթար դէպի ճաշարան: Ղալաթիա ծովելլը մէկ-երկու տեղ կանգ առաւ. ցրւած կերպով գիտեց նաւա-

վարներու աղմուկն ու իրարանցումը. ու արդէն մթնելու վրայ էր,
որ մտաւ ճաշարան:

Դնաց ծովուն վրայ շինած ընդարձակ բալքոնը. ու ամենէն
քաշւած անկիւն մը նստեցաւ՝ բազեղներով հիւսւած վանդա-
կին մօտիկ:

Սիրուն լուսին գիշեր մըն էր, որ կը տարածւէր:

Ծովը լուսնի քմահաճոյքէն իր գիրկը թափւած արծաթ
դրամներուն հետ կը խաղար: Ու թեթև մը կը քծնէր բալքոնը
ովահող սիւներուն: Երբեմն ալ մօտէն անցնող նաւակի մը շարժու-
մէն փոքրիկ ճողբիւն մը կը լսւէր բալքոնին տակ:

Բագրատ աչքերը ջրին՝ կը մտածէր, մօտի գարեջուրը բոլո-
րովին մ՛ռցած:

Վերջապէս շունչ մը առաւ. ու մուքէն եղրակացուց.

ԱՌ. մտածելն անգամ յիմարութիւն է. կ'անբաղդացընեմ:
Եւրոպական հանգիստ ու կանոնաւոր կեանքին վարժըւած, միշտ
մօր մը խնամքներուն տակ մեծցած, քնքուշ ու փխրուն աղջիկ մը.
Քաշեմ հետս լեռներն իվեր, մեր չոր կեանքի դժւարութիւննե-
րուն մէջ. անոք, օտար, կըտրըւած. ոչ. մեղք է ացդ. և ացդ բո-
լորի փոխարէն Բ'նչ պիտի տամ: սէրս. և ացդ սէրը արդեօք հե-
րիք է. և միթէ ինքս գիտեմ իմ զգացմանս չափը. այսօր հնա,
վաղը ուրիշ տեղ. գուցէ մնամ անպաշտօն, անգործ: Ա' ինքը զինքու-
ինչ փոյթ. բայց ացդ աղջիկը. չէ, ացդ չեմ կրնար: Եւ վերջա-
պէս միթէ կոյր եասկանութիւնը չէ էակի մը բոլոր մանր ու խո-
շոր զըւարճութիւնները, մսիթարանքները, կապերը, սովորու-
թիւնները, բոլորը միայն իմ մէջս խեղզել ու զելը. առաջին ամիս-
ները կ'անցնին. և վերջը գուցէ իմ սիրտս ալ անոր բաւականու-
թիւն մը չի տայ. է, իմ սիրտս. գէթ վստահ լինէի սիրուս խո-
րութեանը վրայ: Եւ վերջապէս գեռ. ատեն չէ ինքը զինքս կամի-
լու. դեռ պէտք է, որ ազատ լինիմ: մեր հասարակական ազաման-
ներուն մէջ բան մը ընել կարողանալու համար պէտք է ստակը
արհամարել կարողանամ: բայց երբ կրծքիս վրայ ինձի յանձնընւած
աղջիկ մը ունիմ՝ գուցէ սոտիպւիմ երկդիմի անարգանք մը չըսիլ
ձեւացընելու, գուցէ հարկադրւիմ աղայի մը չոխորտանքը կուլ տա-
լու. ա, երբէք. կամ գործունէութեանս ազատութիւնը կամ այդ

աղջիկը, եթէ նոյն իսկ աղջկան մասին մտածելը բոլորովին մէկ կողմ դնեմ։ Սէր ու գործ՝ կեանքի երկու լծակները։ ի՞նչ երջանկութիւն երբ առանք զոյգ կը վաղեն։ բայց երբ իրարու դէմ կու գան... է, ալ ուր պիտի երեայ կամքի ուժը։ Վերջացած է. ես հեռանամ՝ պիտի Պոլսէն առանձին, ինչպէս որ առանձին ներս մտայ։

Գլուխը վերցուց, շուրջը նայեցաւ. ու մէկ ումազով դատարկոց գաղեցուրին բաժակը։

Ասջէն նաւակի մը կ'անցնէր։ Ակառւ թիերուն շարժումը դիտել, ու թիերէն կաթկթող ջրի կաթիլներուն փայլվլուկը օդին մէջ,

Այդ միջոցին ևկաւ Գէորգ, ֆէսն ու ձեռնափայտը նետեց աթոռին վրայ։ ինքն ալ նստեցաւ, ըսելով։

—Ուհ, յոդնեցայ։ Վերջապէս. քանի մը շաբաթ շուն։ առնենք։
—Հըմմ։

—Ի՞նչ ուտենք։

—Ապսարէ ինչ որ կ'ուզես, երկուքնուս համար։

Տառան կերակուրները բերաւ, շարեց, տեղատորեց ու հեռացաւ։

Գէորգ ճանապարհին պատահած երկրորդական դէպք մը կը պատմէր։

Բազրատ կը լսէր առանց հասկընալու։ Յանկարծ ընդհատեց։

—Հիմա այդ ձգէ, Գէորգ։ Այս դպրոցը որ ձգեցինք, արդ ի՞նչ լնել է միտք։

—Ի՞նչ հարցում։ ուրիշ մը կ'երթանք։ Ես արդէն Մինասեանի հետ տեսնելուցայ։ Ա. թաղի հոգաբարձուներուն հետ ալ խօսեր եմ. ինդիրը նորէն ամբողջովին դպրոց մը մեր ձեռքը ձգելն է. բայց կարծեմ շատ պիտի փընտըռենք։

—Ամենելին, փընտըռելու պէտք չի կայ. ես արդէն գտած եմ։

—Իրմւ, մւր, ինչպէս։

—Մինակ քիչ մը հեռուն է. այսինքն ճիշտ չէ այդ. աւելի մօտիկ է մեզի, քան հեռու։

—Ո՞րն է այդ. չեմ հասկընար։

—Գէորգ, ճամբորդելու բնաւ փափադ շունիս։

—Ի՞նչ հարց է այդ. բայց մւր։

—Հայրենիք. մէր քաղաքը։

— Կարի՞ն...

— Զարմացար. եթէ Պոլիսը այդչափ սիրած ես՝ քեզի չեմ բոնանար. մնացիր. իսկ ես շուտով մեկնիմ պիտի:

— Դուն ուր, ես ալ հոն Բայց այդ ինչպէս եղաւ. ինձի բան մը չես ըսած. և մինչեւ վերջին ատենները հոս ուրիշ տեղ մը որոնելու վրայ էիր:

— Եիտակը իմ գիտաւորութիւնս ալ գեռ տարւան մը չափ Պոլիս մնալն էր. բայց երկու շաբաթւան չափէ փոխւած եմ. նախ չգիտեմ ինչու Պոլսէն կշտացայ. երկրորդ, միայն սարւան մը համար ինչ արժէ նորէն ծայրէն գործ սկսել. սւրիշ խնդիր էր, եթէ նոյն տեղը մնացինք: Իսկ այդ Պոլիսը ձգելու մտադրութիւնս բացարձակ վճիռի փոխւած է Մկրտիչին ստացած վերջին նամակէս իվեր:

— Կարինէն նամակ ես սուած... հարցուց Գէորգ զարմացած ուռքի ցատկելով:

— Այն. հինգ-վեց օր է. գիտմամբ քեզի բան մը չըսի. մտանջութեանս պատճառը ահա այս էր: Տղան երկար-բարակ իրենց դպրոցի ողորմելի վիճակը կը նկարագրէ. ու կը ստիպէ ինձի, որ ինչ ընեմ-չընեմ երթամ. կը խոստանայ ամէն կերպ օգնելու. իսկ անոր ձայնը քաղաքին մէջ կարևորութիւն ունի. հօրը հարստութիւնը, զիրքը իր կոնակն է: Թաղականներն ալ գրէթէ բոլորը իր հօրը հետ կապւած մարդիկ են. կը խոստանայ ամբողջ դպրոցը բացարձակապէս մեր ձեռքը յանձնէ. վերջը նամակը քեզի տամ կարդա: Երկար-բարակ ալ գլխուս քարոզ է կարդացեր, որ իմ ծննդավայրս է, որ հոն աշխատելը իմ բարոյական պարտքս է, որ ինձի պէսները Պոլիս արդէն շատ կան, որ եթէ չերթամ ինքը շատ նեղ վիճակի մէջ պիտի դնեմ, ևայլն, ևայլն. ասոնք իհարկէ բոլորը զեռօ. եղելութիւնը այն է, որ հիմնաւոր գործ է, այն ալ մեր բուն ժողովրդին շատ աւելի մօտիկ, քան այս դաշինութիւնն է: Խօսքին կարձը, Գէորգս. ես յառաջիկայ շաբթու կը մեկնիմ:

— Ես ալ քեզի հետ:

— Ո՛չ, դուն գեռ մէկտերկու շաբաթ հոս կը մնաս. մանր-մունր մէկ-երկու գործեր կան կարգադրելու. երեսի հոն ալ գրքերու, դոր-

ծիքներու պէտք կայ. երթամ, քեզի ստակ հասցնեմ, որ հետդ բերես:

—Գիտե՞ս, առւնը որ երթալղ լսեն՝ շատ պիտի կոռըըւին. մասնաւանդ Լուիզը: Բագրատ, շխտակ ըսէ. այդ աղջիկը չես սիրեր. ինձի այնալէս կը թըւի, թէ զուն ալ դէպի ան անտարբեր չես:

Բագրատի սիրալ նետեց:

—Քառասուն անգամ քեզի միւնոյն պատասխանը տըւեր եմ. խելացի, սիրուն ու չափազանց համակրելի աղջիկ է. եթէ այդ տեսակ քոյր մը ունենայի՝ աշխարհք իմն կը լինէր:

—Քոյր. շինէ քեզի քոյր, ու վերջացաւ: Եկուր, Բագրատ, փոխանակ երկուքի՝ երեքով երթանք քաղաք:

—Հացգ կեր. պարաւալ մի՛ խօսիր. պատասխանեց Բագրատ զայրացկուս:

Ու շրթունքը խածաւ:

ԱԵ.

Յաջորդ իրիկունն էր, որ Բագրատ դիտմամբ ամբողջ ընտանիքին ներկայութեանը յայտնեց իր մեկնումը:

—Գիտէք, տիկին, երկը օրէն Պոլսէն մեկնիմ պիտի:

—Ո՞ւր. հարցուց տիկինը կէս զարմանքով, կէս անտարբեր:

—Կարին. հոն ուսուցչութեան եմ կանչըւած:

—Սնաւ է, կատակ. ըսաւ տիկինը:

—Աչ, ճշմարիտ. լուրջ կը ըսեմ. հինգշաբթի իրիկւան շոգենաւով Տրապիզոն կը մեկնիմ:

—Երաւ, մեզի ձգես պիտի. պոռաց Օգիւստան Բագրատի վրայ վազելով:

—Բայց անխելք բան է այդ. նկատեց Էլէնին: Պոլսի մէջ գործ կը պակսի, որ այդ լեռները պիտի երթաք: Գէորգ անցած օր ինձի կը պատմեր, որ այն կողմերը հիմա խոռվութիւններ կան, սով կայ, անապահովութիւն է:

—Ե՛, ինչ ընենք. ինչպէս միւսները կ'ապրին, այնպէս ալ մէնք. պատասխանեց Գէորգ:

—Դուք ալ միասին էք. հարցուց Էլէնին անհանգիստ:

—Այն. միայն քիչ մը ուշ. պատասխանեց Բագրատ:

— է՛, երիտասարդութիւն է ըրածնիդ. գեռ տղայ էք. ըստ
տիկինը: Կորսի ալէս տեղը ձգել. այս հանգիստ կեանքը. և հոս
ստակ ալ կարելի է շահիլ:

Լուիզ լուս էր բոլորովին. կարծես ան պատրաստւած էր այս
բոլորը լսելու. բայց ոչինչ ալ չէր լսեր:

«Ուրեմն այս էր հանելուկը» կը կրկնէր անդադար իր մոքին
մէջ մեքենաբար:

Քիչ մը վերջը ամենքը ցրւեցան իրենց գործին:

Լուիզ առանձնացաւ իր սենեակը, դուռը կողպեց, նստեցաւ
բաց պատուհանին առջեւ ձեռքը ծնոտին ու լուսինը կը գիտէր:

«Ո՞չ. պարտապ բան է. ես անոր համար այն եմ, ինչ որ մայր,
ինչ որ փոքր քոյրս, որը նոյնպէս կը զգգւէ, կը համբուրէ. ոչ աւելի,
ոչ պակաս. իսկ ես կը կարծէի...» մտածեց նա:

Ու արցունքի երկու խոշոր կաթիլ ակընթարթ մը իր թար-
թիչներուն վրայ կախւեցան, վերջը զուգընթացաբար սահեցան
մինչեւ այտին կէսը, հոնկէ մէկ կաթիլը յանկարծ զլորւեցաւ աղջկան
դոգը, մինչ միւսը ինկաւ շրթունքին քովի սիրոյ փոսիկը:

Աղջիկը զլուխը դրաւ պատուհանի եզերքին ու սկսաւ հեծ-
կըլսալ...

Լսեց, որ ընթրիքի կը կանչէին:

— Եկայ. պոռաց ամուր ձայնով մը:

Արադ լըւացւեցաւ, մազերը շտկեց ու դուրս ելաւ:

— Պառկեր ես. աչքերդ տեսակ մըն է. նկատեց մայրը:

— Այն, քիչ մը քունս տարեր էր քանապէին վրայ. վրայ բե-
րաւ աղջիկը:

Հազիւ ընթրիքէն ելեր էին, որ Բագրատ տուն եկաւ և ոդ-
դակի Լուիզը պայտի մը հրաւիրեց:

Լուիզ սրտի դողով պատրաստւեցաւ, ու լուս մտաւ տղուն թիլ:

Ոչինչ բաներու վրայ քանի մը ոչինչ խօսքեր ըսելով՝ մտան
մօտակայ կազինօի մը պարտէզը:

Ու քաշւեցան առանձին անկիւն մը:

Երբ սպասաւ որը խմիչքները բերաւ—

— Դէ՛, Լուիզ, ինձի յաջող ճանապարհ. ըստ Բագրատ բար-
ձրացնելով:

— Այս կատակ է, թէ լուրջ. հարցուց աղջիկը վրդովւած:

— Լուրջ է, անգինս: Պէտք է քեզի ամէն բան մէկ անգամէն պարզ յաշանեմ, որ քեզի աւելորդ մոտասանջութիւններ տըւած չլինիմ: Դուն զիտես, որ ես արդէն միշտ հայրենիք երթամ պիտի կըսէի. վերջին նամակները իմ երթալս բացարձակապէս անհրաժշտ կ'ընեն. յետաձգել չեմ կրնար. երթալս վճռւած է. թէև մինակ դուն կը հասկնաս, թէ ինձի համար որքան ծանր է Պոլսէն բաժնըւիլս:

— Շատ գժւար է եղեր, կը տեսնեմ. պատասխանեց հեգնօրէն: Խնձի նայե՞. ես զիտեմ կամքիդ ուժը. և քեզի համոզելու յոյս չունիմ. բայց վերջապէս պիտի ըսեմ, որ մայրս իրաւունք ունի. Պոլիս թէ յարմար քաղաք է, թէ ապահով և թէ կրնաս առաջ երթալ, անուն հանելի ես զիտեմ՝ ձեր հասարակութեան մէջ արդէն քու վրադ շատ են սկսած խօսիլ. պարապ տեղը մի՛ յամառիր:

— Ե՛, սիրելին, այդ բոլորը ինձի համար ինչ նշանակութիւն ունի:

— Շատ լաւ. այդ բոլորին իմ խելքս չի հասնիր: Մինսկ կ'ուզեմ, որ հիմա ինձի պարզ ըսես. ես քեզի համար ոչի՞նչ չեմ արժեր: Իրաւ, մինչև հիմա ոչ մէկ խոստում չես տւած, ոչի՞նչ չես լսած, նոյն իսկ քեզի կը սիրեմ: Մը բերնէդ ըսեցի, բայց վերջապէս կարծեմ...: Ախ, Բագրատ, ծանր է, ծանր այս բոլորին վրայ այսպէս սպազ-սպազ խօսիլը:

— Լուիզ, լսէ: Ես քեզի սիրած եմ, թէ չէ՝ ինքս ալ չեմ զիտեր: Դուն ինձի համար միշտ ոգեսրութիւն ու մսիթարանք ես եղած, քեզի համար ամէն բան ընկելու պատրաստ եմ եղած, քու մասին մտածելը ինձի համար հաճոյք է եղած, քու ներկայութեանդ անցուցած վայրեկեաններս կեանքիս ամենէն անուշ ժամերն են եղած. և հիմա որ Պոլիսը կը ձգեմ, միտք կսկիծս դուն ես:

— Մի՛ ձգիր ուրեմն. ըսաւ աղջիկը դողդոջուն՝ ամբողջ մարմնով աղուն սեղմըւելով:

Բագրատ զրկեց, երկար նայեցաւ աչքերուն, պագաւ այդ աչքերը ու հազիւ լսելի ձայնով մրմնջեց.

— Այդ անկարելի է, անգինս:

Աղջիկը սկսաւ լալ, առանց գլուխսը տղուծոյէն բարձրացնելու:

Սէկ ալ յանկարծ զլուխը ետ քաշեց. սրբեց աչքերը. մազերը
ճակատէն նետեց ետ. ու մեքենաբար սկսաւ ձեռքի ձեռնոցները
հանել:

Բան մը կար լեզւին վրայ, որ կ'ուզէր ու չէր կրնար լսերւ
վերջապէս ձայնը դողաց ու լսաւ որչափ կարելի է արագ.

— Լ. մ. ինձի ալ հետդ տամբ:

Բագրատ կարծես կ'ըսպասէր. ամբողջ մարմնովը ցընցըւեցաւ ու

— Այդ ալ անկարելի է. լսաւ կտրուկ շեշտով մը:

Աղջիկը նայեցաւ տղուն:

— Մայրդ. մայրդ քեզմէ բաժնըւիլ չի կրնար. իսկ ան Պոլսէն
չի կրնար հեռանար:

— Իրաւունք ունիս. բայց...

— Եւ վերջապէս օտար երկիր, տարբեր կեանք, անապահովու-
թին, միայնակ. ոչ, անկարելի է:

— Բ. այդ դուն հետա ես, չէ:

— Եմ կեանքս անորոշ է, խախուտ, գուցէ և վտանդաւոր
կրնամ անգործ մնալ, կրնան և ուրիշ բաներ պատահիր:

— Ե՛, կը չափազանցես. վերջապէս ի՞նչ ընենք. միասին կ'աշ-
խառինք. գեռ քեզի պաշտպանել ալ կրնամ. ես Փրանսացի եմ:
Ո՛չ. ինչիրը այն է, որ պարզապէս ինձի հետդ չես ուզեր:

Բագրատ կ'ամընար. ամօթ, ամօթ մը միայն տիրած էր իր
ամբողջ էութեանը: Ա՛, այդ աղջիկը որչափ, որչափ աւելի ազնիւ
էր ու անկեղծ:

Նըւստապման դառն զգացումով մը գետին կը նայեր:

— Այօ, դուն ինձի սիրած չես, երբէք. լսաւ արտասւաձայն:
Դէսի քեզի ունեցած թուլութենէս օդուլւեցար ու հետա խաղացիր:

Բագրատ կարծես դաշոյնի հարւած մը ստացաւ: Կատղած ցատ-
կեց ուրքի, բոլոր ուժովը սեղմեց աղջկան թեր ու սպառնալից—
— Լ. ութիզ, Լութիզ. կրկնեց ակուաներուն մէջէն:

Սակայն իսկոյն թողուց թեւը. թուլացած նստեցաւ նորէն իր
տեղը. ու աղերսող, գրեթէ լալիկան ձայնով մը յարեց—

— Լ. ութիզ, անգինս, մուածէ վրաս ինչ որ կ'ուզես. մեղաղը:
ինձի ինչպէս որ կ'ուզես. իրաւունք ունիս. ես անմիտ եղայ, այս
բոլորը առաջուց մոտածելու էի. ինքըզինքս զգացումներուս ձղեցի.

ու խնդիրը ահա հոս հասաւ։ Գուցէ թոյլ տղայ եմ ես. խորհ՛է ամեն բան, ինչ որ կ'ուզես. մինակ այդ մի՛ մտածիր, որ քեզի խաբեցի, որ տկարութենէդ օգտըւեցայ, որ հետդ խաղացի։ Կարելի է յիմար վարւեցայ, կարելի է տկար եմ զգացումներէս, կարելի է անխելք եմ. բայց վաս չեմ, Լուիզ. ես վաս մը չեմ Հաւտան, որ հիմա ալ մէջս նոյն այն զգացումն է, ինչ որ եր քանի մը շաբաթ առաջ։

Լուիզը թեսերը դրաւ սեղանին, գլուխն ալ թեսերուն վրայ ու անշարժ մնաց։

Բագրատ սոսկալի ցաւ մը կ'ըզդար իր մէջը։ Եւ իր կամքին հակառակ ծռեցաւ դէպի ազջիկը, զրկեց ու շրթունքները թաղեց անոր ճակատը թափած մազերուն մէջ։

Աղջիկը գլուխը բարձրացուց, փաթթըւեցաւ տղուն վիզը ու անհուն քծնանքով մը—

—Բագրատ, մի՛ երթար. շշլնչեց։

—Չեմ կրնար։

—Լաւ. միասին երթանք։

—Չես կրնար։

—Կրնամի։

—Ո՛չ. չեմ ուզեր։

Աղջիկը քակեց թեսերը, ցատկեց ոտքի. ու հաղարտ շեշտով մը—

—Ուրեմն զիշեր բարի. ըսաւ։

—Բայց ինչպէս. մւր։

—Ուր երթալս ձեզի ինչու կը հետաքրքրէ. Զէ որ մեր մէջ այլ ևս ամեն բան վերջացած է։ Դուք բացարձակապէս իրաւունք ունիք. յան. յանքը իմս է, որ ձեռ դէպի ինծի ունեցած պարզ վարմունքը ուրիշ զգացումի մը տեղ դրի. կ'աշխատիմ սխալս ուղղելու։ Ներեցէք ինծի, որ սրահս ցաւէն ձեզի իզուր տեղը վիրաւորեցի. դուք ոչ միայն վաս մը չէք, այլ և հազւագիւտ ազնիւ էք։ Յաեսութիւն։

—Բայց, Լուիզ... գոնէ... գոնէ սպասէ միասին երթանք։

—Ո՛չ, հշ. այսպէս լաւ է. առանձին։ Գու ներկայութեանդ ես միշտ թոյլ եմ եղած. գուցէ կամքս չի բաւէ ու ես իմ աւելորդ յուզումներովս քեզի ձանձրացընեմ. ոչ, ես չեմ ուզեր նըւաստանամ։ ցաւսութիւն։ Կը խնդիրէմ՝ ետեէս մի՛ դաք։

Ու պարտէզի սեղաններուն մէջէն արազ դուրս սոլրդեցաւ։
Բագրառ դլուխը դրաւ ձեռքերուն ու անշարժ մնաց։ ճակատը
կ'ալլէր։

Զէր մաածեր, միայն երթե մն կտոր կտոր ու զեզին մէջ կ'արթըն։
Նար նախորդ խօսակցութեան այս կամ այն մասը ու նորէն կը մարէր։

Պահ մը բոլորովին զգալէ դաշտեցաւ։ կարծես քնացած էր։
Ինքն ալ չղիտէր այդ զիրքով որչափ ատեն մնաց։

Քովէն անցաւ կազինօհն սպասաւորը, ձեռքի ափսէին մէջի
բաժակներուն ժխորովը։

Այդ ձայնը Բագրատը սթափեցուց։

Ոտքի ելաւ և ուղղըւեցաւ գէպի տուն։

Ո՛չ այդ զիշերը և ոչ ալ յաջորդ երեք օրերը այլ ևս Կուիզը
չտեսաւ։ Ազգիկը միշտ գուրմն էր։ Տնեցիք լսին, որ իր մէկ-երկու
ընկերուհիներուն հետ դաշնակի փորձեր կ'ընէր անոնցմէ մէկին
տունը։ Նըւաղահանդէսի մը մասնակցելու էին ու կը պատրաստէին։

Բագրատ ինքն ալ տունէն խոցս կուտար։ ու լստ կարելւոյն
ինքըզինքը ուրիշ բաներով զբաղեցընելու կը ջանար։

Եարունակ իր ծանօթներու քովն էր, իր պատրաստութիւն։
ները կը տեսնէր։ և դրեթէ միշտ Սարգսի հետ էր։

Գիշեր մը անոր տունը մնաց։ Մինչև կէս զիշեր նստած կը
խօսէին։ Երկու քն ալ ոգեսրած էին։ երազներ երազներու վրայ
Անցեալէն, ներկայէն, ապադայէն։ իրենց ձգտումները, յոյսերը,
նալատակները՝ բոլորը, բոլորը իրարու կը հիւսէին։

Պառկեցան միենոյն սենեակը։ բայց, լրաց մարելէն վերջը,
անկողիններուն մէջ զեռ երկար-երկար կը խօսէին։

Վասակն էր, որ մէջտեղ քիչ կերենար։ և երեցած ատեն ալ
քիչ կը խօսէր։

— Չխօսական է դարձեր։ կ'ըսէր Գէորդ ծիծաղելով։

— Մինչև հիմա այնքան սպարապ խօսեր է, որ ալ ամբողջ
կեանքին համար հերկիք է։ կ'աւելցընէր Սարգիս։

Վասակ կը ժպտէր միայն։

Եկաւ վերջին զիշերը։ յաջորդ իրեկունը Բագրատ ճամբորդ
էր։ Վասակ, Սարգիս և ուրիշ քանի մը երիտասարդներ ժողոված
էին ոգուրսեցիներու սենեակը։

Վերջին ընթրիք մը ըրին միասին։ Գլուխները տաքցան։ ոգեւորւթիւնը յորդեց։ Վէճ, աղմուկ, բարեմաղթութիւններ։

Այդ բոլորին մասնակից էին նաև տիկինն ու աղջիկները։ Միւնոյն ժամանակ երկու-երեք լեզու կը լսէր սեղանին վրայ. լեզուներու խառնակութիւնն էր։

Լուիզ գունատ էր. ինքն ալ միւսներուն պէս թէև շարունակ աղոց սենեակը կը մտնէր ու կելնէր, բայց ըստ կարելոյն հոնքից մնալու կը ջանար. և աչքերը միշտ Բագրատին խոյս կու տար։ Բագրատ մէկ-երկու անգամ հետու առանձին մնալ ուղեց. անկարելի եղաւ. աղջիկը կը փախչէր։

Սեղանին վրայ մօրը քովին էր նստած. ու սպասաւորելու պատրւակով շարունակ գուրս կ'ելնէր։ Ընթրիքէն քիչ մը վերջը՝ իր յոգնած լինելը պատճառաբանելով՝ իր սենեակը առանձնացաւ։

Յաջորդ ամբողջ օրը վերջին սպատրաստութիւններն էին։

Բագրատ կ'երթար, կուգար, գնումներ կ'ընէր ճամբորդի լըրջութեամբ ու ցրւածութեամբ։

Անգամ մը, երբ Բագրատ առանձին իր սենեակին մէջ բան մը մնցուկին մէջ տեղաւորցընելու աշխատած էր, ներս եկաւ Ելինին ու Բագրատին մօտենալով խորհրդաւոր, ցած ձայնով մը ըստաւ։

—Պարօն Բագրատ, ես հիմա դիտեմ, թէ այն առենը ինչու ինձի հետ այնպէս վարւեցիք. Լուիզը կը սիրէիք. չէ՞ Բահնք ես ձեզի համար ոչինչ չէի արժեեր. բայց Լուիզը հիմա ինչու այսպէս երեսի վրայ կը ձգէք. եթէ գիտնաք որչափ տխուր է. ամբողջ երեկ զիշեր մինչեւ առառու լացաւ. ինձի բան մը չըսեր, բայց ես քովի սենեակէն ականջ դրի. ես ամեն բան գիտեմ. գուք գէշ տղայ էք։

—Անդին գնա. թէ չէ քեզի բռնելուս պէս սնդուկը կը խոթեմ. պոռաց Բագրատ զայրացկոտ՝ յուղումէն ու սրտին ցաւէն ինչ ըսելը չգիտնալով։

Ի՛Ե.

Արեւ Ղալաթիայի մինարէներուն ետեւէն դեղնութիւն մը կը թափէր Ասփորի ջրերուն վրայ, ուր շոգենաւ, նաւ, նաւակ-բոլորը երար խառնըւէր էին։ Սոսկալի իրարանցում ու կեանք կար Ասփորի վրայ՝ Ասկեղջիւրին բերանը։

Այդ միջոցին էր, որ մեծկակ նաւակ մը Դալաթիայի մաքսատանէն բաժնըւելով՝ սկսաւ բացւիլ:

Կին ու այր կը խօսէին նաւակի մէջ:

Բագրատ նստած Գէորգի ու Օգիւստայի մէջտեղը, վերջինի ձեռնոցաւատ, վագրիկ թաթիկները իրեններուն մէջ կը շցէր. ու հազիւ կը պատասխանէր իրեն եղած հարցումներուն:

Դժգունած էր:

Ամենէն շատ խօսողը Սարգիսն էր, որ անդաւար կը կատակէր իր բարձր ու անհոգ շեշտերովը. ու չէր թողներ այդտեսակ վայր կեաններուն յատուկ եղող ծանր լրութեան մը տիրելուն:

—Վասակը գեռ չեկաւ. նկատեց Գէորգ:

—Երեի արդէն շոգենաւն է. պատասխանեց Էլէնին:

—Հիանալի օդ է. սիրուն ճամբորդութիւն մը պիտի ընէք, պարո՞ն Սուրեմեան. ըսաւ տիկինը:

—Ա՛, ես ալ հետներնիդ լինէի. բացականչեց Օգիւստան:

Բագրատ ժպտեցաւ:

—Հետս եկուր. ըսաւ դրկելով:

Լուիզ, որ Սարգսի քովը մոտախոհ նստած էր, սրտի սեղմում մը ունեցաւ:

Նաւակը մօտեցաւ մեծ, նոր ռուսական շոգենաւին: Նաւակը քիչ մը պոռալլուաց իր արհեստակիցներուն հետ ճամբար բանալու համար իրոնըւած նաւակներուն մէջէն. ու վերջապէս մօտեցաւ շոգենաւին կախւած նեղ սանդուղին:

Մէկիկ-մէկիկ սկսան վեր ելնել:

Աղջիկներէն վերջը ամենէն առաջ վեր բարձրացողը եղաւ Բագրատ: Հազիւ էր ոտքը սանդուղին գլուխը դրեր, որ սպասաւորի ձևերով մարդ մը անոր մօտենալով՝ հարցուց.

—Պարո՞ն Սուրեմեանը դուք էք:

—Այո՞ն

Անծանօթը թուղթի մը կտոր դրաւ Բագրատի ձեռքը, բարեեց ու հեռացաւ:

Բագրատ հետաքրքրութեամբ բացաւ ծալլըւած թուղթը ու կարգաց մատիտով արագ դրւած հետևեալ տողերը.

«Իմ ազնիւ-յիմար իդէալիստ,

«Դուն արևելք. ես արևմուտք։ Այս առաւօտ սոացայ հօրմէս սպասած նամակս ու սուակ։ Ան ալ ուրախ է Ֆրանսա երթալուս։ Այս զիշերւան ճեպնթացով կը մեկնիմ Պարիզ։ Հոնկէ կը տեղեկանանամ, թէ որն է ինծի ամենէն յարմար վարժարանը։ Հիմա անցագրիս վաւերացման խնդրովն եմ զբաղւած։ Քեզի գալ չեմ կրնար. համբոցրս։ Կը տեսնեինք նորէն իմ ադարակս։

Բոլոր ուժովս կը գրկեմ քեզի։ Աղուշդ»

Բագրատ վայրկեան մը քարացած մնաց։

—Ի՞նչ է. հարցուց Սարգիս։

—Այս իրիկուն ճամբու դնելու մարդ մըն ալ ելաւ. պատասխանեց Բագրատ։

—Գրաւ կու դամ, որ Վասակն է. արդէն ան այս վերջին ատեններս գլխուն մէջ բան մը ունէր։ Նաև Վայ, խենթ, վայ։ ՞ուր կ'երթայ։

Բագրատ նամակը տըւաւ անոր. ու ինքը կանանց հետ իջաւ քամարան։

Մտան մաքուր, փոքրիկ խցիկը։

Նաւավարները պայուսակները, կողովները բերին, դիզեցին հոն։

Ցիկինը գրաւանէն եօթը-ութը լիմոն հանեց ու թափեց անկողնին վրայ։

—Լիմոնը ճանապարհին պէտք կու գայ. ըսելով։

Ելէնին նարինջներ հանեց։

—Նարինջն ալ լաւ է. ըսէլով։

Գէորգ շիշ մը քոնեակ դրաւ սեղանին վրայ։

Ամենքը բան մը կ'ըսէին, ամենքը բան մը կ'ընէին։

Բագրատ ցրւած նստած էր Ելէնին ու Լուիզին մէջտեղը, Ոգիւստան գիրկը առած։

Բագրատ քանի մը անգամ Լուիզը խօսեցուց. ու միշտ քաղաքավարի ու սլարդ պատասխուսն մը ստացաւ։

Անդամ մը աղջկան ձեռքը սեղմեց։ Լուիզ ոչ ձեռքը ես քաշեց, ոչ սեղմումին պատասխանեց։

—Ի՞նչ աղջիկներուն փաթթը ըւեր մնացեր ես. ըսաւ Սարգիս խնդալով։ Ամբողջ տարին խելքդ ՞ուր էր։

Բագրատ ժակտեցաւ:

Նոգենաւը արդէն երկրորդ անգամ սուլեց. ու ամենքի սիրու

աւելի արագ տրոփել սկսաւ:

Տիկինը ոտքի ելաւ.

—Ե՛, ալ վեր ենենք:

Եղան վեր՝ նաւուն տախտակամածը:

Սոսկալի իրարանցում էր հոն: Իեռ, ապրանք, մարդիկ—բոլորը իրարու խառնըւած: Նատերը կը բաժանէին, կը համբուրւէին: Լաց, ծիծաղ, ժպիտ, արտասուք:

Ահագին բազմութիւն սանդուղին գլուխը խոնած՝ իջնելու կ'ըշտապէին:

—Ե՛, բազրածոս, բարի ճանապարհ. ըստ. Սարգիս: Թող եւ բանամ սրչիկներուն դուռը:

Ու փաթթըւեցաւ Բագրատին:

—Յտեսութիւն, ըստ Դէորգ՝ անգամ մը միայն շրթունքներէն համբուրելով:

Բագրատ մօտեցաւ ախնոջ, ծռեցաւ ու ձեռքը համբուրել կ'ուզէր, բայց արկինը ինքը գրկեց ու այտերէն համբուրեց:

Օդիւստան կախւեցաւ տղու վիզէն ու ալ ձգել չէր ուզիր. բոնի հեռացուցին. աղջիկը սկսաւ սոսկալի կերպով լալ:

Տիկինն ալ վարակւեցաւ ու աչքերը սրբեց:

Բագրատ ամուր ու սրտանց գրկըւեցաւ էլէնիին հետ. ու պինդ պինդ համբուրեցան. էլէնին ալ սկսաւ լալ:

—Ե՛հէ, գործ ունինք. կ'ըսէր Սարգիս:

Բագրատ վախով, դողով, յանցաւորի մը պէս մօտեցաւ մէկ կողմ քաշւած բոլորովին գունտտ կուիզին. ու կամաց մը աղջկան ձեռքը բանեց:

Լուիզ նայեցաւ ակընթարթ մը շեշտ անոր աչքերուն, յանկարծ սկսաւ հեծկլաւալ ու ամբողջ մարմնովը ինկաւ տղուն գիրկըւ:

Իրարու փարեցան ամուր. մնացին անշարժ՝ շրթունք շրթունքի:

Ամենքը զարմացած կը նայէին: Մայրը այլայլեցաւ:

«Նուտ, շուտ, շողենաւը ելնէ պիտի. կը պոռալին նաւասաւիները:

Նաւասաւետը իր կամրջակի բարձունքէն կը հայնոցէր զայրացած:

Վերջին մնացողները վար կ'ըշտապէին շոգենաւէն:

Սարդիս քաշեց աղջիկը բազրատի գրկէն:

— Այս... հծծեց Լուիզ արցունքներուն մէջէն:

Տղայքը մոտան անոր թևերէն ու սանդուղէն նաւակ իջեցուցին:

Բազրատ ինկաւ նաւու եզերքին:

Խարիսխը կը քաշէին:

Անիւները արդէն բանել էին սկսած՝ շոգենաւին ետև փըր-
փուրի ամազ մը կուտելով:

Շոգենաւը կը հեռանար. նաւակն ալ:

Լուիզ ալ չէր լար. թաց աչքերը տղուն յառած, տարօրինակ
ժայխով մը կը ժայտէր:

Բազրատ խենթ, շատ խենթ զդացում մը ունեցաւ: Կ'ուզէր
դուրս ցատոկէ նաւուն կողէն ու երթաչ, երթաչ դէպի այն նա-
ւակը, որ միշտ կը հեռանար:

Ու բնազդաբար քովի պարոններէն մէկը պինդ բոնեց:

Ալ նաւակին մէջ դէմքերը լաւ չէր որոշէր: Թաշկինակներ
կը շարժէին, հովանոցներ: Ինքն ալ մեքենաբար իր գլխարկը կ'եր-
կընցնէր օգին մէջ:

Նաւակը մոտաւ յանկարծ կացմերու անտառի մը ետև. ու ան-
երևոյթ եղաւ:

Բազրատ քիչ մըն ալ աչքերովը փընտըռեց. կախեց գուխը
ու աչքերը յառեց ջուրին, որ շոգենաւին քովէն ետ կը վազէր:

Ամընցաւ մրմնջեց. գլխարկը դլուխը դրաւ. ու տատամոտ
քայլերով բարձրացաւ. շոգենաւին դելքը:

Կրթնեցաւ դրօշակի սիւնին. ու սկսաւ զիտեր:

Կուգային ու կ'անցնէին հետղնետէ Ռսփորի գեղեցիկ ափերը. իրենց
կանանչութեամբը, իրենց բարձրութիւններովը, իրենց պալատներովը,
որ թանձրացնող մութը սկսած էր հետղնետէ իր մէջը փաթթել:

Բազրատ աչքերը հեռուն նետած՝ կը մուածէր:

Յրւած մուածուր մը:

Յիշեց առաջին անգամ իր Պոլիս մննելը, իր Պոլիս անցու-
ցած առաջին օրերը. յանկարծ դպրոցը յիշեց. և Լուիզը. ախ,
այն Լուիզը: Նորէն պատկերացաւ իր աչքերուն դէմ հեռացող
նաւակը, թաշկինակներու շարժումը, Լուիզի ժպիտը...

Ու ցաւ մը, սոսկալի ցաւ մը զգաց կրծքին տակ, սրտին մօտիկ:
«Գուցէ երջանկութեանս աքացեցի». անցաւ մորէն: Ու սրտին
ցաւէն տիրութիւն մըն ալ աւելցաւ:

—Խեղճ կուիզս... մրժնջեց. ու աչքերուն մէջ արցունք զգաց:
Զեռքը զրպանը տարաւ թաշկինակը հանելու. ու թուղթի մը
շոշափումը առաւ: Վասակը Ա՛, ան հիմա կայարանն էր անշուշտ:
Հանեց զրպանէն թուղթը ու, աչքերուն բոլոր ուժը լարած՝ արդէն
խոտացած մութին մէջ անդամ՝ մըն ալ կարդաց: Յիշեց Վասակին
սենեակը, յանկալ ծիր անոր հետ ունեցած վէճերէն մէկը մոտքե-
րեց. ու ալ դադրեցաւ մոտածելէ. անշարժ կեցած էր. ու կը նա-
յէր հեռուն ջրերուն:

Ոսկորի երկու եզերքները արդէն վայրենացած էին. մութին
մէջէն միայն թնդանօթներու պահակներուն լոյսը կը կայծկլուէր:
Նեղուցը հետզհետէ կը լայննար:

Բագրատ յանկարծ ուշքի եկաւ, դիտեց շուրջը, նկատեց, որ
երկու կողմը ալ ցամաք չի կար. ցամաքը միայն իրեն դիմացն էր,
ուրիէ զոյգ փարոսներու լոյսերը խաւարին մէջէն իրեն կը նայէին
վայրացկոտ քթթումով մը:

Բագրատ եւո նայեցաւ՝ նաւին ուղղութեամբը:
Սև ծովն էր. սեփ-սեւ. սև մութին մէջէն:
Այդ ջուրի անեզր տարածութեան առջեւ երիտասարդը ազա-
խոր շունչ մը առաւ:

Նոգենաւն ալ կ'երթար հիմա ազատ, շոգիին բոլոր ուժովն
և ուժէն կը դողար:

Նոգենաւը կը դողար:
Ու Բագրատ ալ կը դողար նոյն եռանդի թափովը:
Իր աչքերուն դէմ Սև ծովն էր, սեփ-սեւ, մութի ծալքերուն
տակ խլրտուն:

Իսկ երևակայութեանը դէմ ապագան էր ժպտերես գործու-
նէութեան երազներուն տակ օրօրուն...

Նոգենաւը կը դողար:

ԵՐԳԵՐ

ՀԱՅՆՀԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Սիրուն է աշխարհն. երկինքն անվրդով.
Մեղմիկ ու քնքնց փըսում է քամին.
Ծաղիկներ ցողւած վաղորդեան ցողով
ձօճում, փայլում են մարգերի միջին:
Եւ ուր նայում եմ—շուրջըս խմբերով
Երգում են մարդիկ, խնդում, ծիծաղում.
Բայց ես առաւել կ'ուզեի շուտով
Իջնել գերեզման, որ այնտեղ հողում
Եմ նազելիին կրկին տեսնելով
Հետը ձուլւեի ջերմ համբոյրներով...

II

Պատկերիդ առջե գլուխս խոնարհած
Կանգնած եմ ես լուռ, տըխուր ու տրտում.
Եւ ինձ թըլում է, թէ ահա յանկարծ
Քո անշարժ դէմքը նոր կեանք է առնում:

Եւ ես տեսնում եմ կախարդիչ ժըպիտ
Քնքոյց շըրթունքիդ խաղում, թրթըռում.
Տեսնում եմ սրցունք, ինչպէս մարգարիտ,
Փայլում է քո վառ, մրայօն աչերում:

Եւ ես կանգնած եմ ու դառըն լալիս,
Նորից տանջւում եմ և նորից սիրում.
Եւ չեմ հաւատում, անզի՞ն թագուհիս,
Որ յաւէտ կորցրի քեզ այս աշխարհում...

III

Երէկ բախտը ինձ շոյում էր, փայփայում,
Բայց, ախ, մւր է նա այսօր...
Զուր ջանացի գոնէ մէկին ես կեանքում
Կապել ինձ հետ գէթ մի օր:

Փորձի համար քանի՛ կանայք շատ անգամ
Եկան, գիրկը նետեց սն.
Բայց նայելով սրտիս խորքը—ոչ մի ժամ
Զլսակասեցի՞ն. հեռացն...

Հեռանում էր մէկը անհոդ, խընդագին,
Մի ուրիշը—լուռ իսպառ.
Եւ դու միայն ինձ թողնելով, ով անգին,
Դու դառնազին լաց եղար...

IV

Հնդ չէ, դուրսը թող փոթորիկ մռնչէ,
Թնդ ձիւնախառն քամին սուլէ, հառաչէ,
Եւ հառաչքով մերթ կամացուկ, մերթ ուժգին
Գայ և դիալչէ պատուհանիս փեղկերին:
Սիրող սիրսա երկիւղ չունի փոթորկից—
Նորա խորքում, հեռու դաժան, չար աչքից,
Ես պահում եմ դարսն դալար, ծաղկալի.
Այդ գարունը—քո պատկերն է, նազելի:

ԵԳՄՈՆՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Վ. Ֆ. ԳԵՂԹԵՒԻ

Գերման երէնից Թարգմ. ՀՄԱՅԵԱԿ ՄԱԺԻՆԵԱՆ

(Շարունակութուն ¹⁾)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՀՅԱԱՐԱՐԱԿ ԲՐԻՍԱԷԼՈՒՄ

• Ցետտէք եւ մի հիւսն հանդիպում են

Հիւսն: Առաջուց չէի առում: Դեռ ուժ օր առաջ մեր համ քարների ժողովում առում էի, որ ծանր խոռոշութիւն է լինելու:

Ցետտէքը: Ուրեմն ճշմարիտ է, որ նոքա ֆլանդրիայում եկեղեցիները կողոպոել են:

Հիւսն: Բոլորովին հիմնայատակ են արել եկեղեցիներն ու մատուռները: Միայն չորս մերկ պատերն են կանգուն թողել: Դիփ գէաղա-գիւղաներ են: Եւ այս փճացնում է մեր բարի գործը: Մենք պէտք է առաջուց, կարդին ու անյոզգողդ, մեր իրաւունքները իշխանուհուն ներկայացնէինք և նոցա վրայ պնդէինք: Եթէ

¹⁾Տես «Մուլճ» 1896 թ. № 1.

հիմա խօսենք, հիմա ժողովւենք, կասեն՝ միանում ենք խոռվարաների հետ:

Յետոէր: Այն, սկզբում ամեն մարդ այսպէս է մտածում. այդպէս կը մտածէ: Ի՞նչ ես քիթդ առաջ ցցում. վզիցդ հօ ձեռք չես վերցրել:

Հիւսն: Ես վախենում եմ, որ միանդամ աղմուկն սկսւի ամբոխի, ժողովրդի մէջ, որը կորցնելու ոչինչ չունի: Նոքա պատըրւակ են բոնելու ժողովրդի խոռվութիւնը, այսինքն այն, ինչ որ մեզ ես մեր պահանջների համար պէտք է հիմք ծառացի. և կը գցեն երկիրը դժբախտութեան մէջ:

(Զօէստ առաջ է դալիս):

Զօէստ Բարով, պարոններ: Ի՞նչ նոր բան կայ: Ճշմարիտ է, որ պատկերամարտներն ուղղակի այս կողմն են ուղղում իրանց արշաւանքը:

Հիւսն: Նոքա պէտք է որ այստեղ ոչ մի բանի չդիպչեն:

Զօէստ: Խանութս մի զինոր մտաւ ծխախոս գնելու. նորանից հարցուփորձ արի: Խշանուհին, չնայելով որ քաջ, խելօք կին է, այս անգամ իրան բոլորովին կորցրել է: Պէտք է որ բանը շատ վատ գնալիս լինի, որ նա այդպէս ուղղակի իւր թիկնապահների յետեն է թաքնում: Բերդը խիստ բռնւած է: Կարծում են մինչեւ անգամ, իբրև թէ կամենում է քաղաքիցս փախչել:

Հիւսն: Նա պէտք է հեռանայ: Նորա ներկայութիւնը պաշտպանում է մեզ, և մենք նորան աւելի ապահովութիւն* կը տանք, քան իւր կարճմօրուսաւորները: Եւ եթէ նա մեր իրաւունքներն ու աղատութիւնը կանգուն պահէ, պտրաստ ենք նորան մեր ձեռների վրայ ման ածել:

(Սապոնագործ առաջ է դալիս):

Սապոնագործ: Զգելին, անպիտան խոռվութիւն: Խաններս ձախ են: Աշխատեցէք Հանգիստ լինել, որ ձեզ էլ խառնակին չհամարեն:

Զօէստ: Յունաստանի եօթ իմաստունների խելքն ես ունեցել:

Սապոնագործ: Գիտեմ, այստեղ շատերը կան, որոնք ծածուկ կալւինականների կողմն են, որոնք հայհոյում են եպիսկոպոսներին, և թագաւորից չեն ակնածում: Բայց հաւատարիմ հպար-

տակը անկեղծ կաթողիկն է։ (Կամաց-կամաց մօտենում են ամեն տեսակի մարդիկ և ականջ զնում։ Ֆանգին առաջ է՝ գալիս):

Փանգին։ Բարով, պարոններ, ի՞նչ նորութիւն։

Հիւն։ Դորան միք մօտենալ. դա վատերի մէկն է։

Յետտէր։ Դա դոքտոր Վիտոշի գրադիրը չէ։

Հիւն։ Նա արդէն շատ տէրեր է փոխել։ Սկզբում գրադիր էր նա, և, երբ մէկ պատրոն միւսի յետեւից նորան, խարդախութիւնների պատճառով, տանից զուրս վանտեցին, հիմա՝ առանց իրաւոնքի, նոտարական և փաստաբանական գործերի մէջ է խցկը-ւում, և օդեվաճառ է։

(Ժողովուրդը աւելանում է ու խոնում է)։

Փանգին։ Դուք էլ էք հաւաքւել։ Դլուխ դլսի տւէք։ Խօսել արժէ։

Զօէստ։ Ես էլ եմ կարծում։

Փանգին։ Եթէ մենք ունենայինք այնպիսի մէկին, որ ունենար սիրա, դորա հետ և՝ գլուխ, կարող էինք խպանական շղթաները միանգամից խորտակել։

Զօէստ։ Ե՛յ, դուք չպէտք է ալպէս խօսէք։ Մենք թագաւորին երդւել ենք։

Փանգին։ Թագաւորն էլ մեզ. Նկատեցէք այս։

Յետտէր։ Լաւ, դորանով ի՞նչ էք ուզում ասել։

Ոմանք։ Լսիր, նա բան է հասկանում։ Նա շատ ետ եկածն է։

Փանգին։ Ես մի ծեր պատրոն ունեմ. նա ամենահին հաստատութիւնների, պայմանագրութիւնների և դատական գործերի ամենին մագաղաթներ և թղթեր ուներ։ Նա ուներ և ամենահազւագիւտ գրքեր։ Մէկումը գրւած էր մեր ամբողջ սահմանադրութիւնը, թէ ինչուկս մենք—նիդէրլանդցիներս—սկզբում կառավարւում էինք առանձին իշխաններալ և ամեն ինչ աւանդական իրաւունքների, արտօնութիւնների և սովորութիւնների համեմատ։ Ինչպէս մեր նախնիքը բոլորեքեան պատկառանք էին տածում դէպի իրանց իշխանները, եթէ նոքա կառավարում էին ինչպէս հարկն է, և թէ ինչպէս նոքա իսկոյն առաջն էին առնում, երբ իշխանը կամենում էր սահմանից զուրս գալ։ Գաւառներն ես ձեռաց մէջ էին խառնըւում, որովհետեւ իւրաքանչիւր նահանգ, որքան էլ փոքր լիներ, ուներ իւր ինքնավար գաւառները և ներկայացուցիչ մարմինները։

Հիւան: Ուկսներդ պահէք, այդ վաղնց գիտենք: Ամեն մի օրինաւոր քաղաքացի, որքան նորան հարկաւոր է, ծանօթ է իւր երկրի սահմանադրութեան հետ:

Յետտէր: Թողէք խօսի: Որքան և լինի, մի բան աւելի ենք սովորում:

Զօէստ: Բոլորովին իրաւացի է նորա ասածը:

Շատերը: Պատմեցէք, պատմեցէք: Այդպիսի բան մարդ ամեն օր չէ լսում:

Փանզէն: Այդպէս էք դուք՝ քաղաքացիներդ: Ապրում էք առանց վաղան մասին մտածելու, և ինչպէս որ ձեր արհեստը ձեր ծնողներից ստացել էք՝ այդպէս էլ թողնում էք որ կառավարութիւնը ձեզ հետ վարւի ձեռքից եկածի ու սրտի ուզածի պէս: Դուք չէք հարցնում—ոչ անցեալ, ոչ պատմութիւն, ոչ կառավարչի իրաւունք: Եւ ձեր աչքաթող անելով՝ իսպանացիք իրանց ցանցի մէջ են գցել ձեր գլուխները:

Զօէստ: Ո՞վէ մասածում դորա մասին. եթէ միայն մարդ իւր օրական սրարէնն ունի:

Յետտէր: Անիծեալ: Հապա ինչու չէ իւր ժամանակին մէկը դուրս գալիս և մէկին այգպիսի բան ասում:

Փանզէն: Ես այդ ասում եմ՝ ձեզ հիմն: Միթէ Իսպանիայի թագաւորը, որը բախտի բերմամբ նահանգներն իւր իշխանութեան ասկին է ժողովել, իրաւունք ունի դոցա մէջ ուրիշ տեսակ վարւելու, քան այն փոքրիկ իշխանները, որոնք երբեմն նոցա տիրում էին առանձին: Դուք այս հասկանում էք:

Յետտէր: Այդ մեզ մի շաւ պարզէք:

Փանզէն: Այդ պարզ է, ինչպէս լոյսը: Դուք ձեր տեղական օրէնքներով չպէտքէ դատւէք: Հապա ինչպէս պիտի լինի:

Մի քաղաքացի: Արգարեւ:

Փանզէն: Բրիւսսէլցին Անտերապէնցուց տարբեր իրաւունքներ չունի: Հապա մզս ինչիցն է:

Ուրիշ քաղաքացի: Ասուած վկայ:

Փանզէն: Բայց եթէ դուք թողնէք այդպէս շարունակւի, ձեզ հետ շուտով ուրիշ կերպ կը վարւեն: Թու. ինչ որ Կարլոս Անվե-

հերը, Ֆրիդրիկոս Պատերազմողը, Կարլոս Հինգերորդը չէին կարող, հիմա այդ անում է Փիլիպոսը մի կնոջ ձեռքով։

Զօէստ: Այս, այս. հին իշխաններն էլ են արդէն փորձել այդ։

Փանզէն: Ի հարկէ—մեր նախնիքը ուշալիր էին։ Հէնց որ նոքա մի իշխանի հետ Շշնամանում էին, յափշտակում էին, օրինակ, նորա որդուն և ժառանգին պահում էին նորան իրանց մօտ և նորան ազատում էին միայն ամենաձեռնառու պայմաններով։ Մեր հայրերը մարդիկ էին։ Նոքա ճանաչում էին իրանց շահերը։ Նոքա դիակին մի բան սկսել և դլուխ բերել։ Օրինաւոր տղամարդիկ։ Հէնց դորա համար են մեր արտօնութիւններն էլ այդպէս որոշ, մեր իրաւունքներն այդպէս ապահովւած։

Սաալինագործ: Սյդ Բնշ իրաւունքների մասին էք խօսում։

Ժողովուրդ: Մեր իրաւունքների, մեր արտօնութիւնների մասին։ Ելի՞ պատմեցէք մեր արտօնութիւնների մասին։

Փանզէն: Թէև բոլոր նահանգների շահերն էլ ապահովւած էին, բայց մասնաւորապէս մենք—Բրաբանտցիներս—ամենասքանչելի իրաւունքների տէր էինք։ Ես բոլորը կարգացել եմ։

Զօէստ: Ասացէք, տեսնենք։

Ցետուէր: Պատմեցէք, լսենք։

Մի քաղաքացի: Խնդրում եմ։

Փանզէն: Նախ գրած է.—Բրաբանտի դուքսը պէտք է մեզ համար բարի և հաւատարիմ տէր լինի։

Զօէստ: Լաւ. այդպէս գրւած է։

Ցետուէր: Իրաւ. ճշմարիտ։

Փանզէն: Խնչպէս որ ես ձեզ ասում եմ։ Նա մեզ պարտաւորած է, ինչպէս մենք նորան։ Երկրորդ՝ նա պարտաւորւած է ոչ մի բռնութիւն, կամ իւր սեփական կամքը մեզ վրայ բանեցնել, նկատել չուզ, կամ որ և է կերպ թոյլ չտալ։

Ցետուէր: Գեղեցիկ, գեղեցիկ։ չբանեցնել։

Զօէստ: Նկատել չտալ։

Ուրիշը: Եւ ոչ իրան թոյլ տալ մոքովն անդամ անցկացնելու։ Այս գլխաւոր կէտը։ Ոչ ոքին թոյլ չտալ, ոչ մի կերպ։

Փանզէն: Բոլորորին պարզ և որոշ բառերով ասւած է այդպէս։

Ցետուէր: Այդ գիրքը ճարիր մեզ համար։

1. Քաղաքացի: Այօ, մենք պէտք է ունենանք այդ գիրքը:
Ուրիշներ: Գիրքը, գիրքը:

2. Քաղաքացի: Մենք նորանով իշխանուհու մօտ կ'երթանք:

3. Քաղաքացի: Խօսողը դուք պէտք է լինէք, պարոն դոքոր:
Սապոնազործ: Խեղճ ողորմելիներ:

Ուրիշները: Ելի՞ մի բան պատմեք այդ գրքից:

Սապոնազործ: Նորա ատամները փորը կ'ածեմ, եթէ նա ելի
մի խօսք կ'ասի:

Ժողովուրդ: Հաւաս տեսնենք, թէ ով նորա վրայ մատ կը
բարձրացնի: Պատմեցէք մեզ այդ արտօնութիւններից: Ել ուրիշ
արտօնութիւններ ունինք:

Փանզէն: Զանագան արտօնութիւններ. շատ լաւերը, շատ
փրկարարները: Այնաեղ գրւած է նոյնպէս—երկրի իշխանը հոգե-
ւոր դասու չպէտք է բարեփոխէ, կամ՝ բազմացնէ՝ առանց աղնւա-
կանութեան ու միւս գասակարգերի համաձայնութեան: Նկա-
տեցէք այս: Նոյնպէս չպէտք է փոփոխէ երկրի սահմանադրութիւնը:

Զօէստ: Այդպէս է:

Փանզէն: Ես ցոյց կը տամ ձեզ նոյն իսկ գիրքը, այն ել եր-
կու-երեք հարիւր տարի առաջ գրւած:

Քաղաքացի: Եւ մենք համբերում ենք նոր եպիսկոպոսներին
Ազնւականութիւնը մեզ պիտի պաշտպանէ: Մենք խոռվութիւն
կը սկսենք:

Միւսները: Եւ մենք թողնում ենք որ հաւատաքննութեամբ
մեզ վախեցնեն:

Փանզէն: Այդ ձեր մեղն է:

Ժողովուրդ: Մենք ունինք գեռ եգմոնտ, գեռ Օրանացի ու-
նինք. նոքա հոգս են տանում մեր բարեբաստութեան մասին:

Փանզէն: Եեր Փլանդրիացի եղբայրները բարի գործը սկսել են:
Սապոնազործ: Ենքն: (Հարւածում է նորան):

Ուրիշներ: (Ընդդիմադրում են եւ կանչում): Դու Ել ես լապա-
հացի:

Մէկ ուրիշը: Այս ինչ է. պատւաւոր մարդուն:

Մէկ ուրիշը: Գիտնականին: (Սապոնազործի վրայ են յարձակում):

Հիւշն: Իսէր Աստուծոյ, հանգստացէք: (Միւսները մէջ նև խանը:

(ում): Քաղաքացիներ, այդ ի՞նչ է նշանակում: (Տղաները սուլում են քարեր են նետում. զներին քիս են տալիս. քաղաքացիները պէլ-պէլ կանգնած են. ամբոխը խոնտում է, մի քանիսն անտարբեր աշ ու ծախ են գնում. միւսները զանազան խեղկատակութիւններ են անում, աղաղակում, ցնծում):

Ուրիշներ: Իրաւունք և արտօնութիւն. արտօնութիւն և իրաւունք:

Էզմինստ: (Եգմոնտ մտնում է ողիկիցներով). Հանգիստ, հանգիստ, ողերք. ի՞նչ է պատահել. հանգստութիւն. դոցա բաժանեցէք իրարից:

Հիւմն: Աղորմած տէր, դուք դալիս էք, ինչպէս երկնքի հրեշտակի Խաղաղութիւն. ոչինչ չէք տեսնում: Կուսն Էզմոնտն է: Գլուխ խոնարհէք կոմս Էզմոնտին:

Էզմինստ: Այստեղ էլ: Այդ ի՞նչ էք անում: Քաղաքացին քարագցու դէմ: Մինչեւ անգամ արքայազն իշխանուհու մերձակայութիւնն էլ չի կարողանում այս անմտութեան առաջն առնել: Ցրւեցէք, գնացէք ձեր բանին: Այդ մի վաստ նշան է, որ դուք լուր օրերը տօնում էք: Խնչ էր պատահել: (Աղմուկը կամաց-կամաց խաղաղանում է. բոլորեքեան հաւաքւում են նորա շուրջը):

Հիւմն: Խոքա ծեծւում են իրանց արտօնութիւնների պատճառով:

Էզմինստ: Որը նոքա յետոյ թեթևամոռութեամբ կը խորտակեն: Եւ մվրէր էք դուք: Օրինաւոր մարդիկ էք երեսում ինձ:

Հիւմն: Այդ մեր ձգտումն է:

Էզմինստ: Ձեր արհեթստը:

Հիւմն: Հիւմն և համքարի պլիսաւոր:

Էզմինստ: Իսկ դժւք:

Զօէստ: Մանրավաճառ:

Էզմինստ: Դժւք:

Յետտէր: Դերձակ:

Էզմինստ: Յիշում եմ. դուք էլ էիք իմ ծառաների համար լիւլրէներ կարողներից: Ձեր անունը Յետտէր է:

Յետտէր: Մեծ շնորհ է ինձ համար, որ յիշում էք անունս:

Էզմինստ: Ես հեշտ չեմ մոռանում ոչ ոքին, որին ես միան գամ տեսել և հետը խօսել եմ: Խնչ որ ձեռներիցդ դալիս է խաղա-

զութիւն պահպանելու համար՝ արէք, տղէք։ Առանց այն էլ ձեզնից գանգատաւոր են։ Թաղաւորին այլ ևս մի՛ դրգոէք։ Իշխանութիւնն էլ հօ ի վերջոյ նորա ձեռին է։ Կարգին քաղաքացին, որը ազնւութեամբ և աշխատասիրութեամբ վաստակում է իւր պարէնը՝ ամեն տեղ ունի այնքան ազատութիւն, որքան հարկաւոր է։

Հիւսնի։ Ի հարիէ. հէնց մեր ցաւն էլ այդ է։ Գողերը, արբեցողները, զատարկապորսները, թող ներէ ձերդ ողորմածութիւնը համարձակութեանս, ձանձրութիւնից խովութիւններ ևն յարուցանում և քաղցից՝ արտօնութիւնների յետեից ընկել. հետաքըբիրների ու զիւրահաւանների առաջ զանազան ստեր են փչում, և մի բաժակ զարեջուր վճարել տալու համար՝ սկսում են վէճեր, որոնք հազարաւոր մարդոց անբախտացնում են։ Նոցա ուզածն էլ հէնց այդ է։ Մենք մեր տներն ու սնդուկները շատ զգուշութեամբ ենք պահպանում։ Եթէ ոչ նոքա ուրախութեամբ կ'ուղէին կրակ դցելով մեզ հալածել։

Հզմոններ։ Ամենայն օգնութիւն կը ստանաք։ Զօրեղ միջոցների են ձեռնարկւած չարիքի առաջն առնելու համար։ Ամուր կացէք օտար վարդապետութեան դէմ և մի՛ք հաւասար, թէ ապստամբութեամբ կարելի է հաստատել արտօնութիւնները։ Տանը մնացէք և մի թողնէք որ նոքա փողոցներում խմբւեն։ Խելացի մարդիկ շատ բան կարող են տնել։

(Այդ միջոցին ամրությ մեծ մասամբ արդէն ցրել է։

Հիւսն։ Շնորհակալ ենք, ձերդ գերազանցութիւն. շնորհակալութիւն լաւ կարծիքի համար։ Ամենը, ինչ որ մեզնից է կախւած, կ'անենք։ (Եզրանար զնում է), ի՞նչ ողորմած տէր. զուտ նիդէր լանդցի. իսպանական ոչինչ չունի։

Ցետատէր։ Երանի թէ նա լինէր մեր փոխարքան, նորան հաճութեամբ կը լսէին։

Զօէստ։ Թաղաւորն այդ հեշտութեամբ չի անիլ։ Տեղը միշիքաններին է տալիս։

Ցետատէր։ Տեսմը դու նորա հազուստը։ Ամենանոր տարազէր, իսպանական ձեռվ։

Հիւսն։ Ի՞նչ գեղեցիկ ազամարդ։

Ցետատէր։ Նորա վիզը գէր պատառ կը լինէր դահճի համար։

ԶօՀՍՄՈՒՅԻՆ ԳԲԺ ԵԱ. ԱՅԴ ՅԻՄԱՐ ԲԱՆԸ ՈՐՄԵՂԲՇ ՊԼՄԻՒԴ ՓՀԵԿ:

Յետտէր: Բաւականին յիմար բան է, երբ մէկի գլխին այդպիսի բան է փչում.—ես այդպէս եմ միշտ: Նրբ մի սիրուն, երկայն վիզ եմ՝ տեսնում, իսկոյն ակամայ մոտածում եմ՝ «ի՞նչ լու կը գլխատուի»: Անիծւած դլխատութիւններ. մարդ չի կարողանում մտքիցը հանել: Նրբ տղէքը լողանում են և մի մերկ մէջք եմ տեսնում, իսկոյն միտս են գալիս տասնեակներ, որոնց տեսել եմ թե ինչպէս ճիպոտներով դոցա հոգիները հանում էին: Հանդիպում է ինձ մի հաստափոր, կարծես թէ տեսնում եմ նորան արդէն՝ ձողին անցրած, խորովելիս: Դիշերները երազում ամբողջ մարմինս դողդողում է: Մարդ մի ժամ ուրախութիւն չունի: Ամեն զւարձութիւն, ամեն կատակ վաղուց մոռացել եմ: Այս սարսափելի պատկերները կարծես ճակատիս դազած լինեն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍՄԱՐԱՆ

Է ԳՄՈՆՄԻ ՔՆԱԿԱՐԱՆԸ

Քարտուղար: (Թղթերով լի սեղանի մօտ անհանդիստ կրոնպնում է) Այսքան ժամանակ նա չի գալիս. իսկ ես արդէն երկու ժամէ սպասում եմ՝ զրիչը ձեռիս, թուղթը առաջիս: Իսկ հէնց այսօր որքան կուզէի շուտով հեռանալ: Կարծես ուիս տակը կրակ լինի փառած: Անհամբնրութիւնից հալում եմ: «Մի ժամից այնտեղ եղիր» հրամացեց նա ինձ՝ զեռ հեռանալուց առաջ, բայց նա չի գալիս: Այնքան դործ կայ, որ մինչեւ կէս գիշերը չեմ վերջացնելու: Ի հարկէ երբեմն նա էլ է մատների արանքով նայում, սակայն նա աւելի լաւ կը համարէի, որ նա աւելի խիստ լինէր, բայց և որոշեալ ժամին մարդու ազատ թողնէր: Կարելի էր յարմարւել ժամանակին: Ունդենտուհու մօաից հիմա նա արդէն երկու ժամ է հեռացել է. ով գիտէ, էլի ում է բռնել ճանապարհին:

(Եզմոնալը ներս է մտնում):

Էզմհնտ: Խ՞նչպէս են գործերը:

Քարտուղար: Ես պատրաստել եմ, և երեք սուրհանդակ սպասում են:

Էզմհնտ: Երեւում է, բաւականին շատ եմ ուշացել. դէմքդ թթւած է:

Քարտուղար: Զեր հրամանները լսելու վաղուց եմ սպասում
Անա թղթերը:

Էզմինտ: Դոննա էլւիրան կը չարանաց, երբ լոի, որ ես եմ
Զեզ ուշացրել:

Քարտուղար: Կատակ էք անում:

Էզմինտ: Ոչ, ոչ, մի' ամաչիլ, երեսում է, որ լաւ ճաշակ
ունիս նա սիրուն է: Իսկ ինձ համար շատ լաւ է, որ ամրոցում
դու մի բարեկամուհի ունիս: Ինչ են ասում նամակները:

Քարտուղար: Շատ բան, բաց ուրախացուցիչ—շատ քիչ:

Էզմինտ: Այդ լաւ է, որ մեր ուրախութիւնը տանն է, և
դրսից սպասելու կարիք չունինք: Շատ են եկած:

Քարտուղար: Բաւականին. երեք սուրհանդակ էլ սպա-
սում են:

Էզմինտ: Դէ ասա, միմիացն ամենակարեռը:

Քարտուղար: Բոլորն էլ կարեոր են:

Էզմինտ: Դէ ասա մէկմէկու յետեից. միացն շնուտ:

Քարտուղար: Հարիւրապետ նրէդան տեղեկացնում է, թէ
ինչ է պատահել այնուհետեւ Գէնտում ու շրջակայքում: Ազմուկը
մեծ մասամբ հանդարտւել է:

Էզմինտ: Նա գրում է, ի հարկէ, զանազան տգեղութիւնների
ու անմտութիւնների մասին:

Քարտուղար: Այո, պատահում են:

Էզմինտ: Խնձ խնացիր:

Քարտուղար: Ելի վեցը բոնւած են, որոնք Ֆէրւիլսում սուրբ
Աստւածամօր պատկերը պատառել են: Նա հարցնում է, թէ ար-
դեօք նոցա էլ միւսների նման կախել տայ:

Էզմինտ: Ես դադրել եմ՝ այնքան կախել եմ տւել: Թող մէկ
լաւ ծեծեն ու բաց թողնեն:

Քարտուղար: Հետները երկու կին էլ կան. նոցա էլ պիտի
ծեծի:

Էզմինտ: Թող նոցա յանդիմանեն ու բաց թողնեն:

Քարտուղար: Նրէդացի զինւորներից մինը՝ բրինկ անունով
կամենում է ամուսնանալ: Հարիւրապետը յոյս ունի, որ դուք նո-
րան կը մերժէք: Գնդի մէջ այնքան կին կայ, գրում է նա, որ

եթէ շարժւելու լինինք, կը նմանւենք ոչ թէ զօրաչուի, այլ բօշա-
ների խմբի:

Էզմոնտ: Նորա սիրոյն այս անգամ՝ իրաւունք եմ՝ տալիս:
Նա մի ջահիլ սիրուն երիտասարդ է: Նա հեռանալուցս առաջ
ինձ աղաչելով խնդրում էր: Բայց այսուհետեւ թող էլ ոչ ոքին
իրաւունք չտրւի, որքան էլ որ ցաւալի է ինձ համար, որ պէտք է
ամենալաւ գւարճութիւնը մերժեմ այդ ողորմելիներին, որոնք
առանց այն էլ քիչ չեն տանջւել:

Քարտուղար: Ձեր մարդկանցից երկուսը — Յետուիր և Հարտ—
մէկ պանդոկապետի աղջկայ հետ վաս խաղ են խաղացել: Նոքա
բռնել են նորան առանձին և աղջիկը չի կարողացել պաշտպանել
իրան դոցա դէմ:

Էզմոնտ: Եթէ պատաւոր աղջիկ է, և նոքա բռնութիւն են
գործ գրել, թող իրար վրայ երեք օր նոցա ծեծէ ճիշտուվ. իսկ
եթէ նոքա կարողութիւն ունին, թող նոցանից գրաւէ այնքան,
որքանը բաւական է մի աղջկայ օժիտ տալու:

Քարտուղար: Յտար քարոզիչներից մինը Կոմինէսի միջով
ծածուկ անցնելիս բռնւել է: Նա երդում է, որ մտադիր է եղել
անցնել Ֆրանսիա: Հաս հրամանի նա պէտք է գլխատւի:

Էզմոնտ: Թող սուսուփուս նորան սահմանը հասցնեն և հա-
ւատացնեն նորան, որ երկրորդ անգամ այդպէս չի ազատւիլ:

Քարտուղար: Մէկ նամակ կայ Ձեր բաժառուից: Գրում է,
որ փողը քիչ է ժողովւում. և այս շաբաթ պահանջած գումարը
դժւար թէ կարողանայ ուղարկել: Խռովութիւնն ամեն բանի մէջ
ամենամեծ խառնաշփութութիւնն է ձգել:

Էզմոնտ: Փողը պէտք է ստացւի: Այդ իւր գործն է, թէ
ինչպէս պէտք է ժողովէ:

Քարտուղար: Նա ասում է, որ կարելի եղածը կ'անէ. և կա-
մենում է վերջապէս Ռայմոնդի դէմ, որը երկար ժամանակ Ձեզ
պարտ է, գանգատւել և նորան բանտարկել տալ:

Էզմոնտ: Նա հօ խռոտացել է վճարել:

Քարտուղար: Վերջին անգամ՝ ինքը նշանակեց տասնուշորս
օր ժամանակ:

Էզմոնտ: Թող էլի տասնեչորս օր ժամանակ տայ և աշնունքունեւ կարող է նորա դէմ դատ սկսել:

Քարտուղար: Նատ էլ լաւ էք անում: Չտալու պատճառը ոչթէ չքաւորութիւնն է, այլ չար կամքը: Անկասկած նա կը լրջանաց, երբ տեսնէ, որ դուք կատակ չէք անում: Ապա ասում է բաժառուն—նա ուզում է այն ծեր զինուորներին, որբեացրիներին և մի քանի ուրիշներին, որոնց դուք մարդասիրաբար թոշակ էիք կապել, կես ամսով հասանելիքը կտրել, մինչեւ մի ելք գտնելը Թող նոքա իրանց ճարը տեսնեն:

Էզմոնտ: Այդտեղ ինչ ճար տեսնելու բան կայ. այդ մարդիկն ինձնից աւելի փողի կարիք ունին: Թող նա այդ այլակն թողնի:

Քարտուղար: Հապա որտեղից էք հրամայում, որ նա փող ճարէ:

Էզմոնտ: Դորա մասին թող ինքը մտածէ: Նորան արդէն առաջին նամակում գրւած է:

Քարտուղար: Հենց դորա համար էլ անում է նա այդ առաջարկութիւնները:

Էզմոնտ: Դոքա բանի պէտք չեն, թող մի ուրիշ ելք գտնէ: Թող այնպիսի առաջարկութիւններ անէ, որոնք ընդունելի լինին: Բայց նախ և առաջ թող փող ճարէ:

Քարտուղար: Ես կոմս Օլիւայի նամակը նորից այստեղ եմ գրել: Ներեցէք, որ դորա մասին ես Ձեզ յիշեցնում եմ: Այդ ծեր պարոնը ուրիշներից աւելի է արժանի մանրամասն պատասխանի: Դուք կամենում էիք նորան անձամբ գրել: Անկասկած նա Ձեզ սիրում է, ինչպէս մի հազր:

Էզմոնտ: Ես չեմ հասնում: Նատ ատելի բաների մէջ ինձ համար գրելը ամենաատելին է: Դու հօ շատ լաւ կարողանում ես իմ ձեռքին նմանեցնել. գրիր իմ անունից: Ես սպասում եմ Օրանացուն: Ժամանակ չունիմ: Եւ ես ինքս էլ կ'ուզէի, որ նորան իւր տարակուսանքների մասին մի լաւ, խաղաղացուցիչ բան գրէր:

Քարտուղար: Ասացէք ինձ ձեր կարծիքը մօտաւորապէս, ես արդէն պատասխանը կը շարադրեմ և Ձեզ կը ներկացացնեմ: Այնպէս պէտք է գրւի, որ դատաստանի առաջ էլ Ձեր ձեռքի տեղ անց կենայ:

Էզմոնտ: Տուր ինձ նամակը: (Թոռցիկ նպելիվ): Բարի, ազնիւ ծեր: Երիտասարդութեանդ ժամանակն էլ այդպէս շրջանկատ էիր: Ոչ մի պատճէշի վրայ չե՞ս բարձրացիլ: Մնամում էիր պատերազմում յետեղ, ուր խորհուրդ է տալիս խելօքութիւնը: Ի՞նչ անկեղծ խնամատար: Նա ցանկանում է ինձ կեանք և բախտաւորութիւն, և չի հասկանում; որ արդէն մեռած է նա, ով իրան ապահովելու համար է ապրում: Գրիբ նորան, թող նա անհոգ լինի: Ես գործում եմ, ինչպէս պարտաւոր եմ, իսկ զգուշանալ—ինքս արդէն գիտեմ: Խւր հեղինակութիւնը թող պալատում գործադրէ յօդուա իմ, և հաւասոի լինի անկեղծ շնորհակալութեանս:

Քարտուղար: Ուրիշ ոչինչ. օ... նա աւելի է սպասում:

Էզմոնտ: Ել աւելի ինչ ասեմ: Ուզում ես երկարաբան լինել, այդ քո ձեռքին է: Հարցը միշտ միևնոյն կէտի շուրջն է պատառում: Ասում է որ այնպէս ապրեմ, ինչպէս ապրել չեմ կարող: Որ ես գլարթ եմ, իրերին նայում եմ թեթև աչքով, արագ եմ ապրում—այդ իմ բախտն է, և ես այն չեմ փոխիլ գերեզմանի կամարի ապահովութեան հետ: Ես չունիմ իսպանական կենցաղավարութեան ձեր և ոչ արեան մի կաթիլ իմ երակներում, ոչ էլ ցանկութիւն՝ քայլերս պալատական, նոր և շրջանկառ քայլանիշին վարժեցնելու: Ապրում եմ միայն ապրելու մասին մտածելու համար: Ներկայ րոպէն չվայելեմ, որպէս զի ապագայի մասին ապահով լինեմ: և այն էլ նորից տեղի ու անտեղի հոգսերով մաշեմ:

Քարտուղար: Խնդրում եմ, տէր, միք լինիլ այդպէս կոշտ ու կոպիտ գէպի այդ բարի մարդը: Դուք հօ սովորաբար քաղցր էք դէպի ամենքը: Ասացէք ինձ մի քաղցր խօսք, որը այն ազնւ բարեկամին հանգստացնէր: Տեսէք, ինչպէս հոգածու է նա. որքան նա քնքոյց է շարժում Ձեզ:

Էզմոնտ: Սակայն նա հէնց միշտ այդ լարն է շարժում: Նա վաղուց գիտէ, թէ որքան ատելի են ինձ խրատները. նոքա միայն շփոթեցնում են մարդու, նոքա ոչինչ չեն օգնում: Եւ եթէ ես մի լուսոտ լինէի և մի տան ամենալուանդ ուոր կորում զբօսնելիս, բարեկամական բան է՝ զգուշացնելու մաքով, անունս տալ, զարթեցնել ու սպանել: Թող ամեն մարդ իւր ուղին գնայ: Թող նա իրան պահպանէ:

Քարտուղարք Զեզ վայել չէ հոգս քաշել. բայց ով Զեզ ճանաչում է և սիրում...

Էզմոնտ: (Նախակին նայելով). Յիշում է նորից հին հեքիաթները, ինչ որ մենք մէկ երեկոյ ընկերական ուրախ տրամադրութեան մէջ և գինու ազգեցութեան տակ արել ու խօսել ենք. և թէ դոցանից ինչ հետեանքներ ու եզրակացութիւններ են հանել մարդիկ և ողջ տէրութեան մէջ տարածել: Մենք մեր ծառաների թևերի վրայ կարել էինք տւել բոժոժներով գդակներ և միմոսի պարզուներ, և այդ յիմար գարգարանքը յետոյ գարձրել էինք սլաքների մի կապոց, ևս աւելի վտանգաւոր նշանակ բոլոր այն մարդոց համար, որոնք ուղում են մեկնութիւն տալ, ուր որ մեկնելու ոչինչ չկայ: Մենք այս և այն գժութիւնները մի ուրախ վայրկանում յղանում ու ծնանում էինք: Մենք մեղաւոր ենք, որ ազնիւների մի ամբողջ խումբ՝ տղքատի պատկերով և ինքնազիր մականուններով, թագաւորին յիշեցնում էր իւր պարտաւորութիւնները ծաղրական հեղութեամբ: Եատ լաւ, մենք մեղաւոր ենք. յետոյ: Բարեկենդանի խաղը սկետական դաւագրութիւն է Պէտք է մեզ յանդիմանին այն կարճ, խայտաճամուկ ցնցուաների պատճառով, որ մի երիտասարդական ոգի, մի թարմացած երևակացութիւն մեր կեանքի խեղճ մերկութեան վրայ է ձգում: Եթէ կեանքի վրայ չափազանց լուրջ նայենք, խկապէս ինչ կայ նորանում: Եթէ առաւօսը մեզ նոր ուրախութիւնների համար չղարթեցնէր և երեկոյեան ոչ մի ցանկութիւն չմնար յուսալու—ել արժէր հագնեւել, հանւել: Արեգակը ինձ այսօր միթէ նորա համար է երևում: որ խորհեմ թէ երեկ ինչ էր պատահել և գուշակեմ ինչ որ գուշակելի չէ—գալոց օրւայ բախտը: Աղատիր ինձ այս խորհրդածութիւններից: Այդ մենք թողնենք աշակերտներին ու պալատականներին: Նոքա թող ճարեն ու հանձարեն, թափառեն ու սողան, հասնեն, ինչին միայն կարող են հասնել, որսան, ինչ որ կարող են:—Եթէ զու կարող ես այդ բոլորից մի բան պէտք ածել այնպէս, որ նամակդ գրքի ծաւալ չստանայ—ես ոչինչ չունիմ ասելու: Բարի ծերունուն ամեն ինչ ծանրակշիռ է երևում: Մի բարեկամ, որը երկար բոնել է մեր ձեռքը, աւելի ես ամուր է սկզբում, երբ ուղում է բաց թողնել:

Քարտուղար: Ներեցէք ինձ: Հետեւակի գլուխը պատում է, երբ տեսնում է մէկին ձի հեծած՝ փոթորկի նման արշաւելիս:

Էզմինտ: Երեխայ, երեխայ, ուրիշ ոչինչ: Ժամանակի արեգակնային ձիերը՝ ինչպէս անտեսանելի ոգիներից մորակւած, մեր ժակատագրի թեթև կառքի հետ սլանում անցնում են. իսկ մնակ ուրիշ ոչինչ չի մնում, եթէ ոչ միայն սանձն ամուր բռնել, երբեմն աջ, երբեմն ձախ, այսուղ քարից, այնուղ անկումից անիւր հեռու թեքել: Թէ ուր է գնում, ով գիտէ այդ: Նա հազիւ ցիշում է թէ որտեղից էր գալիս:

Քարտուղար: Տէր իմ, տէր:

Էզմինտ: Ես բարձր եմ կանգնած. բայց կարող եմ և պէտք է էլ աւելի բարձրանամ: Ես զգում եմ մշտ յոյս, քաջութիւն, ոյժ: Ես դեռ աճման գագաթնակիտին չեմ հասած. իսկ երբ միանդամ վերել կանգնեմ, ապա կը կանգնեմ ամուր և աներկիւզ: Եթէ վճռաւած է ինձ լնինել՝ թող կայծակը, փոթորիկը, այն, մինչեւ անգամ մի սխալ քայլ—ինձ անդունդը գլորեն. այնուղ ես կ'ընկնեմ շատ հազարների հետ. ես երբէք չեմ արհամարած իմ բարի զինակիցների հետ մի փոքրիկ շահի համար անգամ արիւնաբոցը վիճակը ձգել. և ես պէտք է հիմա վախենամ, երբ հարցը ազատութեան—կեանքի այդ ամենաթանկագին պարզեի մասին է:

Քարտուղար: Ոհ, տէր իմ, Դուք չղիտէք, ինչ խօսքեր եք արտասանում: Ասուած Զեզ պահպանէ:

Էզմինտ: Թղթերդ հաւաքիր: Օրանացին գալիս է: Պատրաստիր ինչ որ ամենակարևորն է, որ սուրհանգակները մեկնեն, նախ քան դարպասների փակելը: Միւսների համար դեռ ժամանակ կայ: Կոմսի հասցէին նամակը թող մնայ մինչեւ առաւօտ: Չուշանաս էլւիրային այցելելու, և նորան իմ կողմից բարիիր: Տեղեկացիր, ինչպէս է ուեզենոտուհին: Ասում են, լաւ է, թէե նա այդ ծածկում է: (Գրագիրը հեռանում է, մտնում է Օրանացին): Բարեւ Օրանացի: Մի փոքր անհամարձակ էք երեսում:

Օրանացի: Ի՞նչ կ'ասէք Դուք ոեգենտուհու հետ մեր ունեցած խօսակցութեան մասին:

Էզմինտ. Ես գտայ, որ նա մեզ ընդունեց ըստ իւր սովորու-

թեան։ Արտասովոր ոչինչ չկար։ Ես նորան այդպէս շատ եմ տեսած։ Ինձ երեաց նա ոչ-բոլորովին առողջ։

Օրանացի։ Դուք նկատեցիք, որ նա սովորականից աւելի շափաւոր էր։ Դեռ ուզում էր ամրոխի ապատամբութեան վերարերմամբ մեր վարմունքին անխոռվ հաւանութիւն տալ. բայց նկատեց, թէ ինչ սխալ մեկնութիւն կարելի է տալ այդ բանին, ապս հակւեց խօսակցութեամբ դէպի իւր հին ճառասացութիւնը—թէ իւր սիրալիր և բարի վարմունքը, իւր բարեկամութիւնը դէպի մեզ—նիդէրլանդցիներս՝ երբէք լաւ չեն ճանաչւած, շատ թեթևակի են գնահատւած։ Թէ ոչ մի բան ըզձալի ելք չի ունենում։ Թէ նա համբերութիւնը վերջապէս կորցրել է, և թագաւորը սովորած կը լինի ուրիշ միջոցների դիմելու։ Լսեցիք այս։

Էզմոնտ։ Ո։ բոլորը. այդ միջոցին մի ուրիշ բանի վրաց էի մոտածում։ Նա մի կին է, բարի Օրանացի։ Իսկ որովհետեւ նոքու խաղաղ բնաւորութեան տէր են, ուստի նոքա միշտ կ'ուզէին, որ ամեն ինչ անխոռվ ձկւէր նոցա մեղմ լծի տակ, որ իւրաքանչիւր Ներկուլէս առիւծի մորթին դէն զցէր և նոցա ստորին պալատան կանների թիւն աւելցնէր։ որովհետեւ նոքա խաղաղասէր են մի ամբողջ ժողովրդի յուզմունքը և զօրեղ ախոյնեանների իրար դէմ յարուցած փոթորիկը մի քաղցը խօսքով մեղմանացին, և որ ամենահակառակ տարբերը նորա ոսների մօտ խաղաղ համբաշխութեամբ միանացին։ Բայց որովհետեւ այդ չի կարողանում յաջողցնել՝ ապա էլ ուրիշ ճար չունի, բայց եթէ քմահաճ լինել, երախտամոռութեան ու անիմաստութեան վրաց գանգատւել, ապա գայում՝ լինելիք սարսափելի հետեանքներով սպառնալ, և նաև սպառնալ, թէ ինքը կը հեռանայ։

Օրանացի։ Դորան էլ չէք հաւատում, որ նա իւր սպառնալիքը կ'իրադործէ։

Էզմոնտ։ Երբէք։ Քանի քանի անգամ եմ տեսել նորան ճանապարհ ընկնելու պատրաստ։ Արգեծքը ուր է ուզում գնալ։ Այսուեղ նա պետ է, թագուհի։ հաւատում ես, որ նորան կը զբաղեցնէ իւր եղբօր պալատում աննշան օրերը թել մանելով անցկացնել կամ իտալիա գնալ և հին ընտանեկան յարաբերութիւնների մէջ մնացած օրերը քարշ տալ։

Օրանացի: Նորան այդ վճիռների համար անընդունակ էք համարում, որովհետեւ դուք տեսիլ էք նորան գանդաղելիս, որովհետեւ նորան տեսել էք յետ կանգնելիս. բայց և այնպէս նորանում այդ բանը կազ: Նոր հանգամանքները մղում են նորան գէպի երկար ժամանակ ուշացրած վճիռը: Իսկ եթէ նա գնար, և թագաւորն ուղարկէր մի ուրիշին:

Էզմոնտ: Ի՞նչ, նա կը գար և նոյնը կ'անէր: Մեծ նախագծերով ու մոքերով կը գար նա, որ ամեն ինչ վարէ, նւաճէ և միասին պահէ, սակայն այսօր այս չինչ ն բանով, վազը մի ուրիշով կը գրադւէր, էլօր մի արգելք կը դանէր, մէկ ամիս ծրագիրներով կ'անցկացնէր, միւս ամիս՝—ի զերև ելած ձեռնարկութեան վրայ դժկամակելով. մի ամբողջ կիսամետակ կ'անցկացնէր հոգսերի մէջ միմիայն մի նահանգի համար: Նորա համար էլ տարին կ'անցնի, գլուխը կը պոտի, և իրերը, ինչու առաջ, կը պահպանեն իրանց լնթացքը. այնպէս որ փոխանակ դէպի լայն ծովը ըստ նախագծած շաւդի նաւազարելու, թող Աստուծուց շնորհակալ լինի, եթէ նա այս փոթորիկի ժամանակ նաւը ժայռերից ազատէ:

Օրանացի: Եթէ թագաւորին խորհուրդ տացին նոր փորձ անելու:

Էզմոնտ: Օրինակ:

Օրանացի: Տեսնելու, թէ ի՞նչ կ'անէր բունն առանց գլխի:

Էզմոնտ: Խնչպէս:

Օրանացի: Եզմոնտ, շատ տարիներից ի վեր կրում եմ ես սըրտումս մէր բոլոր հանգամանքները. և շախմատ խաղացողի նման եմ. և հակառակորդի ոչ մի քայլն աննշան չեմ համարում: Ինչպէս որ պարապ մարդիկ ամենամեծ խնամքով չարչարւում են յնութեան գաղտնիքների վրայ, և էլ այնպէս՝ ամեն մի իշխանի պարտքն ու կոչումն եմ համարում—բոլոր կուսակցութիւնների մուածութիւններն ու խորհրդածութիւնները ճանաչել: Ես պատճառ ունիմ վախենալու գժտութիւնից: Թագաւորը երկար ժամանակ գործում է որոշեալ սկզբունքների համեմատ. նա տեսնում է, որ դորանով չի հասնում նպատակին. դորանից էլ հաւանական ի՞նչ կայ, որ նա այդ բանը մի ուրիշ ճանապարհով փորձելու լինի:

Էզմոնտ: Չեմ կարծում: Երբ մարդս ծերանում է և այնքան

փորձելուց յետոյ տշխարհա էլի չի ուզում կարգի ընկնել, վերջապէս նա պէտք է ձեռք վերցնի:

Օրանացի: Մի բան նա գեռ չի փորձել:

Էզմինտ: Այսինքն:

Օրանացի: Փողովրդին խնայել, իսկ իշխաններին փճացնել: Էզմինտ: Քանին են արդէն աց բանից վախեցել: Դա հոգս չէ:

Օրանացի: Առաջ հոգս էր. կամաց կամաց հաւանականութիւն, վերջապէս ինձ համար համոզումն է գաճրել:

Էզմինտ: Միթէ թագաւորը քեզնից աւելի հաւատարիմ ծառաներ ունի:

Օրանացի: Մենք նորան ծառալում ենք մե՛ր ձեռվէ եւ, խօսքը մեր մէջ մնայ, լաւ կշռել գիտենք թագաւորի իրաւոնքները և մերը:

Էզմինտ: Բայց ով չէ այդպէս անում: Մենք նորան հպատակ ենք և տալիս ենք զկայսերն կացսեր:

Օրանացի: Խոկ եթէ նա իրան աւելի իրաւունք վերագրէ և անհաւատարմութիւն անւանէ այն, ինչ որ մենք մեր իրաւունքների սահմանում մնալ ենք համարում:

Էզմինտ: Մենք կարող ենք մեզ ոլաշտականել: Թող կանէ Ոսկեզեղմի բոլոր ասպետներին միասին, թող նոքա մեզ դատեն:

Օրանացի: Խոկ եթէ վճիռը տրւէր հարցաքննութիւնից առաջ, և պատիժը՝ դատավճռից առաջ:

Էզմինտ: Այդ կը լինէր մի անարդարութիւն, որով Փիլիպպոսը իրան երբէք չի արատաւորիլ, և մի անմտութիւն, որին ես ընդունակ չեմ կարծում ոչ նորան և ոչ նորա խորհրդականներին:

Օրանացի: Լաւ. բայց եթէ նոքա անարդար և անմիտ լինեն:

Էզմինտ: Ո՞չ, Օրանացի, այդ անկարելի է: Ո՞վ պէտք է համարձակէր մեզ վրայ ձեռք բարձրացնել: Մեզ ձերբակալելը կը լինէր մի զուր և անպոտուղ ձեռնարկութիւն: Ո՞չ. նոքա չեն ցաւակնիլ բոնաբարութեան դրօշը ացդքան բարձրացնել: Այդ լուրը ամբողջ երկրում տարածող հոգմը մի սարսափելի հրդեհ կը բորբոքէր: Եւ մոքներն ինչ է: Դատել և դատապարտել թագաւորը չի կարող մեն մենակ: Խոկ նոքա միթէ կուզենային մարդասալան լինել մեր անձի: Նոքա չեն կարող ուզենալ: Մի սարսափելի դաշն կարող էր

ժողովրդին մի վայրկեանում միացնել։ Եւ ուժգին կը հրատակւէր առելութիւն և յաւիտենական բաժանումն իսպանական անունից։

Օրանացի։ Այն ժամանակ բոցը կը լավիզէր մեր շիրիմները, և մեր թշնամիների արիւնը կը հոսէր իբրև քաւութեան անմեղ զոհ։ Թող մտածենք, Եգմոնտ։

Եզմոնտ։ Իսց նոքա ինչպէս պէտք է անէին այդ բանը։

Օրանացի։ Ալբան ճանապարհին է։

Եզմոնտ։ Չեմ հաւատում։

Օրանացի։ Ես գիտեմ։

Եզմոնտ։ Ուեզենտուհին այդ մասին լսել անգամ չէր ուզում։

Օրանացի։ Եւ նոյնքան աւելի եմ համոզւած։ Ուեզենտուհին նորան կը զիջանի իւր աեղը։ Նորա արիւնոշտութիւնը ես ճանաչում եմ։ Նա հետը զօրք է բերում։

Եզմոնտ։ Նահանգները նորից ծանրաբեռնելու։ Ժողովուրդը ծայրայեղ նեղութեան մէջ կ'ընկնի։

Օրանացի։ Նոքա իրանց կ'ապահովացնեն ժողովրդի առաջնորդներից։

Եզմոնտ։ Ո՛չ, ոչ։

Օրանացի։ Գնանք իւրաքանչիւրս մեր նահանգը։ Այնտեղ ամբանաք. նա իւր դործը ակնյալոնի բռնութեամբ չի սկսիլ։

Եզմոնտ։ Չպէտք՞ ողջունենք նորան, երբ գայ։

Օրանացի։ Մենք կը գանդաղենք։

Եզմոնտ։ Եսկ եթէ նա յանուն թագաւորի սրահանջէ մեզ իւր դալսուեանը։

Օրանացի։ Պատրւակներ կ'որոնենք։

Եզմոնտ։ Եթէ նա պնդի։

Օրանացի։ Ներողութիւն կը ինդրենք։

Եզմոնտ։ Եթէ նա իւր ասածին հաստատ մնայ։

Օրանացի։ Եւս առաւել չենք դալ։

Եզմոնտ։ Եւ կոիւը հրատարակւած է, ու մենք ապստամբներ ենք։ Օրանացի. թող խելօքութիւնդ քեզ չգայթակղեցնի։ Ես գիտեմ, որ երկիւզը չի կարող քեզ յետ կանգնեցնել. Կշռադատիր քայլեր։

Օրանացի։ Ես կշռադատել եմ։

Հզմննտ: Մոածիր թէ ինչ բանի համար պատասխանառու կը լինես: Մի ամենաաւերիչ կուի համար, որը երբեք մի երկիր ամայացրել է: Քո մերժումը մի նշան կը լինի, որով նահանգները միանդամից դէնքի կանչէ, և որը կ'արդարացնէ ամեն մի բարբարոսութիւն, որի համար Խստանիան վաղուց հետէ սիրով մի պատրւակ է որոնում: Խնչոր մենք չարչարանքով վաղուց հանգստացրել ենք, զու մի վայրկեանում կը գրգռես դէպի սարսափելի խառնակութիւն: Մաածիր քաղաքների, ազնւականութեան, ժողովրդի վաճառականութեան, երկրագործութեան, արհեսոների մասին. և երեակացիր աւերութները, սպանութիւնը: Զինւորը սառնասրութեամբ տեսնում է իւր կողքին ընկերոջը գաշտում ընկնելիս: Բայց գետն ի վայր քաղաքացիների, երեխաների, կոյսերի դիակներն այնպէս քո հանդէպ կը լողան, որ զու զարհուրանքով կը մնաս սառած և այլ ևս չես գիտենալ ում իրաւունքներն ես պաշտպանում, քանի որ նոքա են կործանուում, որոնց ազառութեան համար զու զէնք ես բարձրացնում: Եւ ինչ կը լինի քո զրութիւնը երբ ինքդ քո մէջ պէտք է խոստվանւես—«իմ՝ ապահովութեան համար զահեցին նոցառ»:

Օրանացի: Մենք մասնաւոր մարդիկ չենք, եգմոնտ: Եթէ մեզ վայել է մեր անձը նւիրել հազարին, ապա վայել է մեզ ևս խնայել այն հազարի համար:

Հզմննտ: Ով իրան խնայում է, պէտք է ինքն իւր աչքում կասկածելի դառնայ:

Օրանարի: Ով իրան ճանաչում է, կարող է ապահով կերպով թէ առաջ գնալ, և թէ նահանջել:

Հզմննտ: Չարիքը, որից վախենում ես, քո վարմունքով կիրականանայ:

Օրանացի: Խոհեմի ու քաջի բան է—անխուսափելի չարիքի առաջը գնալ:

Հզմննտ: Այդպիսի մի վտանգի ժամանակ թեթև յոյսն է հաշւի է առնեում:

Օրանացի: Մենք ամենաթեթև քայլի համար անգամ էլ տեղ չունինք: Ուզիղ անդնդի գլխին ենք:

Էզմինտ: Թագաւորի բարեհաճութիւնը . միթէ այդքան նեղ
շառիղ է:

Օրանացի: Անքան նեղ չէ, բայց լովծուն է:

Էզմինտ: Ասուած վկայ, անիրաւացի են վարւում թագաւորի դէմ: Տանել չեմ կարող, երբ նորա մասին անարժանօրէն են մասձում: Նա Կարլոսի որդին է և ոչ մի ստորութեան ընդունակ:

Օրանացի: Թագաւորներն ստոր ոչինչ չեն անում:

Էզմինտ: Պէտք էր նորան լաւ ճանաչել:

Օրանացի: Հնց այդ ճանաչողութիւնն է մեղ խորհուրդ տալիս մի վտանգաւոր փորձի չսպասել:

Էզմինտ: Վտանգաւոր չէ ոչ մի փորձ, որի համար մարդս քաջութիւն ունի:

Օրանացի: Դու տաքանում ես, Էզմինտ:

Էզմինտ: Ես պէտք է իմ աչքերով տեսնեմ:

Օրանացի: Ո՞ս... երանի այս անգամ տեսնէիր իմ աչքերով: Բարեկամն, որովհետեւ աչքերդ բաց ես արել, կարծում ես, թէ տեսնում ես: Ես գնում եմ, զու մնա Ալբայի գալստեան. և Ասաւած քեզ հետ: Գուցէ իմ մերժումն քեզ տղատէ: Գուցէ վիշապը ոչինչ լուսած համարէ, եթէ մեղ երկուսիս միատեղ և միանգամից շլանէ: Գուցէ գանգաղի, որպէս զի իւր ձեռնարկութիւնն աւելի ապահով գլուխ բերէ, և գուցէ դու այդ միջոցին իրերն իրանց խսկական գոյնով տեսնես: Բայց այն ժամանակ շնուտ, շնուտ. ազատիր, աղատիր քեզ: Մնաս բարեաւ: Թող ուշագրութիւնիցդ ոչինչ չխուսափի—թէ որքան զօրք է բերում հետը, ինչպէս է քաղաքը դրաւում, ինչ իշխանութիւն է սեգենառուհին իրան վերապահում; ինչպէս են տրամադրւած բարեկամներդ—ինձ տեղեկութիւն տաս, Եզմինտ:

Էզմինտ: Ի՞նչ ես ուզում:

Օրանացի: (Նորա մեռը բռնելով): Համոզիր. արի հետս:

Էզմինտ: Այս ի՞նչ է: Արտասմուք, Օրանացի:

Օրանացի: Լալ կորածին—այս էլ տղամարդութիւն է:

Էզմինտ: Դու ինձ կորած ես համարում:

Օրանացի: Դու կորած ես: Լալ մտածիր: Քեզ շատ կարճ ժամանակ է մնում: Մնաս բարեաւ: (Գնում է):

Էզմինստ: (Միայնակ): Որ ուրիշների մտքերը մեզ վրայ այդպիսի տպաւորութիւն ունին, այդ երբեք մտքովս չէր անցած: Եւ այդ մարդը ներշնչեց իմ մէջ իւր հոգածութիւնը: Հեռան... Այդ մի օտար կաթիլ է իմ արեան մէջ: Բարի բնութիւն, զուրս ձգիր նորան արիւնիցու: Բայց իմ ճակատից մտածութեան կնճիռները սրբելու համար հօ կայ դեռ մի քաղցր միջոց:

(Վերջ Բ. դործողութեան):

(Շարունակութիւն)

ԿԱՄՈՒՐՃԸ

Շ Ա Ն Թ Ի

Յօհեթե, սիրուն կամուրջը մերկ
Հոծ տարփանքով պինդ կը փաթթէ
Խենթ գետակի մարմինը մեղկ
Յաղթ թևերովն իր երկաթէ:

Եւ գետակը ալ մոլեզնոս
Կը գալարի ինքն իր վրայ.
Փրփուր կուրծքը կ'ուռի կրքոտ
Ու յուզումն կը դուդուայ:

Իսկ ես թախճով կը նայիմ վար
Սէր ու կրքի այդ քերթւածին,
Որ կը հեզնէ հոտ դարէ դար
Մեր խեղճ սէրը վայրկենածին:

1893թ. դեկտ. 11, Լալալյիդ.

ԲԱՐՁՐ

ՏԱՆԹԻ

Ուհ. ես բարձր թռչիլ կուզեմ։
Հոն մաքուր է, արձակ, ազատ։
Հոն հովին դէմ ես կը վազեմ
Եթե եղբացըն իր հարազատ։
Ալեորիկ լեռան այտին
Կուզեմ թառիմ բազէն վեր,
Վերէն նայիմ ամսի կոյտին,
Հպարտ ժայռին տամ ժպիտներ։
Գիտեմ. վարէն թոյլ ու գերի
Վախկոտ մարդոց խումբը ստւար
«Վերն օդ չի կայ. շուտ կը մարի»,
Պիտի ըսեն ծաղրով իրար.
Բայց ինձի ինչ. կատակեն թող.
Այդ է իրենց միմիջարանք.
Միշտ վեր, միշտ վեր ես սրտադող
Անը խոյանալ կուզեմ արագ։

1891 թ. դեկտ. 22, Պոլիս:

ՓՈՒՉ ՎԱՀԱՆ

ԳԵՐՐԻ ԲԱՇԻՆ ԶԱԴԵՍՆԻ

I

Թիֆլիսի բուսաբանական պարտէզը գտնւում է բարձրաւանդակ ասպառածների վրա։ Գաղաթը բոլորւած է հինաւուրց, բայց վերջերումն կարկատած քարտշէն պարսպով։ Պարսպի աջ ծայրի մօտ գտնւում է միակ դուռը, որը պատկանում է պարտիզին։ Եթէ դուռը բանաք և կանգնէք ուզզակի մէջ տեղ, կիսով չափ պառցուանէք և նայէք աջ ու ձախ կողմ,—երկու իրար հակառակ տեսարաններ կը բացւեն։ կենդանութեամբ ու աղմուկով լի ընդարձակ քաղաքը և նրան միանգամայն հակապատկեր մահմեդականների տղեղ գերեզմանատունը։ Պարտէզը սկսում է վերև ցիշած դռան մօտ և, աստիճանաբար իջնելով ժայռերի ծալքերի վրացով, վերջանում է խոնաւ ձորի մէջ, ուր հոսում է փոքրիկ բայց անհանգիստ մի առւակ։ Սա իր աղաղակով կարծես ուզում է հասկացնել, որ ինքը բնական սահման է ծառաստանի և մեռեալների միջև։ Ով առաջին անգամ առիթ կ'ունենայ այցելել այս բուսաբանական պարտէզը, անկասկած պէտք է զարմանայ հիմնողի հնարագիտական տաղանդի վրա։ Եւ իսկապէս երեխ շատ սրամիտ է եղել։ Թիֆլիսի մէջ շատ բան տարօրինակ է, բայց այս պարտիզի գիրքը արդէն չափից անց է։

Յուլիս ամսի վերջերքը, 1870. թւականին, ամենաշոք եղանակին, երբ մարդ օդի գոյութիւնն անգամն չի զգում, կէսօրի միջոցին, մի փոքր առաջ ցիշած դռան մօտ, սուերի մէջ նստած էին երկու մարդ։ Մինը հոգեորական զգեստով, իսկ միւսը աշխարհական։ Աշխարհականը, որի ճարպոտ ու լայն դէմքի վրա դրոշմած

Էր ծայրացեղ անտարբերութիւն, մէջքը դէմ էր տւել պատին ու ոտները տարածել աջ ու ձախ կողմէ Հազին ունեցած կարճ ու նեղ սպիտակ վերաբերն, առանց սխալելու կարելի էր ասել որ՝ սկզբում ուրիշի սեփականութիւն էր եղած։ Նրթունքները ուռցրած ու հազիւ նշարելի չոնքերը կիսած զիտում էր իր մսոտ քիթը։ Հոգեսորականի հագուստով երիտասարդը նիհարադէմ էր և սեահեր նրա խոշոր ու թուխ աչքերը վառվուուն էին, իսկ ժապիտը խիստ զուրեկան։ Դուրիկան ժապիտը ամենաճիշտ արտայատութիւնն է պարզ ու անխարդախ հոգու։ Նա խօսում էր բարձրաձայն և համարեա բարկացած, բայց խօսակիցը այս կամ ոչ էր պատասխանում, իսկ մեծ մասամբ թեթև կերպով գլուխ էր շարժում։ Զարդ ու փշուր էին անում ուռւսաց լեզուն, սակայն երևի իրար լաւ հասկանում էին։ Հոգեւրականի շորովը հայոց մի խեղճ եկեղեցու տիրացու էր, իսկ միւսը բուսաբանական պարտէզի դռնապան, գերմանական ծագութից։

—Լաւ մտածիր, շարունակեց խօսակցութիւնը տիրացուն, —մի՞թէ արդարութիւն է գերմանացիների կողմից թշնամաբար վերաբերւել զէպի մեր խեղճ ազգը։ Լաւ մտածիր, լաւ, բռնելով նրա թեւից ու թափահարելով աւելացրեց նա։

—Հասկանում եմ, լաւ հասկանում եմ, պատասխանեց դռնանապանը. բայց պարզ նկատում էր որ կեղծում էր։

—Երբ Ասուրէթից կամ Սարթաճալից գերմանացիք խւզ կամ կաթ են բերում մեզ մօտ, շարունակեց տիրացուն, ցուցամատը մեկնելով քաղաքի կողմը—մենք հայերս խանդարնում ենք նրանց ծախելու, կամ վիրաւորնում ենք որ և է բանով... Հըմ, ի՞նչ կասես, պատասխանիր։

—Այդպէս է։

—Ի՞նչպէս է, խանդարնում ենք, վիրաւորնում ենք, շուտ արա, պատասխանիր։

—Ի՞նչ ասեմ, ի հարկէ այդպէս է։

—Ի՞նչ ես խօսում, ի՞նչն է այդպէս, գոռաց տիրացուն, — զնա ու ձեր անսպիտան Բիսմարկին հարցրու թէ ինչնու է թշնամացել հայերի հետ, մի՞թէ մենք չենք սիրում ու յարգում բառեանցի, Սարթաճալիցի կամ Ասուրէթցի «նեմեցներին»։

Դունապանը Բիսմարկի անունը լսելով մի փոքր տեղից շարժ-
եց և իր դէմքին խորիմաստ կերպարանք տալով և մատը ճակա-
տին ամուր կացնելով արտասահնեց.

—Գիտե՞մ բարեկամ, Բիսմարկը Գերմանիայումն է ապրում...
Որտեղ նա է ապրում՝ ևս էլ նոյն տեղից եմ... Մեր տունը ու
նրա տունը ահա այսպէս են, ցուցամատները իրար մօտեցնելով
հաղարտութեամբ աւելացրեց նա ու հազար.

—Ուրեմն դու նրան ճանաչում ես, պառաւ է թէ ջահիլ. ին-
ես կարծում, շնուռ կը մեռնի, տա Ասուած շուտ մեռնի:

—Նրա տունը մերից լաւն է:

—Ասա քանի տարեկան է:

—Ո՞վ:

—Բիսմարկ:

—Բիսմարկ:

—Քանի տարեկան է,—կրկնեց տիրացուն ձայնը բարձրաց-
նելով:

—Խնձանից քիչ մեծ է, կը լինի քառասուն ու ինը կամ յի-
սուն տարեկան:

—Տիրացուն միամտաքար հաւատում էր խօսակցի տւած տե-
ղեկութիւններին նա աստիճանաբար տաքանում էր, դէմքը կարմրել
էր ու շնչառութիւնը արագացել: Կամաց կամաց մօտեցաւ գոնս-
պանին ու սկսեց ճնշել իր մարմնով և բռունցքները ցոյց տալով
աղաղակեց.

—Եթէ ձեռքիս ընկնի ջարդ ու փշուր կ'անեմ:

—Ում, անգիտակցաբար արտասահնեց դռնապանը:

—Բիսմարկին:

—Բիսմարկին ինչ կ'անես:

—Քիթն ու պատնդը կը ջարգեմ, հոգին կը հանեմ:

—Ե՞րբ, բնչպէս:

—Երբ որ ձեռքս կ'ընկնի: Այնքան կը տամ զլխին այս փու-
թանոցս (ցոյց տւեց իր բռունցքը), որ տեղնուաեղը ոաները ձգէ:

—Բիսմարկը այստեղ դալու չէ, ես հաստատ գիտեմ,—յորան-
շելով խօսեց գոնսապանը, —եթէ նա ուզենայ՝ մէկ փչելով կ'ոչըն-
չացնի բոլոր հայերին:

Տիրացուի համբերութիւնը սպառել էր: Վեր թռաւ տեղից, բունեց գոնապանին օձիքից ու սկսեց քարշ տալ:

—Տսլուռու, տպուռու, կամաց, —բողոքեց նա և երբ ազատեց տիրացուի ձեռքից, գետնի վրա սկսեց բան որոնել, փընթփընթալով թէ կոռճակս կորաւա:

—Խնչպէս թէ կոչնչացնի, մէկ էլ կրկնի տեսնենք.

—Գնա այստեղից, դուռը պէտք է կողակեմ:

—Ես գնալու չեմ, —գոռաց տիրացուն, —խօսքերդ յետ վերցրու, հասկաննում ես. ասա ևնեղաւոր եմ հայոց ազդի առաջ, ներողութիւն եմ խնդրում, հա, ասա շուտով, թէ չէ օրդ կը խսարեցնեմ:

Վերջի խօսքերը կատաղութեամբ արտասանեց նա: Դռնապանը կոճակը գտել էր և գրանի մէջ էր զնում՝ խնամքով, ասելով «լաւ է որ գտայ»: Վերջը, նկատելով որ խօսակիցը վրդովւած է, դիմեց նրան.

—Գնա, տէր-հայր, շոգ է, դուռը պէտք է կողակեմ ու գնամ օձիքս կարկանելու:

—Ո՞վ է տէր-հայր:

—Ի՞նչ:

—Զահրումար, ով է տէր-հայր:

—Տէր-հայր չե՞ս դու:

—Ե՞ս, մո... լոիր գարշելի:

Դռնապանը միանգամայն մոլորւել էր, չէր հասկանում թէ տիրացուի ուղածը ինչ է: Վերջապէս պարզ տեսնում էր, որ քաղաքավարի առաջարկութիւնը չի օգնում, ուստի դիմեց այլ միջոցի:

—Հեռացիր այստեղից, սրիկայ հոգևորական, —ազաղակեց նա, —գող, աւազակ, անբարոյական.. .

Այս յանկարծակի վրդովմունքը, թէպէտ տիրացուի համար անսպասելի էր, բայց սա կարծես ուրախացաւ, մի լոպէ բաւականութեան ժայիտ երեաց նրա շրթունքներին:

Դռնապանը ձայնը աւելի բարձրացնելով շարունակեց.

—Դու անպիտան ես, և անպիտան ժողովրդի քահանայ ես:

Վերջի երեք խօսքերից ալիրացուն բռնկւեց ու մի ակնթարթում ուժգին ապտակ զարկեց ուղղակի դիմացինի ականջին:

Դոնապանը գետին տապալւեց։ Տիրացուն վրան նստեց ու շարունակեց հարւածել բռունցքներով։ Հակառակորդին մի կերպ յաջողւեց բռնել նրա մազերից։ Տիրացուն էլ ատիպւեց ամուր բռնել նրա ականջներից (գլուխը սափրած էր)։ Երար ամբողջ ոյժով քաշքշելով գլորւեցին գէպի ցած։ Երբեմն մէկն էր լինում տակը, երբեմն միւսը։ Երկուսն էլ լոել էին, միմիայն նրանց շնչառութիւնն էր լսում։ Ամառ ժամանակ օրւայ այս ժամին ոչ ոք չի լինում բռուսաբանական պարտէզի մէջ։ Երկար ժամանակ զլորւելուց յետոյ վերջապէս կանգ առան մի թփի մօտ։ Տիրացուն նստել էր հակառակորդի կուրծքի վրայ ու երկու ձեռքով կատաղութեամբ քաշում էր ձախ ականջը, կարծես զջլելու նպաստակով։ Դոնապանը երևի ոյժից ընկած ձեռքից թողեց մազերը և արտասանեց զաւ, բաւական է, վերինանք։ բաց երբ համոզւեց որ սա դիտաւորութիւնն չունի թողնելու՝ աւելացրեց բռնիր հիմա միւս ականջս։

—Միւսը չեմ ուզում, սա պէտքէ պոկեմ, —պատասխանեց ախրացուն, —յետոյ գնա ու Բիսմարկին ցոյց տուր։

Դոնապանին թւայ, որ ականջը իսկապէս պոկւում է, սկսեց գուալ ու աղաչել որ բաց թողնի ձեռքից։

—Հիմա էլ չեմ ասի, —ատամները հուպ տալով հարցրեց ախրացուն։

—Ի՞նչ ասեմ, —աղաղակեց զոնապանը։

—ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ եմ ինդղում հայոց ազ-զից։

Նա կրկնեց։

—Հայերը լաւ են, իսկ գերմանացիք անպիտան են։

Դոնապանը այդ էլ կրկնեց։ Տիրացուն ականջը ձեռքից բաց թողեց ու վերկացաւ։

Դոնապանը զեռ իր ականջը տրորեց միամտանալու համար և յետոյ դանդաղութեամբ վերկացաւ։ Երբ ոտքի կանդնեց՝ նրա ուսերից կախւած էր տիրացուի փարաջի կէսը, իսկ միւս կէսը կտորկառ եղած փուած էր զետնի վրա։ Տիրացուն կանգնած էր սալիստակեղէնի մէջ, այն սպիտակեղէնի, որով մարդիկ անկողին են մըտնում։ Մեր երկրում հոգեորականները շոք եղանակներին վերին աստիճանի թեթև են հազնում։ Սև փարաջէն ամեն ինչ դրստում է։

— Դլխարկս չես տեսել որտեղ է, — հարցրեց դռնապանը, պողով
գալով ու ականջները շփելով:

— Տուք հազուստոս, — հանգիստ ձայնով դիմեց տիրապուն:
Դռնապանը մօտեցաւ, մէջքը կռացրեց ու ասեց «վերցրուս»:
Նա վերցրեց, բացարաւ և երբ տեսաւ, որ փարաջի կէսն է,
այն էլ զզգուած, փաթաթեց գնդակի ձևով ու շպրտեց հակառա-
կորդի երեսին ասելով «այս էլ քեզ փեշքէշ»:

— Ծնորհակալ եմ, — եղաւ պատասխանը:

— Եռուս արա, հաւաքիր բոլոր կտորտանքները — դնանք ներքեւ,
դու պէտք է բացանես ձորի մէջ գտնուող դուռը:

Դռնապանի սրտին ուրախութիւն տիրեց: Օձապողա ճանա-
պարհով իջան ցած: Դուռը բացւեց և երբ տիրապուն դուրս դնաց,
դուռը մի ակնթարթում կողպւեց:

II

Բեթղալին կոչւած եկեղեցին, որ յիշւած բուսաբանական
այգու բարձրութեան դէպի քաղաքը նայող լանջի վրայ է, ունի
մի մշտական ալցելու: Նա մի երիտասարդ մարդ է, ցանցաւ մո-
րուքով ու ծաղկտար դէմքով: Նրա զեղնագոյն մանր աչքերը ու
երկայն ու սրածայր քիթը մի ինչ որ թռչուն են լիշեցնում:
Քայլում է դանդաղ, մէջքը կուացած ու զլուխը քարշ արած: Հաղ-
նում է տեղական հազուստ, միշտ սե գոյնի, մինչեւ անգամ աս-
տաւն էլ սե է. գոտիից ամրացած ունի սե թաշկինակ: Սև սաթի
առէրողոր. Անոն երեկը չի հեռանում նրա ձեռքից: Թէ քաղաքի
մէջ և թէ նրա շրջակայքում ոչ մի եկեղեցական տօն չի կատար-
ւում առանց նրա ներկայութեան: Անցնում է ամբոխի միջով
հանդարտ ու գլխակոր, անդադար կրկնելով ճամփա տւեք, սիրե-
լիք, ճամփա տւեք, եղբարք: չոքում է եկեղեցու մէջ, ուզգակի
բեմի առաջ, բազուկները տարածում աջ ու ձախ, զլուխը երբեմն
ցած գցում ու աչքերը խփում, երբեմն բարձրացնում ու աչքերը
լայն բացում: Երթունքները շարունակ շարժւում են: Երբեմն եր-
բեմն երեսը խաչակնքում է, խորասուզուում և վերջապէս երեք
անդամ ծունը զնելուց յետով՝ մօտենում է խաչին ու Աւետարանին:
համբուրում է ու հեռանում: Երբ հանդիպում է կանանց, յնքերը
կիսում է ու զժգոհութեամբ երեսը դարձնում: Ամուսնութիւնը

Հերքում է և բազմաթիւ վաստերով առացուցանում որ դա անբարոյականութիւն է։ Նախամօր Եւային առանց թքելու անկարող է յիշել։ Մտերմութիւն ունի հոգեռականների հետ և ի սրաէ յարգում է պատանիներին։ Զի սիրում միմիայն փուչ Վահանին, բայց յարգում է նրա պաշտօնը։ Նա նրան անւանում է տիրացու Վահան։ Եատերը պնդում են որ յաճախ ազօթում է այդ տիրացուի մեղքերի համար ծաշակւում է տարէնը երեք անգամ։ Ժամերգութիւն և առհասարակ եկեղեցական բոլոր ծիսակատարութիւնը անգիր գիտէ։ Ատելով առում է միմիայն Շիվ երանիլիւն։ Սրբութեամբ պահում է բոլոր տեսակ պասերը, իսկ մեծ պասին չի գործ ածում ոչ ձէթ, ոչ գինի և ոչ շաքար։ Պատմում են որ ուխտ ունի ոտաբորիկ Երուսաղէմ զնալու ու Փրկչի գերեզմանը համբուրելու։ Զատկի առաւտօղը, ժամից յետոց այցելում է բանտերը և բանտարկելուներին գառան միս բաժանում։ Սպանդանոցի մօտով անկարող է լինում անցնել, նոյն իսկ հաւ մորթելիս՝ երեսը դարձնում է։ Աշխարհքի ունացնութիւնը աչքի առաջ ունի և երեխ այդ է պատճառը, որ երբ մի ժամանակ յանցաւորներին հրապարակորէն կախում էին։ Նա միշտ ականատես էր լինում։ Եատ սիրում է պատանիների հետ խօսել, միշտ բարոյականութիւն է նրանց քարոզում, զգուշացնում է ամեն տեսակ փորձանքներից և օրինակներով առաջացնում է, որ իր ասածները ճշմարտութիւն են։ Բոլոր սուրբերի կենսագրութիւնները անգիր գիտէ։ Զի համակրում միմիայն սուրբ Սարգսին, շեշտելով նրա իգասիրութիւնը։ Խօսում է ցածր ձայնով և խօսելու միջոցին իր շուրջն է նայում։ Երբէք չի մնում ոչ ոգեսրւած, ոչ վրդովւած։ Նա տարօրինակ եղունգներ ունի, որ տեսնողի մէջ մի տեսակ խուլ երկիւղ է առաջացնում։ Այս տեսակ եղունգներ, որ մի ինչ որ նմանութիւն ունին կատւի ձանդերի հետ, շատ սակաւ է պատահում մարդկանց մէջ։ Նրա անունն է Կակօ, բայց մի քանիսներ անւանում են ճգնաւոր Կակօ։ Փուչ Վահանը չի սիրում նրան, և հանդիպելիս շրթունքները ծռելով բարձրաձայն կանչում է ճը-ճը-ճղնաւոր։ Նա իր Կակօ անունը սասարիկ առում է և շատ աշխատեց փոխել բուն հայկական անունի, բայց այդ երբէք չաջողւեց։

Նոյն միջոցին, երբ փուչ-Վահանը դռնապանի հետ միասին թաւալւում էին պարտիզի մէջ, Կակօն իր տանից դուրս եկաւ, բարձրացաւ նոյն սարը և անսովոր արագութեամբ պարսպի մօտով անցաւ։ Կուտն տակը երեւում էր մի մէծ շաղոց, որի ծանրութեան սկառճառով ծռւել էր մի կողմէ նուտով հասաւ. փուտի ճանապարհին, որը տանում է դէպի Կոջոր ամարանոցը։ Որտեղ վերջանում է քաղաքի սահմանը, հէնց այնտեղ գտնւում է մի փոքրիկ գինետուն, ուր մշապէս անսպակաս են մութ անձնաւորութիւններ։ Կակօն այս գինետան առաջ անցնելիս քայլերը աւելի արագացրեց և երեսը հակառակ կողմը գարձրեց։ Գինետան միջից լսւում էր բարձրաձայն ծիծաղի ու խօսակցութեան ձայներ, բայց յանկարծ լնդհատեց ու փոխւեց քչփչոցի։ Դուրս եկան չորս մարդ, ոտարբորիկ ու կը քաբաց, որոնց կարմրած ու ուռած դէլքերից նկատում էր որ հարբած են։

—Համեցէք, ճպնտոր Կակօ, —կանչեց նրանցից մէկը, —համեցէք, որհնիր քո սուրբ բերանով մեր սուփրէն։

Կակօն ձայն չհանեց, բայց չնորհակալութեան նշան ցոց տալով՝ գլուխը մինչև գետին խոնարհեցրեց։

—Երեւի համբուրելու է գնում, —խօսեցին իրար հետ, —կամ Աւծօ կերթաց կամ մի ուրիշ մենաստան։

—Սատկիս գու, Գէօ, զիմեց մէկը միւսին, —դու խօ թամամ գժոխքի փայ ես, գոնէ Կակօյին խնդրի որ քո հոգուն մի ճար անի։

—Շատ գրուստ ես ասում, —պատասխանեց Գէօն և վազտեց Կակօյի շետեից։ Մի ակնթարթում հասաւ իրան ու առաջարից իր ծառայութիւնը։ Կակօն իր կապոցը աւելի սլինդ բռնեց ու աջ ձեռքի մասներով հասկացրեց, որ անչափ չնորհակալ է և որ ուրիշ է դրել մարդու հետ չխօսելու երեք օր։ Գէօն երկիւզածութեամբ յետ քաշւեց և Կակօն շարունակեց ճանապարհ։

III

Վահանը դուրս եկաւ պարտիզի միջից և վճռեց ձորի մէջ մնալ մինչև մութը։ Իջաւ ամենացածր տեղը, ուր հոսում է առակը, անցկացաւ վրայից ու սկսեց որոնել հով տեղ հանգիստ նեկու համար։ Երբ համոզւեց որ ոչ մի տեղ ստւեր չկայ՝ նստեց

քարերից մինի վրա ու խսկոյն արագութեամբ վեր թռաւ։ Քարերը տաքացել էին, ինչպէս կրակ։ Մի քանի բողէ մնաց անշարժ ու յետոյ սկսեց քացլել այն կողմ։ որտեղից ջուր էր վազում։ Այս ծորը լաւ յայտնի էր իրան։ Նա մասքերեց որ մօտ երկու վերսու հեռու, ձորի մէջ, ուր երկու կողմի ժայռերը իրար համարեա մօտենում են՝ լաւ հով է լինում, ու զիմեց այն կողմ։ Նա շարունակ մտածում էր գոնապանի մասին, որ այնքան վիրաւորեց նրա հայրենասիրական զգացմունքը և ի սրաէ ցանկանում էր մի կերպ վրէժ առնել նրանից։ «Պէտք է երգ օրինեմ ու խայտառակեմ գերմանական ամբողջ աղջը, —ի լուր խօսում էր նա, — ևս հայերէն կը յօրինեմ, յետոյ գերմանիրէնի թարգմանել կըտամ և մի օրինակ Բիսմարկին իրուղարկեմ։ Այս միտքը չափաղանց դուր եկաւ իրան, ոգեորւեց ու մտածմունքի մէջ լնկաւ։ Առժամանակ խորհելուց յետոյ արասանեց «Կարլ ու Բիսմարկ հարեւաններ», (Կարլ դանապանի անունն էր), «հարեւաններ», «հարեւաններ»։ Երկրորդ տողը բաւական չարշաբեց նրան, աշխատում էր յանդը բերելու համար մի յարմար բառ հնարել։ Վերջապէս գտաւ ամրեգալիներ։ «ատարեգալրճներ», բայց ոչ մի կերպ չկարողացաւ երկրորդ տողը կազմել ու կապել առաջինի հետ։ Երբ տեսաւ որ չի լինում, ուզեց ուրիշ կերպ շարադրել։ Մի երկու ժամ ճիգ թափելուց ու քրտինքի մէջ թրջւելուց յետոյ յաջողւեց չորս առ կազմել։

Բիսմարկ ունէր փորայաւ
Նստ բժիշկներ կանչեցաւ,
Եկան փորը զննեցին,
Լուծողական վճռեցին։

Այս չորս տողը բարձրաձայն կրկնեց ու ուրախութիւնից սիրտը պիտեց բարախել։ Նարունակութեան մասին բոլորովին չէր մտածում, նրա միակ հոգսն էր չմոռանալ այն, ինչ որ ահազին տանջանքի արդիւնքն էր։ Զունէր ոչ մատիտ, ոչ թուղթ։ Վերցրեց մի սրածայր քար և փորձեց գրել մի մեծ քարի վրա, բայց հետեանքը անաջող անցաւ։ յետոյ զաւ փայտի փոքրիկ կաոր, թաթախեց առւակի ափին ցեխի մէջ ու սկսեց գրել իր շապկի վեշի վրա։ Մի քանի տառ մեծ զժւարութեամբ գրելուց յետոյ տեսաւ որ դա էլ

անիրազործելի է։ Մի քանի անգամ իրար ցեսեից կրկնեց և բուրովին սերտեց։ Եղի ևս մոռանալու չեմ, մոտածեց նա, — այժմ մի յարմար եղանակ էլ պէտք է յօրինելու նղանակը հեշտութեամբ դասու Դեռ ցածր ձայնով փորձեց երգել, յետոյ ձայնը բարձրացրեց և գտաւ որ շատ յարմար և զեղեցիկ եղանակ է։ Մինչև ան գամ զարմացաւ. իւր սոտեղծազործութեան վրա, մանաւանդ որ յսել էր թէ ինչ աստիճան դժւար է նոր եղանակ յօրինելի նորից սկսեց երգել, աւելի ոգեսրւած, բացց եթէ լող լինէր այդ միջոցին, անշուշտ կը կարծէր, որ Փորհուրդ խորին են երգում Խառնաշփոթ ժայռերի միջով շարունակում էր գնալ։ Նատ յանափ հանդիպում էր արդելքների, բացց ճարսպիկութեամբ թռչում էր քարից քար և առաջ ընթանում։ Արևը անխղճօրէն այրում էր նրան։ Վերջապէս երեւացին ցանկալի ժայռեր, ուր անպատճառ հով պէտք է լինէր. քայլերը արագացրեց, յետոյ սկսեց վազ տայ սրպէս զի շուտով հասնի։ Վաղելու միջոցին ցանկարծ ցիշեց իր ըրինած երգը ու արձանացած մնաց։ Կրկնեց ի լուր և երբ համոզւեց, որ չի մոռացել՝ շարունակեց վազել։ Շուտով հասաւ այն տեղ, ուր երկու իրար հանդէպ կանգնած ժայռերը համարեա միացած են և որոնց ստորոտները խոնաւութիւնից մամնուներով են ծածկւած։ Նստեց մի տափակ քարի վրաց ու ազատ շունչ քաշեց։ Այդ րոպէին յակամացից միշեց մի ծերունու խօսք, թէ մարդս ստեղծած է քաղցրութիւն վազելու համար։ Սկսեց խորհել իր մերկութեան մասին, թէ այս ձեռվ ինչպէս հասնի տուն, ու տիրեց Բաւականաշափ հովանալուց ու հանգստանալուց յետոյ վեր կացաւ տեղից և շարունակեց ճանապարհը։ Մոտ քառորդ ժամ թափանելուց յետոյ նրա առաջ բացւեց անսպասելի տեսարան։ Մի ժայռի ստորոտում դրւած էր կրակի վրաց ջրով լի կաթսայ։ Նրա մոտ պառկած էր փորի վրա մի մարդ ու վշտում էր ուժդին, կրակը բորբոքեցնելու նպատակով։ Վահանը իսկոյն ճանաչեց նրան ու կանչ առաւ։ Նայեց իր շուրջը և, զգուշութեամբ մօտենալով պատկոծ մարդուն, բւնեց ստից ու քարշ տեց։ Մարդը դնդակահարի նման ցնցւեց, վեր թռաւ տեղից, օրօրւեց, յետյետ քաշւեց, վացրինան բար արխւնը գլխին խփեց. կարմրեց ու իսկոյն և հիթ գունատեց, ինչպէս զիակ։ Ոտները ծռւեցին այնչափ, որ ստիպւեց նստել։ Վա-

հանը սկզբում ժպտում էր, բայց վերջը խղճահարւեց։ Երկուսն էլ լուռ էին։

—Ի՞նչ ես շինում այսուեղ, Կակօ, —ընդհատեց լոռվթիւնը Վահանը։

Կակօն չպատասխանեց, վերկացաւ տեղից, բռնեց Վահանի ձեռքից անսովոր քնքշութեամբ ու տարաւ մի կողմ, ուր մօտ յիսուն քայլ հեռաւորութեան վրա աւագանի ձևով լողանալու համար բաւականին յարմար տեղ կար։ Այդ լողարանի մէջ ջուրը մի կողմից մտնում էր և միւս կողմից դուրս գնում։ Կակօն իանդնեցրեց Վահանին այդտեղ, նայեց երեսին, ժպաաց ու վերադարձաւ։ Վահանն էլ յետեից ընկաւ աղաղակելով։ Ես այսուեղ ինչ որ հարամզադութիւն» եմ նկատում, ճը-ճը-ճդնաւոր», և առաջը կարեց։ Կակօն յօնքերը կիսեց, աչքերը արիւնով լցւեցին ու մի քար վերցրեց, Վահանի դլխին գարնելու նպատակով։ Վահանը առանց վախենալու աջնողիսի սարսափելի ձայնով գուաց, լի խռովութեամբ, որ Կակօն լեզապատառ եղաւ։ Նրա ձեռքից վայր ընկաւ բարը։ Նա զեռ ևս շարունակում էր լուռ մնալ։ Վահանը յարձակւեց կապոցի վրա, որը կաթսացի մօտ էր դրած, անհամբերութեամբ բաց արաւ ու սարսափեց։ Խռովութիւնից ու գարմանքից սկսեց դողալ։ Մէջը մի կատու էր, միանգամայն սեամորթ, ոտները ամուր կապած։ Կակօն յետեից վազեց «Ի՞նչ ես անում, Վահան-ջտն» ասելով, բայց արդէն ուշ էր։ Վահանը յետ նայեց դառն ժպիտով ու անմիջապէս ջրով լի կաթսան շրտեց։

Գոյութիւն ունի մի զրչագիր լախածաւալ գիրք, որի անունը Կարագաղին է։ Եթէ այս զիրքը ասու ածավախ մարդու ձեռքն է ընկնում, անմիջապէս թաղում է հոյի տակ, հաւատացած լինելով, որ սատանացից պաշտած ու Ասու ծուց անիծած բան է։ Այս գիրքը ժողովրդի կարծիքով Սոլոմոնի հաստունի հեղինակութիւն է, որի պատճառով նա չարաշար դառապարտւեց Նախախնամութիւնից։ Սրա մէջ կարելի է գտնել ամեն տեսակ ցաւերի դարման նացի այս՝ ամենաանձռւնի ձայնը հրաշալի դարձնելու միջոց է նամիկն սիրահարեցնելու կամ ատեցնելու դեղեր, օձը բրնից հա-

Նելու. և զայլի բերան կապելու աղօթքներ է պարունակում, և այն և այնու Սրա մէջ գտնւում է նաև աներեւոյժ գտնալու միջոցը: Այս բանի համար պէտք է գտնել անսպայման սև գոյնի կառու, որը աւագ չորեքշաբթի գիշեր պէտք է տանել մի խուլ տեղ, ուր զոյութիւն չունի ոչ մի արարած, կաթսայի եփ տւած ջրի միջ զցել կենդանի կտոռուն ու խուփը ծածկել: Այդ դրութեան մէջ պէտք է պահել մի քանի ժամ: Կատուի միսն ու ոսկրները կաթսայի յատակի վրա կը նստեն, իսկ մի խորհրդաւոր ոսկոր ջրի երեսին կը կանգնի: Այդ ոսկորը ով իր վզից կը կախի՝ աներեւոյժ կը դառնայ: Նպատակին հասնելու համար հետեւեալ կերպով պէտք է վարւել. ամբողջ օրը ձայն չափոք է հանել: Կը հաւաքւեն չար ողիները, ծանօթների ու բարեկամների կերպարանքով, կը սկսն ծիծաղել, պարել, լալ, ողբալ և ացն. կը ներկայացնեն փոթորիկ ալէկոծւած ծով, ուր խեղդուում է ամենասիրելի մի էակ. կը ներկայացնեն հրդեհ, կայծակ, կարկուտ և սրա նման երկիւղալի բաներ բայց չափոք է սխալել և զուրս դալ գծի միջից: Ամբողջ գիշերը այստեսակ սարսափելի բաներ կը յաջորդեն իրար յետելից, բայց աներկիւղ պէտք է տանել: Խուսաբային չար ողիները կը կորչն, կանհետանան: Այն ժամանակ արդէն կաթսայի միջից պէտք է հանել «ընտրեալ ոսկորը»: Բայց կարող է պատահել ուրիշ տեսակ բան, այսինքն կատուն տանելու միջոցին եթէ ճանապարհին մարդ պատսհի և կատուն գնելու ցանկութիւն յացանի՝ չպէտք է մերժել. ինչ զումար էլ առաջարկի՝ պէտք է համաձայնել, լինի նաթէկուղ մի կոսէկի: Այդ զրամը այնպիսի մի յատկութիւն ունի, որ քո գրպանից երբէք չի բաժանելից Գնա խանութ, ինչ ուզում են այդ փողով, վերջը գարձեալ քեզ մօտ կը գայ:

Կակօն վաղուց ցանկութիւն ունէր աներեւոյժ դարձնող ոսկորը ձեռք բերելու, բայց պայմանները ճշտութեամբ կատարելուց խուսափում էր: Նա քաջութիւն չունէր գիշերը անցկացնել անմարդաբնակ տեղում, մանաւանդ որ սատանաների հետ պէտք է գործունենար: Ոսկորը հարկաւոր էր իրան, իր փայտայած նպատակը իրագործելու համար, այսինքն գտնածարաններից փողեր գողանալ և բազանիքներում մերկ կանանց տեսնել: Մի քանի տարի շարունակ այս միտքը տանջում էր նրան: Ժամանակ առ ժամանակ բայց

էր անում կարաբաղինը, կարդում էր իր սիրած կտորը, զլուխը
թափահարում էր ու նորից ծալում թաքցնում։ Մի օր մի լաւ
միոք յղացու նա—սուրբ Կարապետի պասը ուահել եօթ շաբաժ
և վերջին չորեքշաբթի օրը վերոցիշեալ զործողութիւնը կատարել։
Դիշերւայ փոխարէն էլ թող լինի ցերեկ։ Նատ մոտածեց և վերջը
համոզւեց, որ այս դիտաւորութիւնը բաւականաչափ խելացի է։
Մոտածելու միջոցին յօնքերը կիսեց, շրթունքները ուռոցրեց ու
հայելիի մէջ նայեց։ Հարցը վճռւած էր։ Սև կատի ոտները կա-
պեց (մի տարի առաջ էր ձեռք բերել), փաթաթեց փալասի մէջ
ածուխի ու կաթսայի հետ միասին և տանից զուրս եկաւ։ Երբ
հասաւ բուսաբանական պարտիզի պարսպին, աչքերը դարձրեց
շուղուրէթ թազի կողմը, ուր գտնուում է սուրբ Կարապետի եկե-
ղիցին և շարունակեց ճանապարհը։

IV

—Փուչ կենդանի, անասուած, սա անելու բան է, որ անում
ես, —զայրացած ձայնով խօսեց Վահանը։

—Վահան ջան, ես խո...

—Ասոսուծոյ կրաի, ձայնդ կորիր, անպիտան, թէ չէ շանսա-
տակ կ'անեմ քեզ։

Այս ասելով յարձակեց Կակօյի վրա, կոկորդից բռնելու նպա-
տակով։ Նրա ոտները թուլացան ու վայր ընկաւ։ Արձակեց յուսա-
կառը ձայն ու նրա աչքերից արտասուք վազեց։ Երկուսն էլ լուռ
էին։ Վահանի սիրտը շարժւեց, սկսեց մի բռպէ զղջալ իր խիստ
վարմունքի համար։ Ուզեց փորձել վիրաւորւած Կակօյի սիրտը շա-
հելու, բայց այդ միջոցին կատուն անհամարձակ կերպով խղճալի
ձայն արձակեց և Վահանին ստիպեց փոխել իր դիտաւորութիւնը։

—Սրժես սրան, փուչ կենդանի, —նորից գոռաց Վահանը,
վերցնելով կատուն և մօտեցնելով Կակօյի աչքերին։ —Աա դարձեալ
պէտքական է, միներ է որսում, իսկ դու ինչացնւ ես Հարկաւոր է
քեզ կախել, բայց ափսոս որ ոչոք ինձ նման չի ճանաչում քեզ։
Աչ, չպէտք է կախել, ափսոս է թոկը, քեզ պէտք է արտաքնոցի
մէջ գլխիվացր զցել։ Արձակիր սրա ոտները, —հրամայական ձայնով
աւելացրեց նայ։

—Վահան ջան, դեռ լսիր ինձ, թէ...

—Ասում եմ արձակիր ոտները Խնչպէս կատել ես, այնպէս էլ յետ արա:

Կակօն հնազանդւեց հրամանին, արձակեց կատեի ոտները ու յետոյ իր գրպանից մի ինչ որ նամակ հանեց ու գրեց Վահանի ձեռքին, ասելով,—կարդա ու այնպէս գատիր:

Վահանը ի լուր կարդաց. «Սիրելի Կարապետ, ուզում ես հոգիս հանիր, ուզում ես սաղ սաղ գերեզմանի մէջ զիր, բայց խնդիրքս ալէտք է կատարես Երկու տարի շարունակ աղաջում պազառում եմ, որ իմ ասած ոսկորը ալէտք է ճարես ինձ համար: Թէսկտ դու, ինչպէս ասուածավախ ու արդար մարդ, միշտ մերժում ես ինձ, սակայն դարձեալ կրկնում եմ, որ պէտք է կատարես խնդիրքս Հակոտակ դէպքում անձնասովանութիւն կը գործեմ: Քեզ արդէն յայտնի է, որ այդ ոսկորը ասուածահաճոյ գործի համար է ինձ հարկաւոր: Այս նամակի հետ ուզարկում եմ մի սև կատու: Ֆ. Վահանքի վանահայր»:

Ստորագրութիւնը անորոշ կերպով խազխզած մի բան էր, իսկ նամակը դրած էր չափից դուրս անգրագէտ:

Վահանը, կարդալուց հետոյ, բոլորովին փոխւեց: Մաածմոնքի մէջ ընկաւ, աչքերը կիսով չափ ծածկեց, զլուխը քարշ արաւ ու առժամանակ մնաց այս դրութեան մէջ: Յետոյ զլուխը բարձրացրեց ու սառն կերպով արտասանեց Շներիր Կակօն:

Կակօնի ուրախութեանը չափ չկար, սկսեց անտեղի ժայռալ ու ծիծաղել, զրկեց Վահանին ու համբայրներով ծածկեց նրա երեսը: Այս բանը Վահանին դուր չեկաւ. նա միմիայն զզւանք էր զգում: Բայց սոխոցից իրան համբերութեամբ տանել: Երբ ազատուեց նրա ձեռքից, նստեց գետնի վրա ու անզիտակցաբար սկսեց իսպալ մանր քարերի հետ:

—Ես քեզ շատ հաւանեցի, Վահան ջան, կեցցես, ամեն մի յանցաւոքին պէտք է պատժել. դու ինձ յանցաւոր կարծեցիր, քեզ թւաց թէ չար դիտաւ որութեամբ էի եկել այստեղ, և խիստ վարւեցիր... ացգպէս էլ պէտք է:

—Ո՞վ է այդ վանահայրը,—կասկածանքով հարցրեց Վահանը:

—Մի հարցնիր, Վահան ջան, այդ դադոնիք է. ես երդւել եմ

Աստւածածնի պատկերի առաջ ոչոքի չասել: Թողնենք այս: Ասա ինդրեմ, ինչու ստորագրութիւններ չես հաւաքում, որ քահանաց ձեռնադրւես:

—Ինչեր ես խօսում, գմւել ես, ինչ է. այնպէս ես ձևացնում, կարծես բանից տեղեակ չես,—զժգոհութեամբ պատասխանեց Վահանը:

—Քիտեմ ինչ ես ուզում ասել. ի հարկէ իմացել եմ, որ զիստորութիւն կայ փարաջէդ... բայց ովկ կը համարձակւի, մենք այստեղ չենք, ստորագրութիւն բաց կ'անենք...

—Լոիր, չեմ ուզում լսել: Փարաջէս պէտք է հանեն, թող հանեն. բայց ինչ պէտք է հանեն, քանի որ փարաջա չունիմ: Բայց ինչու հազցրին, զօրով հազցրին, զօրով էլ ուզում են հանել:

—Այդպէս չէ, Վահան ջան, դու արժանաւոր հոգևորական...

—Լոիր, ասում եմ քեզ: Այս, շատ արժանաւոր հոգևորական կը լինէի, բայց ինձանց աւելի արժանաւորը դու կը լինէիր, այնպէս չէ: Այս ասելով դառն ժառան ժառան դառն ժառան կակօյի աչքերին:

—Սաստիկ շոդ էր այսօդ, փոքր ժամանակից յետոյ խօսեց կակօն: Շորերդ որտեղ ես թողել, անհամարձակ ձայնով հարցրեց նա. երկի ձորի մէջ մի տեղ պահել ես: Ասա, ինչ տեղ է, զնամ քերեմ:

Վահանը կարծես խորասուզւել էր մտքերի մէջ և չէր լսում կակօյին: Նկատում էր որ մի հոգս էր ծանրացած նրա սրտի վրա: Աչքերը բացել էր լայն և նայում էր հեռուն, բայց բան չէր տեսնում:

—Գնում եմ շորերդ բերելու. ասա, ինչ տեղ ես թողել, լուրջ կերպով խօսեց կակօն և սկսեց քայլել դէպի վայր:

Ասում եմ քեզ՝ շորեր չկայ. ինչպէս տեսնում ես, հէնց այսպէս պէտք է գնամ տուն:

—Զի կարելի այդպէս գնալ, Վահան ջան, ճանապարհին մարդիկ կը տեսնեն, անունդ կը կոտրւի, խօ դիտես շատ թշնամիներ ունիս:

Վահանը լուռ էր, կարծես իրան չէր վերաբերում:

—Մարդիկ չար են, շարունակեց կակօն, քո մի պակասութիւնը հազար կը շինեն: Օրինակի համար ես քեզ այստեղ հանդիպեցի:

այս գրութեան մէջ, որ վայել չէ սիրացուին, բայց չէ որ ինձ
մօտ պէտք է մնայ իբրև գաղանիք։ Դու էլ տեսար ինձ, այսպէս
տառած... օրինակ... օրինակի համար եմ ասում, յանցանք դործե-
լիս, բայց չէ որ գաղանիք կը մնայ քեզ մօտ Թէպէտ շատ անգամ
բարկացնում ես ինձ, մինչեւ անգամ ամաշցնում ես ժողովրդի մէջ,
բայց համոզւած եմ որ սիրուդ բարի է։

—Ո՞ր վանքի վանահայրն է գրել այդ նամակը, հարցրեց Վա-
հանը, ընդհատելով Կակօքի խօսքը։ Հըմ; ինչ ես լսել, ասա շո-
տով։

Կակօն ժպտալ կեղծեց և բացասական ձևով դլուխը շարժեց։
Տիրացուի սիրաը ալեկոծւում էր բարկութիւնից, բայց բոլոր
ոյժով աշխատառում էր զսպել իրան Մինչեւ անդամ զզջում էր վեր-
ջի հարցը առաջարկելու մասին։

—Կակօ, գիտես, ինչ ասեմ քեզ, կատուի ոսկորը սուստ բան է,
ես հաստատ դիտեմ. բայց եթէ ուզում ես՝ ես քեզ կը տամ սիրահա-
րական դեղ։ Եզդ դեղը ում էլ քսե՛ անմիջապէս կը սիրահարի
քեզ հետո։

Կակօն չուզեց հաւատ ընծայել նրա խօսքերին, բայց մի ան-
սոլասելի ուրախ միտք անցաւ նրա մէջ։

—Եատ շնորհակալ եմ, Վահան ջան, իննդրեմ շինես ինձ հա-
մար այդ դեղը։ Գիտեմ փող կը հարկաւորւի այդ բանի համար;
ահա...։

—Այո, այո, փող կը հարկաւորւի։

—Ահա, համեցէք հինգ մանեթ, իսկ եթէ դարձեալ պէտք
կը գայ աչքիս վրա։

—Հինգ մանեթ բաւական է։ Այս ասելով վերցրեց փողը և
շտապով դրեց իր կօշիկի մէջ։

Կակօն ազատ չունէթ քաշեց։ Այժմ համոզւած էր որ փողով
կաշառեց տիրացուին և այլ ես երկիւղ չունի թէ նա կարող է
լուր տարածել այսօրւաց դէպքի մասին։

—Ես քեզ, Վահան ջան, մի անկեղծ խորհուրդ պէտք է տան։
Քեզ նման ազնիւ և բարոյական մարդ չկայ Թիֆլիսում։ բայց ամենքը
գտատանում են քեզ։ Կարծում են թէ ամենափշացած ու անբա-
րոյական մարդ ես, և գիտեմ ինչու։

—Գիտեմ, գիտեմ:

—Ուրեմն պէտք է աշխատես մի փոքր զզոյշ լինել: Որքան վարելի է ծանր պահես քեզ, շատ լսես ու քիչ խօսես:

—Ի՞նչ ես քարողներ կարդում գլխիս, —համբերութիւնից գուրս գալով պատասխանեց Վահանը, —ուզում ես որ քեզ նմանամ, քեզ նման խորամանկ օձ լինեմ, քեզ նման կեղծաւոր փարիսեցի լինեմ: Աւելի լաւ է լրիր:

Կակօն աշխատեց բարձրաձայն ծիծաղել և այդ յաջողւեց իրան, ինչպէս միշտ յաջողւում էր և լալ և ծիծաղել, երբ ցանկանում էր:

—Ի՞նչ ես ծիծաղում, զու պէտք է ողբաս, որ ահագին առանակ ես, բայց հայերէն երկու խօսք առանց սխալի չես կարողանում գրել:

—Հա, ինչ եմ ասում, Վահան, —աղերսալի ձայնով զիմեց Կակօն, —ուզում ես հողիս հանիր, բայց հայոց պատմութիւնը պէտք է սովորեցնես ինձ:

—Այդ մենք թողնենք: Դու ինձ ասս, ինչիցն է, որ ամբողջ ժամերգութիւնը անգիր զիտես, բայց այդ աստիճան չիմար կերպով ես զբում:

Կակօն այնպէս ձեւացրեց, կարծես բան չհասկացաւ: Այսպիսի կտրմունքը Վահանին տեկի զայրացրեց: Նա տեղից վեր կտցաւ ու կտուի ոտները շատազով կապեց: Կոկօն այդ նկատելով վախեցաւ, բայց աշխատեց առանասրութեամբ քայլել, փլնթփնթալով կաթսան ով զիտէ ջարդեց, գնամ բերեմ:

—Սպասիր, ճգնաւոր, ես կը բերեմ, —գոռաց Վահանը, —և կատուն մի տեղ զնելով, վազեց գէպի կաթսան, որը ընկած էր գլխի վայր: Վերցրեց ժայռի մի ահագին կտոր, մեծ դժւարութեամբ երկու ձեռքով բարձրացրեց իր գլխից վար և ամբողջ ուժով զարկեց: Կաթսան բոլորովին ջարդեց ու կիսով չափ հողի մէջ թաղւեց:

—Գլուխդ պէտք է ջարդէի, հենց այսպէս. բայց ինչ անեմ խղճում եմ, —խօսեց աիրացուն: —Հանիր գրստանիցդ նամակը, ուզում եմ նորից կարդալ... Ուզում էիր ինձ հաւատացնել, որ մի բարեպաշտ վանահօր զբածն է: Այդպէս ես խաբում ամենքին, հաւես էլ աչքդ հանեցի, խարեցի քեզ. ահա տես, քո հինգ մանե-

Յանոցը: — Այս ասելով ոտքը բարձրացրեց ու մէջքին քացի տւեց:

Կակօն վազեց, առւակի միւս կողմն անցաւ, նստեց մի ապահով տեղ և աշխատեց բարձրաձայն լալ, Վահանի գութը շարժելու նպատակով: Նա այս աստիճան ստորացած ու ոչնչացած երբեք չէր զգացել:

Սրել արդէն մայր էր մոել, օդը բաւականաչափ հովացել էր: Վահանը նորից վերցրեց կատուն, ոտները արձակեց և քացլերը ուղղեց ձորի գաղաթի կողմը, ուր գտնուում է փոստի ճանապարհը: — Երեւում է, շատ ես քաղցել, կատու, — խօսում էր տիրացուն, բայց քիչ համբերիր, միասին կ'ուտենք, ես նոյնալէս քաղցած եմ: Փու, ինչ թարս օր էր այսօր, որտեղից հանդիպեցի կամ անպիտան դռնապանին կամ փուշկենդանի Կակօյին: Բայց ոչ, լաւ եղաւ, որ հանդիպեցի, ապա թէ ոչ այս ողորմելի կատուն հիմա եփւած կը լինէր:

Այս տեսակ դասողութիւններ էր անում, երբ յանկարծ շանթահարի նման ցնդւեց: Զեռքը տարաւ ճակատին ու գլուխը խոնարհեցրեց: Ցետոց իր փոքր մատը ուժգին կծեց և շուտով նրա դէքը պայծառացաւ: Նա իր յօրինած շորս տող ոտանաւորը ցիշեց, ի լուր կրինեց և երբ համոզւեց, որ չի մոռացել, վերին աստիճանի ուրախացաւ: Հասաւ ճանապարհին և այնտեղ միայն մտաբերեց որ մերկ է: Զգիտէր ինչ անէր, ինչպէս զնար տուն, որ մարդու չհանդիպէր: Ցիշեց իր պատառ-պատառ եղած փարաշան և զշաց, որ գերմանացուն նւիրեց:

Նա առհասարակ վատ համբաւ էր վայելում, ինչպէս հոգեռքական այնպէս էլ աշխարհական դասի մէջ: Յայտնի էր իրքեւ կը լւարար, անհնազանդ, անխոհեմ և այլն: Զկար մի քահանաց, տիրացու, մինչև անգամ մղղըսի, որ չվատաքանիք նրան. բայց նրանցից ամեն մէկը, իր սրտի խորքում, զնահատում էր նրա անվեղծ ու ազնիւ հոգին, թէպէտ նրանք երբէք չէին խօստովանում այլ: Վահանը այն հազւագիւտ արարածներիցն էր, որոնց լեզուն մուրտառ է, իսկ սիրտը մաքուր: Նա ունէր մի քանի լնիերներ, աղքատ դասակարգից, որոնք ճանաշում էին նրա ազնիւ հոգին և ի սրտէ սիրում էին:

Ցիրացուն, խորասու զւած մտքերի մէջ, սպիտակ շապիկն ու

վարտիկը հաղին, ու կատուն էլ կունառակին, մի այլանդակ էակի էր նմանում: Իր համար բոլորովին անսպասելի կերպով հասել էր գուքանին, ուր մի քանի ժամ առաջ մարդիկ զինի էին խմում: Նրանք դարձեալ այնտեղ էին: Արդէն հարբած ու զինուց բեզարած, աշխատում էին իրարից աւելի սրամիտ կենացներ առաջարկել: Մի կարճահասակ, կլոր զէմքով երիտասարդ, որ արհեստով «կինտօ» էր, վեր կացաւ իր տեղից կենաց առաջարկելու, բայց չդիտեր ինչ նոր բան հնարեր: Նա նշմարեց Վահանին և կարմիր դինով լիք բաժակը բարձրացնելով՝ աղաղակեց. «Աստւած երկար կեանք տայ այն խելօք մարդուն, որը այսպիսի շոք եղանակին տկլոր կը մանգաց և իր միակ զաւակին կրծքին կը սեղմէ»: Այս կենացը մի քանիսների ժապիտը շարժեց, իսկ միւսները անտարբեր մնացին:

Տեղից բարձրացաւ մի ուրիշ երիտասարդ, որ ըստ երեսյթին ձկնորս էր, և բաժակը բարձրացնելով արտասանեց. «Աստւած զօրացնէ նրան, ով որ այն տկլոր մարդուն կը շալակի ու այստեղ կը բերի»: Այս ասելով բաժակը զաւարկեց, վազեց դուրս, բռնեց Վահանի աջ թեկից, մի ակնթարթում շալակեց իր մէջքին ու վագելով բերեց գուքան: Տիրացուն բոլորովին չընդդիմացաւ: Երբ նրա երեսին նայեցին, իսկոյն ճանաչեցին ու ծափ տալով, զալմաղալ զցելով շատ ծիծաղեցին: Բայց պէտք է ասել որ բոլորեքետն ի սրտէ ուրախացան: Ծիծաղ ու աղաղակ անընհատ շարունակւում էին, երբ մի նիհար երիտասարդ, որը ձմեռ ժամանակ կոշկակար էր, իսկ ամառը կիսու, վեր կացաւ տեղից ու իր երկու ձեռքերը Վահանի գլխին իջեցնելով արտասաւեց. «Վայ, գետինը մտնի քեզ պէս տիրացուն: տօ, փուչ կիսդանի, ինչի՞ նման ես, որտեղ է փարաջէդ»:

— Փարաջէն ծախել է,—խօսեց միւսը... իմացել եմ Կոջորում կատուներ է խաղացնում:

— Կինի խմեցրու այս տնաքանդին, խօսեց ձկնորսը: Ով գիտէ, — գիմելով Վահանին աւելացրեց նա, — մեր աւագ քահանան սուրբ Կարապետի պաս է պահել ու մուրազ խնդրել քեզ պէս տիրացու ունենալու:

— Տիրացու, տիրացու, զիմեց գուքանի տէրը, — արի լոթիանա, այս կատուն ինձ բաշխիր, մկներ շատ ունինք:

— Բաշուստա, — պատասխանեց Վահանը, — վերցու, տար: Քաղ-
ցած է, բան ուտացրու:

Ինքն էլ մի կտոր հաց ու պանիր կերաւ ու մի բաժակ գինի խմեց:

— Հեր օրհնած, մի բան ասա, ինչու ես գինին ի զուր փշա-
յնում:

— Հայոց ազգը Աստւած հաստատ պահէ, — արտասանեց Վա-
հանը:

— Ամենքի երեսին ժայիտ իջաւ: Վերկացան տեղից և բա-
ժակները լցնելով ճշտութեամբ կրկնեցին միւնոյն նախադասու թիւնը
և դինի խմեցին:

— Գիտէք, տղերք, — ոգևորւած բացականչեց Վահանը, — մեր
ազգը երջանիկ կը լինէր, եթէ նորա բոլոր գաւակները ձեզ նման
լինէին:

Իոլորեքեան ծիծաղեցին նրա թեթևամտութեան վրայ, իոկ
մէկը մօտեցաւ ու նրա գլուխը իր ափերի մէջ առնելով ու սզմ-
լով ասեց. «Սեկը՛ պինդ պահեմ, թող չժուչի»:

— Եյ, պարոն, — զիմեց Վահանին մի ուրիշը, — որը անկիւ-
նում նստած ծխում էր, — տեսնում եմ, որ իմաստուն մարդ ես,
ուզում եմ մէկ խօսք հարցնեմ, կարելի՞ է:

— Ասա տեսնեմ:

— Երկնքից որ կարկուտ է զալիս, քեզ մառաղ, ասա, ով է
այնտեղ կլորացնում:

— Սիմախ, — ընդհատեց նրա խօսքը կինտօն և ձեռքի մատ-
ները նրա գլխարկին զարկեց, — ինչու ես հեռու դնում. ինչ գործ
ունիս երկնքում. դու էս-հարցրու թէ ոչխարի փորում սև շի-
բաներ ով է կոլորացնում:

— Ինչ բեհեսաբ նամաղուլ էք անում, տօ, — գոռաց մի ուրի-
շը, — գինի խմեցրէք այս մարդուն, ծարաւ է: — Այս ասելով ստի-
պեց նրան մի քանի բաժակ իրար յետելից դատարկելու: Վա-
հանի գլուխը տաքացաւ ու տրամադրութիւնը լաւացաւ: Վերիա-
ցաւ տեղից, միւսներին էլ ստիպեց վերկենալ, բաժակը բարձրա-
ցրեց ու արտասանեց. «Սուրբ Եջմիածնի Մայր Աթոռը Աստւած
անշարժ պահէ». նրա աչքերի մէջ երերացին արտասուքի երկու
խոշոր կաթիլներ:

—Ամէն, ազազակեցին բոլորեքեան միասին:

—Մի լաւ տաղ ասա, տիրացու, —դիմեց ձկնորսը:

—Նուառվ ասա, ապա թէ ոչ ես կասեմ, —սրախօսեց մի ուրիշը, —Մէջնի սուրբ Դէորդի ռւսումնարանում երկու շաբաթ սովորել եմ: Եթէ չէք հաւատում, մի քիչ լսեցէք: —Այս ասելով վեր կացաւ ու սկսեց բարձրաձայն երգել. «Ցնծա, ցնծա, ցնծա Արարատ»...

Բոլորեքեան ծիծաղեցին:

—Ափսոս հայրդ կենդանի չէ ու չի լսում քու հրաշալի ծայնը, —Նկատեց կինտօն:

—Մի լաւ բան պետք է երգեմ, —ասեց Վահանը, —բայց այն պայմանով, որ դուք էլ սովորէք ու ամեն տեղ երգեք:

Սկսեց երգել: Իիսմարկ ունէր փորացաւ...

—Իիսմարկ մվ է, տօ, որ վորդը ցաւել է, —հարցրեց մէկը:

—Մեր ազգի տուն քանդողն է, —պատասխանեց դառնութեամբ տիրացուն:

Այս միջոցին Կակօն երեաց նոյն կապոցը ձեռքին, զունատ դէմքով ու կուացած:

—Տղերք, սուս կացէք, —ասեց ձկնորսը, —Կակօն Ռւճօվից յետ է գալիս:

—Ճ-ճ-ճ-ճկնաւոր, —բացականչեց Վահանը:

—Զահրումար, —պատասխանեց կինտօն և ձեռքով ամուր ծածկեց նրա բերանը: —Կակօ ջան, ընդունելի լինի, —կանչեց նա ու իսկոյն պնակի վրայ հաց դարսեց, գինի դրեց ու, վաղելով յետեւից, հասաւ, կանգնեցրեց ու խնդրեց, որ նա օրէնի նրանց սեղանը:

Կակօն ստիպւած վերցրեց զինին, մօտեցրեց շրթունքին ու նորից դրեց իր տեղը ասելով. «Աստւած է օրէնի ձեր սեղանը» և շոապով շարունակեց ճանապարհը:

«Ենորհակալ ենք» ազազակեցին բոլորեքեան միասին:

—Ճ-ճ-ճ-ճկնաւոր, նորից բացականչեց Վահանը:

—Զահրումար, Աստուծոց կրակ, —եղաւ ամեն կողմից պատասխան.

V

Վահանը պատկած էր իր աղքատիկ մահճակալի մէջ և քըր-
տինքի մէջ շաղախւած շուռ ու մուռ էր գալիս: Նատ էր աշխա-
տում քննել, բայց լարւած ջղերն ու ուզեղը շփոթութեան մէջ
էին գցել նրան ու հանգիստ չէր կարողանում գտնել: Նրա աչքի
առաջ անցնում էին նոյն օրւաց արկածները, անբնական կերպա-
րանքով և, ենթարկւելով զանազան փոփոխութիւնների, հալածում
էին նրան: Մի քանի բողէ ընկղմում էր մոռացութեան մէջ, կար-
ծես կիսով չափ երազ էր տեսնում, բայց իսկոյն ամբողջ մարմնով
ցնցւում էր, վեր էր թռչում տեղից ու նստում անկողնի մէջ:
Երկու ձեռքի բոլոր մատները լսրում էր իր մազերի մէջ՝ ու ամբողջ
ոյժով քորում էր: Յանկանալով մոռացութեան մէջ ընկնել և ազա-
ւել մտածմունքներից և երևակացութիւններից, փորձում էր պա-
տարազի ամբողջ արարողութիւնը կատարել մոքի մէջ: Նուտով
թիւլը կորցնում էր և աչքի առաջ ներկայանում էին Կակօն ու
զուսապանը, խղճալի կերպարանքներով, արտասուքը աչքերին ու
վիզները ձռած: Վահանի գութը շարժում էր, աչքերը բացւում
էին, և նա ուշքի էր գալիս: Երբ տեսնում էր, որ ոչինչ չի օդ-
նում, սկսում էր համարել մէկ, երկու, երեք և այլն, բայց, հավե-
երկու հարիւրի հասած, աչքի առաջ պարզ պատկերանում էր եռե-
կող ջրով ի կաթսան և կողքին պատկած անմեղ զոհը, ոտները
կապած կատուն: Կակօն վերցնում է կատուն, ջրի մէջ գլխի վայր
զցելու նպատակով, և այդ միջոցին Վահանը զարհուրելի ձախով
աղաղակելով վեր է ցատկում տեղից և նստում է մահճակալի վրա:
Այս ինչ ցիմար բաներ են՝ ինձ տանջումն բարկացած ձախով խօ-
սեց ինքը իր հետ, և միթէ ևս տղամարդ չեմա: Այս ասելով ճակատը
շիշեց ու իր փոքրիկ բեղերը ոլորեց համոզւելու համար, որ յիրակ
տղամարդ է: Ստիպեց իրան մտածելու իր հանգուցեալ ծնողների
մասին, միառմի ցիշեց նրանց թշւառ վիճակը, թէ ինչպէս անօթի
անց են կացրել ամբողջ օրերը և թէ ինչպէս մի անդամ, ձմեռաց
ցուրտ եղանակին, վառելիք չունենալու պատճառով, օրօրոցը քան-
դեցին ու վառարանի մէջ ածեցին: Սրա նման շատ տխուր արկած-
ներ ցիշեց անցեալից, արտասւեց ու աննկատելի կերպով քուն

մտաւ։ Երազի մէջ իր մօրը տեսաւ, անօթութիւնից գունատ ու տանջւած դէմքով։ Նրա ոտների մօտ գերեզման էր փորած, ուր պատրաստում էր մտնելու։ Հայրն էլ թի էր վերցրել, հող ածելու նողատակով։ Վահանը աշխատում էր, ճիգ էր թափում աղաղակելու, թէ ինքը հինգ մանէթ ունի, հաց կ'առնէ։ Լաց էր լինում, աղաղակում էր չմտնել գերեզմանի մէջ, բայց ձայնը կտրւել էր և ոտները թուլացել. չէր կարողանում մօտենալ ու արգելել։ Ծնողները ոչ տեսնում էին ոչ լսում էին նրա ձայնը։ Յուսահատւած Վահանը իր մազերից քաշելով փուսեց գետնի վրա։ Այդ միջոցին մայրը երեսը նրա կողմը դարձրեց ու արտասանեց հեռացրու ացդ մուրտու. հինգ մանէթանոյը, դա քո աշխատանքը չէ։ Վահանը շրվոթութեան մէջ ձեռքը մահճակալին զարկեց ու արթնացաւ։ Սիրոր ուժգին խփում էր, իսկ դէմքը քրոյինքի մէջ էր շաղախւել։ Մընացել էր շւարած, չէր կարողանում ուշքի դալ ու հաշիւ տալ իրան։ Կոկորդը ցամաքել էր։ Անդիտակցաբար իջաւ մահճակալի վրացից ու մի փոքր սթափեց։ Սեծ դժւարութեամբ գտաւ ջրի ամանը, ձայնելով որ դրւած էր մահճակալից ոչ հեռու, խմեց աղահսբար, բաց արաւ գուռը և զուրս եկաւ սենեակի միջից։ Հով ու մաքուր օլը թարմացրեց նրա ուղեղը։ Գունատ լուսինը երկնքի ամենաբարձր կէտին էր հասել և սլանում էր բազմաթիւ մանր ամպերի միջով, ծիածան կապելով իր շուրջը։ Քաղաքը ննջում էր, իսկ կուր գետը, իր միահնչիւն ձայնով կարծես նանիկ էր ասում։ Վահանը, անց ու դարձ անելու միջնցին, մօտեցաւ ջրով լի մեծ տակառին, որ դրւած էր տան առաջ, կտուրից կախւած խողովակի տակ և ակամացից նայեց մէջը։ Տեսնելով ջրի մէջ իր դէմքը՝ սարսափեց ու մի անսպասելի թուիչք գործեց։ — «Գուցէ խելագարւել եմ» — վայրկենաբար անցաւ նրա մոքով։ Նրա զլսից չէր հեռանում Կակօյի հետ ունեցած դէսքը։ Անիծում էր իրան իր աներաւացի վարմունքի համար, հինգ մանէթի վերաբերեալ։ Նա այդ բոպէին պատրաստ էր ներումն ինդրելու Կակօյից, մինչև անգամ դիուառըւեց գնալ իսկոցն նրա տունը, զարթեցնել ու վերաղարձնել իրան, բայց միտքը իսկոցն և եթ փոխեց, անկարելի համարելով այդ բանը։ Նորից մտաւ իր սենեակը, վերցրեց փողը սառսուռ զգալով մարմնի մէջ, գուրս բերեց, մի մեծ քարի տակ դրեց ու վերաղար-

յաւ քնելու համար։ Կարծես ծանր բեռի տակից ազատւած, ազատ շունչ քաշեց ու թեթևացած սրտով անկողին մտաւ։ «Ընկալ քաղցրութեամբ» ասեց մի քանի անդամ, երեսը խաչակնքեց և շուտով քուն մտաւ։

VI

Առաւօտւայ ժամը վերջանալուց յետոյ, Վահանը գնաց «Թուրքի մէցպան»։ Նա այսոեղ կարծես բան էր որոնում։ Հազին ունէր մի անձոռնի փարաջա, որ կարելի էր ենթաղրել թէ՝ անշուշ մի ժամանակ սև գոյնի է եղել։ Այդ փարաջան որ ի սկզբանէ փթած ու էժանագին ապրանքից էր, չորս տարի հաւառարիմ ծառապելոց յետոյ, Վահանը գործ էր ածում թողերը մաքրելու համար։ Այնոցէս էր պատառուած որ դժւար էր գտնել սաղ տեղ։ Տիրացոն ուրիշ հնար չունէր, սոխալւած էր հազինել այս բանը։ Առաւօտեսն եկեղեցի որ մտաւ, մի հին սարկաւագ նրա ականջին փսփսաց։ Քիզուր ես հազել, ափսոս է, տօների համար պահիր»։

— Տեսնիւմ ես ինչ է հազել փուչ Վահանը, դառն ժողովան մի քահանան միւսին։

— Ամաշացնում է մեզ անիծեալլ, սղատասխանեց վերջինը, բուռնոթի քաշեց։

Վահանը իսկապէս «Թուրքի մէցպանում», որոնում էր իր ծանօթ մի ծերունի քահանացին, որը վերջին ժամանակ հրաժարեցրած էր իր պաշտօնից, ծերութիւնից ու հիւանդութիւնից ծառայելու անկարող լինելու պատճառով։ Յոց ունէր այսոեղ հանդիսել նրան։ բնակութեան տեղը յայտնի չէր իրան։ Յանկարծ նուկատեց մի ուրիշ քահանաց, որի արտաքին տեսքը վկայում էր որեէ փոքր գիւղի, խեղճ ժողովրդի հովիւ լինելը։ Նա նստած էր լշար ու երկացն ձիու վրա։ Զարմանալի բան։ այդ քահանացի և ձիու մէջ մի անբացատրելի նմանութիւն կար։ Պարզ երես ում էր ո՞վ վարձած չէր, այլ սեփական էր։ Քահանան անդադար ոտները թափահարում էր ու մորակում։ Մէջքը կռացած ու վիզը երկաց։ Նացած կարծես ուզում էր ձիուց առաջ վագել, սակայն անասոնը անվրդով էր մնում ու ոտները անտարբեր կերպով փոխում։ Քահանան շուտով դուրս եկաւ մէցպանի միջից ու դիմեց Օթամալլ

կողմը: Վահանը նրա յետեից ընկառ: Բաղանիքների մօտ նոր էր հասել, երբ մի կինոս, համարեա բոլորովին պատահի, դասարկ վթարախւը ձեռքին՝ վազելով զնում էր և, երբ հասաւ Վահանին, բանեց փորաջի փեշից, պոկեց (համարեա ինքը պոկեց) ու տիրացուի ձեռքին գրեց ասելով—այժմէ ես չպոկեի, պէտք է ճանապարհին կորչէր. վերցրու, դիր զրպանիդ մէջ:

Վահանը ուզեց զայրանալ, բայց չկարողացաւ ծիծաղը զսպել: Բարձրաձայն ծիծաղեցին տեսնողներն եւս:

Երբ ձիւորը «Նէթան բազար»ի միջից դուրս եկաւ և երբ Վահանը նկատեց որ բազմութիւնից հեռացել է, վազ ուեց, հասաւ քահանային ու, օրհնեա տէր ասելուց յետոյ, ինդրեց իջնել ձիւ վրայից: Քահանան տեսնելով նրա պատաստած զգեստը, կասկածանքով վերաբերւեց դէպի նա:

— Զեմ կարող, որդի, վրազում եմ, կուշանամ:

— Օգուտ եմ տալու քեզ, Տէր հայր:

— Ենորհակալ եմ, զաւակս, ուրիշ անգամ:

Նա անձահարեց ձիւն ու ուժզին մորակեց, վազեցնելու նպատակով, բայց անասունը պոչով ճանձեր քշեց ու տատջւաց նման միսեց քալմը Վահանը իր զլիսարկի միջից հանեց Աւկոյի հինգ մանեթանոցը, բաց արաւ ու, օդի մէջ տատանեցնելով, ցոյց տւեց քահանային: Նկատելով այդ, նա անմիջապէս կանդնեցրեց ձիւն, իջաւ վրայից ու, բարի ժպիտը երեսին, հարցրեց և ինչ էիր ուզում, սիրելին:

— Վերցրու այս հինգ մանեթանոցը:

Քահանան իսկոյն վեր առաւ ու իր խոշոր ձեռքերի մէջ ծածկեց:

— Ենչ բանի համար է այս, որդեակս, — հարցրեց նա խոյս առով փողի անունը յիշելուց:

— Հիւանդ կայ, պէտք է հաղորդես, զնանք իսկոյն, պատասխանեց նա և երեսը միւս կողմ դարձրեց, զզալով որ կարմբեց: Աւհասարակ չէր յաջողւում նրան սուտ խօսել, ինչպէս չի յաջողւում անկեղծ մարդկանց:

Քահանան, համաձայնութեան նշան անելով, հետեւ Վահանին, որը զիմեց Կրծանիսի կողմը: Զիւ սանձը վերցրեց քահանայի ձեռ-

քից և ամբողջ ոյժով սկսեց քարշ տալ իր յետեից։ ՏՇ. հայրն էլ ժամանակ առ ժամանակ թեթև կերպով մարակում էր փափուկ տեղերը, բայց ոչինչ չէր օգնում։

—Երեւում է խիստ պառաւ է ձիդ, Տէր տէր, խօսեց Վահանլ։

—Երեւելի ծի է, —պատասխանեց նա, —ես սրան իմաստուն եմ անւանել։ Առանց սրան մի օր անգամ չեմ ցանկանալ ապրել։ Դու ինձ ասա, որտեղացի ես, փոխեց նա խօսակցութիւնը, —երեւ դու էլ ինձ նման գիւղացի ես։

Տիրացուն խկոյն իր փարաջի վրա նայեց ու աշխատեց անտարբեր ձեռվ պատասխանել։ ոռչ, այսուեղացի եմ, Թիֆլիսեցի եմ։

Փահանան ուզեց հարցնել թէ ինչու նա Թիֆլիսի քահանաներին չգիմեց հիւանդին հաղորդելու համար, բայց խկոյն միտքը փոխեց վախենալով որ փողը յետ չուզէ։ Նոյնպէս մտածեց պատառառած փարաջի մասին խօսք ասել, սակայն բարւոք համարեց լուել։ Ճանապարհին մի դուքան մտաւ ու մի քանի րոպէից յետոց դուրս եկաւ իր կապոյտ թաշինակը ձեռքին, որը լցրել էր հայ ու պանրով։ Եռոտով հասաւ Վահանին, ու նրանք շարունակեցին ճանապարհի։ Փահանան յոցնել էր։ Իր խունացած փարաջի փէշերը հաւաքել էր ձախ ձեռքի մէջ, և բոլորովին մաշւած գլխարկը ճակատից յետ էր քաշել։ Քայլում էր դանդաղ և իր զարմանալի կոպիտ ու մեծ կօշիկներով փոշի էր բարձրացնում։ Այդ կօշիկները, ով գիտէ, երբ և որտեղից նւէր էր ստացել և տարեկան երկու, երեք անգամ էր հազնում, կամ քաղաք զնալիս, կամ ամենամեծ տօներին։ Վահանը գլուխը քարշ արած ու առանց յետ նայելու զիմում էր Կրծանիսից դէպի Թելեթի քարավները և մտածում հաղար տեսակ բաների վրաց։ Ի միջի այսոց ենթադրում էր, որ այս քահանան ունի սեփական մի փոքրիկ ու խոնաւ տուն և աննշան պարտէզ, որը ինքն է մշակում, և որ նրա եկեղեցու կտուրից անձրւի ջուր է ներս թափւում։ Սկսեց երեւակացել եկեղեցու արտաքին ու ներքին տեսքը, նրա դիրքը և այլն, և ցանկարծ յետ նայեց ու արտասանեց։

—«Ինչու կտուրը չէք նորոգում»։

—Հրամմէ՞։

. Տիրացուն ամաչեց։ Ուզեց խօսքը փոխել, մի բան հնարել, մի

հարց առաջարկել, բայց բազմատեսակ մաքերը իրար յաջորդելով
նրա գլխի մէջ՝ չկարողացաւ կենդրոնացնել միաբը և իր համար
անսպասելի կերպով արտասանեց. «ամսի քանիմն է այսօր»:

—Երէկ տասնուվեցն էր, ուրեմն այսօր տասնուեօթն է:

Քահանան կասկածի մէջ ընկաւ թէ ուր է տասնում իրան այս
մարդը: Զլինի թէ չար դիտաւորութիւն կայ այսուեղ, այսինքն
տանել մի խուլ տեղ ու կողոպահել: Խսկոյն մտաքերեց զրադանում
ունեցած մեծ դանակը, որ յամենայն դէպս զէնքի տեղ կարող էր
ծառայել: Այդ միջոցին ինչ որ չըլխոցի ձայն լսւեց գետնի վրա և
ձին խրանեց: Գլուխը թափ տալով արձակւեց Վահանի ձեռքից ու
փախաւ մի կողմէ: Տիրացուն արձանացած մնաց: Զին այս ու այն
կողմը նոյելով ականջները սրեց ու մօտեցաւ քահանային Զըլխ-
կոցը առաջ եկաւ բուրւառը քարերի վրա վայր ընկնելուց, որը
Վահանի մէջքից փարաջի տակ կապւած էր եղել: Քահանան տես-
նելով այս՝ միանգամայն շշկւեց, չպիտէր ինչ անէր: Մի փոքր
մոտածելուց յետոյ ձիուն մօտեցրեց մի մեծ քարին, բարձրացաւ այդ
քարի վրա ու արտագութեամբ նստեց, յետ դառնալու նպատակով:
Վահանը նկատելով այդ՝ առաջը կտրեց ու, ձիու սանձից բոնելով,
ասաց. «որուեղ ես գնում, տէր-հայր»:

—Ես մի աղքատ մարդ եմ, որդի... կարգս վկայ, ոյժ շու-
նիմ... թող գնամ...

—Աւազակ չեմ, ինչ ես վախենում, սպասիր. ինչ անելու ենք
կանենք ու կ'երթաս:

—Ուշանում եմ...

—Համարեա հասանք, տես այն թփի մօտ պէտք է գնանք,
ըսդհատեց նրա խօսքը Վահանը:

—Բայց ինչ ես ուզում, որդի:

—Տէր-հայր, ես քեզ խարեցի, հաղորդելու ոչ ոք չկայ: Դու-
այն թփի մօտ թաղման կարգ պէտք է կատարես:

Քահանան այժմ մտածեց որ խելազարի հետ գործ
ունիւ նրա վրա երկիւղ ազդեց: Աչքերը չորս կողմը դարձրեց,
կարծես որոնում էր կենդանի արարածին, օդնութեան դիմելու համար:

Խսկապէս թփի մօտ գտնուում էր մի գերեզման, որի դոյու-
թիւնը յայտնի չէր համարեա ոչոքին: Մի անդամ՝ այսուեղ տարի-

ներ առաջ Վահանը, իր երկու լնկերների հետ առանց նպատակի թափառելու ժամանակ, գոան ծերունի մարդու մի նեխւած զիակ: Արտաքին տեսքից երևում էր, որ չափազանց աղքատ է եղել: Հագուստին նայելով կարելի էր հաստատ ասել, որ տաճկահպատակ է, բայց ինչ աղգութեան և կրօնի է եղել՝ այդ մուժ մնաց նրանց համար: Առանց երկար մոտածելու փայտի կտորներով փոս փորեցին մի արշինի չափ խորութեամբ և հողին ցանձնեցին: Այս եղելու թեան մասին Վահանը իր ժամանակին մի քանի քահանաներին յայտնեց և առաջարկեց գնալ այնտեղ և թաղման կարգ կատարել: Բայց ապարդիւն անցաւ: Այն օրից նա իր սրտի վրա զգում էր ծանրացած քարի նման մի բան: Առանց մարդու խօսք ասելու, նա բոլոր ժամանակ սպասում էր յարմար հանգամանքի իր ցանկութիւնը ու քրիստոնէական սպառաւականութիւնը կատարելու: Այս բանի համար հարկա որ էր փող, ընդամենը մի քանի մանէթ, իսկ փող նա երբէք չէր ունենում:

—Ես քեզանից մեծ որդիք ունիմ, որդի, խնայիր ծերութիւնս, թող գնամ, արտաստուքը աչքերին աղերսում էր քահանան:

Վահանը սանձից պինդ բոնիլ էր ու քաշում էր դէպի գերեզմանը, բայց աեսնելով որ քահանան յամառութեամբ միւս կողմն է քաշում ձիու զլուխը՝ նա բուրւառը սպառեցրեց օդի մէջ ու մի ուժգին հարւած հասցրեց ձիու զլուխն: Այն աստիճան իրան մօռացաւ մի ակնթարթ, որ այս գործողութիւնը առանց իրանց հաշիւտալու կատարեց: Ձին ցնցւեց ամբողջ մարմնով և սկսեց յետքաշ քաշւել: Քահանան քիչ մնաց վայր ընկնէր: «Օգնեցէք, օգնեցէք աղաղակելուց յետոց, համաձայնեց կատարել Վահանի ցանկութիւնը!»

—Հաւատաս, տէր-հայր, մարդ կայ այնտեղ թաղւած, Ասուծուց ու աշխարհից մոռացւած մի մարդ... Հեռու իր հայրենիքից իր ընտանիքից... Դուքէ նա էլ ունի փոքրիկ երեխաներ... Դու եթէ քրիստոնեաց ես և Քրիսոսի հետեւ՝ պէտք է կատարես այն ինչ որ պահանջում եմ: Այս բոլորը նա արտասանեց վերին աստինանի յուզւած ձայնով:

Գնացին թիփի մօտ, ուր նշմարելի էր հողի մի կոյտ, որի երկու ծայրերին երկու քար էր տնկւած. Վահանը անմիջապէս խուն ածեց բուրւառի մէջ ու կրակ տւեց: Բլուրի մի կողմը քահանան

հանգնեց, իսկ հակառակ կրղմը՝ Վահանը։ Սկսեցին թաղման հանդսը և ամենայն բարեխղճութեամբ կատարեցին։ «Ի վերին Երուաղէմն»-ը քահանան ուզեց շտապով կատարել, բայց տիրացուն յամառութեամբ արգելեց այդ և ինքը սկսեց երդել ծանր ու բարձրաձայն։ Այս կարգը կատարելուց յետոց քահանան ազատ շունչ քաշեց, իր փարաջի փեշով երեսի քրտինքը սրբեց ու քթի տակ վնիթվնթաց։ «Հիմա եթէ մի բաժակ ջուր լինէր։ Նա իրան արդէն աղատ համարելով պատրաստեց վերադառնալու։

— Տէր հայր, մի քիչ էլ պէտք է սպասես, մի վաաղիր, դեռ դերեզման պէտք է օրհնես, խօսեց վճռողական կերպով տիրացուն և սկսեց բուրառի կրակը բորբոքեցնել։

Քահանան սկզբում կարծես տրտմեց, բայց իսկոյն յայտնեց իր պատրաստականութիւնը։ Երբ գերեզմանը օրհնեցին՝ քահանան բաց արաւ իր կապոցը, նստեց դետնի վրա և, մի պատառ հաց բերանը դնելով, զիմեց տիրացուին։

— Հրամեցէք, տիրացու, նստիր կեր, թող քէլելսն էլ իմ հաշով լինի։

Տիրացուն անմիջապէս նստեց։ Նա շափից դուրս հաւանեց քահանայի վարմունքը։ Մի պատառ հաց նոր էր բերանը զրել, երբ մի անսպասելի միտք շանթահար արաւ նրան և հացը բերանից դուրս ձգելով խօսեց։

— Այս հացը ի՞նչ փողով ես առել։

Քահանան չգիտէր ինչ պատասխանէր։ Նա աւելի համոզւեց, որ խօսակիցը խելագար է։ Ինչ և իցէ հարկաւոր էր պատասխանէլ։

— Դու հաց կեր, մինոյնը չէ քեզ համար թէ ինչ փողով է առնւած։

— Յոյց տուր իմ տւած հինգմանէթանոցը։

Քահանան լեզապատառ եղաւ։ Նա կարծեց թէ ուզում է յետ պահանջել։ Աչքերը այս ու այն կողմ զարձնելով և բերանը մեքենաբար հաց ու պանրով լցնելով ասեց, թէ իր հինգ մանէթը դուքանումն է թողել ի հաշիւ հին պարտքերի։

— Իսկ հացը ուրիշ փողով առան։

— Ոչ, սիրելիս, նոյն փողով առայց, վախենալով պատասխանեց քահանան, — ես որտեղից պէտք է ունենայի ուրիշ փող։ Միթէ չիտես զիւղի քահանայի զրութիւնը։

Վահանը տիսրեց։ Նա ուզում էր այդ պահնգուխառնգուցեալից գերեզմանի վրա մի կտոր հաց ուտել, բայց այդ հացը նրա բերանում դառնանում էր և չէր կուլ զնում, քանի որ Կակօյի վորդով էր դնած։

Քահանան մտածմունքի մէջ րնկաւ թէ ինչ հնարքով ազատւի սրա ձեռքից։

— Աւրիշ հաց չունես, հարցրեց տիրացուն, — գուցէ խուրջինի մեջ գիւղի հաց ունիս։

— Աւնիմ խուրջինի մէջ պատասխանեց քահանան, և, ուրախանալով որ գուցէ կարողանայ սորս սիրտը շահի, վեր կացաշտապով, հանեց խուրջինի միջից երկու կտոր չոր սկ հաց և, զնելով տիրացուի առաջ, ասեց, — ի՞ր, սիրելիս, թէպէտ սկ է, բայց շատ համեզ է։

Վահանը կերաւ մեծ ախորժակով և երբ վերջացրեց՝ շնորհակալութիւն յացանեց և առաջ ուրից վերապառնալ տուն։ Քահանի մին խիստ գուր եկաւ այս առաջարկութիւնը։ Նա տեղից վերիենալու միջոցին հետաքրքրւեց իւնանալ թէ ինչու տիրացուն փափուկ հաց չուղեց ուտել։

— Խուրառա փողով է զնած, պատասխանեց Վահանը։ Ճշմարիտ ասա, տէր-հայր, մաքուր սրտնի կատարեցիր թաղման կարգը։

— Այս, սրդի, մաքուր սրտով։

Ճանապարհ ընկանի Գնում էին լրւու, կարծես իրար գոյութիւնը չէին նկատում։ Երբ հասան բաժանելու տեղը, քահանան աղատ շունչ քաշեց։

— Տուր այդ րուրւառը, սիրելիս, քնիքը ձայնով դիմեց նա, — առուր տանեմ մեր եկեղեցու հայար և սրահեմ իբրև յիշատակ քո և ձնողացդ։

— Աս իմս չէ, տէր-հայր, սո Ս... եկեղեցուն է պատկանում։ Այսօր մղղառու ձեռքից խլել եմ ու փախցրել։ Խեղճը յետեից յնկաւ, բայց չկարողացաւ հասնել։ Վրջը յիշոցներ տեղ ու սպառնաց որ իսկոյն կերթայ գործակալին կը յայտնի։ Գիտեմ այս բուրւասի համար մեծ զալմաղալ կը սարքեն զլիսիս։

— Մնաս բարով։

— Գնաս բարով։

VII

Մեր պատմութիւնից շատ ժամանակ չանցած, բուսաբանական պարտէզից ոչ հեռու, ուր քարափների ամենաբարձր կէտի վրա կանգնած են աւերակների մնացորդներ, համարեա ամեն օր այցելում էր մի երիտասարդ: Ոչոք նրան չէր նկատում, որովհետեւ ոչոքի համար հետաքրքրելի չէր նա: Նա միշտ իր հետ էր ունենում որ և է զիրք, այսինքն որ և է պատմութիւն հին Հայաստանին վերաբերեալ: Երբեմն նրբեմն երգում՝ էր զանազան երգեր ամենաավտուր եղանակով: Երգերը տարբեր էին լինում, բայց եղանակն ու երգելու ձևը միևնուն սիրու մաշող: Նատ յաճախ նստում էր աւերակների գագաթի վրա ու նացում ցած, ուր խոր անդունդների մէջ նշմարւում էր արագահոս փոքրիկ ու պղտոր վտակ: Նայում էր երկար ժամանակ, առանց նստելու զիրքն անդամ փոխերւ և մտածում տաճկահազերի դժբաղդ վիճակի վրա: Ենչու ես այսուղ, այսպէս ազատ և բազգաւոր կեանք վացիեմ, իսկ նրանք այնտեղ տանջանքի ու շարչարանքի լինին դատապարտուած, ինչու արել միատեսակ չի լուսաւորում բոլոր արարածներին: Ինքը որ միանգամայն չքաւոր էր, որ ոչ շոր ունէր հագնելու և ոչ հաց ուտելու, բաւական էր իր վիճակից: Ողորմելի դրութիւնը զգալի չէր իր համար: Նա մի ցանկութիւն ունէր, և այդ մասին զիշեր ցերեկ աղաչում էր Աստծոց իրազործելի դարձնել իր ծրագիրը: Նա ցանկանում էր մի կերպ մէկ միման տաճկական ոսկի գտնել, որով իր կարծիքով սուլթանից կարող կը լինի գնել Հայաստանը: Նա հաւատացած էր, որ հողի տակին շատ տեղեր գտնձեր կան պահւած. բայց ինչու իմանալ նրանց տեղերը: Թափառելու միջոցին ամեն մի քայլափոխում ոտք զարկում էր գետնին ու լսողութիւնը սրում: Նա հնթաղրում էր որ գանձը կաւի կարառի մէջ պէտք է լինի պահւած, իսկ կարասի ձանը հեշտ էր որոշել: Գիշերները, անկողին մտնելուց առաջ, սովորութիւն ունէր, աղօթելու միջոցին, Աստծուն աղերսելու երազում զանձեր գտնւող տեղեր իրան յայտնելու համար: Ես էր նրա կեանքի նպատակը:

Կիրակի առաւոտ էր: Եղանակը մասախլապատ էր ու թաց: Պատարագը վերջանալուց յետոյ այս երիտասարդը նորից բարձրա-

ցաւ իր սիրած տեղը, նստեց աւերակների կոյտերի վրա ու սկսեց զիտել երկրի հորիզոնը։ Յանկարծ Նրա ականջին ոտի ձայն հասու, յետ նայեց և զարմացաւ։ Նրա առաջ կանգնած էր Կակօն։

— Բարի լոյս, Վահան։

— Խնչմաւ ես եկել, եղաւ որտասախանը։

— Եկել եմ մի փոքր մաքուր օդ ծծելու։ Ամեն օր դու ես լինում խելօք, իսկ այսօր ես ցանկացաւ լինել նոյնը։

Կակօնի ձայնը փոխած էր թւում, կոկորդի մէջ կարծես մի բան դողում էր։

— Սուտ ես խօսում, արտասանեց Վահանը, — ես զգում եմ, որ դու եկել ես ինձանից հաշիւ պահանջելու թէ ես ինչ իրաւունքով անպատճեմ եմ քեզ ժողովրդի մէջ։ Աչքդ կը հանեմ, ամեն տեղ. որտեղ հանդիպեմ քեզ ոլէտք է խայտառակեմ, ամբողջ աշխարհին պէտք է ցայտնեմ, որ դու փարիսեցի ես, անբարոցական ես, Աստծուն խաբող ես...

— Ես բան չեմ ասում, Վահան, բոլորը ուղիղ ես խօսում. ես վատ մարդ եմ, իսկ դու...»

— Խնդրեմ լռես, ընդհատեց նրա խօսքը Վահանը, — ես էլ վատ եմ, անպիտան եմ և այդ պատճառով էլ տիրացութիւնից հրաժարեցրին ինձ, փարածէս վրացիցս հանեցին, ուրեմն ինձ ըստ արժանւոյն պատճեցին. բայց դու մնում ես անպատիժ, որովհետեւ չեն ճանաչում քեզ։ Դու աւազակ ես, դու գարշելի արարած ես, դու իրաւունք չունիս Աստծոյ տաճարը մանելու, որովհետեւ պըլք ծում ես նրա սրբութիւնը։

— Համաձայն եմ, սիրելիս, քեզ հետ, ուղիղ ես խօսում, բայց խնդրեմ մի բոպէ համբերես։

— Ահա համբերում եմ։

— Դու այլ ես եկեղեցի չես գալիս, խեղդւած ձայնով խօսեց Կակօն, — իսկ ես, ցանկանալով փոքրիկ լաւութիւն անել քեզ, նըւ խարք վերցրի այսօր յատուկ քեզ համար։

— Եատ չնորհակալ եմ, հարկաւոր չէ ինձ։

Կակօն, ուշադրութիւն չդարձնելով Վահանի խօսքերին, դրսունից ծալած թուղթ հանեց, սկսեց բաց անել ու անսպասելի կեր պով աղաղակեց. «վայ տունս քանդւեց»։

— ի՞նչ եղաւ:

— Նշխարքի փշրանքը թափւեց, օգնիր ի սէր Աստծոյ:

Վահանը անմիջապէս կռացաւ, աչքերը համարեա բոլորովին գեանին մօտեցրեց, փշրանքները հաւաքելու նպատակով: Այդ միջոցին Կակօն մի ահագին քար վերցրեց, որի վրա կէս ժամ առաջ Վահանը նստած մտածում էր, մեծ զժւարութեամբ բարձացրեց երկու ձեռքով ու ամբողջ ոյժով իջեցրեց նրա մէջքին: Վահանը մնաց անշարժ գետնի վրա տապալւած: Զայն-ծովառն չլսւեց նրա բերանից, շունչը մարեց: Քերանը բաց արաւ ու աչքերը ծռեց: Քթից ու բերանից արիւն հոսեց: Կակօյի ոտները թռւլացան, յետ յետ քաշւեց, կարծես մէկը իրան բոթեց ու ոպատին գիպաւ: Աչքը չէր կարողանում հեռացնել իր զո՞նից, բայց ուզում էր փախչել, հեռանալ այնաեղից: Աշխատեց մի կերպ դուրս դալ աւերակների միջից և վերջապէս յաջողւեց մի քանի քայլ փոխել: Զէր կարողանում պարզ հասկանալ իր արածը, գլուխը պատում էր և թւռմ էր իրան որ ամբողջ աշխարհքը տեսնում է ու իրան հետեւմ: Աւերակների միջից դուրս դալու ժամանակ, երբ սկսեց ցած իջնել, ոոը զարկեց քարերին ու զլորւեց, ջարդելով իր դէմքը: Այս բանը մի փոքր ուշքի բերեց նրան, զժւարութեամբ վերկացաւ, իր երկիւ դովլ լի աչքերը չորս կողմը դարձրեց և նորից քայլերը ուզեց աւերակների կողմը: Ճակ եթէ այդ փիրաւորւածը չմեռնի, մտածեց նա և սարսափեց: Խուլ կերպով զջջում էր իր արածը, բայց արդին ուշ էր: Մօտեցաւ Վահանին, որ զեռ կենդանի էր, բայց փափակում էր շունչը փշել ու ազատել տանջանքներից: Քարը դարձեալ դրած էր թշւառի մէջքի վրա: Կակօն այդ քարը հեռացրեց, բռնեց Վահանի ոտից և քարշ տալով մինչև անդունդի բերանը, դլորեց ցած:

ԿՈՂԲԱՅ ԱՂԱՅԱՆՔՈՒՄ

(Գիւղական ուսուցչի յիշատակարանից)

ՄԿՐՏԻՉ ԶԱՔԱՐԵՍՆՅԻ

(Շարունակութիւնը¹⁾)

IV

ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐԸ. (ԼԱՐԱՂԱՎՅՑ)

Առաւտուը դեռ աղօթարանը չբացւած, դեռ արշալումը իւր վարդագոնն կարմրութիւնը չսփռած հորիզոնի վրաէ, Զանապի խրոխտ ձախը ինձ արթեցրեց, ես վերպացաէ և, իմ տած պատուերներիս համաձանն, ամէն բան գուաչ պատրաստ։ Զանազը բերեց պատրաստած ձիերը. մենք հեծանք նրանց առանց ժամանակ կորցնելու, շարունակեցինք ճանապարհը. ձիերը եռանդուն կերպով անցնում էին կողքի բարձր ու ցած հողակոցներից. նոքա աւելի զգացուն էին, կարծես բնազդումը կատարելապէս ներշնչած էր նրանց շուտով համկանալ, թռչել քանի հովէ է, ճանապարհի շնչած էր նրանց շուտով համկանալ, թռչել քանի հովէ է, ճանապարհի երկարութիւնը կտրել. չենթարկւելու, համար արեի աշրող ճաւապարհ. ների ազգեցութեանը՝ խրաքանիւր ոստումի հետ թռչնչում էին, ձիերի ուրախ տրամադրութեան նշանն է. նրանց ձիւառը ձիերի ուրախ մազերը, առաւօտեան կենուատու օդի մէջ շնչող զեփիւռից փալ բաշի մազերը, առաւօտեան կենուատու օդի մէջ շնչող զեփիւռից ժածանւում, ծփւում էին և կրկին փռուում պարանոցների վրաց Ծաղիկ ների անուշահոտութեամբ տողորւած օղը կազդուրել էր մեր հոգին, զօրութիւն և ոչ էր ներշնչել մեր մարմնին. Մենք անցանք անհաւասար

1) Տես «Մուրճ» 1896 թ. № 1:

Հողալին, բլրակները, և երկրի մակերնութը հետզհետէ ցած դիրք ընդու-
նելով՝ մոտանք Աջի գետակի կանաչազարդ հովիտը. Զանազը իւր սովորու-
թեան համեմատ՝ ոչխարի մորթուց կարած մեծ զլխարկով ծածկեց լան
ձակառը մինչչ լոնքերը, ձիու ընթացքը կանոնաւորեց, ու մեզմ կերպով
սկսեց քրդերէն դիւցազնական աշխարհին նւիրած երգերից երգել. որ-
չափ քաղցր էր երգի եղանակը, նոյն չափ ազդու էին նրանում բովան-
դակած մաքերը իրենց խմաստալից բառերով. Աւելորդ չեմ համարում
աշխեղ Զանազի երգածից թարգմանաբար մի երկու տուն առաջ բերել.
Անա, օրինակ, թէ ինչպէս լեռնական քիւրդը, թշնամուց մերձ իման վի-
րառութած, աւանդում է իւր որդուն, անպատճառ աչդ սոոր անունը վի-
րացնելու համար իւր ցեղի կամ սերնդի վրաչից, վրէժխնդիր լինել հա-
կառակորպից.

1. Իմ թշնամին ուրախ է ժակտում,
Լեռների գլխին՝ թռչում ու պարում.
Հարժում է տէղը, ձգում է, բանում.
Երբ աչքս խփում եմ, հէնց աչդ եմ տեսնում:
2. Աչդ նախատինքը, իմ որդի Ամար,
Քեզ է պատկանում, զու լանձդ մի առ,
Հօրդ վրէժը լուծիր թշնամուց,
Աչդ փառք է, պատիւ ամնիս համար:

Արշալուսին հետզհետէ ամպերից աղատւած գագաթները նորա կարմրու-
թեան մէջ աւելի համեմատ էին ժակտում իրենց նալող աշքերին. բուսականու-
թեամբ ծածկւած հովերի միջից հոսող զետակը, անթիւ կաքաների
գեղզեղանքը իւր փոքր ալիքների հետ միախառնուելով, Արաքսի գիրկն էր
դիմում. Աչդ քաղցր տպաւորութեան տակ անցանք մենք ամբողջ հովտի
տարածութիւնը: Ճանապարհը կրկին ընդունեց զառիվայր ձեւ. բարձրա-
նալով աչդ զառիվայրից և փոփոխակի բարձր ու ցած մակերեսութից, մեր
առաջ տարածւեց մի ընդարձակ բարձրաւանդակ, որի մակերեսովի վրաչից
անցնում են հարաւային և արևմտեան կողմերից մի քանի փոքր ու նեղ
ձորակներ, որոնք հեռաւոր լեռներից հոսող հեղեղների միակ ճանապարհն
են կազմում. Բարձրաւանդակը ընդհանրապէս հարթ է երեսում և նրա
վրա հնուռւց չի նկարւում ոչ մի բարձրութիւն, բացի ու և կարմիր
փարերից պատրաստած երկու շինութիւններից, զոքա նախնի պատմա-
կան Երուանդակերտի մնացորդ աւերակների նշխարներն են:

Այս հնագարեան աւերակները իրենց հեռու և փոթորկալից ան-
ցնալով ցարդ որոշուում են նոյն իսկ իրենց սահմանագծերով. պատմական
քերթողահայր Մովսէս Խորենացին իւր նկարագրութեան մէջ նմանեցնում է
Երւանդակերտը աչքերի զեղեցիկ ձեին և կազմութեանը. Արարատեան
այնատարած դաշտը իւր ընդարձակութեամբ և գեղեցիկ պատկերներով

Երւանդակերտից երեսում է ամենապարզ և սքանչելի՝ զիրքով։ Արաքսը արևմուտքից երբեմն ուղղաձիգ և երբեմն օձապտուս հոսանքով զէպի արեելը է անցնում, կազմելով հիւսիսից նրա սմբենամօտ թնական սահմանը։ Հիւսիսակին կողմից Արաքսի ափից փոքր ինչ բարձր դրութեան վրայ գանուռմ են հին զերեղմանաբարեր ոև դոխով, որոնց շատերի վրա դանւած արծանագրութիւնները իմիջի ազոց ենթարկելով զանազան մնձեների և հեղեղների աւերիչ հոսանքներին և թշնամի ձեռքերի ազդեցութեանը՝ բոլորովին անհետացել են, իսկ մնացածներն էլ ոչ մէկը չի պահպանել իւր կանոնաւոր ձեզ, ազ մաշւած են և անորոշելի դարձել։ Աչն որ հնատաքրիրն է, որի մասին ոչ մի Եւրոպացի ճանապարհորդ, սկսեալ Շոպէնից, չն իլշել, նոյն իսկ Հ. Ալիշանի Այրարատի մանրապատում տեղեկութիւնների մէջ չէ երեսում, այդ Երւանդակերտի հարաւալին արևմտեան մասում եղած ժալուերի մէջ փորւած նդնաւորի բնակարանն է։ Այդ բնակարանի վերենի և ներքեւի մասներում գտնուած արծանագրութիւններն բոլորն էլ գլխատառեր են և իւրաքանչիւրը կէս արշին Երկացնութեամբ գրած։ Նրանցից միմիան կարգացում է աս Խաչատուր» բառերը։ Ազ տեղից ուղիղ զէպի արևմուտք նոյն ձորի մէջ կաջ մի ազբիւր, որի ջուրը թէն ացնչափ լաւ չէ, բայց բաւականութիւն է տալիս անց ու դարձ անողին, Ազբիւրից մի քանի քալ հեռու զէպի հարաւ, կաչ մի ստորերկիւյ անցը, որի մասին ժողովուրդը պատմում է հետեւալ կերպով։ Շատ հին ժամանակներում քաղաքի այդ մասում ջուր չի եղել, իսկ Արաքսից բերելը անկարելի, ուստի Երւանդակերտում ապրոյ թագաւորը՝ այդ սոսորերկերեաւ անցքով քսան և հինգ վերստ հեռու զէպի հարաւ։ Գալուստն (Բալըդ-գեօլ) լճից ջուր է բերել տւել։

Այս հուանկիւնածեն ձորից զէպի հրտիս բարձրութեան վրայ կանգնած է մօտ չորս սաֆէն բարձրութիւն ունեցող ոև և սրբատաշ քարերից մի աւերակի մնացորդ, որը կարծում են լինել քաղաքի միջնաբերդը, իսկ սրան կից գանուռմ է անլավոտ աւերակների մնացորդ։ Որը ուղղակի Արաքսի վերայ է նաևում։ Միջնաբերդից մի քանի քալ հեռու կանգնած է կարմիր քարերից մի շինուութիւն վեղարածեն, մի փոքր քառակուսի լուսամուտով։ շատերը այդ համարում են մի հնութիւն Երւանդակերտի վերաբերեալ բայց, ինչպէս շրջակայ հայ և պարսիկ ազգաբնակութիւնները վկանում են, զա վերջին ժամանակների շինութիւն է, այժման Սուլմալի գիւղում ապրած Ա.ալի բէգ պարսիկ իշխանի գերեզմանն է։

Երւանդակերտում երկար ժամանակ թէ հայեր և թէ պարսիկ բնակութիւն են հաստատել, բայց ջրի պակասութեան պատճառով թողել են ու հեռացել ուրիշ տեղ։ Քաղաքի բուն կենդրոնից զէպի արևմուտք երեւում են այգիների տեղեր ցարդ մնացած հնանաքարերով։ Ծերունիները այդ մասին աւանդութեամբ լսելով իրենց հայրերից, պատմում են թէ այ-

տեղ ամենաընտիր խաղողն է եղել, ալզիներով և պտղատու ծառերով պատաճ, Քաղաքի այն մասը՝ որը կազմում է եռանկիւնի ձև, միանում է միջնաբերդի և քաղաքի հիւսիսակին մասի հետ երկացն և հողակապ կոմուրջով, որի աղիւսածն քարերը իրենց գուներով կարծել են տալիս իւրաքանչիւր նալողին, թէ դա մի տարւաչ շինութիւն է:

Քաղաքի հիւսիսակին և հարաւային մասերը ըրջապատւած են քանդած պարխոսներով: Ամեն կողմերից բազմաթիւ սրբատաշ քարերով շինած ուղիները գալիս են և միանում միմեանց հետ բուն կեղրոնում, միջնաբերդի մօտ: Հարաւային կողմից վեց-եօթ վերաս երկանութեամբ, զանազան ուղղութեամբ ուղիներ են ձգւած: Նշմարւում են ալզիների հետքեր, բաղանիսների և զանազան շինութիւնների ձեւեր: Միջնաբերդից դէպի հարաւ ընկած եռանկիւնածն ձորակը ամարացին եղանակում անմարզաբնակ է սև կարիճների և թունաւոր օձերի պատճառով, իսկ ձմեռալին եղանակում ալղանգ ձմերում են քրղերը իրենց հօտերով: Երւանդակերտի ուղիղ մէջտեղից է անցնում Կողբից դէպի Խղդիր տանող ճանապարհը:

Առաւտեան ուղիղ ժամ եօթն էր, մենք դուրս եկանք ալդ բազմադարեան աւելակներից, հեծանք ձիերը և երեք վերստ հեռու իջանք մի կանաչապատ առւակի վրաչ, Զանազը երկու ձիու սանձերը միմեանց հետ կապեց և աղատօրէն թողաւ մեզ մօտ գտնուող առողտի¹⁾ արտի մէջ, առանց խղճահարւելու որ արտը ուրիշի սեպհականութիւն է, առանց հասկանալու որ օտարի ունեցածը իւրացնելը և կամ փչացնել թշւառ գիւղացու միակ լուս—արտը—խղճի լնդդէմ է, ես չկարողացաւ լուել ու անհամբերութեամբ ասացի:

—Զանազ, չէ՞ որ ալդ առողտի արտը ուրիշի է, իսկ դու փչացնում ես ձիերը արձակ թողնելով նրա մէջ:

—Ե, իմ որ, սկատասկանեց Զանազը զարմացական ձախով:

—Հապա մեղք չէ ալս արտի տէրը, առողտը խպառ կը փչացնեն:

—Տօ դէ ես էլ ասի ինչ ա ասըմ է. ալլազգի²⁾ մալը, վարժապետ չան, հալալ ա. հըմի իմ ու քու արինը որ ընտոնց ձեռը ընկնի, ընենց կը խմեն որ հէչ մի կաթ էլա չեն թողի. էս հօնչէն աջամփ ա, ուտում են թող ուտեն:

Զանազը նստեց, բաց արեց հացը, մենք ճաշեցինք և հացից կեսով

¹⁾ Կօղջակ էլ են գործածում. դա ձիերի համար ամենաազնիւ խոտն է:

²⁾ Ալլազգ. բառը դորժածելով դիւղացիք հասկանում են միմիակն մահմեղականները:

ես փոքր ինչ հանգստացաէ քարերի տուերում, և ապա առանց ուշանալու շարոնակեցինք մեր ճանապարհը աւելի խաղաղ և հանգիստ կերպով:

Զանաղը ճանապարհին հետաքրքրութեամբ հարցնում էր ինձանից և աշխատում էր իմանալ, թէ ինչու ես մանրամասնաբար նայում էի ան անցած դնացած աւերակներին և խրաքանչիւր տեսած գրում իսկ Զանաղի իւրաքանչիւր հարցման պատասխանելով, մեծ հաճութիւն էի պատճառում նրան, Զանաղը ունէր մի քրդական հին սովորութիւն, որը շատ հիմնարարէս դործադրում էր իւր տեղում. այդ շատ հեշտ կարելի էր նկատել նրա բնաւորութեան մէջ միան ճանապարհորդելով նրա հետ Ալդ ախն էր որ ճանապարհին իւրաքանչիւր անց ու դարձ անողի հետ խօսում էր, բարենում էր, հարցնում էր առանց խտրութեան-ծանօթի և թէ անձանօթի՝ ինչ տեղացի լինելը, ինչ տեղից դալը և ուր գնալը Ալդ սովորութիւնը քրդերի մէջ մինչեւ ցարդ պահպանւած է շատ կենդանի կերպով: Որչափ մենք առաջ էինք գնում, աճնչափ ճանապարհը մեզ համար քաղցրանում էր, երեկոնեան պահի հովին ընկնելով, մենք հասանք տոն ուղիղ ան ժամանակ, երբ արենք մալր էր մտել և դաշտից տոն էին վերադառնում խումբ մշակներն ու քաղհանաւոր հարս ու աղջիկները¹⁾:

Գիւղական կեանքը իւր նեղ ու սահմանափակ շրջանում ունի և իւր ճանձրացուցիչ ժամենը, որոնք առաւելապէս զգալի են լինում ան ժամանակ, երբ մարդ չի ունենում իւր մտքին սնունդ մատակարարող մի զործ, երբ մարդ կատած չէ գիւղական կեանքի պարզ և խաղաղ պար մանների հետ, և երբ սոննւազն զոնէ երեքից մինչեւ չորս հոգի չկան զարդացած անձատներ հասարակութեան մէջ, որոնք անձնութիւրաբար դործին ծառալէին: Եւ անա ալդ անձնաւորութիւնները կը կազմէին հասարակական համականքի ուժը, պաշտպանելով պարզամիտ ռամի շահերը գիւղացոն ծծող հարստանարիչ վաշխառուների և կապալառուների զէմ: Բայց գյուղագրաբար ալդ միտիթարական երևութից ոչ թէ միան հողը, ալ և ամրող Սուրբմալւաէ գաւառէ հաչ հասարակութիւնը զուրկ է, Գիւղու իր հետաքրքրութիւնը շարժող ոչ մի առարկա չկար, և ոչ իսկ զիշեր ժամանակ ինձ զբաղեցնող մի զործ, ոչ ընկերական փոքր ի շատէ զարդացած շրջան, ոչ զիշերապէն ժողովարաններ՝ մտաւոր և հոգեկան ժամանցի համար, հետեւալիս ես ակամալից պէտք է չարմարւէի ան

¹⁾ Սուրմալւաէ գաւառում, ինչպէս և Կողբում, գաշտակին աշխատութեան մեծ մասը կատարում են կանաչք. երբ բամբակը, կնջութը և ուրիշ որանց նման հացարուսերը կանաչում են, նրանց հետ և աճում են վարքենի բուսեր, այդ միջոցին ամեն ամիս քաղհանում են աւելորդ բարը, ալդ զործը կատարում են միայն հարս ու աղջիկները իրենց հարեանների հետ վոխաղարձ օղնութեամբ:

կեանքին՝, որի ըրջանի մէջ էի գտնւում: Խմ չըջանը Զանազն էր և ամի Սաքօն, որոնց բնաւորութեան ամէն մի ազդեցութեան և առօրեալ կեան-քի ել և էջերի փոփոխութիւններին պէտք է չարմարւէի, նպատակի իրագործման համար: Մենք անցեալի նման ազդ օրն ևս բարձրացանք իրագործման համար: Մենք անցեալի նման ազդ օրն ևս բարձրացանք կառւը, ուր և քաղցր քունը մեզ իւր թեսերի տակ հրաւիրեց: ցերեկւակ խոնջութիւնը մոռացնելով:

V

ԱՂԱԶԱՆՔԻ ՄՇԱԿՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

Գիշերւակ քաղցր և հանդիատ քնի տպաւորութեան տակ, առաւոտը շատ գւարթ էի զգում ինձ, ևս սենեակից գուրս, դռանը նստած, նակամ շատ գւարթ էի զգում ինձ մօտից հոսող առւակին, նակում էի և հեռուն, Արաքսի ձու-րակին, որը տակաւին քարափների սաւերների տակ թանձր մառախու-դակիւած, զեռ գիշերալին քնից նոր զարթնած, խոս չեր տւել իւր դոյլ ծածկւած, զեռ գիշերալին քնից նոր զարթնած, խոս չեր տւել իւր գրաւից ամպագոյն մէզը, Կողը գիւղի նախսիրը դէպի արօաքւեց, հան-դաւրիներն վազուց արդէն իրենց գործին էին գնացել, գիւղի իւրաքան-չիւր տան երթիկներից բարձրանում էր թանձր մուխը, թազա հացի հոտը տարածւել էր օդի մէջ. Կողացի կինը աշխատում էր շուտով դաշ-տաւորին¹⁾ հաց հասցնել. Զանազը, իւր քուրդ հովելի վրաէ բարկացած, ձանը աշխարհ էր բռնել. խեղճ հովիւը ամբողջ մարմեսվ դողում էր Զանազի առաջ կանգնած, զլուխը խոնարհած, երբեմն երբեմն զետին խոնարհած իւր աշքերը ձգում էր Զանազի երեսին, կարծես թէ ներումն էր խոնդրում իւր չանցանքի համար, և հավկան երդումներով կամենում էր հաւատացնել Զանազին իւր անմեղութիւնը և հաւատարմութիւնը:

—Ախտ (աղա) ջաճ, էն ժամը վկաչ որ եմ չի կերել²⁾ քու ոչխարը, սխուր և մեղմ ձախով արտասանում էր հովիւը:

—Եղ իմ բանը չի, ևս իմ ոչխարը քեզնից կ'առնեմ, գնա վարդից (որ պեղից) որ կլենա բեր, թէ չէ քու հախիցը (վարձից) կը կարեմ, ու քեզ էլ փոտէ տեսնում: Նրա կերածը թանն ու սպանն է:

¹⁾ Խնձորէս Կողրում, նոչնալէս և Առուալւաէ զաւառի իւրաքանչիւր զիւրում, ամէն օր հաց են թխում, որովհետեւ երկրագործը հնացած հացը ի կարողանում ուտել առանց կերակրի: Խոկ տաք կ'երակուր նա շատ փիչ է տեսնում: Նրա կերածը թանն ու սպանն է:

²⁾ Արարատնան գաղտում և նրա բարձր լեռների վրաէ ապրող եղիդի քրդերը ընդհանրապէս խօսում են հայերէն գաւառական բարբառով, միայն աչքի ընկնողն ալն է, որ սուա-շատերը ամենամիշտ հնչիւններով. միայն աչքի ընկնողն ալն է, որ սուա-շին դէմքի փօխարէն միշտ զործ են ածում բակների երկրորդ դէմքը: Պօր-օրինակ, ևս չիս կերել:

—Ախամ ջան, էս վանքը վկաչ, էս գիշեր ես քներես, գելը տարեր
ես քու ոչխարը, իմ խաբար չես էլել:

—Տեսար դու, դառնալով դէպի ինձ, էտ էլա ուզում ինձ խաբել, գի-
լանն (զավեր) իրանք են, իրանք ոչխարը մորթել են ու ընկերներով կերել
հըմի եկել ա ու երթումա ուսում թէ ես խաբար չեմ, գելըն ա կերել
Դէ շուտ գնա վարդեցվար կըլլենաւ բեր, թէ չէ քու միթիքէն մի անկան-
ջիդ զըգար կը թողամ:

Հովիւը առանց ձայն հանելու սկսեց ծոծրակը քորել և քթի տակ
մրմիջալով հեռացաւ. Հովիւը անպատճառ պէտք է Զանազի ոչխարը
դտնէր ու տար. բաց ինչ տեղից, աչ քուրդ հովի համար դժւար մոս-
ծելու խնդիր չէր. Եթէ նոյն ոչխարը չլինէր, մէկ ուրիշը նրա փոխարէն
իւր ընկերներից կը գողանար ու կը բերէր: Գողութիւնը՝ քրդի երեկի
դէնքն է և առնականութեան ամենազլխաւոր լատկանիշը: Գողութիւնը հա-
մարւում է քրդական ցեղերի մէջ ինչպէս քաջութիւն. մի անհատ, որը իր
կեանքում գողութիւն չի արել, նա հերձւածող է համարւում և մինչ
անդամ, եթէ նա կամենում է ամուսնանալ, նրան աղջիկ չեն տալիս,
ասելով թէ նա անգօր է և թող, նա կին սպահելու արժանաւորութիւն
չունի, Նոյն իսկ քրդական կրօնականների և առաջնորդների սկզբունքն
է, որ առանց գողութիւն անելու, ոչոք տղամարդ անունը կրելու իրա-
ւունք չունի: Եղիդի քրդերը հետեւում են իրենց կրօնականների ուղղու-
թեան. նրանց մէջ ճշմարտութիւն է այն միտքը, որ կրկնում է իւրա-
քանչիւր քուրդ անհատ, թէ Քրիստոսին խաչելու ժամանակ մի չէլին¹⁾
(կրօնաւոր այնտեղ է լինում, որը խղճալով Քրիստոսի կրած նեղութեան
վրաչ, գողանում է նրա բնեաններից մէկ հատը և պահում է իւր թանձր
մօրուքի մազերի մէջ, որպէս զի չխաչեն Յիսուսին: Այս բանին նրանք
հաւատացած են, որ գողութիւն անելու լիազօր իրաւունքը Քրիստոսի է
տեև չէլխերին, որոնք նոյնը ժառանգաբար աւանդում են իրենց լետագա-
սերունդներին:

Զանազի խրոխատ ձայնը հեռուից լսելով՝ ամի Սաքօն, ձևոքերը դա-
նակի վերաչ դրած, կամկար քավերով մեզ մօտ էր գալիս. նա անցաւ
դար ու փոսերից²⁾, առւակներից և ժապանով, գլուխը շարժելով մեր մօտ
հասաւ: —Ինչու ես բարկացել Զանազ, առաց ամի Սաքօն ծիծաղելով:

—Բաս, ամի Սաքօ, չես ասում որ էս լամուկը³⁾ իր ընկեր չողան,
ներով մեր ոչխարներից մի հատը մորթել են ու կերել. հըմի նկելա ըստի

¹⁾ Եղիդի չէլխերը կամ կրօնաւորները, ինչպէս պարտադիր օրէնք,
պէտք է մօրուք ունենան:

²⁾ Կողրի մակերեռքը անհաւասար է:

³⁾ Քրդի տղակ, երիտասարդ:

ու խեղճ իսեղճ ասումա թէ ոչխարը գիլանն (գալեր) են տարել: Ել չի ասում թէ ախր ես ումն եմ խարում, ում մալն եմ ուտում: իմ մալ ուտողը վավա իմանում ինչ օխտ աշխարհ պլախ գաէ, եա չէ իմ մալ ուտողի տունն ու տեղը կ'էրեմ, կը վառեմ, սև քիւլ ու մոխիր կը չինեմ. ըստի են ասած է, պողը զողից գողացաւ, Աստւած վերի զարմացաւ»:

Զանազի վերջին խօսքերի վրաէ ամի Սաքօն աւելի բարձր սկսեց ծիծաղել և, դէպի ինձ մօտենալով, նստեցինք միասին իմ բնակարանից տասը քալ հեռու հին գերեզմանատան քարի վրաէ, կողբում երեք զերեզմանատուն կաչ, երեքն էլ գտնուում են բարձրաւանդակների վրաէ. նրանցից երկուսը նոր ժամանակների են, իսկ ան, որտեղ մնաք էինք նստած, հին զերեզմանատունն էր, ուր կային բաւական զեղեցիկ քանդակներով խաչքարեր, իսկ արձանադրութիւն և ոչ մի տառ: Յարմար ժամանակ էր, իսկ ամի Սաքօն պատմելու առաջ նիւթեր շատ ունէր. նա շարունակեց իւր պատմութիւնը աղահանքի մշակների կեանքից, ի հարկէ իւր բառբառով, որ մնաք կը փոխադրենք:

«Կողբացիները շատ տարիների ընթացքում զործում էին ժամանակի համաձան, ապրում էին տէրութեան հարկատութիւնից աղատ, վակելում էին պարսից կառավարութեան ֆերմաններով պատական արտօնութիւններ, որը նոյն իսկ ոռուաց կառավարութեան միջոցներին կար և շարունակում էր մինչև վերջին թւականները. և այդ բոլորը նրա համար, որպէս զի աղհատութեան պարտականութիւնը կողբացիները ընդունեն, որը թէ իրենց կողբացիների համար և թէ նոյն իսկ աղահանքի կապալառուների համար՝ շահաւետ էր համարում: Բայց դժբաղդաբար կողբացին չկարողացաւ հասկանալ իւր օդուտը և վակելել կառավարութիւնից արւած իրաւունքները: Կողբացոն իրաւոնք էր տրւած իւրաքանչիւր «խաչքար» անւանւած աղաքարի համար փութից ստանալ $2\frac{1}{2}$ կոպէկ, իսկ կողբացիները չբաւականանով ալդ վարձով, դադարեցրին աղհատութիւնը և բողքեցին կառավարութեանը, նշանակեալից աւելի վարձ պահանջելով. բայց ալդ պահանջը մնաց ինչպէս պահանջ առանց որ և է հետևանքի: Անուհետեւ կողբացիները շարունակեցին պարապ-սարապ ման զալ, իսկ աղահանքի կապալառուն կառավարութեան հրամանով, փոխանակ մշակներ պարապացնելու, մուրճով ալ կտրելու, վառօղնվ էր ձգում աղը. Աղպիսով կողբացին իւր աղիսութեամբ ստեղծեց և պատրաստեց իւր համար մի մթնոլորդ, որի ծանր օղը չնչելով պէտք է ապրէր աղահանքի դարեր մշակը: Անգայտացան շուտով ալդ հսուանքի մէջ կողբացու մասնաւոր առանձնաշնորհումները, լալեցին աղատական իրաւունքները, և 1879 թւականը աէրութեան հարկատութիւնից և ծառալական պաշտօնակատարութիւնից աղատ կողբացու մէջքի վրաէ դրեց հարկատութեան պարտականութիւնը: Կողբացին հասկացաւ իւր սխալը, զղաց իւր կեն-

սական կորուստի մասին, բայց արդէն ուշ էր. Այն մշակը որը առանձնապէս արտօնութիւն էր վաճելում, միանգաման և բաւարար վարձ էր ստանում իւր աշխատութեան փոխարէն, գիտէր ազատ չնչել, կապալառուի մօտ իւր պարտ ու պատշաճ չարգանքն ունէր. նոյն մշակը, կորցնելով իւր արտօնութիւնը, պէտք է ունենար անունեան ծմարտութիւնը կեղծելու մի առանձին չնորհ, նա պէտք է նվիրէր կապալառուի անպալման կամաջականութեանը. նա պէտք է ունենար տոկունութիւն, տանելու ամեն տեսակ ստորութիւններ, խղճի հակառակ գործողութիւններ, չօգուտ կապալառուի շահամոլ կրքերին. իսկ այդ բոլորը նրա համար, որպէս զի, գրաւելով կապալառուի սիրուը, աղահանքում աշխատութեան գործ ստանար, մի կտոր հաց աշխատէր, ազատելով իւր ընտանիքը սովոր ճանկերից, ժամանակի ազդ տիսուր ելեէջը մեզ լուսահատութեան գագամնակէտին հասցրեց, կեանքի նշանակութիւնը իսպառ կորաւ մեզ համար, մանաւանդ այն ժամանակ, երբ մենք, կապալառուի խիստ հակողութեան և հրամանների ազդեցութեան տակ, պէտք է աշխատէինք աղահանքի ստորերկրիա, որջերում. Մենք շարունակում ենք մեր գործը իւրաքանչիւր օր, շատ անգամ և գիշերները, իսկ մեր օրավարձը մեզ համար արեան զին էր դարձած:

—Ամի Սաքօ, կրրոր աղահանքի աշխատութիւնը ձանը էր ձեզ համար, ինչու ուրիշ գործով չեիք պարապում, ընդհատեցի հա.

—Վարժապետ, մեզ անհրար էր այդ հանդամանքից ազատել, պատասխանեց Սաքօն, զլխաւորապիս նրա համար, որովհետև կողբացին չունի ուրիշ արհեատ, չունի հողի եղածն էլ մի քանի անհատների ձեռքն ին ուրիշ արհեատ, չունի հողի եղածն էլ, որին նվիրել է նա մանկութիւնից հոգւով և մաքսվ: Նթէ այս աղահանքը ալսանդ չինէր, կողբացին ճարահատւած կամ կը գաղթէր և կամ ստիպւած կը լինէր ուրիշ հեռաւոր երկիրներ թափառել, բաղդ վնտուելու Վերջապէս իւրաքանչիւր կողբացի անհատ հասկացաւ, որ իւր վիճակի այդ ծախորդ հանգամանքներն սոսկ տղիտութեան արդիւնք են: Տղիտութիւնն էր, որ սպառնացաւ բանուր մշակի քայլալման գործին, տղիտութիւննէր, որ աղքատութեան զունելը բացեց կողբացու առաջ, և վերջապէս տղիտութիւնն էր պատճառ որ կինը իւր ամուսնու հետ անհաշտ պացմանների և հանգամանքների մէջ մոտաւ: Առաւուեան վարդապուն արշալուսը երբ գեռ նոր էր ծածկում արմելքը, երբ կարմիր արմել զեռ չէր ներկել բարձր և լաւերժական ձիւ նով ծածկում Մասսի գագաթը, մենք բոլոր մշակներս պէտք է խմբւած, կտղմ և պատրաստ լինէինք տղահանքում, իւրաքանչիւրս իւր օրական հացը մէջքին կապած, ևնա տէր Առուածան կանչելով ամենքս մտնում էինք որջերի ներսը և ամեն մէկը իւր գործն էր սկսում: Մեր աշխատութիւնները կատարեալ խլուրդի աշխատութեան էին նմանում, մուրճը մեր նպա-

տակների պրակն էր, որ անդադար խփելով աղաժառերին՝ ճանապարհ էր պատրաստում և մեզ դէպի չառաջ հրաւիրում. տարբեր առարկաներ չկային, տեսարանը նոյնանման աղաչերտերն էին, որոնց երբեմնապէս բայցաւութեամբ փոփոխութիւնը սպառնում էր մեր սրտերին երկիւղ, արհաւիրք և շատ անգամ լանկարծահաս մահ. Բայց մենք այդ բոլորին ընաելացանք, և մինչև այն աստիճան, որ կեանքը և մահը մեզ համար մուածելու ամենաշնչին առարկաներն էին համարում. Մեր աչքերին անտե անելի էր կապուտ երկնակամարը իւր լուսաւորներով. մեր ներքելը անդունդ էր, իսկ մեր երկինքը աղալին միապաղաղ սարսրն էին. զիշերաշը կիլի նման առաստաղից կպած, մէն մի բոպէ զերեղմանական ուրականներ էինք երեակալում. Խրաքանչիւրի համար զրւած էին հողից շնուած, ձէժագ լիփը պլազման ճրագներ, որոնց լուսի օգնութեամբ մեր մուրճերը միմեանց լետերից ներդաշնակորին խփում էին, չած թափելով մեծ ու փոքր աղաւին բեկորներ Վերջապէս մեր միակ լուսը և միսիթարութիւնը այն աղպու ձայնն էր, որին մեր ականջները ամեն մի վաւրկան անհամբերութեամբ սպառում էին. Ազդ ձայնը այն էր, երբ զրափց լուսում էին օրհնեալ է Առուածո խօսքերը, մինք կարծես մահաքնից սթափում էինք. Ազդ ազդարար նշանով մինք հասկանում էինք որ արդէն գործաթող լինելու ժամանակ է, զգուշութեամբ ցած էինք իջնում. Դուրս դալով այդ խորխորաստներից արեի մայր մանելուց չետու, երկնքի վրայ ափոած վերջալուսը մեզ համար կարմիր առաւօտ էր թւում. Բայց խկապէս մենք մեր տեսութեան մէջ սիսալում էինք, մեր աչքերը մեզ խարում էին և մեր մաքերը նոյնը հաստատում. Մուրճներն ուսերիս վրաէ զրած, լոգնած, կամկար քալերով զնում էինք դէպի տուն. Մեր ընտանիքը, մեր երեխաները մեզ խորժ և օտար էին երեսում. զեռ նրանցից և ոչ մէկի հետ մէկ բերան անգամ չխօսած, ձեռքերնիս մէկ-մէկ ցամաք հաց բռնելով, զուրս էինք գնում տանից և հաւաքւում էինք մեր զիշերապին ժողովարանը. Գիւղական աշխատութիւնների մէջ ընդհանրապէս մեծացած տղէտ անհատը կեանքն ուրիշ տեսակիտից է հասկանում. Նա կեանքի սահմանը վերջացնում է հետեւալ խօսքերով. Պինչ որ ճակատներիո զրւած է՝ այն էլ կը լինի. Ալս խօսքերի վրաէ անելի համոզւած զիւղային անելի ևս աղատութիւն է ստանում գործելու ամեն ինչ չափաղանցօրին իւր հաճողքի և կամքի համաձայն, լաւ կամ վաստ, հակառակ կամ չարմար բարեկեցութեան պակմաններին, և արդարնալով թէ աղպէս է զրւած իմ ճակատին, աղպէս էլ պէտք է լինի. Մեր բոլոր ընկերները՝ ալսօր կանք, վազը չկանք» ասելու, վերին աս տիճանի վշացած կեանք էին վարում. մեր մէջ միտուն մէկ անհատ կար, որից բոլոր էլ պատկառում էինք և որը իւր անվերջ բարդական նրատներով մշակ զառակարգի ուշազրութիւնը զրաւել էր մատնաւորա-

պէս իւր վրալու բնութիւնը օժտել էր նրան մի քանի առանձնակատկութիւններով, նա հմուտ էր և իւրացրել էր իւր արհեստը՝ աղհատութիւնը. նրա բազուկների ամբապինդ ջղերը Արաքսի ալիքներին դիմաղրելու չափում ունէին լողալու համար. հասակը բարձր էր և կանոնաւոր. նա իւր կեանքի մէջ անցրել էր քսան երկու գեղազւարձ գարուններ, այնպէս որ նրա կեանքի այդ սակաւ տարիները կասկածներ էին չառաջացնում, չառաւտալ նրա բարեմանութիւններին. Այն որ բոլորի չարգանքն ու սերը գրաւել էր, այդ նրա ընկերասիրութիւնն ու մարդասիրութիւնն էր Ներկան երաշխաւորում էր ամէն կերպով նրա համար, որ նա ապագայում մեր տղէտ հասարակութեան համանքի մէջ ընտիր անդամ կոչելու բազդը կ'ունենաց. Այդ խոհական երիտասարդը իմ անդրանիկ որդի Վարոսն էր. Վարոսին մանկութիւնից իր մօր թախտնձանօք նուիրել էինք Վարդեայ հէր վանքի Սուրբ Վարոսի ծառալութեանը¹⁾, որի անունով և կնքւած էր. Վարոսը իւր տարիներին համեմատ լաւական ընդունակ և հաստատամիտ երիտասարդ էր. նա շատ և շատ անդամներ մեր շրջաններում չափանիլ է ամենքիս համար մի օգտակար միտք, այն է կաղմնէլ մշակ զասակարգի մէջ մի խնայողական ընկերութիւն, վեր առնելով իւրաքանչիւր մշակի վարձից, ամենաքիչն առեմ, օրեկան երկու կողմէկ, պահպաննելով այդ փողերը մեծ խնայողութեամբ և չտհեցնելով նրանց օրէնքի համաձայն, ժամանակին գործադրելու համար մշակ դասակարգի աղքատ ընտանիքների նիւթեական ապահովութեան և նրանց զաւակների մտաւոր դաստիարակութեան գործին: Վարոսի այդ առաջարկութիւնը շատ անդամներ կրին և եցին, վերջը նա միաց առանց գործադրութեան: Աղաճանքի տղէտ բանուրը չուղեց տեսնել իւր ապագավի ապահովութիւնը. նորա համար քաղցր էր իւրաքանչիւր օրւակ ոտացածը անխնակ վատնել, ընտանիքը գորի պահպաննել կինսական պարագաներից, իսկ ինքը իւր օրական հաճոք ներից չետու հետեւալ օրը կրկին ենթարկել սովորական տաժանակիր աշխատութեան:

Ամի Սաքօչի պատմութեան վերակ իմ ուշադրութիւնը չափաղնց լրւած էր, բայց ընդհատեց նրա պատմութիւնը, երբ նրան կանչեցին, նա գնաց, իսկ ևս առւն վերադարձաւ:

(Նարունակելի)

¹⁾ Գիւղական ժողովրդի մէջ ընդհանրապէս սովորութիւն կայ եթէ մէկը զաւակ չի ունենում, կամ թէ ունեցածը մնում է, այն ժամանակ ծնողը ուխտում են զեռ չծնւած երեխան նուիրել որե է սրբի ծառապատճեան, որից չետու սրբանւէր տղան կրում է սոյն սրբի անունը: Երեխան մազերը չեն կարում, մինչև մի որոշեալ ժամանակ. իսկ երբ ժամանում է երեխապին տանում են համանուն սրբի դուռը և այստեղ լրանում են գլխի մազերը:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԳԱՄԱԼԵԱՆՑ, Ա. — Ասուած աղքատի կերպում, զբոյց: Թիֆլիս,
տպ. Յ. Մարտիրոսեանցի 1896թ. 37էջ, գինն է 20 կոպ.

Գրքովի վերջումը հեղինակը աւելացնում է իւր կողմից. «այս զրոյցը խել եմ Գանձակի, 1892թ. մի 70 տարեկան ծերունուց (զարգար Առաքել), որը պատմել է նոյնակչ «Ծէն թագաւոր» զրոյցը: «Մենք ուրախ ենք հեղինակի ալդ խոստովանքի համար, որովհետև զրոյցի նիւթը պատկանում է ժողովրդին և հեղինակը իրանձիք սեփականացնում ալդ նիւթը, հեղինակի գործը կազանում է ալսահղ նրա մէջ, որ նա պատրաստի նիւթը վերածել է գեղարւեստական զրոյցի: Մեզ համար հետաքրքրական կը լինէր իմանալ, թէ ինչ ձեռվ է պատմել ծերունին ալդ զրոյցը, և պ. Քամալեանցը որքան է շեղւել նիւթից կամ որքան հաւատարիմ է մնացել իւր լսած պատմութեանը: Բայց դա մեր կողմից միայն ցանկութիւն է, որ չափնում ենք, և ոչ պարաւորիչ հեղինակի համար: Իհարկէ, քանասէրը միշտ կարող է օգտւել ժողովրդից լուած երգերից և հեքիաթներից, բայց ճշմարիտ է և այն, որ այդ երգերը և հեքիաթները չպիտի

կորչեն, այլ պիտի դառնան գրակակաթեան սեփականութիւն իրանց կատարեալ հարազատութեամբ:

Բայց դիմենք ուղղակի պ. Գամալեանցի պատմութեանը Զբոյցի նպատակը շատ պարզ է: — «Հալալ աշխատանքի» մեծարանքը: Պատմութեան սկզբում հալալ մարդու մարզը մեռնելիս ասում է իւր որդուն: «Իս քեզ հալալ քրտինքով եմ մեծացրել, դու էլ, որդեակ, արդար աշխատանք սիրիք: Տնանկից, չքառից մի զղկիլ, հացիդ պատառը նրա հետ կիսիր: անհոգ կաց, Ասուած մեծ է, սոված չես մնալ: Լաւութիւն ար ս, ջուրը գցիր, ձուկը չիմանաչ, Ստեղծողը կ'իմանաչ», Միտքը գեղցիկ է, բովանդակութիւնը հարուատ և համապատասխան զրոյցի մէջ արծարծւած գաղափարին: Հասարակ լեզուն և ոճը, պատմելու միամիտ եղանակը — մօտ են ժողովրդականին: Զբոյցը ընդհանրապէս չաղողած է և ապացուցանում է հեղինակի չնորհքը: Նորա մասին երկար խօսելու մենք մտադրութիւն

չունինք, Արտօնեղ մենք կամենում ենք
մասնացուց անել դրածքի միայն
մի թերութեան վրաց որովհետեւ ա-
ռանց աղդ թերութեան զբացը աւելի
յաջողած կը լինէր, Այդ թերու-
թիւնը նորա խրատական մասն է:
Խրատներին և առհասարակ բարուա

կան խորհրդածութիւններին մնծ
տեղ է տրւած պատմութեան մէջ,
և գորա շնորհիւ բաւականին նւա-
զում է պատմութեան կենդանու-
թիւնը և հետաքրքրութիւնը:

Լ. Մ.

ՇՄԻԴՏ. — «Առաջին վիշտ», թարգմանութիւն ռուսերէնից. Թիֆ-
լիս. տպ. Յ. Մարտիրոս! անցի. 1896 թ. 64 էջ. գինն է 10 կոպ.

ԱԱռաջին վիշտը» մեր մանկական
գրադարանի ընտիր գրքերից մէ կը
կը լինիր, Երեխաները կը կարգան
արս գիրքը լարւած ուշադրութեամբ
և գուցէ շատերը զգան անպիսի
խոր վիշտ, որպիսին չեն զգացել
նոյն խոկ իրանց կեանքի մէջ: Ազն-
քան զօրեղ է պատմութեան գործած
տպաւորութիւնը: Աչս պատմութեան
սկիզբը մի իդիլլիա է, իսկ վերջումը
նա փոխում է ողբերգական տեսա-
րանի: Մի հարուստ վաճառականի
տանը ծաւագում է մի աղախին իւր
վեց տարեկան աղջկաչ հետ: Մայրը
աշխատում է խոհանոցի մէջ վաղ
առաւօտից մինչև գիշերը: Նորա աղ-
ջկը, որը միշտ ականատես է իւր
մօր չարքաչ կեանքին, ակնուամե-
նախիւ բախտաւոր և ուրախ է, որով-
հետեւ զգում է իւր մօր մի սիրող և
հոգատար եակի ներկացութիւնը:—
Մայրը հիւանդանում է և մեռնում:
Փոքրիկը մնում է մենակ և որբ:
Առաջ նա չէ հասկանում մահւան
խորհուրդը, չեսով կամաց կամաց
սկսում է հասկանալ, որ էլ չէ լսելու
իւր մօր ձանը, ել չէ հանգստա-

նալու իւր մօր գրկում, և ապա նա
տեսնում է, որ ամեն բան վերջա-
ցել է, և ինքը մենակ և անտէր է
միացել աշխարհում: Անքան սրտա-
ճմիկի է որբացած աղջկաւ դրութեան
նկարագիրը, որ կ արելի էր նոյն խոկ
մեղադրել հեղինակին խստութեան
մէջ, եթէ միայն գրքովի էական
գաղափարը քաւիչ լինէր: Այս աղդ
գաղափարը ուրիշ բան չէ, եթէ ոչ
սկը և համակրութիւն ներշնչել ըն-
թերցողի մէջ զէպի աշխատառը,
հալալ և համեստ դասակարդը: Ապա
թէ ոչ, ինչ հարկաւոր էր տանշել
երեխաներին, նկարագրելով նոցա
առջեն այն անձանց կողուստը, որոնց
սիրով շատերը գեռ են բազդաւոր են?՝
Դա կը լինէր անանդի խստաւորու-
թիւն հեղինակի կողմից: Դիրքը կար-
դալուց լնո՞ւ մանուկը կարող է լուս-
ւել վշտանալ, մինչեւ մոգամ՝ ար-
տասել բաց այդ վշտի և արտա-
սուքի մէջ կ'ազնւանակ և կը մաք-
րի նորա սէրը զէպի այն մարդիկի
որոնք ապրում են աղքատութեան
մէջ, բայց իրանց ճակատի քրտինքով:

Լ. Մ.

Տիմիրեան, Կ. «Աւ ծովու ռուսական եզերքը»: (Արտատապւ. «Հանդէս Ամսորիալց-ից»): Վիեննա, Միհթարեան տպարան. 1895 թ. 189
էջ. գինն է 2 ֆրանկ:

<p>Մեր ճանապարհորդական գրա- կանութիւնը, պէտք է խոստովանել, շատ և շատ աղքատ է, չնակած, որ բանահիւսութեան այս ճիւղը իւր բազմակողմանի բովանդակութեամբ ամենահետաքրքրական և օգտակար ժիւղերից մէկն է: Ահա ինչու մա- նաւանդ գնահատելի է դառնում մեզ համար ճանապարհորդութեան վերա- բերեալ փոքր ի շատե լուրջ գրւած- քը, որ երեսում է մեր զրականու- թեան մէջ: Տիւրեանի աշխատու- թիւնը այս ծովու ռուսական ե- զերքը մի հիմնաւոր և տեղեկու- թիւններով հայտնատ ուսումնասիրու- թիւն է: Հեղինակի զիտողութիւն- ները վերաբերում են այս բոլոր քա- ղաքներին և տեղերին, որոնք գտըն- տում են Սև ծովի ռուսական ափերի վերականգնութեան մինչ Օդէ- սա Գիրքը կարդալիս՝ մեր աչքի առջև գալիս անցնում են իրար ե- տելից նոր-նոր քաղաքներ և բնու- թեան նորանոր ահսարաններ: Իւրա- քանչիւր քաղաքի կամ աւանի մա- սին հեղինակը հաղորդում է բազ- մազան տեղեկութիւններ՝ պատմա- կան, ազգագրական, կրթական և ալին, նոցա գիրքը, ներքին կեանքը,</p>	<p>առաջադիմնելու նորաստաւու կամ ամնպատ պայմանները, առևտուրը, հասարակական հաստատութիւնները և ուրիշ շատ տեղեկութիւններ առա- տօրէն կարելի է գտնել զրքի մէջ: Մանաւանդ երկար կանգ է առնում հեղինակը Բաթումի և ևս առաւել Օդէսալի Նկարագրութեան վերաբ Եւ աղջ, ի հարկէ, բնական է: Օդէ- սան և Բաթումը ամենամեծ կարե- տղութիւն են ներկայացնում ծովա- կեակ բոլոր քաղաքներից, որոնք գտնուում են Սև ծովի եզերքին:</p> <p>Տիւրեանի աշխատութիւնը գրւած է պարզ լեզով և սահուն ոճով և կարդացում է հետաքրքրութեամբ: Հեղինակի արժանաւորութիւններից մէկն էլ ան է, որ նա շատ չէ զրա- ղիցնում ընթերցողին իւր անձով, մի հանգամանք, որ կարող էր ձանձ- րալի զարձնել զրւածը: Մենք խոր- հուրդ կը տանք կարդալ այս գիրքը, Հարստացնելով ընթերցողի տեղե- կութիւնների պաշարը, նա կարող է կրկնապատիկ զարձատրել նորան իւր վերակ գործ դրած ժամանակի փոխարէն:</p>
---	---

Լ. Մ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ենցեալ անգամ յայտնեցինք որ հիւպատոսների կողմից յայտնի կացուցւած սպանւածների թիւը շուրջ 25.000 է: Խօսւում է թէ միսիոնարների տեղեկութիւններով իսկական թիւը 60.000-է: Ո՞վ կարող է ներկայ բուրէում այդ ամենը սոսուգել: Հաշւում են օրւայ հացի կարօս անօդնական հայերի թիւը 200.000 հոգի: Ահա այդ թշւառներին օգնելն է որ կազմում է ներկայիս ընդհանուր հոգսը: Եթէ կայ մի միսիթարական երևոյթ—այդ այն է որ օգնութեան անհրաժեշտութիւնը ընդհանրապէս զգացւած է ու միայն հայերից, այլ և շատ օտարներից: Որքան է իսկական թշւառութեանը օգնում այդ ամենը—դժւար է այսօր դրական բան ասել: Սարսափի զգացմունքը դեռ չի անյայտացել և դեռ երկար կը մնայ: Հայութիւնից այն ինչ ընդհանուր կոտորածը չկարողացաւ խլել—այդ սպառնում է լրացնել բռնի հաւատափոխութիւնը, որը այնքան մեծ ծաւալ է սոտացել, որ Կ. Պոլսի եւրոպական գեսպանները առանձին մոտածողութեան գործ են դարձել և սուլթանին առարկութիւններ արել այդ մասին: Ոեֆորմների թրքական փերահսկող յանձնաժողովը անգործ է. երկու ամիս է որ յանձնաժողովը քրիստոնեայ մոաւիններ է նշանակել—բայց մինչ այժմ նոքա իրենց պաշտօնատեղին չեն ուղևորւել: Այդ յանձնաժողովի նախագահ նշանակւած էր Շէֆիկ փաշան, որի դէմ դեսպանները պարող համարեցին բողոքել. առաջարկելով նորա տեղ Սալոնիկի նախկին նահանգատետ Զիհնի փաշային, որը ստկայն չընդունեց եղած առաջարկը: Կը տեսնենք թէ դորանով ինչ բան կը փոխւի: Պիտի հնար լինի արդեօք որ բռնի մահմեդականացածները կրկին իրենց հայրենի եկեղեցու գիրկը վերադառնան. տեղ-տեղ փորձեր եղած են:

Զէլթունի ապստամբութիւնը վերջացած է; Հաշտութեան սրայանները յայտնի են:

Ստորև զնում ենք այս ամեն ինդիրներին վերաբերեալ կարևորագոյն նիւթերը:

Ա. Ա.

Մարտ 4-ին (նոր տոմար) յարուցւեց Անգլիայի Համայնքների ժողովում Հայաստանի մասին վիճաբանութիւնը, որը վաղուց ազգարարւած էր: Նիստի սկզբում պ. Քըրզոն, որը արտաքին գործերի մինիստրի օգնական է, ծանուցել էր որ անգլիական փոխհայատուներ են նշանակւած Մուշ, Սեբաստիա (Սիւաս) և Խարբերդում, և վարձովի կայարաններ են հաստատւած Դիարբեքիր և Աղանա: Դորանից քիչ յետոց արմատական պատգամաւոր Սամուէլ Սմիթ, պաշտպանութեամբ պահպանողական սիր Ջոհն Քեննէւէյ (Kennaway), ներկայացրեց հետևեալ առաջարկը.

«Համայնքների ժողովը արտայայտում է իւր խորը համակրութիւնը Ասիական Թիւրքիայի քրիստոնեանների տանջանքների համար և ողբում է անաջողութիւնը այն ջանքերի, որ արւեցին այդ գժեախտների օգտին (Անգլիայի) վերջին կառավարութեան և ներկայ կառավարութեան կողմից. բայց նա յոց ունի որ նոր ջանքեր կ'անւեն նոցա վիճակը բարւոքելու համար»:

Քըրզոնը խօսք է ուզում, թագուհու կառավարութեան անունից, և յախնում հնտեսեալը.

«Կառավարութիւնը ընդունում է Սմիթի առաջարկութիւնը և վկայում է որ հեռու են իրարից կառավարութեան զուտ պլատոնական ֆրազէօլոգիան և անցեալ աշնան բուռն յայտարարութիւնները: Այլ ևս չեն պահանջում, որ Դարդանէլը ուժով անցնեն, որ յետ կոչենք մեր դեսպանին, գահից վայր դցենք սուլթանին. այս բոլոր ցնորամիտ առաջարկները մոռացութեան են արւած, և ներկայ կառավարութիւնը կարող է արձանագրել Հայերին յղած համակրութեան մի արտայայտութիւն, քանի որ այլ ևս չեն պահանջում, որ այդ համակրութիւնը վկայւի զինու միջամտութեամբ:

«Նախընթաց կառավարութեան՝¹⁾ վրայ է ընկնում պատաս-
« խանատութիւնը որ յարուցեց ռեֆորմերի խնդիրը և Անգլիան
« մոցբեց մի կոմբինացիացի մէջ Ֆրանսացի և Ռուսիացի հետ 1.որդ
« Սալիսբիւրին, կառավարութեան գլուխ անցնելով, տեսաւ որ այդ
« գործակցութիւնը չունէր ցանկալի ներգործութիւն և ջանաց
« եւրոպական կոնցերտը վերականգնել:

«Ինչու եւրոպական կոնցերտը այդքան քիչ բան անել կարու-
« զացաւ: Յացարութիւնը միւս պետութիւնների բռնած դիրքի
« մէջ պիտի որոնել: Աւստրիան կամենում էր որ գործը կատարի
« սուլթանի թուղթառութեամբ և համաձայնութեամբ. Ռուսիան կա-
« մենում էր թողնել որ գրգռմնաքը հանդարտի և համբե-
« րութեամբ սպասեն որ սուլթանը կատարի իւր խոստումները ու-
« Փորմները իրագործելու համար: Անգլիան գտնւեց դէմ ու դէմ
« այն պետութիւնների ընդդիմադրութեան, որոնք թէ իրենք ան-
« հատապէս և թէ միւսների հետ միասին հակառակ էին զէնքի
« ոյժի գործադրութեան և որոնք վճռած էին ինչ գնով էլ որ լինի
« խանգարել եւրոպական մի պատերազմ:

«Անգլիացի կողմից կղզիացած մի գործողութիւն անդորձնա-
« կան կը լինէր, որովհետեւ դա միայն քաղաքականութեան խնդիր
« չէր, այլ և աշխարհագրութեան և տարւաց եղանակի խնդիր էր:
« Եւ, բացի այդ, ոչ մի ապացոյց չկայ թէ այդ առանձնակի գոր-
« ծողութիւնը, որ կարող էր եւրոպական պատերազմ յարուցանել
« կարող լինէր տեսական կերպով բարելաւել քրիստոնեաց բնակիւ-
« ների վիճակը:

«Ինչ վերաբերում է այն բանին, որ Ռուսիային հրաւիրէին
« գործելու, այդ պետութիւնը չէ որ յայտարարեց (Սալիսբիւրիի
« մինխստրութեան առաջին շաբաթն իսկ) որ նա ամեննեխն չի
« մոտածում ացպէս վարելու: Իսկ թէ փորձ անւէր Ռուսիան
« գործել տալու համար Միջերկրականում մի նաւահանգիստ տալ
« նրան, հարց է թէ որ աղդը պիտի վերցնէր այդ նաւահան-
« գիստը Զարին նուէր տալու համար!

«Եզրակացութիւն. բրիտանական կառավարութիւնը ամեն բան

¹⁾ Աւստրիան ազատամիտ Ռողբերիի մինխստրութեան.

« արաւ Հայերին օգնելու համար; Նաև ապագայում՝ նա անփոլթ չի գտնվիլ նոցա վերաբերմամբ, բայց նա չի կարող աւելի հեռու գնալ քան ինչ անում է, քանի որ նա չի կարողանում համոզել միւս պետութիւնները որ նորա հետ միասին գործեն»:

Քըրզնի ճառից յետոց խօսեցին յայտնի ճանապարհորդ և հետազոտող Ստենյէց ու պ. Բրայս, որից յետոց Սմիթի առաջարկը ընդունեց առանց քւէարկութեան:

Այս օրերս հրատարակւեց Հայաստանին վերաբերեալ երրորդ կասդյա գիրքը»: Առաջին «Կապոյտ գրքում» ամփոփւած են Սասունի կոտորածներին վերաբերեալ պաշտօնական տեղեկութիւնները. երկրորդում ամփոփւած են պետութիւնների մէջ տեղի ունեցած դրագրութիւնները Փոքր-Ասիայի ռեֆորմների հարցի մասին. իսկ վերջին օրերը հրատարակւած երրորդ «Կապոյտ գրքում», բայց այդ գրագրութիւնների շարունակութիւնից, տպւած են նաև օսմանեան կայսրութեան զանազան տեղերում գտնւող բրիտանական հիւպատոսների զեկուցագրերը և վերջապէս կոտորածների վիճակագրական ցուցակը, որը կաղմել է վեց եւրոպական դեսպանների պատշիրակների յանձնաժողովը, հիմնւելով հիւպատոսական տեղեկագրերի վրա: Այդ վիճակագրութեան համաձայն, սպանւածների թիւը, որ ապացուցւած է անհերքելի փաստերով, հասնում է 25,000-ի: Սըր Ֆիլիպ Կէրրի իր 1895 թ. յունւարի 30-ի հեռագրով յայտնում՝ է բրիտանական մինիստր-նախագահին, թէ զոհերի թիւը չէր կարելի ճշդութեամբ որոշել, հաստատ տեղեկութիւնների պակասութեան պատճառով, մանաւանդ Խարբերդի և Վանի նահանգների վերաբերմամբ:

Իշխան Լոբանովի կարծիքը հաղորդւել է լորդ Սոլսբիւրիին Պետերբուրգից, 1895 թ. նոյեմբեր 4-ի հեռագրով. ոռւսաց արտաքին գործերի մինիստրը յայտնել է, թէ չնայելով, որ ռեֆորմների մասին իրազէն հրատարակւել է, բայց վեռ երկար ժամանակ պէտք է սպասել մինչև կը բարւոքւի այն ցաւալի վիճակը, որ առաջ է եկել մուսուլմանների և հայերի աղիտացիացից: Այդ աղիտացիան

մինիստրը համարում է բնական հետևանք գործողութեան այն խիստ ձևի, որ ցոյց արւեց հայոց հարցում:

Իշխան Լոբանովը—ասաւ ած է հեռագրի մէջ—չծածկեց իւր կարծիքը, թէ նա գլխաւորապէս Անգլիացին է համարում պատասխանատու գործերի ացդ տեսակ վիճակի համար, այն պատճառով, որ հայ կոմիտէտի գործունէութիւնը քաջալերում էին Անգլիացի նշանաւոր անձերից շատերը:

Սըր Ֆիլիպ Կէրրի նոյեմբերի 25-ի հեռագրով հաղորդում է, թէ ինքը առաջարկեց զեսպանների ժողովում՝ պնդել պատասխանատու առաջին մինիստր նշանակելու մասին: Ռուսաց զեսպանը հակառակւեց դրան այն հիման վրայ թէ առաջին՝ սուլթանը չի համաձայն էր և երկրորդ՝ այդպիսի մի պահանջ անելը կը նշանակէ միջամտել Թիւրքիացի ներքին գործերին:

Բարոն Բլանի հոկտեմբերի 26-ին բրիտանական զեսպանին ուղարկած հեռագրի մէջ հաղորդում է, թէ Անգլիացի, Ֆրանսիացի և Ռուսաստանի միաբան գործողութեան շրջանը վերջացրած պէտք է համարել և էֆորմների մասին սուլթանի արած խոստումով, բայց որովհետեւ Փոքր.Ասիացից դեռ էլի վատ լուրեր են հասնում, ուստի Խալիֆան, Աւստրիացի և Գերմանիացի հետ, պէտք է միջնորդէ Բ. Դրան առաջ հայերի համար:

Խարբերդի և Վանի նահանգների գոհերի թւի մասին, որի վերաբերմամբ սըր Ֆիլիպ Կէրրի յայտնում է, թէ դեռ Ֆիշը աեղեկութիւն չկան, այժմ հարատարակւած են հետևեալ տեղեկութիւնները և նոյնոնի լրագիրներում:

Յուցակը կազմւած է 1896 թ. յունւարի 15-ին. Նրա մէջ առաջ են բերւած հետևեալ ֆակտերը. Խարբերդի նահանգում և նրա 59 գիւղերում, Արարկերում, Մալաթիացում, Էգինում, Կարան.Մարտանում, Տէրսիմում և Բալուում ու նրանց գիւղերում՝

Սպանւած քրիստոնեաների թիւը. 29,544

Այրւած , , , 1,383

Սպանւած ուսուցիչների, քարողիչների և քահանաների թիւը 51

Սովոր և ցրտից մեռածների թիւը 3,266

Որոնք գտնւել են մեռած դաշտերում և ճանա-	
պարհներում	4,330
Որոնք վախից են սրտաճաք եղել	760
Մեռածների գումարը . . .	39,334
Վիրաւորւածներ	8,000
Այրւած տներ	28,562
Աւերւած եկեղեցիներ, վանքեր և դպրոցներ . .	227
Անպատած կանաչք և աղջիկներ	5,530
Բռնի կերպով ամուսնացրած թիւքերի հետ . .	1,532
Բռնի իսլամացրած	15,179
Այդ բոլորը կատարել է 1895 թ. հոկտեմբերի 1-ից մինչև	
1896 թ. յունիարի 15-ի ժամանակամիջոցում:	

Զեյթունի հաշտութեան պայմանները հետևեալներն են.

- 1) Ընդհանուր ներում: 2) Զեյթուն պիտի ունենայ, ընդունւած թվորմների հիման վրայ, քրիստոնեայ կառավարիչ և տեղական միլիցիա, որը, ի հարկէ, պիտի բաղկանայ քաղաքի հայերից.
- 3) Նարժումին գլուխ կանդող ոչ-տեղացի անձերը պիտի չյանձնւեն, այլ միայն պիտի աքսորւ են հիւպատոսների հոկողութեան տակ.
- 4) Զեյթուն ապաստանւողները, որ հաշւում են 13.000 հոգիի չափ, պիտի վերադառնան իրենց տեղերը և կառավարութիւնը հանդիսաւոր խոստում պիտի տայ նոցա ոչ անձին և ոչ ինչքին դիսլելու.
- 5) Հայերը իրենց զրաւած պատերազմական զէնքերը պիտի յանձնեն թիւբք կառավարութեան. նոյն բանը պիտի անեն սակայն նաև դրացի մահմէղական գիւղերը, որոնք կառավարութեան գիտակցութեամբ կամ անդիտակցութեամբ տէր են պատերազմական զէնքերի: Թէ քրիստոնեաները և թէ մահմէտականները միայն որսորդական զէնք կրելու ազատ պիտի լինին:

Զեյթունում գտնւող եւրոպական երեք հիւպատոսները հեռագրեցին (փետրւարին) իրենց գեսպաններին կ. Պոլսում, թէ մի զարհուրելի թշւառութիւն և չքաւորութիւն է տիրում 8000 համերի մէջ: Քաղցած, հազիւ ծածկւած որ և է վատ փալասներով, հիւանդները և վիրաւորները՝ մեռածների կողքին, ամենքը իրար

դէմ տւած մի փոքր տաքութիւն ստանալու համար—նոքա ներ-կայացնում են ամենաաղեկոտոր տեսարանն զետևապէս Կ. Պոլսի զեսպանները վճռել են ստորագրութիւն բաց անել այդ խեղմերի օգտին:

Տեղական իշխաննութիւնները աշխատում են Զէցթունից, օգ-նութեամբ և վերահսկողութեամբ Անգլիացի, Ֆրանսիացի և Իտա-լիացի հիւպատոսների՝ տեղափոխել դէսպի Հալէպ այն Հայերին, որոնք ասպաստաննել են Զէցթունում, բայց որոնք այնուեղացի չեն: Հիւանդնները ենթարկւելու են բժշկական քննութեան և խնամւե-լու են մի հիւանդանոցում, որը ձեռաց շինւելու է ինչպէս և լինի: Երեք մահմեդականներից և երեք քրիստոնեաններից բաղկացած մի յանձնաժողով վպիտի վերահսկի այս գործողութիւններին, պիտի նոցա-կերակրի նահանգի գանձարանից և ժամանակաւորապէս բնակ-ւելու տեղ տայ Անթապում և Մարաշում այն զիւղացինե-րին, որոնց գիւղերը աւերւած են:

Խնդիր կայ Մարաշում Ֆրանսիացի փոխ-հիւպատոս հաստա-տել, ինկատի ունենալով որ այդ շրջանում կաթոլիկ միսիոնար-ների բազմաթիւ վանքեր և հաստատութիւններ կան:

ԴԵՊՔ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Հայոց բարեղործական ընկերութեան ալս տարւաէ ընդհանուր ժողովը կոչւած էր, սովորական խնդիրներից դուրս, զբագւելու գնդապւտ պ. Խահական Մելիք-Հայկագեանցին ընկերութեան պատույ անդամ ընտրելու խնդրով:

Խնդրի չարուցանողը Ընկերութեան Ախալցխավի ճիւղն էր, որի վարչութեան նախագահն է եղած պ. Մելիք-Հայկագեանց տասը տարի շարունակ:

Սա անկարենոր մի հանգամանք չէ, որ Բար. Ծնկ. Ախալցխավի ճիւղը կամ նորա վարչութիւնը չակտնի է Ընկերութեան կենտրոնին (Խորհրդին) և կենտրոնի ընդհանուր ժողովներին իւր զարմանալի չամառութեամբ՝ չարմարելու ընկերութեան կանոնադրութեանը: Կենտրոնը հաշվւ է պահանջում նորանից՝ չեն տալիս, ուշացնում են, ձգձգում, խանգարում: Երբ կենտրոնը իւր և ճիւղերի նախահաշիւմերն է ներկայացնում ընդհանուր ժողովին—խորհրդի քարտուզարը, գէթ անցեալներում, չաճախ պէտք է չափանի որ Ախալցխավի ճիւղի նախահաշիւը դեռ չի ստացւած, անակած որ գրել ենք, պահանջնել ենք և ալին:

Եւ կամ ինքնագլուխ կերպով մի ուրիշ անկանոնութիւն կը կատարի և չի կամենաւ հեշտութեամբ հպատակւել խորհրդի ազգարարութեան: Մի որ և է զլիացաւանք Ախալցխավի ճիւղը կը պատճառի ընդհանուր գործին, առանց դորան անկարելի է:

Եւ իւր աւանդութիւնից Ախալցխավի ճիւղը չուզեց լեռ կանգնել նոյն խոկ մի ամենափափուկ խնդրում, ինչպիսին է մէկին պատւոչ անդամ ընտրելու դործը:

Հստ կանո աղբութեան՝ պատւառը անդամ ընտրողը միայն կենտրոնի ընդհանուր ժողովն է (կանոնադր § 44). իսկ դուրս պարզ պատճառն ան է, որ կանոնադրութիւնը ճանաչում է միայն ամբողջ ընկերութեան պատւառը անդամ, և ոչ պատւառը անդամ ալս կամ այն ճիւղի:

Միւս կողմից ընկերութեան տեղական վարչութիւններին տրւած «հրահանդի» սէջ որոշւած են այն խնդիրները, որոնք կարող են ենթա-

կաէ լինել տեղական վարչութիւնների և տեղական ընդհանուր ժողովների քննութեանը և որոշումներին (կարդացէք «Հրահանգի» § 5. ից սկսած մինչև § 16 և մասնաւորապէս § 15, ուր որոշած են տեղական ընդհանուր ժողովների պարապմանց առարկաները):

Այդ չօդւածները կարդալով՝ դուք կը գաք աչն համոզման, որ տեղական վարչութիւնները և տեղական ընդհանուր ժողովները կոչումն չունին զբաղվելու ընկերութեան պատւաւոր անդամներ ընտրելու խնդրավ:

Ամեն մի ճիւղի անդամ աչդ դէպում ունի աչն իրաւունքը, ինչ որ չունի ճիւղի վարչութիւնը և ճիւղի ընդհանուր ժողովը, իբրև պաշտօնական մարդիններ, իւ աչդ ըստ երեսովին զարմանալի բանը մնելուում է շատ պարզ կերպով. ճիւղի ամեն մի անդամը միաժամանակ անդամ է ամբողջ ընկերութեան, հետեապէս և կենդրունական ընդհանուր ժողովների, ուր նա իրաւունք ունի ձանց տալու, և իբր ընկերութեան անդամ՝ նա իրաւունք ունի Խորհրդին առաջարկութիւններ անելու և Խորհրդի միջոցով ընդհանուր ժողովի առաջը բերելու իւր առաջարկը:

Բաց որովհետեւ Ախալցխափի ճիւղի աւանդութիւնների մէջ չկա կանոնադրութեան շատ աւելի որոշ պահանջներին ինքնարերաբար ենթարկելը, ուր մնաց որ նոքա հետեւէին մի կանոնի, որը ուղղակի չէ աւած կանոնադրութեան մէջ, այլ մտքով միայն պիտի հասկանալ:

Եւ ահա Ախալցխափի ճիւղի վարչութիւնը սկս ամ է զբաղել Կովկասի Հալոց Բարեգ. Ընկերութեան պատւաւոր անդամ ընտրելու խընդուով, որ իւր գրծը չէ, նա առաջարկում է նոխնը տեղական ընդհանուր ժողովին, որի գործը չէ նոխնպէս աչդ մասին որ և է որոշում կալացնելը իբրև մի առարկաէ, որը դուրս է կանոնադրութեամբ տեղական ընդհանուր ժողովներին լատկացրած սահմանից. և աչդ տեղական ընդհանուր ժողովն էլ միաձայն հաւանութիւն է տալիս իւր վարչութեան առաջարկութեան համար՝ պ, Մելիք-Հավկազեանցին ընտրել պատւաւոր անդամ Կովկասի Հալոց Բար. Ընկերութեան:

Որ տեղական վարչութեան և տեղական ընդհանուր ժողովի որոշումները հրապարակական բնաւորութիւն ունէին, աչդ պարզ է, որպէս պարզ է և աչն, որ աչդ որոշումների մասին տեղեկութիւն էր տրւած նաև պ. Մելիք-Հավկազեանցին:

Այժմ եկէք ու պնդեցէք, թէ պատւաւոր անդամ ընտրողը կենդրանական ընդհանուր ժողովն է....

Երբ որ մի տեղական ընդհանուր ժողով մէկին պատւաւոր անդամ ընտրելու խնդրի համար հրապարակական եւ պաշտօնական նիստ է կայացնում և ապա իւր միաձայն որոշումը կենդրունին ներկալացնում—ինդիրքը որ ընդհանուր ժողովի քննութեանը ենթարկւի, ապա աչդ խնդիրքը խնդիրք չէ, այլ սպառնալիք. Դորանում համոզւելու համար բաւական է եթէ քննէք

այն գեպքը, երբ ընդհանուր ժողովը — այդոիսի մի պատւի խնդրի համար — մերժէր Ախալցխավի տեղական վարչութեան և տեղական ընդհանուր ժողովի առաջարկը... մի զեպք, որ հեշտութեամբ կարող էր պատահել, քանի որ պ. Մելիք-Հայկազեանցի գործունէութեան հետ կենտրոնի ընդհանուր ժողովի մեծամասնութիւնը առաջին անգամ նէնց այդ ժողովումն էր ծանթանում:

Այն եղանակով ինչպէս Ախալցխացիք էին տարել այդ զործը Շես դիմումամբ եմ ախալցխացիք ասում, որովհետեւ տեղական վարչութիւնը հնարաւոր եղածն արել էր իւր լարուցած խնդիրը ամբողջ Ախալցխավի համար պատւի խնդիր շինել), ընդհանուր ժողովի կողմից մերժումը պիտի ընդունւէր իրեւ Ախալցխացիներին տւած վիրաւորանք: Զարմանալ պէտք է ափմ, որ ընդհանուր ժողովի այն անդամը, որը ազ կարծիք ունի պատւի անդամութեան մասին, պէտք է պատրաստ լինէր վիրաւորանքները լսելու ժողովի մէջ ներկայ ախալցխացի անդամների կողմից, թէ ժողովում և թէ ժողովից զուրս. զարմանալ պէտք է, որ այդ նոյն վիրաւորանքները նաև Ախալցխացիք քաղաքից նոքա ալիսի հասցնէին նաև մամուլի մէջ՝ իրենց հալրենակիցների առաջ հրապարակով պարձենալու համար, թէ ահա ինչ պէս մենք գիտենք մեր՝ ախալցխացիներին՝ պատիւը պաշտպանել և պախարակել ընդհանուր ժողովի այն անդամներին, որոնք համարձակեցին մոռանալ թէ ինչ քաղաքի հետ էին կուտւմ նոքա...

Կարդացեք, օրինակ, Սրճագանքի № 28 ում տպւած ընկերութեան Ախալցխավի ճիւղի վարչութեան անդամ Յ. Յակոբեանի նամակը, որը մինչև իսկ իւր պաշտօնը մոռանալով՝ ողակի ստորադրել է Ախալցխավի վարչութեան անդամու: Ազդպէս ստորագրելով պ. Յ. Յակոբեանը ոչ այնքան կամեցել է կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. Ախալցխավի ճիւղը նոյնացնել Ախալցխացիք քաղաքի հետ և ճիւղի վարչութիւնը՝ քաղաքի վարչութեան հետ (ուպրաւաւ), որի անդամը չէ նա անշուշտ, ազ ալդպէս ստորագրելով՝ նա կամեցել է միան ապացուց տալ որ ընկերութեան գործերի մէջ նա հշտութեամբ ենթակայ է լինում այն բանին, որ երբեմ անդիւտ թիւն է կոչւում ոչ միայն «միծ-մեծ մարդոց» ազ և մասնաւանդ «միջնակարգ ուսումնարանների սաների», գրագէտ գործակատարների» և նոյն իսկ անզրագէտների սովորական բարբառով...

«Ախալցխավի վարչութեան» ալդ անդամը, ուրեմն, ոչ միայն պատրաստ է իւր համաքաղաքացիների պատիւը «պաշտպանել» ընդհանուր ժողովի ալս ու այն անդամի զէմ, ազ նոյն իսկ քաջութիւն ունի հրապարակով իւր արհամարհանքն լաւանել զեպքի ընդհանուր ժողովը, ի զեպս եթէ աս կամենալու լինէր ընկերութեանը լաւ ծառապած մի անդամին, ինչպէս է պ. Մելիք-Հայկազեանը, հանդիսաւոր կերպով իւր շնորհակալութիւնը լավա-նել և նորան շնորհակալութեան թուղթ մատուցանել կենտրոնի միջոցով,

«Վարչութիւնս, լաբոնեց նա, հրաժարում է ձեր չնորհակալութիւններից»:

Ահա ավղպիսի պատկառանք ունի ընկերութեան մի ճիւղի վարչութիւնը զէպի Ընկերութեան ընդհանուր ժողովը, ան ժողովը, որ հաստատութեան ամենաբարձր ատեանն է...»

Այժմ եկէք ու զարմացէք ան գանգատների վրայ որ Կենտրոնը լաճախ ունեցել է ընկերութեան Սխալցխալի ճիւղի վարչութեան վրայ Միք զարմանալ. ազդ վարչութիւնը, ինչպէս տեսնում էք, նաև ընդհանուր ժողովի վճիռների վրայ թքել գլուէ, եթէ իւր ասածը անց չկենաց չնալած որ ընդհանուր ժողովը նաև անկախ այս կատ ան ճիւղի ցանկութիւնից՝ կարող է իւր չնորհակալութիւնները լատնել ուժ որ արժան դատէ:

«Վարչութիւնս հրաժարում է ձեր չնորհակալութիւններից»... Կարծես թէ չնորհակալութիւն լայտնելու առաջարկը վերաբերած լինէր ոչ թէ ընկերութեան պատւական և բեղմնաւոր անդամ պ. Մելիք-Հայկացեանցին ազ ընկերութեան Սխալցխալի ճիւղի վարչութեան, որ վերջնս իրաւոնք ունենալը հրաժարութիւն ապաւից... Ինչ զարմանալի հասկացողութիւն ընկերութեան անդամների, ընկերութեան տեղական վարչութիւնների և Կենտրոնի ընդհանուր ժողովի իրաւոնքների մասին. և վերջապէս, ինչ տոր զաղափար ընդհանուր ժողովի մասին, որի անսովոր կերպով և միաձան արտավաճած չնորհակալութիւնը ալղքան քիչ գին պիտի ունենալ նոյն ազդ ընկերութեան բազմաթիւ ճիւղից մէկի համար...»

Եւ ինչիցն էր անքան միծ աղմուկը. ինչու Ընկերութեան Սխալցը ինչպէս ճիւղի վարչութիւնը անքան լուզում էր, երբ ընդհանուր ժողովում ձակներ էին լրւում ոչ չօգուտ նորա առաջարկի անդաման ընդունելութեան: Այդ պարզ է. զա ան պատճառով էր որ պ. Մելիք-Հայկացեանցին պատւաւոր անդամ ընտրելու խնդիրը նորա բարեկ էին ու խօժմեր Մինչդեռ ընդհանուր ժողովի անդամներից շատերի համար խնդիրը լոկ ան էր որ ընկերութեան մի վաստակաւոր անդամին հանդիսաւոր կերպով բարուական վարձատրութիւն արւի, ընկերութեան Սխալցխալի ճիւղի ներկայացուցիչների և ժողովի շատ անդամների համար խնդիրը աւելի բար էր. նոցա հոգսը մինոնչ ժամանակ Սխալցխոյի ճիւղի վարչութեան եւ տեղական ընդհանուր ժողովի պատիւն ազատելն էր. ան ճիւղի, որը ամենասահակա կերպով ազդ նոյն խնդիրը արդէն նախավճռել էր Սխալցխոյում հրապարական ժողովի մէջ...

Հասկանալի է զէթ այժմ, թէ ովքեր են սկզբնապատճառները ան երեսութիւն, որ պ. Մելիք-Հայկացեանցի պատւաւոր անդամ ընտրելու խնդիրը ասուլիք մէջ դրւեց», և թէ ինչու ընդհանուր ժողովի չնորհակալութեան քւէ տալու առաջարկը մինչև անդամ վիրաւորանք թւեց նոցա

որոնց հոգսը ոչ թէ քւէարկողի պատիւը, ալլ իրենց սեփական աամբիցիան» ազատելն էր, մի կողմակի հոգս, որ ամենեին չպիտի գար ծանրանալու ժողովականների խղճի վրաէ... Առանց այս հանգամանքի, ում մաքով կ'անցնէր թէ ընկերութեան մի անդամի համար, որը լաւ ծառակած է ընկերութեանը (մինոցն է կենարոնում թէ նորա ծիւղերից մէկն ու մէկում) վիրաւորական կամ թիշ վարձատրութիւն համարէր կենարոնական ընդհանուր ժողովի չնորհակալութիւնը, արտապատաճ բաց քւէարկութեամբ, միաձան և բուռն ու ջերմ զգացմունքով, բղխած առանց բացառութեան ամենքի սրտի խորքից:

Եւ սական այդ զգացմունքն է ահա որ ամենակոպիտ կերպով վիրաւորելու եկան Ախալցըխակի ծիւղի պատգամաւորները:

Այս խորհրդածութիւնների առաջ կորչում է բուն խնդիրը՝ ինչ մեծամասնութեամբ և վճռած լինէր վերջինս լոդուտ Ախալցըխակի ծիւղի առաջտրիքի: Ամենքի կարծիքով այդպիսի խնդիրները պէտք է միաձայն վճռեն և բաց քւէարկութեամբ. իսկ զորանից այն պարզ եղակացութիւնն է բզիսում, որ եթէ միայն ընտրելու համար չկատ միաբանութիւն, ուրեմն չպէտք է խնդիրը քւէարկութեան դնւէր առհասարակ և պէտք էր ընդունել այն բանաձեր, որը կարող էր միաձայնութեամբ ընդունել այն է՝ չնորհակալութեան քւէն: Մեծամասնութեան ներկալացուցիչները չհամաձանեցին այդ պարզ լոգիկալին ենթարկելու, ապացուց որ անկեղծ չըր նոցա կարծիքը թէ այդպիսի խնդիր չպէտք էր գաղանի քւէարկութեան հնիւարկել և միաձանութեամբ ընդունել. իւկ հետեանքը եղաւ գաղանի քւէարկութիւն և ժողովականների թւի 33% փոքրամասնութիւն (այն է սեկ և ձեռնողահներ միասին 25 հոգի, որ անում է 76 ներկաէ եղողների երրորդը, ուրեմն 33%): Այդ աշնքան մեծ փոքրամասնութիւն է, որ դրանից մի տոկոս (1%) աւելին անվաւերական է գարձնում լոկ վարչութեան սովորական անդամի ընտրութիւնը: Իսկ ժողովը ընտրում էր ոչ թէ վարչութեան մի սովորական անդամ, ալլ ընկերութեան պատւառը անդամ միշտ կոչում՝ որ բատկացնուում է մէկին ցկեանս:

Դա մի բարովական պարասութիւն էր ժողովի մեծամասնութեան համար, մի պարտութիւն, որ ապագայում խրատ կը լինի շատերի համար:

Լ ՈՒՍԻՆԻ

ՈՐԻՍԱՑ ՄԱՍԻՆԸ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՎՐԱՅՈՑ ՄԱՍԻՆ

«Մուրճ»-ի անցեալ համարում մենք խօստացանք ծանօթացների մեր ընթերցողներին այն յարձակողական յօդւածների բնաւորութեան հետ, որոնք ժամանակ առ ժամանակ, իսկ վերջին ժամանակներս նաև շատ յաճախ, երեսում են ուսուաց մայրաքաղաքների թերթերից ոմանց մէջ։ Հայ ընթերցողներին պատշաճ է հիմնաւորապէս ծանօթանալ այդ յարձակողական յօդւածների հետ, որովհետեւ դոքա չեն մնում Ռուսիայում «Զայն բառբառոց յանապատի», այլ ազդում են շատ հազարաւոր ընթերցողների վրայ և դոցա հայեացքներին ուղղութիւն են տալիս նոքա՝ չնայած ուսուաց լիբերալ թերթերի համակրական վերաբերմունքին գէպի Ռուսիայի հայկական տարրը։ Եւ այդ հայեացքները ապա արտաչայտում են կեանքի մէջ և խորը շօշափում հայ ժողովրդի բոլոր խաւերի թէ մոտաւոր, թէ բարոյական, թէ կրօնական, թէ քաղաքացիական և թէ նիւթական շահերը։ Այս անդամ մենք առաջ ենք բերում «Մոսկովսկիայա Վեհումոստի» օրաթերթի «Մուրճ»-ի անցեալ համարում ակնարկած յօդւածը, գրւած Քութաչիսի նահանգի վրաց ազնւականութեան տուաջնորդ իշխ. Ծերեթելիի ճառի առի թոլ։ Այդ ճառը իշխ. Ծերեթելիին արտասանել էր ազնւականների ժողովում, ի պաշտպանութիւն վրացոց՝ ընդդէմ սոցա վրաց եղած յարձակումների ուսուաց մամուլի մէջ։ Մոսկովսկիայա Վեդրումոստի լրագիրը այդ ճառը առիթ է բռնում հայերի վրայ աւել ևս խիստ յարձակումներ գործելու, չանալով Հայերի գէ՛ գուր բերել թէ ուս և թէ վրաց տարրերը Անդրկովկասում։ Մոսկովիան թերթի խորամանկ քաղաքականութիւնը շատ ակներև բայց պէտք է համոզւել գորանում՝ կարգալով մեր ակնարկած յօր շածը իւր ամբողջութեամբ որ ստորև տուաջ ենք բերում։

«Խխան Ծերեթելու ասելով, թէ ազնւականութիւնը և թէ վրաց ազգաբնակութեան ազլ խաւերը «վրդոված են և խռովւած այն արշաւանքի համար, որ գործել են մամուլի մի քանի աղղեցիկ օրդանները», Բայց մենք պիտի խոստովանենք, որ մալրաքաղաքների թերթերում չենք տեսել ջողւածներ, որոնք ընդունակ լինեին վրաց ազգաբնակութեանը անհանգիստ անել: Շատ ջողւածներ կալին հաչերի մասին, բայց ոչ վրացոց զիմ: Կարելի է որ հաչերին ձեռնուու է թաքնւել վրացոց մէջքի ետելը, իրենց պոլիարիկոսութիւնը ծածկելով վրացոց լազոնի հաւատարմութիւնով և անձնուիրութիւնով¹⁾, կարելի է որ հաչերը լուրեր են տարածում, թէ իբր մալրաքաղաքի թերթերը խօսում լինեն վրացոց մասին աճն, ինչ որ իրոք նոքա հաչերի մասին են ասում: Մենք տեսել ենք Նովոե Վրեմիայ-ում ֆելիքսոններ, որոնք կարող էին առիթ տալ ազգախիսի խեղաթիւրութեան, որովհետեւ նոցանում, ցաւօք պիտի ասել որ՝ Կովկասեան տեղական պաշտօնեանների մասին խնդիրը քննուում էր առանց սահմաններ գծելու կովկասեան աղղութիւնների մէջ, և բոլորը ի մի ձուկելով «տեղացիներու խօսքով, Վերջին ծալր սիսալ համարելով ազգախիսի ձուլումը, մենք այնուամենանիւ հաւատացած ենք, որ նոյն իսկ Նովոե Վրեմիան միայն անզուշաբար թողէ տևել ազդ իւր ֆելիքսոնների մէջ, և որ իսկապէս ազդ թիրթը բնաւ չի նայում հաչերի և վրացոց վրաց որպէս համասեռ՝ ոռւս ազգակին տեսակիցտից:

«Յամինան դէպս մենք հաւատացած ենք, իշխան Ծերեթելու հետ միասին, որ թէ կառավարութեան և թէ ոռւս հասարակութեան մէջ այսպիսի շփոթում չկա: Մենք հաւատացած ենք, որ պոլիարիկոսութիւն անող հաչերի արդարացի տժգործութիւնը բնաւ չի տարածում վրացոց վրաւ, որոնք նոյնքան նվիրւած են Ռուսիակին, որքան և իրենք ոռւսները: Եթէ ոռւսների մէջ զոլութիւն ունենալ հասկացողութիւնների այդպիսի ցաւալի շփոթումն, մենք կը ցանկավինք որ այն կարելիին չափ չուտով և կատարելապէս ցրէր:

«Յանիցս մենք դէպքեր ենք ունեցել պարզել մանրամասնօրէն, որ ոռւս ազգակին գաղափարը ամեննեին չի կալանում բոլոր ինքնատիպ տարրերի (ևօօեօբրազնե թեմենեա) ինքնուրունութիւնները ջնջելում, տարրերի, որոնք մանում են կալարութեան՝ որպէս ընդհանուր ոռւս հալրեմնիքի և ոռւս մեծ ազգացնութեան կազմի մէջ: Ոռւս ազգը կազմող մեծ ընտանիքին պատկանելը որոշում է ոգեկան ազգակցութեամբ (Ճ-

¹⁾ Այսինքն հաչերը օգուտ են քաղում երբ վրացիք արտաքայտում ևն իրենց անձնուիրութիւնը Ռուսիակին, որովհետեւ, իմր թէ, ոռւսները վրացու ասածը վերագրում են նաև հային:

ховнымъ родствомъ). Нотора կեանքի հիմունքների հետ, հոգեկցութեամբ (привязанностию) նотора ընդհանուր միասնական կեանքին, ձգտումով միասին աշխատել ընդհանուր հալրենիքի բարօրութեան համար. Ազգացին տեսակէտից իշխան Բագրատիոնը երեան է գալիս իր խսկական ռուս ազգանէր՝ մեալով վրացի, մինչդեռ այլ և այլ հերձւածողներ, ինչպէս Դրագոմանովը, ցեղով բուն ռուս՝ ոչինչ չունին ընդհանուր ազգութեան հետ.

«Մենք հարկադրւած ենք մերկացնել ֆինլանդական սեպարատիստներին¹⁾, ոչ այն պատճառով որ նոքա շւէդերէն կամ Փիններէն են խսում, և ոչ այն պատճառով, որ նոքա սիրում են իրենց հայրենիքը. Ամեն մարդ սիրում է իր տեղակոն հայրենիքը, լինի այդ Կուրսակի, Քութավիսի թէ Վիբորդի նահանգները. Արդար ոչինչ դատապարտելի բան չկար Դատապարտելի են վարւում նոքա, որոնք ձգտում են իրենց երկիրը քաղաքականակէս և թէ ոգեսկէս բաժանել Ռուսիայից, որպէս ընդհանուր հայրենիքից. Մենք քանից բացատրել ենք, որ ոուս ազգային գաղափարը կատարելապէս հաջուում է նոյն իսկ լեհական ազգութեան գյոյութեան եւ զարգաց ան հետ. Վնասակար և լանցաւոր են մեալն լեհական ազգանութեաները միմրան այն պատճառով, որ նոքա ձգտում են Լեհական երկիրը (Պոլյսկի երան) բարուսայէս և քաղաքականապէս խզել Ռուսիայից. Մենք, ոումներս, անպայման եղբայրական զգացունքով ենք նայում այլազգի ալտայեան ցեղերի վրայ, որոնց համար մենք ինքներս տեղծել ենք ալբրենարան և ժամասացութեան գրքերի թարգմանութեան միջոցով—ինքներս հաստատել ենք նոցա լեզւի զարգացումը. Բայց այդ ցեղերը ածում են և զարդանում սիրով ոգով գէպի Ռուսիան, եղբայրութեան ոգով ոուս ազգանութեան վերաբերմանը, որի բաղադրիչ կազմի մէջ են նոքա զտանում. Ընդհակառակը մենք չենք կարող համակրի այն մարդկանց, որոնք ցեղական առանձնաբանակութիւնների քօղի ատակ՝ աշխատում են նոյն այդ ցեղերից առանձին պագութիւններ կազմել, Զինդիախանի և նմանների աւանդութիւններն են նորից լարուցանում. Նոյն այդ տիսակէտը գործադրելի է ոուս ազգային դաղափարին.²⁾ Անդրկովկասի ցեղերի նկատմամբ, Ռուսները կուր կը լինէին, մեղք զործած կը լինէին իրենց հալրենիքի դէմ, ևթէ չնկատէին հայ պոիտիկունների շանքերը իրենց ցեղոց առանձին ազգ կազ ու, ցնորսներով հայոց Ռուսաց ութեան մասին (...еслибы не замѣчали преступныхъ стаіаній армянскихъ политикановъ выдѣлить свое племя въ особую націю, съ мечтами объ

¹⁾) Սեպարատիստ նշանակում է ձգտող՝ ընդհանուր պետութիւնից բաժանելու:

արմանութեան պատրաստ հարստանարելու Ռուսիան յօդուտ հայկական զավախարի։ Ռուս մամուլը իւր հայրենասիրական պարտքն է կատարում, մերկացնելով այդ ինստրիգները և նախազգուշացնելով Ռուսիան վտանգի մասին, որը նաև առաւել նշանաւոր է, որ այդ վտանգը բղխում է ռուսաց հպատակների միջից։ Բայց սարդար կը լինէր, անհայրենասիրական կը լինէր, բոլորովին անազդային կը լինէր փրաւորել վրացիներին անտեղի կասկածներով և կամ ուրանալ նոցա լրաւունքները, որոնք ռուսաց ընդհանուր հայրենիքում պակաս անձեռնմխելի չեն, քան իրաւունքները նախկին թեազանի իշխանութեան և կամ նախկին Աստրախանեան թագուսորութեան։ Մենք ուրախ ենք լսելու իշխան Ծերեթելիի հայրենասիրական բողոքները, որոնց մենք միանում ենք բոլորովին աշնաբէս, ինչպէս և իրենք վրացիք։ Մենք, ռուսներս, չենք մոռանում Վրաստանի պատմութիւնը, որը ներկայանում էր արտայատող նոյն պատմական կոչման (Առաջին), որ և Ռուսիային է։ Մենք վշտում ենք, թէ ինչպէս այդ ոգեկան միութիւնը արտավագուում էր հարիւրաւոր տարիներ առաջ՝ դաշնակից լինելու և միանալու ձգումներով։ Եզրաբարար ենք վերաբերում զէպի անցեղերը, որոնք մտնում են ռուս ազգութեան բազազրութեան մէջ, ուշ ըեմն աւելի ես չենք կարող գիտաւորութիւն ունենալ որ և կերպ տարբերութիւն դնել մեր եւ վրացոց մէջ, որոնք ինքնալօժար կերպով, իրմայ երկարատև խնդիրքներով ձուլել են իրենց պետականութիւնը ռուս պետութեան հետ։ Կարող է արդեօք այդ երկու ցեղերի մէջ եղած կատարեառնեկան կապի համար աւելի մեծ ապացուց լինել։ Մենք չենք կարող մոռանալ, ինչպէս անկասկած չեն մոռանում նաև վրացիք, որ Վրաստանի հետ միութիւնը պատճառ եղաւ և արդարացրեց մեր պատմական կոչումը Անդրկովկասում։ Երկու ազգութիւններն ևս կովկասում ներկալացնում էին և ներկալացնում են միևնուն գործը, և եթէ Ռուսիան աղաւց Վրաստանը՝ զորանով նա ազատեց իւր սեփական գործը, որը ընդհանուր է մէր և Վրաստանի համար։ Վրաց տարրը կովկասում կազմում է Ռուսիակի ամենաակարնոր նեցուկներից սէկը, որովհետև անտեղ մեր շահերը կատարելապէս նոյնն են և անբաժանելի են։ Մենք չենք ուզում ասել թէ այդ շահերը միշտ լաւ պաշտպանւած եղած լինեն. ընդհակառակը, անպիսի Փակտեր, ինչպիսին է այն որ մի քանի հարիւր հազար հայերին տրւեց մի հող, որը ազատեց Վրաստանի և Ռուսիայի ծեռքով ընդհանուր գործի համար¹⁾ (такие факты, какъ отдача сотнямъ тысячъ армянъ территории, которая была спасена для

¹⁾ Թէ այդ որ հարիւրաւոր հազար հայերին մի այդպիսի հող տրւեց, ու մնում է Մոսկովսկի Անդոմստիի սեփական գաղտնիքը անշուշտ։

общаго дѣла Грузіеи и Россіеи), — аյդպիսի ֆակտերը, ի հարկէ, եւ յաւափ են եւ վնասակար, բայց եթէ զորանով երբ և իցէ վնասւում էլն վրաց շահնքը, պէտք է վիշել, որ միթէ քիչ են վնասւել մեղնում նաև զուտարին ուստաների շահնքը՝ օգուտ գերմանացոց, լեհացոց, ֆիլանդացոց, Ալդալիփ դէպքերում երևացել են սխալունք կամ անփոյթութիւն, բայց ոչ ոգեկան աղջակ ցութեան մոռացումն։ Երբ որ մենք մեր հողերը գերմանացոց էինք տալիս, այդ չէր նշանակում թէ մենք նոցա աւելի ուուս լինէինք համարում, քան մեր սեփական գիւղացոց, նոցնը պլոտի նկատել ե վրացոց նկատմամբ։

«Ալդ պատճառով մենք ուրախ ենք տեսնել իշխան Ծերեթելիի ճառում արտաքայտութիւն հաստատ վստահութեան «թէ կոռավարութեան և թէ ուուս հասարակութեան բարեհած վերերերունքի նկատմամբ»¹⁾։ Գորանում, ի հարկէ, կասկած չի կարող լինել, որ վրացիք և ուուսները որոնք միութեան են հասել, նաև ընդմիշտ կը մնան անխզելի ազգային միութեան մէջ, ձեռք ձեռքի տւած աշխատելով ընդհանուր հայրենիքի բարօրութեան համար, և երբէք չզանազանելով վրացուն ուուսից։ Միմիան նոքա, ովքեր հաւասարապէս թշնամական են ուուսներին և վրացիներին, կարող են աշխատել այդպիսի զանազանութիւն ստէղծելու, գիտակցաբար շփոթելով վրացիներին նոցա հետ, որոնց ծգութեան կայանում են վրացիներին ջնջելու եւ նոցա պատմական ժառանգութիւնը իրենց ծեռքը դցելու մէջ»²⁾։

¹⁾ Զակերտները բնադրումն են և վերցրած իշխ. Ծերեթելիի ճառուց

²⁾ Ակնարկ հակերի վրայ. Այս յօդւածում հօտըները մերն են.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խոալիայի պարտութիւնը Աքիսինիայում։ Խոալական նոր մի-
նիստրութիւնը։ — Անզիա։ — Դոնգոլայի արշաւանքը։ — Անզիայի
սպառազինումը։

Խոալիան վերջնական պարառութիւն կրեց Աքիսինիայում։ Ադա-
նայի մօտ եղած ճակատամարտը վճռեց պատերազմի ելքը։ Ճակատը
տեղի ունեցաւ փետրւարի 17 (կամ նոր տոմարով 29-ին) շաբաթ
օրը։ Խոալական զօրքերի հրամանատար գեներալ Բարատիէրի
բաժանել էր իր զօրքը 3 մասի, որոնց գլուխն էին գեներալներ
Դա. Բորմիլա, Արիմոնդի և Ալբերտոնէ։ Բայց խոալացիք զարհուրելի
չարդ կրեցին Աքիսինիայի թագաւոր (նեզուս) Մենելիքի բազմա-
պատիկ զօրքերից։ Եղած հինգ խոալական գեներալներից երկուսը
սպանւեցին և մէկը գերի ընկաւ։ Եօթը գնդապետներից՝ երկուսը
սպանւեցին, մէկը գերի ընկաւ։ 24 վաշտային կոմանդիրներից, որ-
պէս հաշում են, 15-ը սպանւած են, 1-ը գերի է ընկած։ զինւորնե-
րից սպանւեցին, վերջին տեղեկութիւնների համաձայն, 5600 մարդ,
գերի են ընկած 600 մարդ։

Խոալիայի պարտութիւնը սուգի մէջ գցեց Խոալիան։ առաջին
մինիստր Կրիսպին, որը 1893 թւականից գիլտատորի պէս իշխա-
նութիւն էր բանեցնում Խոալիայում, ընդհանուր զայրոյթի առաջ
խոնարհեց և տւեց իւր ու ամբողջ կաբինէտի հրաժարականը, որ
և ընդունեց Հումբերտ թագաւորից, որը, պիտի ասած, անմասը
չէ Կրիսպիի աքիսինիական քաղաքականութեան մէջ։ Եւ կազմեց
նոր մինիստրութիւն՝ մարքիզ Ռի-Ռուլինի՛ի գլխաւորութեամբ,
որը ընդդիմադիր կուսակցութեանն էր պատկանում և թերևս ամե-
նավստահելի քաղաքական դործիչն է Խոալիայում։ Մինիստրու-

թիւնը կազմեց 28 փետրւարի այսպէս. գի-Ռուդինի—առաջին մինիստր և ներքին գործերի մինիստր. Գահտանի Սերմոնտա—արտաքին, Ռիկոստի—պատերազմական և այլն:

Խոալիայի մեծ պարտութեան առաջին տպաւորութեան տակ շատերը կարծեցին թէ Խոալիան նոյն իսկ պիտի զրկւի Եւրոպակի մեծ պետութեան կոչումից և եռապետական դաշնակցութիւնը (Գերմանիայի, Աւստրօ-Ռւնդարիայի և Խոալիայի միջև) պիտի կորցնէր իւր նախկին նշանակութիւնը: Առաջին ենթադրութիւնը չափազանց էր, բայց որ Խոալիան իւր կրած պատերազմական պարտութիւնով կորցրած է իւր դիբքը եռապետական դաշնակցութեան մէջ, այդ անկասկածելի է:

Այդ դէսկրից յետոց է որ Աւստրօ-Ռւնդարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Գոլուխովսկին ուղևորւեց Բերլին, գերմանական կանցլէրին փոխադարձ այցելութիւն տալու և Վիլհէլմ Ռիհետ անձնական ծանօթութիւն անելու համար: Որ այդ տեսակցութիւնների միջոցին խօսակցութեան դլխաւոր առական Խոալիան պիտի կազմած լինէր—շատ հաւանական է: Այնուամենայնիւ Խոալիան մնում է երրեակ դաշնակցութեան մէջ, թէև առաջւայ կուրարութիւնը ֆրանսիայի հետ պէտք է այժմ տեղիք տայ աւելի բարեկամական յարաբերութեան:

Խոալիան այժմ վճռել է Մենելիքի հետ հաշտութեան դաշնակցել, վերացնելով 1887 կռած Ուկչիալիան դաշնակցութիւնը: Սակայն հաշտութեան համար բանակցութիւնները գեռ շարունակում են և միայն դալ ամիս կարող կը լինենք պայմանները յայտնելու: Յամենայն դէպս Կարմիր ծովի Արխինեան ափին գտնուած Մասովա գաղթավայրը և մի փոքրիկ տարածութիւն կը մնայ Խոալիայի ձեռքին:

Ահա մի ամփոփ տեղեկութիւն խոալական պարտութեան զլլիսաւոր հերոս գեներալ Բարատիերիի մասին:

Օրէստ Բարատիերի, նախկին գլխաւոր հրամանատարը Խոալական զօքերի երիթրէրում՝ որը զօքքը տարաւ դէպի Աղուակի զարհուրելի կոտորածը, զեռ ևս 8 ամիս առաջ Խոալիայում ընդունեց որպէս յաղթանակող: Այժմ նա կոչւած է զինւորական գատարանի առաջ, մեղադրւելով զինւորական օրէսպքի 72 և 88-դ գատարանի առաջ, մեղադրւելով զինւորական օրէսպքի 72 և 88-դ

յօդւածներով։ Եթէ մեզապարտ ճանաչւի՝ պատիժը կամ մահ է և կամ բանտարկումն ցմահ։

Այդ գեներալը անցեալ տարի ասում էր. «Տէք ինձ ևս 8 հազար մարդ, և ես Մենելիկին կը բերեմ Հռոմ իբր դերի»։

Բարատիէրին ծնւել է 1842 թ. Արկօյում, Ռովերեդոյի մօտ, ծրիեստի շրջանում, իբր աւստրիական հպատակ։ 1859-ին 17 տարեկան հասակում մեծ դժւարութիւններով անցաւ սահմանը և միացաւ Գարիբալդիի կամաւորներին։ 1860-ին նա եղաւ Սիցիլիայի Գարիբալդեան արշաւանքում իբր մէկը պատմութեան մէջ յայտնի Մարսալայի Գարիբալդեան հազարից։ Երբ 1861 թ. գարիբալդեանները միացան կանոնաւոր զօրքի հետ, Բարատիէրին մուտ հետեւակների և ապա բերզագլիէրների կորսուսի մէջ։ Սկսեց աշխատակցել զինւորական թերթերին, նշանաւոր ուսումնասիրութիւններ հրատարակեց 1866 թւականի աւստրօ-պրուսական և 1870 թւականի ֆրանս-գերմանական պատերազմների մասին, արժամանալով Մոլոկէի մեծ գովեստներին։ 1876-ին երբ ձախակողմեանները կառավարութեան գլուխ անցան, պատերազմական մինիստրը նրան յանձնեց Revista militare italiana զինւորական թերթը։ Բայց զօրքը նորան չէր սիրում, որպէս չէր սիրում առհասարակ նախկին գարիբալդեաններին, որոնց վրայ նայում էին որպէս զինւորական լաւ աւանդութիւնների քանդող։ Նշանակւեց փոխ-գնդապետ, ուզարկւեց Գենուա իբր գլխաւոր բերզագլիէրների մի գնդի։ Ապա խնդրեց և ստացաւ տեղ Աֆրիկայի զօրքում, ուր նա նշանակւեց Գերենի շրջանի հրամանատար։ 1892-ին նշանակւեց գեներալ։

1892-ին զի Ռուդինիի մինիստրութիւնը նրան նշանակեց Երիթրէի գաղթավայրի (Արխիսինիայից խլած երկիրների, Կարմիր ծովի ափում) նահանգապետ և զօրքերի պետ։

1893 թւականի վերջը, երբ Զիոլիտարիի մինիստրութիւնը ընկաւ և թագուորը Զանարդելլիին յանձնեց մինիստրութիւն կազմելը, վերջինս կամեցաւ Բարատիէրիին արտաքին գործերի մինիստր նշանակել։ բայց Աւսրիան զորան ընդդիմացաւ զօրեղ կերպով։ Զանարդելլիին յետ քաշւեց և Կրիստիին յանձնեց մի-

Նիստրութիւն կազմելլք: Բարասիերին վերադարձաւ Էրիթրէ իւր սլաշտօնատեղին Կրիստիի լացն ծրագիրներով Աբիսինիան նւաճելու համար...

Անգլիայի վերջին ամիսներում արտաքին քաղաքականութեան մէջ ունեցած անաջողութիւնները զրդեցին նորան ամենալուրջ հռդացողութեան առարկայ դարձնելու իւր պատերազմական այնտրաստութիւնը: Զպատկանելով ոչ միջին եւրոպացի երրեակ դաշնակցութեանը և ոչ Փրանս-ռուսական դաշնակցութեանը—նա համոզեց որ իւր ներկայ ոյժերով միայնակ անզօր է իւր քաղաքականութիւնը յաղթանակի հասցնել այն ամեն տեղերում, ուր անհրաժեշտօրէն ստիպւած է ընդհարւել այդ միացած ոյժերից մէկն ու մէկի հետ եւ ահա նա մի կողմից ձգտում է իւր բոլոր գաղթավայրերի հետ աւելի սերտ միութիւն հաստատել և միւս կողմից սպառազինել զլիաւորապէս ծովի վրայ, որպէս զի կարողանաց յաջողութեամբ դէմն առն ել ամեն հնարաւոր ընդդիմադրութիւնների՝ եւրոպական ցամաքի պետութիւնների դաշնակցութիւնների գէմ: Ստորև զնում ենք այդ սպառազինման մասին տեղեկութիւնները:

Մեր ընթերցողներին յայտնի է ամսագրիս վերջին համարից որ ջանքեր են անւում Թիւրքիայի և Ֆրանսիայի ու Ռուսիայի կողմից՝ Եզիդանոսի խնդիրը հրապարակ դուրս բերել: Դորա դիմն առնելու համար, և թէ որպէս զի Խտալիայի պարտութիւնների պատճառով Աբիսինիայում Եզիդանոսը չվատանգւի մահդիի պետութեան կողմից, որոնց ձեռքումն էր մի ժամանակ հասալալան, որը խտալացոց ձեռքին է տարիներից ի վեր, Անգլիան վճռեց արշաւանք սկսել մահդիի զերւիշների գէմ, որոնք այժմ, Խտալիայի պարտութիւնից խրախուսւած՝ նորից մօտեցել են Կասալացին: Այդ արշաւանքը գէտի Դոնդոլա (դոնդոլեան արշաւանք) աւելի ևս պարզեց այն հակառակութիւնը որ կայ այդ խնդրում Անգլիայի ու Փրանսիայի միջև:

Անգլիայի ծովային քիւջէ՞ն: Մարտի Յ-ին (ն. տ.) անդիլ ական ծովային վարչութեան առաջին լորդ (ծովային մինիստր) Գօշեն (Goshen) Համայնքների ժողովում արտասանեց մի նշանաւոր

ճառ՝ որով նա պիտի յայտնէր և բացադրէր ծովային մինիսուրութեան նորանոր վարկի մեծ պահանջները, որոնք արժանացան պարլամենտի ողեւորւած հաւանութեան Այդ ճառից, որի ամբողջութիւնը մեր աչքի առաջն ունինք, կարևոր ենք գտնում քաղել հետևալ թւերը, ի լրումն այն տեղեկութիւնների, որ մենք հըրատարակեցինք ամսագրիս անցեալ համարի քաղաքական տեսութեան մէջ:

1885 թ. Անգլ. ծովային զօքը բաղկացած էր — 61.400 մարդուց:

1895 » » » » » — 81.150 »

1896 » » » » » կը լինի — 86.050 »

Ծովային ոյժի այդ զօքումը հետեանք է լորդ Սպենսէրի 1889 թւականի նախագծած և պարլամենտից ընդունւած Naval Defense Act (նաւային պաշտպանութեան օրէնք) որոշման և լորդ Սպենսէրի ու նորա այժմեան յաջորդ Գոշընի ծրագիրների: Հին նաւերը 1889-ից սկսած փոխարինուեցին նորերով: Աւժովացան գլխաւորապէս նաւախմբերը (Էսկավը) Լամանշում, Միջերկրականում և Զինական ջրերում: Ստեղծւեց թւշող կոչւող (volant) նաւախումբ, որը շատ մեծացրեց նաւերի թիւը:

1889 թ.ից սկսած մինչև 1896 թ. շինուեցին 103 պատերազմական նաւեր ամեն կարգի և 62 հակա-նաւահարներ (կոնտրառուպիլ):

Նաւագործարաններում (միմիայն պետականը, որովհետեւ կան նաև մասնաւոր նաւագործարաններ) բանողների թիւը ներկայում է 23.000 մարդ:

Նոր շինուող պատերազմական մեծ նաւերը լինելու են 2.000 տակառ աւելի փոքր քան Ամաֆեստիկա զրահաւոր նաւը. բացց նոցա արագութիւնը երկու հանգույցով աւելի մեծ է լինելու: Նոր զրահաւորները 1-ջին, 2-րդ և 3-րդ կարգի լինելու են այն աիպարի, որ ներկայացնում են «Գիաղէմ», «Ճալբու» և «Պէլորուս» նաւերը:

Ըստամէնը 1896 թւականին շինուելու են 13 մեծ պատերազմական (զրահաւոր) նաւեր, որոնցից ութը արդէն շինելու վրաց են, իսկ 5-ը նոր պիտի սկսենք շինել: Բացի այդ այս տարի շինում էին 21 յածաւորակներ և 40 նոր հակա-նաւահարներ, որոնց

վրայ պիտի աւելանան յածաւորակններ 13 հատ և հականաւահարներ 28 հատ, ընդամենը ուրեմն այս տարի նոր շինող յածաւորակների թիւը կը լինի 44 հատ, հականաւահարները 68 հատ:

Նաւերի թիւի աւելանաւովը, կ'աւելանան թէ նաւային զօրքը և թէ ուրիշ ամեն պատկանելիքներ կը մեծացւին ծովային աւագանները և կը շինուին երեք նորերը Գիբրալտարում:

Ժակիք: Նաւային թնդանօթների և ռազմամթերքների համար, որ 42 միլիոն 300 հազար ֆրանկ էր (մենք ֆրանկով ենք հաշում), 1896 թ. համար կը լինի 63 միլիոն 575 հազար ֆրանկ:

Դոկերի (նաւագործարան), աւազանների, զինանոցների համար և այլն, որոնց համար նախատեսնեած էր ծախք մօտ 47 միլիոն ֆրանկ, 1896 թ. համար կը լինի 56 միլիոն 250 հազար ֆրանկ:

Նաւերի զրահները շինելու համար նախատեսնեածի վրայ պիտի աւելանայ 27 միլիոն 500 հազար ֆրանկ:

Նախատեսնեած շինութիւնների ծախքը, որ անցեալ տարի 212 միլիոն 500 հազար ֆրանկ էր, այս տարի կը դառնայ 350 միլիոն ֆրանկ, այսինքն մօտ 78 միլիոն ֆրանկ աւելի, որից 25 միլիոն ֆրանկը ի հաշիւ 1895—96 թւականի, մնացեալը՝ 1896—97 թիւջէտային տարւայ վրայ է ընկնելու: (Նկատենք որ Անգլիայի բիւջէտային տարին սկսում է մարտի 1-ին և լրանում յաջորդ տարւայ գետորւարի վերջը):

Ամբողջ ծովային բիւջէն 1895—96 թւականի համար կը փակւի մօտ 470 միլիոն ֆրանկով:

Իսկ նոր բիւջէտային տարւայ համար (1896-97) նախատեսնեած է 545 միլիոն ֆրանկ ծովային մինիստրութեան ծախքը որով նախընթաց (1895-96) թւականի ամբողջ բիւջէից կը գերազանցի աւելի քան 75 միլիոն ֆրանկով:

1894-1895 թւականին շինուելու սկսած նաւերը նստելու են 7-ից մինչև 800 միլիոն ֆրանկ:

1889 թւականի Naval Defense Act ծրագրի համեմատ շինուած նաւերի ծախքը եղած է 545 միլիոն ֆրանկ. իսկ նոր ծրագրով շինուելիք նաւերի հետ միասին, մի գործ որ պիտի վերջանայ 1899 թւականին, պատերազմական նաւերի համար ընդ:

հանուր ծախքը 1889 թւականից մինչ 1899 թւականը լինելու է մօտաւորապէս 1 միլիարդ 375 միլիոն ֆրանկ:

Անգլիական կառավարութիւնը գաղտնիք չէ պահում իւր զիտաւորութիւնը այսպիսի նոր զոհաբերութիւններ ստանալով ազգից—պատրաստ լինել գործելու նաև միայնակ՝ ընդգէմ դաշնակցած պետութիւնների. իսկ դորա համար պէտք է ոյժ ունենալ զիմադրելու, ուրեմն հաւասարելու և գերազանցելու ծովի վրայ Անգլիայից յետոյ ամենաուժեղ պետութիւններից գոնէ երկուսին (որոնցից մէկը Ֆրանսիան է, որը Անգլիայից յետոյ ծովի վրայ ամենաուժեղն է):

Z.

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ՆԻԿԹԵՐԻ ՑԱՆԿԸ

1889—1895

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՅՈԴԻԱԾՆԵՐ:

Հասարակական օրգանները I. (Հիւսիսափայլ, Մշակ, Մուրճ).
Ա. Արասխանեանցի. Մուրճ 1889, 1:

Հասարակական օրգանները II. (Կռունկ, Մեղու-Հայաստանի, Նոր-Դար). Նոյնը. 1889, 4:

Պանդիստութեան խնդիրը. I, II. Նոյնը. 1889, 11, 1890, 6:
Մուրճը 1889 թւականին: Նոյնը. 1889, 12:

Գործերի զրութիւնը: Նոյնը. 1890, 1:

Թիւ և Ոյժ: Նոյնը. 1890, 5:

Ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոյժ: Նոյնը. 1890, 11:

Յառաջդիմութեան պայմանները: Նոյնը. 1891, 6:

Կիւը հասարակութեան մէջ: Նոյնը. 1891, 6:

Ազգաբնակչական շարժումները: Նոյնը. 1892, 9:

Գիւղատնտեսական խնտելիդէնցիա: Նոյնը. 1892, 11:

Մուրճի չորսամեայ գործունէութիւնը: Նոյնը. 1892, 12:

Կրթւած գիւղացին (նպաստ գիւղատնտեսական խնտելիդէնցիայի խնդրին): Նոյնը. 1893, 10:

Մուրճը նոր տարեշրջանի շէմքում: Նոյնը. 1894, 1:

II. ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ԻՐԱՒԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՀԵՏԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Հողացին խնդիրը Անդրկովկասում. I, II, III. Ա. Արասխանի- եանցի: 1889, 9. 1790, 7, 9. 1893, 4:

Պանդիստութեան խնդիրը: Ա. Արասխանեանցի: 1889, 11.
1890, 6:

Ոճիրները Երևանեան նահանգում: Գաբրիէլ Մնացականեանցի:
1889, 11, 12:

Աղքատների խնամատարութիւնը: Գրիգոր Վարդանեանցի:
1890, 4, 10:

Համայնական հողատիրութիւնը Երևանեան նահանգում: Յովհաննէս Սաղաթելեանի: 1890, 5, 7:

Պանդիսոութիւնը մեղանում: Ան. Քալանթարի: 1890, 11, 12:

Նաւթաշրջանի բանւորները: Գարեգին Խաժակնեանի: 1892,
10. 11. 12. 1893, 3. 4. 10. 11. 12:

Հողատիրութիւնը Թիւրքիայում: Գր. Վարդանեանի: 1893, 5:

Հողային և անձնական իրաւունքը Հին-Հայաստանում: Սարգիս Բահաթրեանցի: 1894, 1. 2. 3. 4. 5:

Հողային և անձնական իրաւունքը Հրէաստանում: Նոյն հեղինակի: 1895, 8:

Բանւորների ապահովացման խնդիրը Արևմտեան Եւրոպայում:
Գէորգ Ղարաջեանի: 1894, 1. 2. 3. 4:

Բանւորների հաւաքական ապահովացումը Ռուսաստանում
դժբախտ գէպքերից: Յակ. Յակոբեանի: 1894, 5. 6. 7:

Մեծ ձեռնարկութիւնները և բանւորները (ըստ Շմուլէրի):
Գր. Վարդանեանի: 1894, 4:

Արծաթի և ոսկու խնդիրը: Գր. Վարդանեանի: 1894, 5:

Կապիտալիզմի և խոշոր խնդրուստրիայի զարգացումը: Միք. Յովհաննինիստանի: 1894, 10. 1895, 1. 6. 11:

III. ՏՆՏԵՍՍԿԱՆ-ԱՐԴԻԿԱՆԱԲԵՐԱԿԱՆ:

Արդիւնահանդէսը (1889 թ. Կովկասեան արդիւնահանդէսի
առիթով Թիվլիսում): Ա. Արասիսանեանցի: 1889, 10:

Կովկասեան արդիւնահանդէսը 1889 թ.: Ա. Արասիսանեանցի
(Լուսինի): 1889, Էջ 1, 2, 3, 4, 9:

Զոր մրգերի գործը: Հմայեակ Սողոմոննեանցի (†): 1889, 11:

Բամբակի մշակութիւնը Անդրկովկա: Տարատինովի. 1890, 6:

Անտառները Անդրկովկասում: Ա. Արասիսանեանցի: 1890, 11:

Անտառները Անդրկովկասում: Առաքել Ղուլեանցի: 1893, 4:

Անասնապահութիւնը Անդրկովկասում (ըստ Ա. Քալանթարի):
Յովհ. Սաղաթէլեանցի: 1891, 1:

Արդիւնագործութիւնը Անդրկովկասում: Գրիգոր Վարդանեանցի:
1891, 4. 1892, 5:

Նաւթային գործը Բաքում: Գալուստ Կիւլպէնկեանի: 1891,
7—8, 9, 10, 11:

Տեղեկութիւններ նաւթային գործի մասին: Ա. Արասխանեանցի:
1891, 11:

Կովկասեան առևտրի և գործարանների մասին: Յակ. Անագ-
չեանի: 1892, 1, 7—8:

Նաւթարդիւնաբերութեան վիճակը Բաքում: Ֆրիդոն Մար-
դանեանի: 1893, 10, 11, 12. 1894, 2, 3:

Տնտեսական գրութիւնը Թուսիայում
Գր. Վարդանեանցի: 1892, 7—8):

Գութանի շուրջը: Աշոտ Աթանասեանի: 1894, 7—8, 9,

IV. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍՊԾԻԱԼԱԿԱՆ ՄԱՆՐՈՒԹԻՒՔ:

Թիֆլիսի ընկերութիւնը կրակից փոխազարձաբար ապահովեց-
նելու համար: Ա. Արասխանեանցի (Լուսինի): 1889, 9:

Անդրկովկասեան երկաթուղին և երկաթուղային քաղաքակա-
նութիւնը: Լուսինիի: 1889, 9:

Անդրկովկասեան երկաթուղին 1890 թ.: Լուսինիի 1891, 10:

Կարսի բանտորների գրութիւնը: Եր. Ղազարեանի: 1890, 1:

Բանտորները Անդրկայում: Ա. Արասխանեանցի: 1890, 5:

Գինու բերքը Ֆրանսիայում: Թղթակից. 1890, 1:

Աղքատութիւն և խոլերա: Երւ. Ղազարեանի: 1892, 6:

Խոլերան և հասարակութիւնը: Ա. Արասխանեանց: 1892, 6:

Խրիմեան Հայրիկ և գիւղատնտեսական ինտելիգէնցիան: Ա. Աթանասեանի (արտատպւածք): 1893, 10:

V. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ:

* Արցախ: Հինգ օր Արցախում: Տես բաժին ՎI:

* Հայ ընտանիքը: Տես բաժին ՎII:

Ախալցխայ, տպաւորութիւններ: Լուսինիի. 1889, 8:

Արասթուման: Լուսինիի. 1889, 8:

Գիւղական հանգամանքներ: Տէր-Զաքար. անցի: 1893, 5:

Երկրագործ փամբակեցու գրութիւնը: Ա. Տէր-Յ արութիւ-
նեանցի: 1893, 5:

Ղարաքիլիսի ներկայ վիճակը: Ա. Սրհեղեանի (Ժածկանուն):
1893, 10:

Ղալագէ դիւզը: Ա. Ա.—1893, 10:

Գանձակ: Տալաւորութիւն. Գանձակից: Սո. Տէրեանի: 1894, 2:

Մեղրի գիւղի գրութիւնը: Մ. Մելքոնմեանցի: 1894, 6:

Գետաշէն գիւղը: Յարութ. Միրիմանեանցի: 1894, 8, 9:

Սև-Ճովի ափերից: I, II, III, IV: Յակոբ Մուրագեանցի:
1893, 5, 9. 1894, 6. 1895, 11:

Ախալցիսայի մի քանի հայ գիւղերը (Ոիւլիս, Մհծ-Պամաջ,
Պղտի-Պամաջ, Ղուլալիս, Օրալ, Խէկ, Սաղէլ, Ճալա):
Յակ. Մուրագեանցի: 1895, 2:

Եսենթուկի (Նամակ Խմբ.): Մկրտ. Նաւասարդեանցի: 1894, 4:

Եկատարինովար (Նամակ Խմբ.): Մկրտիչ Նաւասարդեանցի:
1894. 4:

Վգուլիս: Նամակ Ագուլիսից: Զլիցեանի (Աւետիք Դաւթեան):
1895, 2:

Քութայիսի նահանգ: Փոթիից-Քութայիս: Ճանապարհորդակ.
Նկատողութիւններ: Յակոբ Մուրագեանցի: 1895, 9—10:

VI. ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՏԵՂԱԳՐԱԿԱՆ:

Տաճկա-Հայաստան: Այց Թիւրքաց Հայաստանին: Լեռն Սարգը-
սեանի: 1889, 4, 5, 7, 9, 11, 12. 1890, 1, 2:

Զմիւռնիացից-Ալեքսանդրապոլ: Յովհաննէս Տէր-Միրագեանցի:
1890, 12:

Արցախ: Հինգ օր Արցախում: Լէօի: 1889, 1, 2: (Բովանդա-
կութիւն № 1-ում: Ասկարան բերդ, Վարագաբոյն գիւղ,
Խոջալլուի կայարան և գաշտ. Սարդարաշէն, Նորագեղ,
Ղշաղ, Ռէւ, Սէլիդի-շէն գիւղերը. Խաչէնի գաւառ,
Ճեխ-Ճոր, Խաչէնագետ, Կաչաղակաբերդ. Առջաձոր և
վանք գիւղեր. Գանձասար վանքի նկարագրութիւնը:
1889, 2. Դարպաններ աւերակները. Թարխանաբերդ կամ
Խոխանաբերդ, Հաւակտուկ. Խաչէնի գիւղերը և սոցա-
գրութիւնը. Ս. Յակոբայ վանք. Ս. Գէորգի վանք:
Ռէւ, Ղշաղ, Դաշուլաղ, Դահրաւ, Բալլուջայ, Խնա-
ծալս, Խանքենդի):

Վանայ ծովակը: Տիգր. Փիրումեանի. 1890, 4:

Պարսկաստան: Ճանապարհորդական լիշողութիւններ Պարսկաստանից: Պետօ՛ի. 1891, 11. 1892, 6:

Ապշերոննեան թերակղզին: Գ. Կիւլպենկեանի. (թարգմ. Քրան. սերէնից Ա. Արասխանեանցի): 1891, 7—8:

Յունաստան: Խախկին քաղաքակրթութեան վայրերում: Յովկ. Տէր-Միրաքեանի. 1892, 1, 2:

Հին և նոր Աթէնք: Յովհ. Տէր-Միրաքեանի: 1892, 9, 10:

Գերմանացիք Փռքը-Ասիայում (Տաճկաստ.) Գր. Վարդանեանցի: 1894, 6:

Սասուն (տեղագրութիւն): Սէյլանի: 1894, 10:

VII. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ:

Հայ ընտանիքը: Լէօ՛ի: 1890, 1, 2, 3, 7:

Բոշաները (ըստ Կոլոչի): Ա. Արասխանեանցի: 1890, 10:

Սև-Լեռնացիք: Յար. Ղարագեօքեանի: 1890, 12:

Հայ բոշաները: Գր. Վանցեանի: 1892, 7—8, 9:

Պատմ. ակնարկ հայ բոշաների անցեալից: Նոյնը. 1894, 7—8:

Սասուն: Սէյլանի: 1894: 10, 11—12. 1895. 1—5:

Ազատ Բոլգարիան: Երւանդ Ղազարեանի: 1895, 9—10:

VIII. ԳԻՏԱԿԱՆ:

Բարակացաւ-թոքախտը: Բժշկակ. Տէր-Գրիգորեան-Ղզլարեցու: 1889, 6:

Բարակացաւի ծագման պատճառները: Նոյնը: 1889, 7:

Մանուկների հիւանդութիւնները: Նոյնը. 1889, 9, 10:

Կոխի գիւտը տուբերկուլոզի դէմ: Նոյնը. 1890, 12:

Կոխի հրատարակութիւնը: Ա. Բարելեանի (Տաճկան.) 1890, 12:

Ռոբէրտ Կոխի գիւտի մասին: Գուլէր'ից Բարելեան: 1891, 1:

* Տեմպերամէնա: Տես բաժին X:

Արեի ազդեցութիւնը բուօականութեան վրայ Անդրկովաս: սում: Ալ. Քալանթարի: 1890, 11:

Միկրոբները: Սամուէլ Բալազեանի: 1891, 5, 6:

Լուի Պաստեր: Նորա 70-ամեակի առթիւ: Ընդհանուր տես-սութիւն նրա արած գիւտերի: Սամուէլ Բալազեանի: 1893, 1, 2:

- Սննդառութիւն և կերակուր: Բժշկ. Ռոմիկեանի: 1892, 6, 7:
Խոլերա: Նոյնը. 1892, 6:
- Խրատներ խոլերայի մասին: Բժշկ. Վահ. Արծրունու: 1892, 6:
Երկրագնդի ապագան: Ն. Ս.-ից թարգմ.: 1891, 7—8:
- Հրաբուխները: Սամ. Բալաղեանի: 1892, 4:
- Միջատակեր բոյսերը: Նոյնը. 1892, 5:
- * Կենդանիների հասարակական կեանքը: Տես բաժին IX:
- * Կենդանիների խելքն ու սիրու: Տես բաժին IX:
- Բոյսերի բեղմնաւորութիւնը: Նոյնը. 1893, 9:
- * Մարդկացին սերհատութիւնը: Տես բաժին IX:
- Բժշկականութիւն և հոգեբանութիւն: Նոյնը. 1894, 1, 2:
- * Ժառանգականութիւնը: Տես բաժին IX:
- Բնական հիպոտիսմը: Բժշկ. Վահան Արծրունու: 1891, 12.
1892, 1, 2:
- * Բնական հիպոտիսմը ազգերի պատմ: մէջ: Տես բաժին IX:
Տիեզերագրութիւն: Ֆլամմարիոնը Փլնեում (Ֆլամմարիոնի
դասախոսութիւնների համառօտումը): Գարեգին Խաժակ-
նեանի: 1894, 9, 10:
- Դարւինիսմ: Քննադառութիւն Բալաղեանի «Դարւինիսմ» գրքի:
Ա. Արախանեանցի (Ա. Ա.): 1894, 9 և 10:
- XI-րդ Մարդաբանական համաժողովը Մոսկվայում: Տիգր. Յով-
հաննիսեանի: 1892, 9:
- IX. ՀԱՅԱՐԱԿԱԲ., ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՖԻԼՈՍՈՖԱՅԱԿԱՆ:
Էրնեստ Ռլնանը զիտութիւնների կենտրոնացման և ապակեն-
տրուացման մասին լուսինիցի: 1889, 7:
- Հռունքներ բնագիտական ֆիլոսոփայութեան մէջ Բարելեանի:
1890, 10:
- Բոյսերի մեծաբանքը զանազան ազգերի մէջ: Ալիքս. Քիշմի-
շեանցի: 1891, 2, 3:
- Քաղաքակրթութեան զարգացման ընթացքը: Գէորգ Ղարա-
ջեանի: 1893 9, 10:
- Կենդանիների խելքն ու սիրու: Սամուէլ Բալաղեանի: 1892,
11, 12:
- Կենդանիների հասարակական կեանքը: Նոյնը: 1893, 11, 12:

Բնադէտների ժողով Մոսկւայում: 1894, 2:

Բնական հիպնոտիզմը ազգերի պատմութեան մէջ: Բժշկ. Վահան Արծրունու: 1894, 5, 6, 7-8, 10. 1895, 1:

Մարդկացին սերհառութիւնը: Բժշկ. Թագէսս Զաքարեանի: 1893, 7-8:

Ժառանգականութիւնը: Նոյն: 1895, 5, 6:

X. ԴՊՌՈՅԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ:

Հոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ: Յովհ. Տէր-Միրաբեանի: 1889, 3:

Դպրոցական գործեր: (Առաջին խօսք դպրոցական-վարչական վերանորոգման համար): Ա. Արախսանեանցի: 1889, 4:

Տեմպերամէնտ և նորա նշանակութիւնը: Հոգեբ. և մանկավարժ. հետազոտութիւն: Յովհ. Բարխուդարեանցի: 1889, 4:

Ուսումնարանական գիտելիքներ: Նոյն: 1889, 9, 10:

Դպրոցական զբօսանք: Յովհ. Բարխուդարեանցի: 1889, 11:

Գերմանական դպրոցների դրութիւնը (անցեալը և ներկան): Արշ. Տէր-Միքէլեանցի: 1890, 4, 5, 6, 8:

Գերմանական համալսարանների ոգին: Յովհ. Բարխուդարեանցի: 1890, 5:

Դաստիարակչական մոլորութիւններ: Երւանդ Ղազարեանի: 1890, 9:

* Ժողովրդական ընթերցանութեան գործը մեր մէջ: Տես բաժ. Ժին XIV:

* Ժողովրդական զբաղարանների փորձը մեզանում: Տես բաժ. Ժին XLIV:

Ընթերցանութիւն մոգական լաւագութով: Թարգմ. Արշ. Բարխուդարեանցի (Բ.): 1891, 4:

Կարինի դպրոցները Վ. Ասքանազեանի: 1-90, 3, 5:

Պրուսիացի ժողովրդական ուսումնարանների ներկայ դրութիւնը (մանրուք): 1889, 10:

Պարիզի քաղաքացին ուսումնարանները (մանրուք): 1890, 1:

Մանկավարժական-բուժական վարժարան Ենացում (մանրուք):

Յովհ. Բարխ. 1890, 5:

(Շաբանակելի)

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԱ-Ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ: Չնայած որ «Մուրճա-ի բաժանորդագործիւթիւնը» ներկայ 1896 թ. գեղազանցում է բոլոր նախկին եօթ տարիներից, բայց մի հանդամանք ստի-պում է մեզ փոխառութեան դիմել: Այդ հանդամանքը նախ-կին տարիների դեֆիցիտներով գոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արդէն ծածկւած են, բայց որոնց հա-մեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ ևս ծանրացած է խմբագրութեան վրայ: Կանոնաւորել այդ մնացած պարտքի հասուցումը—ահա այն հոգսը, որ մեզ հարկադրում է փոխա-ռութեան դիմել: Այդ փոխառութիւնը միակ կարող է մեզ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների հա-մար չժանրանալ ամսագրի ներկայ տարւայ բիւջէի վրայ: Պոխառութեան գումարը խոշոր չլինելով՝ (2500 ռուբլի) մենք յոյս ունինք որ «Մուրճա-ին համակրող աւելի ունեոր անձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւազն հարիւրական (100) ռուբլիով իւրաքանչիւրը՝ վիետրւարին 1898 թւականի կրկին յետ ստանալու պայմանով: Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառութին պարտամուրհակ երկու տարի ժամանակամիջոցով, խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ: (Արտասապած «Մուրճա» № 1-ից 1896 թ.):

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԻՆՅԻՆ, անցեալ ամիս մեր տւած խոստման համաձայն, ուղարկում է «Մուրճի» սոն համարի հետ ի միասին Շանթի «Դուր-սեցիներ» վէպի սկզբի մասը, որ տպւած էր անցեալ տարւակ վեր-ջին երկու համարներում: Այդ մասը կազմում է 107 երես այն զիր-քով, որով արտատպւած գիրքն է լոյս տեսնելու:

«ՄՈՒՐՍԵՑԻՆԵՐ» գէպը վերջանում է «Մուրճ»-ի ներկայ համարում։ Մեր երիտասարդ աշխատակից Շանթի երկրորդ լէպն է այս նույն տաղանդաւոր և նուրբ գրիչը նոյն նուրբ հոգեբանութիւնը ինչպէս և «Երազ Օրեր» լէպում, բայց նիւթը վերջինիցս շատ աւելի բազմա կողմանի։ Ազդուղ գուրս նեն բերւած այն գաւառացի երիտասարդ։ Ների տիպերը կ. Պոլսում, որոնք պիտի ապագայ գործիչներ դառնան, կ. Պոլսի կեանքի ու մթնոլորդի համբեցուցիչ ազդեցութիւնը գաւառացի ինտելլիգենցիալի վրայ, որը միախառնում է, զասի գիտական և պիտիմիստ ական հայեացքների հետ—ինտելլիգենցին ցուրալին աշխարհը տաճելու և մոլորեցնելու համար՝ խորտակում է Բագրատի իդէալի գործնականութեան առաջ, որը ներկայիս համար գործելը պաման է համարում ամեն ապագայ առաջդիմութեան։ «ՄՈՒՐՃ»-ի № 3 և 4, անցեալ տարւակ պէս՝ լուս կը տեսնեն միացած ապրիլի վերջը։

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐ, (Սկիզբը 18 օրինակի համար տես 1895 թ. № 12 և 1896 № 2), Ումն (Մոսկվաից) ուղարկել է մեղ պ. Ալ. Մատուրեանի միջոցով 50 ոռութիւն, մի.մի օրինակ «Մուրճ» ուղարկելու հինգ տեղ, որոնցից երկուր իւր որոշմամբ, այն է 19) Մոլլա Բա, չաղէդ գիւղի հայոց գպրոցին, 20) Աշտարակ գիւղի հայոց գպրոցին, և երեքը թողնելով մեր ընտրութեան, մենք չատկացրինք—21) Բորժոմի հայոց գպրոցի գրադարանին, 22) Թիֆլիսի էժանագին գրադարանին (Ակեւամին, փողոց), 23) Գևշլուի հայոց գպրոցին։ 24) Պր. Ստեփան Նալբանդեան (արհեստաւոր)՝ Սախալինի հակ կալանա որոներին, 25) Յ. Թ.՝ Վ. Հաղիկաւկազի հասարակաց գրադարանին։

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ մինչեւ վետրւար ամսոի 10.թ Պոլսի հալոց պատրիարքարանում ստացւած էր 17.000 ռուփ (մօտ 160.000 ոռութիւն)։

Կ. Պոլիս է հասած Ամերիկական Կարմիր Խաչի ընկերութեան նախագահ օր. Կլարա Բարտոնը, որը, համաձայն հեռագրի 28-ից փետրւարի (11 մարտ)՝ թիւրքաց կտավ վարութիւնից իրաւունք է ստացել տարածելու իւր բարեկործական գործունէութիւնը Փոքր-Ասիաի նահանգների վրայ, որոնք տաճկական դաշտանութիւնների աստղարէդ եղան Միոս Կլարա Բարտոնին քի զնալ ազդ տեղերը, այլ ուղարկում է իւր երկու օգնական ներին։ Իւր կարգադրութեան ներքոյ ալդ նպատակի համար Բարտոնը ունի 2¹/₂ միլիոն ֆրանկ։ Փետրւարի 27-ից (ն. ա.) հեռագրում են Փրանսիակար Հա-

ւաս գործակալութեան հետեւալը. «Փրանսիական դեսպանութիւնը կ. Պոլսում ստացաւ իւր կառավարութիւնից 10.000 ֆրանկ Զէլթունում հայ ապաստանածների համար. Միւս դեսպանութիւնները ստանում են նէւրներ դրամով և բնութեամբ,՝ որոնք կ'ուղարկեն Հալէպ, բաժանելու համար այդ քաղաքի հիւպատոսների ձեռքով, որոնցից երեքը, ինչպէս լատոնի է, գտնում են Զէլթունում, ընդհանուր ներման պահմանները գործադրելու համար, որ ձեռք էր բերւած ազգ հիւպատոսների միջնորդութեամբ»:

Հալէրին օդնող անդլիական ֆոնդը ուղարկել է Զէլթուն խեղճերին օդնելու համար 5000 ֆունտ ստերլինգ (50.000 սուբլի):

Աւատրիակի Ֆրանց-Յովակի կամսը լանձնել է Վիեննակի Միլիթարեան միաբանութեան 1000 ֆրանկ (250 սուբլի ոսկի)՝ չօգուտ սովլատանչ թիւլքաց հակերի:

Օգնութիւնը Վանում: Անցեալ նոգեմբերից սկսած անօթի և մերկ գիւղացիք սկսեցին ապաստան գտնել Վան քաղաքում, և միւս կողմից անսպահովութեան պատճառով անշղական շուկան փակւեց: Բազմաթիւ կարօտեալներին լիապէս օդնելը անհնարին եղաւ: Հայոց աղջոյին վարչութիւնը լանձնաժողով կազմեց, որը գիւղերից եկածներին ապաստարան տւեց քաղաքի զանազան թաղերում և հանգանակութեամբ 300 ոսկի (մօտ 3000 ռ.) ժողովուց և 200 ոսկի ևս Պոլսի Հայոց պարիարքարանից ստացաւ: Ժողովուրդը օգնեց նաև զգեստ, վերմակ տալով և ալլու:

Ալ աւելի կարող օդնողները եղան ամերիկացի միսիոնարները, որոնք դրամստանում են Ամերիկացից: Ստացած դրամներով նոքա փուռեր են բացել և հում նիւթեր ու գործիքներ են գնում կարօտեալներին աշխատեցնելու համար: 6 փուռ են բացել, որտեղից ձրիապէս հայ է բաշխում օրական 2700 օխա: Կարօտեալներին աշխատեցնելու համար բանում են 1000 ճախարակ բամբակի թել մանելու, 200 գործիք կտաւ կամ շալ գործելու համար. 100 ընտանիք հագուստեղին են կարում, 20 ընտանիք գուլպա են գործում. 60 հոգի բամբակ և բուրդ են գզում. 70 հոգի հինած են անում կամ մասրա են լեցնում. 10 կին վերմակ են կարում. 40 հոգի փուռերում են բանում. 70 պաշտոնեալ ծառակում են իբր գրադիր, հաշւակալ, քննիչ գործակատար, դռնապան հիւանդապահ և ալլու: Այս բոլոր գործերի համար բողոքական միսիոնարները վարձել են 5 մած տներ, որոնցից մէկը իբր հիւանդանոց է ծառապում: Մտադիր են գարբնի և հիւսնի արհեստանոցներ ևս բանալ: Մինչև լուսարի սկիզբը ծախք եղած էր 3000 ոսկի (մօտ 30.000 սուբլի): Մեծ համակրութիւններ և դրաւել բժիշկ օրիորդ Քէմբլի, որին տեղական հասարակութիւննը

մի ալբոմ նւիրեց՝ միսս Քէմբլի'ից դործ ընդունող ակր թէ կին գործատրների լուսանկարներով:

Կաթողիկ միսիոնարները (դոմինիկեան հայրեր) անգործ են երեսում 200 ռակու գումար բաշխելու հրաման ստացած են բայց գործադրութիւնը չակտի չէ:

Կառավարութիւնն ևս անձնաժողով է կազմոծ՝ կարօտներին օգնելու... Ցանկալի է որ օգնող մարմինները չորդորէին քաղաքը եկած գիւղացիներին իրենց գիւղերը վերադառնալ և իրենց ունեցած հողերից ձեռք չքաշել:

Օգնութիւն Խարբերդում, Խարբերդից հաղորդում են որ Անգլիակից եկած փող է բաժանւած չիսուն և չորս գիւղի:

Մարտինից հաղորդում են որ նպաստ տրւում է կանոնաւոր կերպով. կանաց տւել են ձեռագործ աշխատանք:

ԿԱՐՈՏԵՍԱԼՆԵՐԻ ԹԻՒԾԻ. Անգլիական դեսպան ուրը Ֆիլիպ Գեորգի հաղորդ դել է անգլիական կառավարութեան, որ ներկացումն 200.000 համբ Հայաստանում կարու են հացի օգնութեան:

ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ. Պոլսից հեռագրում են Վիւննակի լրագիրներին հետեւալ լուրբ, որը ցուց է տալիս վատանգի մեծութիւնը «Անատոլիակամ իսլամութիւն ընդունած հայերի թիւը աճն քան շատ է, որ, օրինակ, Մուշում համարեա բոլորովին գույութիւն չունի քրիստոնեակ համացնք: Բէրէջիկում եղած կոտորածներից ազատւածները, թւով 1500 հոգի, իրենց քահանաների հետ վճռեցին, որ կեսնք և ազատութիւն (?) ստանականելու միակ միջոցն է — իուլամ կրօն ընդունելու»

Անգլիական փոխ-հիւպատոսը, որ ուղարկած էր Բէրէջիկ տեղնուառեղը իսմանալու այնտեղ եղած անկարութիւնների մասին, հեռագրեց Կ. Պոլսի անգլ. գետպանին, որ 150 հակ ստանաեցին, իսկ բնակիչներից ողջ մնացածները 1500 հոգի իրենց կեանքն ազատելու համար ընդունեցին իսլամութիւն: Փոխ-հիւպատոսը ապա զնաց Օրֆու տեղեկութիւններ հաւաքելու խմբովին իսլամութիւն ընդունելու մասին: Արագիկերի կողմերը մահմետականութիւն են ընդունած: Ամպրկա 70 տուն, Շէփիկ 120 տ., Ծափ 100 տ., Անջրդի 150 տ., Սաղմիա 60 տ., Մաշկերտ 120 տ., Խռով 50 տ., Եհնեցիք 40 տ., Հացնի 50 տ., Կռանի 30 տ., Քուչնա 80 տ., Ծապլւար 5 տ., Վաղչէն 60 տ., Վաղաւեր կամ Աղն 20 տ., Վանք 15 տուն:

ՆՈՐԻՑ ՔԲԻՍՏՈՆԷԱՑԱԾ. Մուշի բրիտանական փոխ հիւպատոս Համբատոնը հեռագրում է որ Գէնջէի զաւառի շրջակաների բազմաթիւ հակ ընտանիքներ, որոնք կոտորածների ժամանակ իսլամութիւն էին ընդունել, նորերս վերադառնան իրենց եկեղեցու դիրկը:

Բիթլիսի նահանգի Զարադէլուր գաւառում իսլամացած ու ապա նորից քրիստոնէութիւն ընդունած 15 ընդանիքներ քիւրդերի ձեռքով կոտորուեցին (տեղեկութիւն 19-ից փետրվարի)։

ՄՈՒԹԱՆԻ ՊԱՐԴԵՒՍՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Մարտի 6/18-ին սուլթանը շնորհել է Խմբիազի բարձր շքանշանը ոռւսաց արտաքին գործերի մինիստր Լորանով՝ Ռուստովսկուն, և Միջիդիէ'ի շքանշանը Պոլսի ոռւսաց զեսպան Նելյոդովին։

ՄՈՒԹԱՆ ԲԵՅ, օսմանեան հանրավին պարտքերի տաճկաց կոմիսարը, որ փախել էր Կ. Պոլսից և հրապարակով պրոպ սգանդ է անում ընդդէմ սուլթանի նախ Ներպալում և ապա վերջին ժամանակներս Նդիպոտոսի Կայիրէ մայրաքաղաքում, ուր նա Միջան (Կչիո) լրագիրն է հրատարակում, Կ. Պոլսի եղեռնական դատարանի կողմից դատավարուած է մահան պատժի *in contumaciam* (զատարանի առաջ ներկայանալու մերժում)։ Սուլթանը պահանջել էր եղիպատական խղիւից որ Մուրադ բէչին չանձնի տաճիկ իշխանութեան, բայց մերժումն ստացու, չնորհիւ, ի հարկ է, Անզիիազի ազգեցութեան։ Մուրադ բէչը իւր Միջան արաբական լրադրում արծարծում է այն միտքը թէ սուլթանը խոլամի խալիֆան չէ և թէ պէտք է Արաբիանում նոր խալիֆա ընտրել։ Մուրատ բէչը միաժամանակ մերկացնում է տաճիկ կառավարութեան անկալունութիւնը, արմատացած ախտերը։ Ի նկատի ունինալով Մուրադ բէչի բարձր գիրքը, նորա լրագրի տարածւած լինելը (տպում է 40.000 օրինակ) և այն շփոթութիւնը որ կարող է նա չառաջացնել խալամ աշխարհում, Կ. Պոլսի «իգդամ» պաշտոնական լրագիրը «Անզզամ Մուրադը» խորագրով լողած հրատարակեց, զգուշացնելով մահմեդականներին Մուրադ բէչի «լուսանդաւոր խորհուրդներից»։

Խըդիւից Մուրադ բէչին տաճկական իշխանութեանը չանձնելու մերժումից չետու էր որ սուլթանը կամեցաւ նդիպոտոսի խընդիրը լուսկել ուղելով առաջարկել Անզիիազին Նդիպոտոսից իւր զօրքերը դուրս բերել որի մասին մեր ընթերցողներին արդէն լաւտնի է «Մուրադ»-ի անցեալ համարից։

ՀՈՆԴՈՆԻՅ ճեռագրում են 15-ից մարտի, որ Հիւս. Ամերիկազի Միացեալ նահանգներում զէպի հակերն եղած համակրական ցուցերի համար՝ Վաշինգտոնից լիտ է կանչւած թիւրքաց դեսպանը։

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԴԱՊԵՏ, փոխանակ զեներալ Ֆրեզէի, նշանակւած է կոմս Վ. Տիզենհառուզէն, որը մինչև ազդ՝ Թիֆլիսի փոխ-նահանդապետն էր։ Երեանի փոխ-նահանդապետ նշանակում է Վ. Ն. Օսէցիկից որ մինչ աչք՝ հողեոր գործերի գործավարն էր Կովկասի կառավարչապետի դիւանատում։

Կոմս Տիղենհառուզէն աւարտել է Դորպատի համալսարանը, 1868 թ-ին նշանակվեց Քութավիսի նահանգադետի առանձին լանձ. նարարութիւնների պաշտօնեաց, ապա Քութավիսի նահանգական վարչութեան դիւանատան կառավարիչ և խորհրդական. 1876-ին նշանակվեց Սղնախի (Թիֆլիսի նահանգում) դաւառապետ, 1888-ին Ախալցխափի դաւառապետ. նուն թւականին՝ նրեանի փոխ նահանգապետ և երեք տարուց հետո՝ Թիֆլիսի փոխ-նահանգապետ.

ԲԱԴՐԱՏ ԳԵՈՐԳ-ԹԱԱԽԱՅԱԼՎԱԼՎԱՆ վարդապետը որ Ալեքսանդրապոլի լաջորդն էր, տեղափոխւած է Գանձակ և ոչն պաշտօնուվ, Բագրատ վարդապետը 6-7 ամսում զրաւել էր Ալեքսանդրապոլի հասարակութեան բուռն համակրութիւնը, որի շօշափելի ապացուցը ընթերցողները կարող են դանել «Տարադ» ի № 10-ի մէջ, ուր առաջ է բերւած երկար շարք այն նւէրների, որ մատուցել են ալեքսանդրապոլիցիք-արք ու կանաք-իրենց սիրած լաջորդին՝ սորա հրաժեշտի ժամանակ.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ-ՆՈՐ ՑԱԶՈՐԻ Նշանակւած է Յովհ, վարդ. Շիրակունի, Բագրատ վարդապետ Գեորգ-Թաւաքալեանի տեղ,

ՀԱՅՈՑ ԲՈՐԵԳ. ԸՆԿ. ԿՈՎԿԱՍՈՒԻՄ ունեցաւ իւր տարեկան ընդհանուր ժողովը վեարու. 25, որի շարունակութիւնը եղաւ մարտի 3-ին, մասնակցութեամբ 76 հոգու: Նախադահի բացակայութեան պատճառով՝ ժողովի ժամանակաւոր նախագահ ընտրւց Մեսրոպ քահանակ Մելեան, Քհնուեցին կենտրոնի և 16 ճիւղերի նախահաշխները 1896 թ. համար (Ցխինւալինը և Հին-Նախիջևանինը ստացւած չէին), կենտրոնի (Թիֆլիսի ճիւղի) մուտք 1896 թ. համար նախատեսնաւած է 8.403 ուրբլի, իսկ բոլոր 16 ճիւղերի հետ միասին մուտք սպասում է 32.128 ռ. 60 կ. (որից մնացորդ անցեալ տարիներից 9.961 ռ. 35 կ.): ծախք որոշած է մուտքի հաւասար. Ելքի մէջ են՝ Ուսումնարաններին 3.055 ռ., ընթերցարաններին 7.385 ռ., ու սում ստացողներին 4.402 ռ., տառապետաներին 3.251 ռ., և այլն:

Ապա ժողովը անցաւ Ախալցխափի ճիւղի առաջարկին պ. Մելիք-Հայկաղեանցին ընտրել ընկերութեան պատւաւոր անդամներին մեծ վիճաբանութիւնների տեղիք տևեց. Մեր զգացմունքը այդ մասին ընթերցողները կը գտնեն «Մուրմոսի ներկաւ համարում տպւած Լուսինի՛ լոգւածի մէջ»:

Վերջը ժողովը կատարեց պաշտոնատար անձերի ընտրութիւն, ընդհանուր ժողովի նախագահ բժ. Բագր. Նաւասարդեանց (43 սպ., 27 մե), քարտուղար՝ Ստ. Մալխասեան (67 սպ., 2 մե), Խորհրդի անդամներ բնարեցին Ալէքս. Մելիք-Ազարեան (վերընտրւած միամատ, բաց քւէարկութեամբ), իշխանունի Մարիամ Թումանեան

(բաց քւէարկութեամբ միաձալն), բժ. Վահան Արծրունի (63 սպ., 6 սկ.), Գ. Բազանդուրեան (59 սպ., 10 սկ.), Սամսոն Յարութիւնեան (58 սպ., 11 սկ.), փոխանողամներ՝ Գր. Վարդանեան և Յակ. Քոչարեան (57 սպ., 12 սկ.), Յակով Մելիք-Բախտամնեան (43 սպ., 26 սկ.): Վերաստուգող մասնաժողովի անդամները ընտրւեցին՝ Աւ. Վարդապետեան (46 ձ.), Յ. Զաթալպաշեան (52 ձ.) և Ն. Արքահամեան (46 ձ.), Գրադարանական մասնաժողովի անդամներ՝ Ալ. Երեցեան, Ստ. Մալխասեան, Ստ. Լիսիցեան, Յ. Դաղբաշեան, Պետ. Մելքոնեան:

Թիֆլ. ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ Ը ունեցաւ իւր տարեկան ընդհանուր ժողովի մարտի 17-ին, քաղաքալին տան դահլիճում: Ժողովին ներկաւ էին 69 անդամ: Նախագահելու համար բաց քւէարկութեամբ ընսրտեց Աւ. Արախանեանց, քարտուղարութեամբ ընկերութեան վարչութեան քարտաբերեալ բացատրութիւնները տալիս էր վարչութեան նախագահ պ. Ալեքս. Քալանթար: Կարդացեց տպաւած տեղեկագիրը 1895 թ. գործունէութեան մասին, որի առիթով եղած վիճաբանութիւնները վերաբերւեցին Ընկերութեան հաշւապահութեան եղանակին և մանաւանդ խմբագրական մասնաժողովի գործունէութեանը, առաւելապէս զրքերի ընտրութեան խնդրին: Վիճաբանութիւններին մանակցեցին բազմաթիւ անձինք, գլխաւորապէս Թիֆլիսի գրականական և մամուլի շրջաններից: Ապա հաստատեց անփոփոխ վարչութեան կազմած նախահաշիւը 1896 թւականի համար, որից կտոր եղան ընտրութիւններ վարչութիւնից և խմբագրական մասնաժողովից հերթով դուրս եկող անդամների փոխարէն:

Տեղեկագրից երեաց, որ ընկերութիւնը 1895 թւականի ընթացքում աւել է 18 հրատարակութիւն (17 գիրք և մի մանկական լուսո), ընդամենը 23,025 օրինակ, արժողութեամբ (զրքերի անւանական գներով) 14.815 ռ. 59 կոպ.: 18 հրատարակութիւններից 8-ը ինքնուրովն գրւածքներ են եղած, մնացածները՝ թարգմանական: Դրքերի հրատարակութեան համար (թուղթ, տպարան և հեղինակների, թարգմանիչների և սրբագրիչների վարձատրութիւն) ծախսել է 5410 ռ. 87 կոպ., իսկ ընկերութեան ամբողջ ծախսը՝ 8771 ռ. 77 կոպ.: Զուտ մնացորդ առ. 4-ն լունւ. 1896 թ. եղել է 250 ռ. 42 կոպ., ընկերութեան մուտքը 1896 թ. եղաւ 9022 ռ. 19 կ.

Խմբագրական մասնաժողովը 1895 թ. ընթացքում քննել է 75 ձեռագիրներ կամ զրքեր:

Ընկ. անդամների թիւը 1895 թ-ին հասաւ 442, որոնցից 22-ը մշտական, միւսները տարեկան:

1895 թւականին եղած հրատարակութիւնները ներկայացնում են մի-մի օրինակով 10 ռ. 58 կոպէկի գլն։ Եւ այդ տարին այդ կողմից, որպէս և ամեն կողմից, եղել է ամենաքեզմնաւորը բոլոր տարիներից։

1896 թւականի համար նախահաշիւը կաղմւած է 6250 ռ. 42 կոպէկի, ավելնքն 1895 թւականին եղած մուտքից և ծախքից զգալի չափով աւելի պակաս։

Կատարւած ընտրութիւնները տւին հետեւալ հետեւանքը։

Վարչութեան անդամ-գանձապահ վերընտրւեց պ. Արշակ Տէր-Գրիգորեանց (42 սպ., 2 սե), վարչութեան անդամ-քարտուղար ի տեղի պ. Յովս. Ամիրխանիանի ընտրւեց պ. Կոնստ. Գիւլնազարեան (37 սպ., 7 սե). վարչութեան սոսկ անդամ ի տեղի պ. Խ. Խաչատրեանի ընտրւեց պ. Դրիգոր Վարդանեան (29 սպ., 15 սե)։

Խմբագրական մասնաժողովի 6 հետեւալ անդամների տեղ ալ. պ. Հ. Առաքելեանի, Յ. Քոչարեանի, Գար. Միրզոյեանի, Արշակ Բարխուղարեանի, Ս. Բալաղեանի և Յ. Դիւլնազարեանի՝ քէարկւեցին 7 հոգի, որոնցից ձախների առաւելութեամբ ընտրւեցին հետեւալ անձինք։

Պա. Մանւելեան Լոոն (41 սպ., 3 սե), Մալիխասեան Ստեփան (38 սպ., 6 սե), Բարախանեան Առաքել, Լիսիցեան Ստեփան, Քոչարեան Յակոբ հաւասար ձախներով (34 սպ., 10 սե) և Վարուխանեան Առաքել (32 սպ., 12 սե)։

Եօթը քէարկւողներից մէկը (Համբ. Առաքելեան—25 սպիտակի 19 սե) խմբագրական մասնաժողովում ալ ևս ազատ տեղ չլինելու պատճառով՝ համարւեց ընտրւած։

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԴՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ. Թաւրիզից հաղորդում է մի շատ ուրախալի լուր. Ատրպատականի թեմի առաջնորդական փոխանորդ Սարածեան վարդապետը փեարւարի 23-ին ժողով է զումարել Թաւրիզի Արամեան դպրոցի դահլիճում, առաջարկելով ընկերութիւն կազմել որը իւր վրայ առնի աճն անպաշտպան հայերի խնամքը, որոնք գարնաճը պիտի գան Տաճկա-Հայաստանից։

Նոյն այդ ժողովում խնդիր զրւեց ամբողջ Պարսկաստանի համար թարեգործական ընկերութիւն հիմնել, և այդ առաջարկը ձախնից բազմութեամբ ընդունվեց ժողովականներից և մի մասնաժողով կաղմւեց ապագայ ընկերութեան ծրագիրը կազմելու և մինչ երկու շաբաթ ժողովին ներկայացնելու համար։

Եթէ այդ ընկերութիւնը զլուխ գայ և դնւի հաստատ կանոնադրական հիմքի վրայ—նա կ'ունենայ կարենը դեր կատարելու

Պարսկա-Հայերի կեանքում Խնդիրը միան ալս է թէ կարող է Պարսկաստանում մի որ և է ընկերութիւն խիստ կանոնադրական հիմքերի վրա գնաւել թէ ոչ. Ո՞վ է երաշխաւորում կանոնադրութիւնների խստիւ գործադրութիւնը ազդ երկրում. եթէ տեղական հաջո հողերը իշխանութիւնը—ապա կատկածելի է այդ երաշխաւորութիւնը. եթէ պարսկական իշխանութիւնը—այդ աւելի քան տարակումելի է: Կազմելիք կանոնադրութեան ամենաէական կէտը հէնց այդ պէտք է լինի.

ՆՈՒՅԻՆՑ ՔԱՂԱՔ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Շուշւաէ մէջ մտցնում է քաղաքային ինքնավարութիւն 1892 թ. լուլսի 11 ի կանոնադրութեամբ. Մարտի 10-ին կայսցան քաղաքային ընտրութիւններ գաւառապետի նախադանութեամբ. Շուշւաէ մէջ 20 հազար քրիստոնեակ և 1 հազար մահմեդականներ. Ծնտրողական կալւածական ցենզ ունեցողների թիւն է 513 անձ, որոնցից քրիստոնեակ 372 և մահմեդական 141 հոգի. Պիտի ընտրէին 40 ձայնաւոր (անդամ խորհրդարանի և 8 կանդիտատ). Քւէարկութեան մասնակցեցին 204 քրիստոնեաններ և 130 մահմեդականներ. Քւէարկութեանների թիւն էր 87 հոգի, որոնցից ընտրւեցին 39. դոցա մէջ 34 քրիստոնեակ և 5 մահմեդական: Լրացուցիչ ընտրութիւններ պիտի լինեն 1 ձայնաւորի և 8 կանդիտատների համար:

Օրէնքով (կանոնադր. § 4) ձայնաւորների մէջ Շուշիում, ուր խառը աղջաբնակութիւն է, մահմեդականները պիտի կազմեն ձայնաւորների ^{1/3}: Զնայած զորան՝ ընտրողական նիստի սկզբում գաւառապետը լայտարարից թէ քրիստոնեաններ և մահմեդականներ պիտի ընտրեն հաւասար թւով. Մինչդեռ մահմեդականների օգտին կանոնից չնդումն թողարուում է միան երե քրիստոնեանները ձայնաւորների բաւական թիւ չաման. այդ պատճառով ժողովում բողոքեցին եղած կարգադրութեան դէմ: Վահմեդականները, տժզոն ընտրութեան հետևանքներից, մտադիր են բողոքելու կատարւած ընտրութիւնների դէմ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՍ. ՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ: Ռուսաց կակսեր և կալվունու թագաղութեան հանգէսոր չարդելու համար՝ Վեհափառ կամովիկուլ կարգադրութեամբ հաջոց բոլոր դպրոցներում ուսումը ալս տարի պիտի աւարտի մալիսի 11 ին:

Նո՞ն կարգադրութիւնը արւած էր արդէն ժողովրդական կըր. թութեան մինիստրից՝ կայսերութեան բոլոր պետական դպրոցների համար, բացառութիւն անելով աւարտողների համար, որոնք պիտի վերջնական քննութիւնը տան:

ԶԵՄՍՏԻՕՑԻ ԽՆԴԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ. Անցեալ 1895 թ. Թիֆլիսի նո-

հանգի աղնւականների ընդհանուր ժողովում հարց էր չարուցւել Ռուսիակի ներքին նահանգներում հաստատւած նահանգական և գաւառական ինքնալարութիւնը (զնմստօ) նաև Թիֆլիսի նահանգը ներմուծելու համար զիմել խնդիրքով կառավարութեան։ Մրագիր կազմելը լանձնւած էր Նովու Արագրինիշ խմբագիր իշխան Գ. Թումանովին, որը ներկայ փետրար ամսին արդէն ներկազգեց ծրագիրը նահանգի աղնւականութեան առաջնորդին։

ԶՄԵՌԻԱՅ ԱՂԵՏԸ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ. «Մուրճար անցեալ համարում մինք արդէն լիշտակել էինք այն անսովոր խիտա ձմբան մասին, որ կար Քութալիսի նահանգում այս տարի։ Արդէն լաւանի է թէ Թիֆլիս-Բաթումի երկաթուղու գիծը ինչ մեծ վնասներ կրեց անսովոր լորդ ձիւներից, այն մեծ հեղեղներից լիստով որ եղան հոկտեմբերի վերջը նոյն այդ գծի վրայ Բացը միան այժմ է պարզում, որ այս ձմբան ձիւները խսկական աղէտ եղան բնակիչների։ Համար Վճառւած է մանաւանդ Քութալիսի նահանգի Զուգդիդի գաւառը Զիւնը, չտեսնւած լորդութեամբ, սկսեց զալ լուսարի 15-ին և տեսն մինչ 29 լուսւարի։ Այդ գաւառում գիւղ չմնաց որ վնասւած չլինէր, ամենաշատ վնասւածները եղան Սւաննեթիալի լեռների սոորուններում գտնւող գիւղերը և ազարակները (Պապուրաշի, Մուժա, Նաշաշգառ, Զալա, Զգալի, Նագուրէսու, Զւարի, Լեցուրցումէ, Մուխուրի, Չողա, Խխուարի, Լեսիշինէ, Շխոմուրի, Լիա, Զխորցիսու, Նելետի և Նիկորէ Զվինորի), Այդ գիւղերում, պաշտօնական տեղեկութիւններով, ձիւնի տակ խեղդուել են 52 հողի երկու սեռից 2000 ձիւն և եղջիւրաւոր կենդանիներ, քանդւել են 100-ից ակել տներ, ախոռներ, խոհանոցներ և այլն. վճացել են եղիսպացորնի բազմաթիւ ամբարներ, քանդւել են 15 գիւղական խանութներ, մի գիւղական զպրոց և այլն։ Եւ այդ միան գաւառի հիւմս-արենեան մասում. խոկ զաւառի արեմանեան մասը մեծ կորուստներ ունեցաւ հեղեղներից։ Դաւառի վնասը պաշտօնական թւերով հասնում է 75000 ռուբլու։

Քութալիսի նահանգում այս վերջին չորս ամիսներում, սկսած հոկտեմբերի հեղեղներից, մարդկանին կորուստների թիւը համում է մոտ 400 լի։

ՆԻՒՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐԻ Վասիլ Ստ. Քեփինեան, ի լիշտակ իւր հանդուցեալ կին էլենորակի (լութերական զերմանուհի) նուրիւ է 3.000 ռուբլի, բաշխելով այս կերպ.¹⁾ 1100 ռուբլու տոկոսներով Թիֆլիսի երկրորդ խական գիմնազում մի աշակերտուհի պահելու համար.²⁾ Լութերականների ապաստանուրանին 300 ռ.³⁾ Ելիզարեթական զերմանական գիւղի գպրոցին կից ապաստարարան հիմնելու

համար 200 ռ. ⁴⁾ Վեհ. Կաթողիկոսին՝ գաղթականներին օգնելու համար 200 ռ. ⁵⁾ Հակոց Բարեգ. Ընկերութեան 200 ռ. ⁶⁾ Զինամանձութիւնի գիւղատնտեսական դպրոցին 1500 ռ. ⁷⁾ «Մուլր» ընկերութեան՝ մանկական հիւանդանոցին 100 ռ. ⁸⁾ Մալականների դպրոցին 100 ռ. ⁹⁾ Աղքատ աղջականներին և ծառաններին 500 ռ.

«ՍՈՒՐՃ»-ի Մի ԴՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ: «ՄՈւրճ»-ի № 1-ի մէջ գրախուած էր Գ. Ծերեթելի «Մարդ-Առիւծ» պոէմաւի հաջերէն փոխազրութիւնը (վրացերէնից) պ. Գ. Տէր-Դաւթեանցի կողմից և ցաւ էր չափտնւած ամսազրիս գրախօսի կողմից որ աշգքան մի սիրուն գրւածք փոխանակ թարգմանւելու փոխադրւած է, Աչմմ իմանում ենք որ պ. Տէր-Դաւթեանը սխալմամբ է փոխազրութիւն անւանել այն ինչ որ իրօք արձակ թարգմանութիւն է վրացերէն ոտանաւորով գըրւած բնադրի: Աւելի լաւ թէ հեղինակի, թէ թարգմանչի, թէ գրախօսի և թէ ընթերցողների համար:

ՆԱԻԻՂ ԼՐԱԴԻՔ: Պր. Վ.ՐԺ. Փափաղեան, որ խմբազրում էր և զեկալարում «Շաւիդ» շաբաթաթերթը (Թէհրան) սկսած նոյնմբերից 1894 մինչև 1895 թ. չունաւր ամիսը, թերթի ալդ ամսւակ № 3-ից ալ ևս չի պատկանում նորա խմբազրութեանը: Ալդ պատահել է խոչը ընդհարումներից վետու թերթի արաօնատիրոջ և պ. Փափաղեանի միջն, ընդհարումներ, որոնք տեղիք են տւել գործը ընկերական գատարանի քննութեանը ենթարկելու, ուր կողմերի ներկացացուցիչներ եղել են Յովհ խան Մասէհեան՝ պ. Փափաղեանի կողմից, և պ. Պետրոս Ներսէսեան՝ թերթի արտօնատէր պ. Բէզնազարեանի կողմից, իսկ դատաւոր (sur-arbitre) Թէհրանի փոխանորդ վարդապետ Ավատեան: Ընկերական գատարանի վճռից չետու, որ տեղի էր ունեցել փետրւ. 8-ին, «Շաւիդ»-ի № 5-ում (փետրւ. 11) սպաւծ էր մի աղեղ ամբատանութիւն պ. Փափաղեանցի վրայ, որի գանգատի վրայ ռուսաց դեսպանատունը թերթի № 6-ում տպել տեղ ռուսերէն և հայերէն լիզուններով հետեւալ ազդը: «Ռուսաց կազս դեսպանատունը սրանով աղջարաբում է որ «Շաւիդ» № 5-ում զետեղած չօդածը պ. Վ. Փափաղեանցի մասին հիմունքներից զուրկ է, և եթէ նորից չափտնւեն «Շաւիդ»-ում ալդ տեսակ գրութիւններ, կավ. դեսպանատունը ձեռք կ'առնէ միջոցներ՝ ալդ թերթի հրատարակութիւնը դաղարացնելու համար»:

Մենք չենք կարող խորը ցաւ չչափտնել ալդ ամենի առիթով, համակիր հետաքրքրութեամբ հետեած լինելով «Շաւիդ»-ի ուղղութեանն ու ընթացքին թէ երբ նորա ոչ-պաշտոնական խմբագիրը Յովհ: Խան Մասէհեանն էր մինչ նովեմբերը 1894 թ. և թէ պ. Փափաղեանը՝ ալդ ամսից սկսած: Թէհրանից մեր տուացած թղթակցութիւն-

ները այդ գործի առիթով չենք հրատարակում, բայց խորհուրդ ենք տալիս «Շատիզ»-ի արտօնատիրոջը իւր թերթի խմբագրութեան գործ դնել աւելի որոշ հիմունքների վրավ, ցաւալի է նկատել որ որևէ երկու տարում թերթի գեկավարութիւնը արդէն երկու անգամ փոփոխութեան է ենթարկել:

«ՆԵՐՀԱԿԱ ԱՌԱՔՑԵԼ» պատրաստածքը մեր աշխատակից Պր. Ա. Աղելեանի (տպւած Մուրճ 1894 թ. № 7-8, 9) թարգմանել է ոռուսերէն և տպագրում է Կովկասեան կեանք (Կավկազյան յազու) ոռուսերէն պատկերազարդ հրատարակութեան մէջ, որ պիտի լոյս տեսնի հաւաճականաբար մինչ մարտի վերջերքը կամ ապրիլին, Թիֆլիսում:

ՎԻՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. Այս խսրազրով մենք մը ընդարձակ չողւած հրատարակեցինք «Մուրճ» 1895 № 12-ի մէջ՝ Հանդէս Ամսօրեայի (որ նույն միաբանութեան օրգանն է) մարտի ահարում խմբագրութիւնը պատասխանում է մեղ շատ անկապ ձեռի Պատասխանելու ձեզ, ոճը—ամեն ինչ ցոյց է տալիս որ Հանդէսի խմբագրութիւնը մեր չողւածի առջեկ կորցրել է ամեն սառնասրութիւնն. Եւ կարող է արդեօք մի կրօնական և մասնաւճն կրօնամը միաբանութիւն հանդուրժել, երբ նորա ուղղութիւնը անաշառ քննարարութեան նիւթ է գառնում. Մեղ ալժմ պակասում է ժամանակը մեր զէմ արւած առարկութիւնները առաջ բերելու և նոյս արժէքը ցոյց տալու համար. Մի անգամ ևս ապացուցանելու համար Վիենայի Մխիթարեան միաբանութեան սովհետական ողին բարյալան խնդիրներում, մենք զալ անդամ կը վերադառնանք Հանդէսի նկատութիւններին. Առ աչժմ մինք հարկ ենք համարում ամբանն ասել, որ ճշմարտութեան դէմ ոչինչ չեն օգնիլ ոչ ձեր կրօնաւորի հանդերձը, ոչ ձեր ծազրաբանութիւնները և ոչ էլ ձեր զարնակցութիւնը և կամ ընդունութիւնը... «Մշակ» լրագրի հետո խստանալով ուրեմն վերադառնալ խնդիրին, առաջմ դնենք ստորև հետեւալ տեղեկութիւնը, որ եթէ ոչ ուղղակի, գէթ անուղղակի բաց մօտ կապ ունի նաև Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ողունեանը հաւաքանացիներին օգնելու գործում.

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԶԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՑՈՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ. Մենք ստացել ենք Պարիզից «Արևելեան գործերի Բիւրօ»-ից նորա պարբերապէս հրատարակւող տեղեկագրութիւնների 1896 թ. լուսարպետական պարոց ների գործը—լուսարպետական 1896. № 212), որը ամբաջապէս (մօտ 65 երես) նորած է Հայկաթոլիկ իշխանութիւնը հաւաքանացիներին օգնելու գործում:

նակում է Փրանսիական մի շարք եպիսկոպոսների ըրդորները, ուղղած իրենց վլճակների հօտին՝ Հայաստանի հայ տառապեալներին օգնութեան համար և լետ չմնալու համար ընդհանուր շարժումից, Յորդուները զրւած են բարձր քրիստոնէական ոգով, և թէ որքան նոքա ընթերցողների սիրտը շարժելու զօրութիւնն ունին, դորա ապացուցները կարելի է գտնել նոյն այդ տետրակում առաջ բերւած նամակներից, որոնք լիշեալ թիւրո՞ն ստացել է այլ և մեծ մասամբ ոչ հարուստ նւիրատուներից. Կարծ միջոցում արդէն ժողովւած էր 39.000 ֆրանկ:

Այս տետրի մէջ, որից մարդասիրական ու զուտ քրիստոնէական ողբի և գթածութեան բոյք է չնշում, մի հատ նոտա գալիս է խանգարելու ամբողջի ներդաշնակութիւնը, և այդ նոտան—կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարք Ազարիանի հեռադիրն է, ուղղած բիւրո՞ին (էջ 210). ահա այդ՝

«Շնորհակալութիւն ձեր առաքումների համար» Երեք հարիւր «լուսաւորչական ընտանիքներ կաթոլիկութիւն ընդունեցին Մարաշում Աւելի ևս մեծ թիւ տրամադիր ևն միանալու Խնդրում եմ «շուտով հասցնել հարկաւոր օգնութիւնները. Պատրիարք Ազարիան».

Ակժմ համեմատեցէք Ազարիանի ոգին հէնց օրինակ ամերիկական բողոքական միսիոնարների ոգու հետ. Առաջնի մէջ մարդասիրութեան ոգին մեռած է ու տեղի տեած պղտոր ջրում ձուկ որսալու քաղաքականութեան. Ֆակտն է մեղ աղպէս ասել տալիս:

ԱԶՆԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ՔՐԻԹԱՑԻՍԻ ՆԱՀԱՆԴՈՒՄ. Նորերս Գութալիսի հանգապեաը ուղղել էր նոյն նահանգի ազնւականութեան առաջնորդին մի նամակ՝ այդ գառակարգի անտեսական դրութիւնը բարուքիլու խնդրի մասին. Նամակում առաջ են բերւած հետևեալ տեղեկութիւնները. Գութալիսի նահանգում իշխանական (կնեազ) կոչումն ունին 4.061 հոգի երկու սեռից (հաշըւած են իշխանական գերդաստանների բոլոր մեծ ու փոքր, տղայ ու աղջիկ անդամները). սոսկ ազնւական կոչումն ունին 47.019 հոգի երկու սեռից. Այդ կազմում է նահանգի եօթ գաւառների ազգաբնակութեան մօտ 7 % (չհաշւած Սուխումի, Բաթումի և Արտևինի շրջանները). — Նահանգի մէջ այդ ազնւականութիւնը ունէր 9.240 ազնւական կալւածներ, տարածութեամբ 815.376 դեսետին. (Արտասահմանի մեր ընթերցողներին ասենք որ դեսետին = 11018 $\frac{1}{2}$, քառակուսի մէտր). Դորանից 2 դեսետինից ոչ աւելի կալւածները կազմում են 59%, 2-ից մինչ 4 դեսետին մեծութեամբ կալւածները 17.2%, 4-ից մինչև 8 դեսետին — 28.7%, 8-ից մինչև 19 դես. — 22.6%. Կալւածներ 19-ից մինչև 380 դեսետին մեծութեամբ կազմում են

22% և 380 դեսեատինից անց՝ 3%՝ Ուրեմն ազնւական կալւածների մօտ կէսը գիւղականների միջին կալւածներից մեծ չեն: Եւ այդ կալւածները շարունակ պակասել են անցնելով գիւղացիների ձեռքը, սկսած ճորտութեան վիրացման տարուց: 1869 թւականի կալւածատիրական կանոնադրութեամբ (ուստանը զարմութիւնը) նաև հանգում կալին 48.261 կալւածատերէրին հարկատու գիւղացիական տներ, որոնցից 1880 թ. գեռ միան 24.244 տունը գնել էին կալւածատէրէրից իրենց հզգալին բաժինները, իսկ մնացեալները զեռ պարտական էին մնում կալւածատէրէրին: Բայց իրենց բաժինների անքառարութեան պատճառով՝ շատերը գիւղացիներից գնում էին նաև կալւածատէրէրի սեփական հողերը. 1879 թւից մինչ 1888 թ. աղողիսով նոքա գնել էին 5.426 կտոր հող ընդհանուր տարածութեամբ մօտ 10.000 դևսեատին և արժողութեամբ 1.142.545 ռուբլու: Խի 1889 թւից մինչ 1895 թ. գիւղացիք զնցին ազդ նահանգում կար կալւածատէրէրի սեփական հողերից աւելի ևս շատ, այն է 15.855 դեսեատին:

Նահանգապետի նամակը մատնանից է լինում այն հանգամանքի վրա որ նահանգի ազնւականները իրենք չեն մշակում իրենց կալւածները, ալլ կապալով են տալիս գիւղացիներին, որոնք մեծ մատամբ միան եղիպատցորեն (կուկուրուղ, սիմինդր) են ցանում, և հրաւիրում է նոցա՝ տնտեսութիւնը իրենց ձեռքն առնել և աւելի դին ունեցող բոլսեր մշակել:

ԼՈՒՐ ՆԱՆՍԼԵՆԻՑ: Ամբողջ լուսաւոր աշխարհը սրտի տրոփիւն զգաց, երբ վետրար ամսին, հեռաւոր հիւսիսից լուր տուացաւ, թէ Նանսէնը վերադառնում է: Այլ լուրը գեռ ևս չի հաստատել. բայց գիտնական աշխարհը անկարելի չի համարում որ լուրը ստուգվի Ո՞վ է Նանսէնը և ինչումն է ինդիրը: Ֆրիդրիխ Նանսէն նորեղացի է և ծնւել է 1861 թ. հոկտեմբ. 10: 1881-ին աւարտեց հսմալարանը, 1882-ին նորեգիակի բերգէն քաղաքի կենդանաբանական ազգա տեսուչ էր (կոնսերվատոր), Դորանից առաջ, նոյն 1882-ին նա առաջին ճամբորութիւնն արաւ Սառուցեալ ովկիանոսում: 1888-ին հինգ հոգով նա կատարեց մի լանդուզն գործ՝ Գրէօնլանդ ցամաքի արենելեան ափից անցաւ մինչ արևմտեան ափը, կտրելով 490 կիլո մէտր (500 վերստ) ոտի սահնակներով: Ապա նա կազմից մի ալբ ափսի վլթիսարի ծրագիր: Նոր-Սլիբիրից նաւով ուղեսորւել դէպի հիւսիս, հասնել մեծ սառցալին հոսանքին, որպէս զի ալդ հոսանքը տաճի իւր նաւը հիւսիսային բեւեռի վրայով ու հասցնի Գրէօնլանդի արևմտեան ափը ու աջտեղի սառցալին հոսանքով դէպի Գրէօնլանդի հարավ ու Ատլանտեան ովկիանոսուը: Իւր նաւը, ուրեմն, Նանսէնի կար

ծիքով, պիտի ընկներ սառողցների մէջ, բայց նա համոզւած էր որ այդ սառցավին ովկիանոսում կաչ մի հոսանք (ինչպէս օր, Գոլֆըստ-րէմը) և որ աչ հոսանքը ինքը կը տանի իւր նաւը աճնպէս, ինչպէս վերև տեսանք: Նթէ սառողցները բարակ լինեն—նաւը կարող էր դիմանալ, իսկ իթէ հաստ են՝ ապա Նանսէնի նաւը պիտի ընկած լինէր սառողցների աճագին լեռների մէջ, որի ճնշմանը չի կարող դիմանալ ոչ մի նաւ, ինչքան էլ ամուր լինի չինւած վերջինու Նանսէն չատուկ գորա համար շինել տեսց Ֆրամ նաւը և 18 ուղեկիցներով գուրու եկաւ Քրիստիանիայից 1893 թ., լուն. 24-ին, իւր հետ վերցրել էր 5 տարւակ ուտեստի պաշար: Նոյն տարւակ օգոստոսի 3-ին նա Կարլիեան ծովումն էր, նոյն ամսի 20-ին նորան դեռ տեսնող եղիլ է արդ ծովում: Այդ օրից դէս աչ ևս ոչ մի լուր չկար նրանից, Այժմ մի լուր եկաւ թէ նա վերադառնում է: լուրը դեռ հաստատ չէ: Նանսէնը ենթադրել էր թէ իւր ուղեղութիւնը կը տեի 4—5 տարի: Նթէ նա վերադառնում է զէսի Սիրիրի ջրերը—ուրեմն երեխ նա հանդիպել է հիւսիսում անանցներին կամ մի ցամաքի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ: Եօթ թէ ութ տարւանից մկանած Ֆրանսիակում ընդհատումներով պատրաստում էր համալուսարանների ռեփորտի մինչև որ նախագիծը աւարտեց Ռիքոի նախկին մինիստրութեան ժամանակ լուսաւորութեան մինիստր Պուանկառէն: Այդ նախագիծը առանց մոփոխութեան ընդունեց Բուրժուացի արմատական մինիստրութեան կողմից, ուր լուսաւորութեան մինիստրն է Կոմի: Մարտի 7-ին (ն. տ.) նախագիծը առաջարկեց պատգամաւորների յոդովին, որը 526 քէարկողների միաձանութեամբ ընդունեց: Աենատը անկառիկած նոյնագիս ընդունելու է, անպէս որ ռէփորտի գործը կատարելապէս ապահովւած է աչմինանից: Ինչի մթջն է կալանում ռեփորտը: Մինչ այժմ Ֆրանսիակում համալսարան կոչւում էր ամբողջութիւնը այն բոլոր ֆակուլտէտների, որ ցրւած կան Ֆրանսիակի զանազ մն քաղաքներում: Այդ ֆակուլտէտները կատարեալ կախումն ունէին կենտրոնական կառավարութիւնից և ունէին մի կազմակերպութիւն, որ առել էր նոյա Նապոլէօն I, գրեթէ մի գար առաջ: Այժմ ֆակուլտէտների ամեն մի խումբը կոչւելու է համալսարան (ինչպէս Վերմանիակումն է) այն քաղաքի անունով, ուր նա գոլութիւն ունի: Բոլոր համալսարանները հաւասար չեն լինելու, աչ կը ատարբերւեն իրարից, նախած թէ իւրաքանչիւրը իւր սեփական ոչմերով և կամ տեղական բնակիչների զոհաբերութիւններով՝ ինչ չառաջդիմութիւն ցուց կը տայ: Համալսարանները գառնում են իրաւաբանական մարմիններ, որոնք իրա-

ւունք ունին ստանալու իրենց մտսնաւոր եկամուտները։ Եթէ նոքա չունին ալս կամ այն առարկալի ամբիոնը—քաղաքակին վարչութիւնները կամ տեղական ընկերութիւնները կարող են աղպամինները հիմնել։ Նւէրները և կտակները ալ ես չեն գնալ ակադեմիանները, ալ կը տրւեն համալսարաններին, սոցա գրադարաններին, լարորատորիաններին և այն, որոնց համար պետական բիւթէն բաւականութիւն չէր տալիս՝ նոցա պահպաներու համար գիտութեան բոլոր պահանջների բարձրութեան վրա։

ՕՐԵՆՔ ԿՍՆԱՆՑ ՄԱՍԻՆ ՖԲԱՆՍԻԱՅՈՒՄ, Փետրւ. 28-ին (ն. ա.) Փրանսիական պարլամէնտը ընդունեց եօթ չողւածներից բաղկացած մի օրինագիծ, որով ամուսնացած կնոջ ապահովւում է իրաւունքը աղատ անօրինել իւր տշխատանքի արդիւնքը։ Մինչ ալժմ կինը իրաւունք չունէր, առանց մարդու թուլութեան, սուսնալ իւր անձնական խնացողութիւնը և աշխատանքի վարձը։ Առաջւաց օրէնքով, որը հին հոռմէական օրէնքներիցն էր մնացած, մի աշխատող կին կատարելապէս մատնւած էր հարբկան և կամ ծով մարդու քմահաճուզին։

Օրէնսդրութեան ալս նշանաւոր փոփոխութեան համար գլխաւոր մարտնչողը մի ձեռնարկու և մեծ սրտի տէր կին է։ Անանտ-Courrière թերթի խմբագրապետ տիկին Ժան Շմանը, որը պրոպագանդ էր անում ալդ մտքի համար և իւր մարդու օգնութեամբ կարողացաւ հասարակաց կարծիքը գրաւել և պարլամէնտի հակառակութիւնները կոտրել։ Դորա համար չորս տարի հարկաւորւեց, չնայած որ պարլամէնտը ընդունեց ալդ օրէնքը առանց հակաճառութեան։

ՎԻԵՆՆԱ. Քաղաքակին ինքնավարութեան և Վիեննակի քաղաքալուսի ընտրելու համար 1895 թ-ին հոկտեմբերին կատարւած ընտրութիւնները երկու անգամ բնկած լինելով կասրից, որը անհնարին էր գտնում հաստատել հակա-հրէական դր. Կարլ Լիւդլ'ին, որ քաղաքավութիւնը էր ընտրւած, փետրւարի 28-ին (ն. ա.) սկսեցին կատարելու նոր ընտրութիւնները Բացց ալս անգամ ես, և աւելի ևս մինչ չաջողութեամբ, չաղթանակը տարաւ դր. Լիւնգէրի կուսակցութիւնը ԳՈՐԾԱԳՈՒՅԻՆԵՐԻ ՎԻԵՆՆԱԿԱՄՊՐՈՒԹԻՒՄԻՆ։ Խրանսիալում, ներկայ տարւական ամսին եղան 35 գործադուլներ, 1893-ին նոյն ամսում եղել էին 70, 1894 թ. լունւարին 28, 1895 թ. լունւարին 20 գործադուլներկային հիւսելու գործարաններում, 3-ը մետալուրգիական, 3-ը կօշկակարական, 3-ը գլխարկ կարողների (ճոների) և ալին։ Գործադուլ արած բանողների թիւը 33 դէպքերում 2.651 էր (1893-ին լունւարի 14.324 էր, 1894-ի լունւարին 3.758, 1895-ի չունւարին 1.570 հոգի)։

Գործադուլ արածների թշի կէսը լունւարին միմիակ նահանգում էր:

35 գործադուլներից 21-ը օրավարձի պատճառով էր, 8-ը անձնաւորութիւնների պատճառով (օրինակ, պահանջ որ աւս ինչ բանւորներին ընդունեն կամ աւս ինչ բանւորներին արձակեն). մէկ գործադուլ եղաւ տուգանքների պատճառով:

35 գործադուլներից, որոնք եղան լունւարին, 15-ը ազդ ամսում չվերջացան և ուրեմն շարունակում էին փետրւարին. մնացած 20-ից 10-ը վերջացան չօգուտ բանւորների պահանջների, 5-ը փոխադրձ զիջողութիւններով, իսկ 5-ը վերջացան չօգուտ տէրերի.

Դեկտեմբերին սկսածների հետ միասին լունւարին եղած և այդ ամսում վերջացած գործադուլների թիւն էր 25, որոնք տևեցին՝ 1-ը 46 օր, 1-ը 38 օր, 1-ը 32 օր, 1-ը 14 օր, 1-ը 10 օր, 1-ը 9 օր, 1-ը 7 օր, 1-ը 6 օր, 2-ը 5 օր, 1-ը 4 օր. 3-ը 3 օր, 3-ը 2 օր, 5-ը 1 օր և 2-ը մի օրից պակաս:

Փետրւարի 1-ին շարունակում էին 17 գործադուլ 1.500 բանւորներով.

ԱՆԳԼԻԱՅԻ զօրքը Պատերազմական մինիստրութեան բիւջէն հրատարակւեց մարտի 7-ին (նոր տ.): Բիւջէն նախատեսնում է նոր բիւջէտափին տարւաչ համար (մարտից 1896 մինչ մարտ 1897) ընդամենը 451.415.000 ֆրանկ (70.000 ֆր. աւելի քան անցեալ տարի). մըշտական կանգուն զօրքը բաղկացած կը լինի 156.174 հոգուց (աւսինքն 771 հոգի աւելի քան անցեալ տարի): Ուրեմն զրեթէ փոփոխութիւն չի լինելու: Անզլիւական զօրքը, բացի կանգուն զօրքից, բաղկացած է նաև միլիցիափից, կամաւորներից և պահեստից: Բոլորը միասին անզլիւական զօրքը (կանգունը, միլիցիան, կամաւորները և պահեստի զօրքը) հաշըւում էր առ 1-ն լունւ. 1896 թ. 640.625 մարդ:

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻՓ որոշեց պատերազմական-դաշտակին դատարանի կողմից Բաքում փետրւարի 6-ին Ղուբալի գաւառի Կրըզ զիւզի բնակիչ Խաս-Մահմէդ-Խզմալիլ-օղլի'ին, որը մասձ էր աւազակալին խմբի մէջ և կատարել էր սպանութիւններ և կողոպուտներ տամնումէկ զէպքերում: Մահան պատիքը որոշեց կատարել կախելով:

ՔՐԻԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ: Հակերէն գրքեր հրատարակողների ուշադրութիւնն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ մննք ստանում ենք գրքերը գրեթէ միշտ վաս տետրած, որի չնորհիւ գրքի թերթերը գրքի մէջքից ձեռաց պոկում են՝ հէնց որ թերթում ենք: Պէտք է մտածել զիրք զնողների վրայ, որոնք չեն կարող ամեն գիրք ամուր կաղմել տալ և լրաւունք ունին պահան-

ջելու, որ դիրք հրատարակողը հոգս տանէ թերթերի ամրութեան վրայ Մէնք փորձից գիտենք, որ մեր երկրի կազմաբարութեանը, մի դիրք տեսրելիս՝ բաւականանում են գրքի մէջքը միան երեք տեղում աչն էլ թեթև կերպով կտրել և սոսնձել, և փորձը ցուց է տալիս նաև որ գրքի թերթերի ամրութեան համար երեք տեղ ամրացնելը բաւական չէ, աչ պէտք է առնապն հինդ տեղում գրքի մէջքը կտրել և սոսնձել տալ:

† Ա.ԴԵՐԵՆԵԶՁԱՆԻ ՄՈՒՇՏԵՎԻԴ Հաջի-Միրզա-Ջաւադ աղա վախճանւց Թաւրիկում, լուսարի 10-ին, Աչդ բարձր հոգևորականը Քելբալիք մուշտէիդից մտով երկրորդ հեղինակաւոր հոգևորականն էր Պարկաստանում. նորու կորուստը շատ զգալի էր թէ պարսիկների և թէ պարսկահաւոց համար, զէալի որոնց նաև մեծ հոգածութեամբ էր վերաբերւում. Բողոքելու համար կառավարութեան մտադրութեան զէմ՝ որով ծխախոտի մենավաճառութիւն պիտի տրէր անզլիացի կասլիալիսաներին, հանգուցեալ մուշտէիդը արգելեց ծխախոտ ծխելը—և ժողովուրդը հնազանդեց. Նոր մուշտէիդի լորդորանքով ժողովուրդը անցեալ 1895 թ-ին ապաստամբւեց՝ բողոքելու համար արհեստական միջոցներով առաջացրած հացի թանգութեան դէմ, և դորա հետեանքն եղաւ Աղերբէչջանի նահանդապետի անկոմը Դէսլի հայերը հանգուցեալը լարգանքով էր վերաբերւում. Երբ հայ էիրի հալածանքը թիւրքիալում քիչ էր մնում որ սկսէր արձականք գտնել Պարսկաստանում, հանգուցեալ մուշտէիդը հանդիսաւոր քարոզ խօսեց մէջիդում, խիստ լորդորելով պարսիկներին բարեկամութիւն պահպանել հայերի հետ. Թաւրիդի հայ վաճառականութիւնը 70 թուման (140 ռուբլի) հաւաքեց պարսկական ծէսերով հոգինան գիստ (թեազիա) կատարել տալու համար, որ և եղաւ իինտրարի 2-ին և 3-ին:

Սուշտէիդի կոչումը Ժառանդական լինելով՝ հանգուցեալի տեղը Թաւրիդում բռնելու է նորա որդին, որը ուսանում էր շարիաթը Քելբալակում:

† ԷՆՖԻԱՃԵԱՆՑ Համբարձում, հրատարակիչը նախկին Ակունի Հայոց Աշխարհին ամսագրի (1860—64), և ասկա նաև ԱՄեղու Հայաստանի լրադրի, հիմ աղերը ալժմեան Մ. Ռաբինեանց տպարանի և տէր ու հիմնադիրը Լնֆիտանեանց անունով վազուց լաւոնի ծխախոռագործարանի թիւրի ուղերութեան միջոցին դէսլի Լազողէին, ուր նա տնի թութունի դաշտերու Հանգուցեալը 72 տարեկան էր. Յայտնի էր իրբն շատ գործունեալ անձնաւորութիւն:

«ՄՈՒՐՃ»-Ի ՊՈՍՏԱԲԱՂ:

Ուստիր Միութեան հայկական թանգարանի, 1895 թ. մարտին Զեր ուղարկած չէքով Վ. ոլժսկո-Կամսկից բանկի վրայ մենք ստացանք Թիֆլիսի առևարական բանկի միջոցով 14 ռ. 50 կոպէկ մօտաւորապէս: Զեր կամքի համաձան 10 ռ. վերցրինք իբր Մուրճի բաժանորդագին 1895 թ. համար, իսկ մնացեալի վտխարէն անմիշապէս զրկեցինք զրքեր ան ցուցալից որ կցել էիք Զեր համակին: Ազգպիսով մեզ մօտ Զեր հաշու ոչինչ չի մնում, հետեւալէս «Մուրճ» 1896 թ. համար ձեզ հարկ կը լինի ամբողջ բաժանորդագինը ուղարկել:

Վիեննա: Հանդէս Ամսօրեալի խմբագրութեան, Ձեզ պատկանելի 5 ռ., որ ստացել էինք «Հայ մամուլի հարիւրամեակ» սկատկերի բաժանորդներից, գեռ ևս 1894 թ. մենք լանձնել ենք Թիֆլիսի Զեր գործակալ պ. Յ. Չաթալապաշնանին և ստացել նորանից ստացագիր: Դիմեցէք նորան:

Բարուի: Պր. Գասպար Տէլ-Մարգարեանցին: Պոստը երկու օրինակ է Ձեզ հասցել, թէն Պուր ինչպէս զրում էք, մի օրինակ էք զրւած: Խմբագրութիւնս, սական, երկու բաժանորդագին է ստացել զեկու. 8-ին և 14-ին նման հասցէներով: Կը սպասենք, թերես երկրորդ հասցէատէրը լավունւի:

Մուկու, Լազարեան Ճեմարանի մամնագիտական դասատների գրադարանապետին: Մի օրինակի համար բաժանորդագին ստացւեց լունարի 29-ին: Այժմ փետրուարի 28-ին երկրորդ անգամն ենք ստանում:

Լոնդոն: Դրասենեակ Կիւլպէնկեան եղբայրների: Զեր ուղարկած 10 ռուբլուց պոստի վարչութիւնը, համաձան օրէնքի, վերցրեց քառորդ մասը (2 ռ. 50 կոպ.) իւր օգտին, որպիսեաւ ծրարը դրամական չէր: Պոստի վարչութիւնը ծրարը մեզ լանձնեց մեր ներկայութեամբ բացանելուց չետու:

ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԴՐՔԵՐ

- 1) «ԱՐՈՐԻ» ՕՐԱՑՈՅՑ 1896 թ. (պատկերագարդ). Հրատարակ. Արօրապարանի, Բաքու, Գինն է 70 կոպ.
- 2) ԿՈՒԶՆԵՑՈՎ. Ս.—Զարմանալի որդ: թարգմ. ուուսերէնից օր. Ն. Ղուլիճանեանցի:—Թիֆլ. տպ. Շարաձէ և ընկ., 1896. ձինն է 10 կ.
- 3) ՄԱԼՅԱՍԵԱՆ, Յովհաննէս. —Երդում (վէպ): Թիֆլ. տպ. Մելիք-Շահնաղարեանցի, 1896, զինն է 10 կոպ.
- 4) ԿՈՐՈԼԵՆԿՈ, Վ. —Գետնափորի երեխաները: (թարգմ. ուուսերէնից): Հրատ. Թիֆլ. Հ. Հրատ. ընկ., Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896 զինն է 15 կոպ.

- Վ 5) ՈՒԽԴԱՅ. Մուֆլուս. Թարգմ. Յովին. Օհանեանի. Հրատ. Թիֆլ. Հրատ.
ընկ., — Թիֆլ., տպ. Շարամէ և ընկ., 1896, գինն է 10 կոպ.
- Վ 6) ՕՐԺԵՇԱՅՈ, Էլիդա. — Գիւղական փաստաբանը. Ռուսերէնից թարգմ.
Յովին. Մեղնիկեան. (Հրատ. ուսանողական խմբի) Պետերբուրգ, տպ.
Լիբերմանի, 1896, գինն է 20 կոպ.
- Վ 7) ԿՈՍՏԱՆԵԼԱՆՑ. Յովին. — Շիրակի լեզենդաներից և ժողովրդական կեան.
քից. Ալեքսանդրապոլ, տպ. Ա. Մալխասեանցի, 1896, գինն է 30 կ.
- Վ 8) ԳԱԼՍՏԵԱՆՑ, Ա. — Պատմութիւն Բաքւայ հայոց աղքատահնամ եկեցական հոգաբարձութեան. (1872—1893). Հրատ. Գրիգոր Յովին.
Դիլդարեանցի. — Բաքւ, տպ. «Արօրու». գինն է 25 կոպ. (վաճառ-
ւում է լոգուս Բաքւայ աղքատահնոցի).
- Վ 9) ԲԵՐՆԵՏՏԵՅՆ. — Ծաղիկ և պտուղ. Ռուսերէնից թարգմ. Ռուբէն Մելիք
Մուսեանց. (Հր. ուսանող խմբի) Պետերբ. տպ. Լիբերմանի, 1896,
գինն է 8 կոպ.
- Վ 10) ՓԱՓԱԶՅԱՆ, Վ. — Տուրիստի լիշտակարանից (Պատմւածքներ, պատ-
կերներ և ալին). Արտատպաւծ «Մուրճ ամսագրից. Թիֆլ. ապ. Ա.
Ռոտինեանցի, գինն է 30 կոպ.

ՎՐԻՊԱԿԱՆԵՐ

1) Շանթի Գուրսեցիներ վեպում ուղղել.

«Մուրճ» 1895 թ. № 11.—1351.₁₃ ներքենից (ավախքն է)
1351, տող 13 ներքենից) պէտք է լինի՝ սովոր (ոչ՝ սալին): 1352,
և 1356., ներք. ետին (ոչ՝ իրեն): 1367.₁₁ ներք. հոտմըտալու (ոչ՝
հոտ մը տալու): 1376., Զանութիւն: 1376.₈ ներք. կը մարմբէր (ոչ՝
կը կարմբէր): 1377.₁₅ ներք. աղջիկը (ոչ՝ աղջկան մը): 1364.₅ ներք.
երկար հասակով:

«Մուրճ» 1895 թ. № 12.—156.₄ բգիկ-բգիկ. 1564.₁₆ ներք.
մկրտեմ (ոչ՝ կը մկրտեմ), 1567.₆ կը ճըւճըւար. 1569.₁₆ յըւած (ոչ՝
ձըգւած) 1570.₁₁ ներք. կարգի մատած էր (ոչ՝ գործի մատած էին):
1571.₆ ներք. թողնեմ (ոչ՝ թոշնեմ). 1671.₈ ներք. ետքն (ոչ՝ ինքն):
1573.₉ չփակին կոճակները: 1576.₂ որ անոր կէս-կոչիկներուն:
1573.₁₁ ներք. չփոթւած (ոչ՝ լուզւած). 1575.₁₃ ներք. սկսան:
1880.-ը տափակ (ոչ՝ փափուկ):

«Մուրճ» 1896 թ. № 1.—29.₉ ներք. ժողովուրգն. 33.₉ Զիաւոր
(ոչ՝ Զըւոր): նոյն էջ, տող 7 ներքենից՝ ծիծաղելի է. ստամոքսի
36., ներք. օղարգել (ոչ՝ անաչար): 37.₆ ներք. սերել (ոչ՝ սիրել):
նոյն էջ, տող 2 ներք. լինելուա. 42.₁₃ կորսնցուցած (ոչ՝ կորացուցած):
42.₃ ներք. չի դրաւ (ոչ՝ չի էրաւ). 45.₆ ներք. տղուն: 46.₁₃ ձեռ-

նոցով թաթիկը եկաւ. 48.₁₁ կրծքէն: 49.₆ ներք. մտերմութեանը:
51.₁₅ այն զիրքով ինչ զիրքով որ...: 58.₈ նկարէր: Նոյն էջ տող
12-13 սպասումին:

Բացի այդ, 1359.₁₆ պիտի լինի՝ «...երկրորդ աստիճանը՝ աչդ
իդէալը կորցընելէն ցաւիլը. և երրորդ աստիճան՝ ցաւիլ այն ատեն...:
և այն, 1588, վերջին տող, պիտի լինի՝ ...և ասոնց զոհողութենէն
օգտըւող լաջորդ հարիւր հաղարները. ինչ հաշիւ է աչդ... և աչն.

2) Գեօթէի էզմոնտ դրամակում.

«Մուրճ» 1896 թ. № 1:— 8.₈₋, նա գիտէր (և ոչ թէ գիտէր):

11.₁₁ ներք. միտս է ընկեր

3) Յակոբեանի Հայոց աղջկան ոտանտուրի երկրորդ տան վերջին տող
պիտի լինի՝ սպասնացան:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի:

Ճամբորդական գնացք № 1. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս առաջ տեսան 9 ժ. 30 ր., հասնում է Բաթում երեկ. 9 ժ. 45 րոպէ: Ճամբորդական գնացք № 2. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում առաջ, 9 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս երեկ. 9 ժ. 55 ր.: Պոստային գնացք № 3. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս երեկովեան 6 ժ. 50 ր., հասնում է Բաթում առաւ. 8 ժամ 15 րոպէ: Պոստային գնացք № 4. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում գիշերւաէ 11 ժ. 20 րոպէ, հասնում է Թիֆլիս ցերեկւաէ 12 ժ. 25 րոպէ: Պոստային գնացք № 5. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում գիշերւ 11 ժ. 5 ր հասնում է Թիֆլիս երեկովեան 5 ժ. 50 ր.: Պոստային գնացք № 6. Թիֆլիսից Բաթու, դուրս է գնում ցերեկ. 1 ժ. 10 ր հասնում է Բաթու առաւ. 7 ժ. 30 րոպէ: Ապրանքա-ճամբորդական գնացք № 24. Թիֆլիսից Գանձակ, դուրս է գնում երեկովեան 7 ժամ 27 ր., հասնում է Գանձակ առաւ. 7 ժ. 40 ր: Ապրանք ճամբորդական գնացք № 25. Գանձակից Թիֆլիս, դուրս է գնում երեկովեան 6 ժ., հասնում է Թիֆլիս առաւ. 7 ժ. 35 րոպէին Թիֆլիսից—Բորժոմ գնացքը դուրս է գալիս կէսօրից չետոյ 3 ժամին՝ առանց վայրիջնելու Միխալովոյում՝ հասնում է Բորժոմ, 8 ժամին 36 րոպէին: Բորժոմից—Թիֆլիս գնացքը դուրս է գալիս գիշերւաէ 12 ժամին 5 րոպէին, առանց վայրիջնելու Միխալովոյում՝ հասնում է Թիֆլիս առաւտեան 8 ժամին 15 րոպէ:

Թիֆլիս Վլադիկավազի տրակտ:

Երթևեկութիւն ց1-ն նոյեմբերի 1895 թ.

Թիֆլիսից հինգ առևանի կարետները դուրս են գնում առաւտեան 7 և 9 ժամերին, վեցտեղանի օմնիբուսները կէսօրից չետոյ 3 և 5 ժամին: Հասնում են Վլադիկավազ հետեւալ օրերը կէսօրից չետոյ՝ կարետները 6 ժ 50 ր. օմնիբուսները 7 և 9 ժ. 50 ր: Վլադիկավազից հինգտեղանի կարետները դուրս են գալիս առաւ. 5 և 9 ժամին, վեցտեղանի օմնիբուսները կէսօրից չետոյ 4 ժամին՝ և 5 ժամին: Հասնում են Թիֆլիս հետեւալ օրը կէսօրից չետոյ՝ կարետները 7 ժամ 25 ր. և 9 ժամին, օմնիբուսները 6 ժ. 40 ր և 8 ժամ 25 րոպէին:

30

ՄԱՐԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻՎԿԱՆԻ ՀԱՅՈՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Հ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆրանկի Ռուսական սուցիչները և ուսանողները վճարում են **8** ռուբլի, արհեստագործները **7** ռուբլի: Կարելի է վճարել մաս-մաս, Յ ռ. սկզբում, **3** ռ. մինչ մարտի **1-**ը, մայցեալլ մինչ յուլիսի **1-**ը:

ԴԻՄԵԼ: Թիֆլիս, Վելեմինսկան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներ՝ բարձրացնելու համար՝ Տիֆլիս: Վ. Պետրոսյան աշխատանքները՝ Վրաստահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCHI“. և կամ հետեւեալ անձերին:

ԲԱՅՈՒ—պ.պ. Ֆրիդրի Մարգարեանին և Սեդրակ Թառապեանին: ԲԱՅԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեափ Երեւան—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առեար. բանկի ճիւղը: ԿԱՐՍ—պ. Աբել Ապրեսեանին, գործակալ Շնաղեժդաւ ընկ. ԱԳՈՒԻՒՄ—պ. պ. Ստեփան Արամիանեանց և Աւետիս Դավթիանց ՆՈՒԽԻ—պ.պ. Աբրահամ Բունիաժեանց և Խաչատուր Խոջամիրեանց: ՂԶԼԱՐ—պ. Հմայեակ Մաժինեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՂԱՐ—պ. Արամ Շապովալեան: ՄՈՍԿՎԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան, Մ. Շորշորովի գրասենեափ: ՊԵՏԵՐԲՈՒԹԻՒՄ—պ. Քր. Բաշինջաղեանին (Գոտին. դարձ № 7): ՄԱՐԻՒՁ—պ. Յակոբ Սառիկեանին (ուսուցիչ):